1806

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ Պ. ՍՏՐՈՒՎԵԻ ԳՐՔՈՒՄ

3К23
Л-41

ՀԿ(Բ)Կ ԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1935

3 0 MAY 2005

ЗК23
Г-41
մշ.

Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

1 DEC 2009

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՐԱ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ Պ. ՍՏՐՈՒՎԵՅԻ ԳՐՔՈՒՄ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԲՈՒՐԺՈՒԱԶԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պ. Ստրուվեյի „Критические заметки к вопросу об экономическом развитии России. СПБ. ~~1935~~ г." գրքի առթիվ

1894

Հ Կ (Բ) Կ Կ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1935

1806

11 SEP 2013

Խմբագիր Հ. Գասպարյան
Տեխն. խմբ. Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ Լ. Աբովյան

▲

Հայկուսհրատի տպարան
Գլավլիտ № С—57, պատվեր № 277
Հրատ. № 301, տիրաժ 5000
Ինդեքս $\frac{П—41}{НК}$

898
37

В. И. ЛЕНИН

Экономическое содержание народничества и критика его в книге г-на Струве

Գարոն Մարտովեյի հիշյալ գիրքը նարոդնիկության սիստեմատիկ քննադատությունն է՝ նարոդնիկություն բառը լայն իմաստով ըմբռնելով—թե վորպես կարևորագույն սոցիոլոգիական ու անտեսական հարցեր վորոշակի կերպով լուծող թեորիական ուսմունք և թե վորպես «տնտեսական քաղաքականության դոգմաների սիստեմ» (եջ VII)։ Այսպիսի խնդրի առաջ դրումն արդեն կարող եր մեծ հետաքրքրականություն հաղորդել գրքին, բայց այս կողմից ել ավելի կարևոր է այն տեսակետը, վորից արվում է քննադատությունը։ Նրա մասին առաջաբանում հեղինակը հետևյալն է ասում.

«Մի քանի հիմնական հարցերի վերաբերմամբ հարելով գրականության մեջ միանգամայն ձևավորված հայացքների՝ նա (հեղինակն) իրեն ամենևին կաշկանդված չի համարել վորևե ուսմունքի տառով ու կոդեքսով։ Նա չի վարակված «թղթոդոքսիայով» (IX)։

Գրքի ամբողջ բովանդակությունից ակներև է, վոր «գրականության մեջ միանգամայն ձևավորված հայացքների» մասին խոսելիս հեղինակը նկատի ունի մարքսիստական հայացքները։ Հարց է ծագում, թե մարքսիզմի հայտնապես վոր «մի քանի հիմնական» դրույթներն է ընդունում հեղինակը և վոր դրույթները մերժում,—ինչու և վորչափով։ Հեղինակին ուղղակի չի պատասխանում այս հարցին։ Ուստի պարզելու համար, թե այս գրքում հատկապես ինչը կարող է վերաբերել մարքսիզմին,—ուսումնքի վոր դրույթներն է ընդունում հեղինակը և վորչափ հետևողական կերպով է նրանց կիրառում,—վոր դրույթները մերժում և ինչ է առաջարկում այդ դեպքերում,—այս ամենը պարզելու համար անհրաժեշտ է գրքի մանրամասն քննությունը։

Գրքի բովանդակությունը չափազանց բազմազան է. հեղինակը նախ տալիս է սոցիոլոգիայի մեջ կիրառվող այն «սուբյեկտիվ մեթոդի» շարադրանքը, վոր ընդունվում է մեր նարոդնիկների կողմից, քննադատում է այդ մեթոդը և նրան հակադրում «պատմա-անտեսական մատերիալիզմի» մեթոդը։ Այնուհետև նա տալիս է նարոդնիկության տնտեսական քննա-

դատությունը, նախ՝ «համամարդկային փորձի» հիման վրա (էջ IX) և յերկրորդ՝ ռուսական տնտեսական պատմության ու իրականության տվյալների հիման վրա։ Մինչև այժմ մենք ունեցել ենք միայն նարոդնիկական տնտեսական քաղաքականության դոգմաների քննադատությունը։ Բոլոր այդ բազմազանությունը (որ միանգամայն անխուսափելի յե մեր հասարակական մտքի խոշորագույն հոսանքի քննադատության ժամանակ) քննության ձևն էլ և վերլուծում—հարկադրված ենք քայլ առ քայլ հետևելու հեղինակի դատողություններին՝ կանգ առնելով նրա վերաբերությունների յուրաքանչյուր շարքի վրա։

Բայց նախքան դրքի քննությանը ձեռնարկելը, յես անհրաժեշտ եմ համարում ավելի մանրամասն կանգ առնել մի որոշ նախնական բացատրության վրա։ Ներկա հոդվածի խնդիրը ա. Սարուվեյի դրքի քննադատությունն է մի ամբողջ տեսակետից, որը բոլոր (և միայն միայն «մի քանիսը») «հիմնական հարցերի» վերաբերմամբ «հարում է» գրականության մեջ ամենագրային ձևավորված հայացքներին։

Այս հայացքները, քննադատելու նպատակով, հաճախ են ջոքադրվել լիբերալ-նարոդնիկական մամուլի հեղինակ, և այդ ջոքադրանքն այլանդակության աստիճանի մեծացնել է նրանց,—նույնիսկ ավելին, աղավաղել է՝ մեջ դնելով նրանց հետ ոչ մի առնչություն չունեցող հեգելականության, այն «համարյա, թե յուրաքանչյուր յերկրի համար պարտադիր է կապիտալիզմի միջից անցնելը» և այլ նմանօրինակ ոչ-մարքսիստական սիխոդպիեվությունները։

Աղավաղումների չենթարկվել և ուսմունքի մանավանդ գլխավոր կողմը, այս ուսմունքի կիրառումը ռուսական գործերի նկատմամբ։ Զգալի կանգ առնելով ըմբռնել, որ ռուսական մարքսիզմի ուսմունքի յելակետն է ռուսական իրականության բոլորովին այլ պատկերացումը, մեր լիբերալներն ու նարոդնիկները այս ուսմունքը բաղդատում էին այդ իրականության վերաբերմամբ իրենց ունեցած հին հայացքի հետ և ստանում էին յեզրակացություններ, որոնք վոչ միայն իրենց այլանդակությամբ նման չեն վոչ մի բանի, այլ դրա հետ միասին ամենավայրենի սիզադրանքներ են բարդում մարքսիստների վրա։

Ուստի ինձ անհրաժեշտ է թվում ա. Սարուվեյի դրքի քննության ձեռնարկելը, մինչև որ ճշգրիտ կերպով չկորոշենք մեր վերաբերմունքը դեպի նարոդնիկությունը։ Բացի սրանից, նարոդնիկական ու մարքսիստական տեսակետների նախնական բաղդատությունն անհրաժեշտ քննության յենթակա դրքի ճատ տեղերը պարզաբանելու համար, մի դրքի, որ առանձնահատկվում է ուսմունքի օբյեկտիվ կողմով և գրեթե բոլորովին մի կողմ է թողնում գործնական յեզրակացությունները։

Այս բաղդատությունը ցույց կտա մեզ, թե որքանի ընդհանուր

գելակետներ ունեն նարոդնիկությունն ու մարքսիզմը, և որն է նրանց տարբերությունը։ Միաժամանակ ավելի հարմար է վերցնել ռուսական հին նարոդնիկությունը, որովհետև նա նախ՝ հետևողականության և մինչև վերջ արտահայտված լինելու տեսակետից անչափ պարզ է ժամանակակից նարոդնիկությունից (որի ներկայացուցիչները «Р. Богатство»-յի տիպի ոչ թանկ են), իսկ յերկրորդ՝ ավելի ամբողջական է ցույց տալիս նարոդնիկության լավագույն կողմերը, որոնց վրա չափով հարում է նաև մարքսիզմը։

Վերջացնենք ռուսական հին նարոդնիկության professions de foi*-ների մեկը և քայլ առ քայլ հետևենք հեղինակին։

---

*—Հավատո դավանանքներ։ Եմ.։

I ԳԼՈՒԽ

ՆԱՐՈԴՆԻԿԱԿԱՆ PROFESSION DE FOI-Ի ՏՈՂԱՏԱԿԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Отечественные Записки»-ի CCXLII* համարում զետեղված է, առանց հեղինակի անվան, «Նոր ծիլեր ժողովրդական արտում» վերնագրով մի հոդված, որը ցայտուն կերպով առաջադրում է նարոդնիկության պրոգրեսիվ կողմերը, վորպես հակակշիռ ռուսական լիբերալիզմին։

Հեղինակն սկսում է այն հայտարարությամբ, վոր «այժմ» «գրեթե դավաճանություն» է համարվում այն մարդկանց դեմ բողոքելը, «վորոնք զատվում են ժողովրդական ժիջավայրից և հանում հասարակական բարձրագույն աստիճանին»։

«Դեռ նոքերս մի գրական եղ քացի տվեց «Отечественные Записки»-ին ժողովրդի հանդեպ ցուցաբերած պեսսիմիզմի համար, ինչպես արտահայտվեց նա Չլատովրատսկում գրքույկին նվիրված փոքրիկ գրախոսական առթիվ, վորի մեջ մի պեսսիմիստական բան չկար, բացի այն պեսսիմիզմից, վոր վերաբերում եր վաշխառուների ու առհասարակ սև մարդի ազդեցության դրանից հետո Գլ. Ուսպենսկին իր վերջին ուրվագծերի մեկնաբանությունը գրեց («Отеч. Записки» 1878 թ. № 11), լիբերալ ճահիճը յերերաց բոլորովին ճիշտ այնպես, ինչպես հեքիաթի մեջ... և միանդամայն անսպասելի կերպով ժողովրդի այնքան մեծաքանակ պատպաննները դուրս յեկան, վոր մենք, ճմարիտն ասած, զարմացանք, վոր մեր ժողովուրդն այդքան բարեկամները ունի... Ցես չեմ կարող չհամակրել... յերբ հարց է տրվում սիրու-

* 1879 թ. հատոր առաջին, «Современное Обозрение», եջ 125—152։

նատես գյուղի մասին և այն վերաբերմունքի մասին դեպի այդ գյուղը-
վոր ունեն պ. պ. ազնվականների ու լաքեյների և յերիտասարդ վաճա-
ռականների շրջանից դուրս յեկած գրական տղերքը կամ, ավելի լավ է
ասենք, վոչ թե տղերքը, այլ հին կնատերները... Գյուղին սերենադներ
յերգել ու հաչքով անել նրան՝ դեռևս ամենևին չի նշանակում սիրել
ու հարգել նրան, ճիշտ նույն կերպ էլ, ինչպես և նրա թերությունները
նշել՝ դեռևս ամենևին չի նշանակում ճշմարտաբար վերաբերվել նրան։
Ցեթե դուք հարց տաք հենց իրեն Ուսպենսկուն՝ նրա հոգին ավելի
ինչքի յե հակված, նա ինչքան և ավելի շատ տեսնում ապազայի առա-
վառչյանները—գյուղում թե հին-ազնվական ու նոր-քաղքենիական խա-
վերում,—ապա միևնույն կարող և լինել վորևե տարակույս, վոր նա կասի՝
«գյուղում»։

Այս տեղը շատ բնորոշ է։ Նախ, նա ակնառու կերպով
յուրց է տալիս, թե ինչումն է նարոդնիկության կյանքյու-
նը. այն բողոքի մեջ, վոր հնչում է Ռուսաստանի ճորտա-
տիրության դեմ (հին-ազնվական խավ) ու բուրժուականու-
թյան դեմ (նոր-քաղքենիական խավ) գյուղացու, ամեն ար-
տադրողի տեսակետից։ Յերկրորդ, նա միևնույն ժամանակ
յուրց է տալիս այդ բողոքի անհիմնականությունը, այն, վոր
այդ բողոքը յերես է դարձնում փաստերից։

Միթե «գյուղը» գոյություն ունի վորևե տեղ «հին-ազ-
նվական» կամ «նոր-քաղքենիական» կարգերից դուրս։ Միթե
հենց «գյուղը» չեն կառուցել ու կառուցում յուրա-
կերպ՝ այս և այն կարգերի ներկայացուցիչները։ Գյուղը հենց
ինչ «խավ է»՝ մասամբ «հին-ազնվական», մասամբ «նոր-
քաղքենիական»։ Ինչպես էլ շուռումուռ տաք գյուղը, բայց
յեթե դուք սահմանափակվեք իրականությունը հավաստելով
(խոսքը միայն այդ մասին է) և վոչ թե հնարավորություն-
ներով, դուք չեք կարողանա նրա մեջ գտնել վոչինչ այլ
բան, վոչ մի յերրորդ «խավ»։ Ցեվ յեթե նարոդնիկները
գնում են, ապա այդ տեղի յե ունենում այն պատճառով,
վոր նրանք ծառերը նշմարելով անտառը չեն տեսնում,
գյուղացիական առանձին հասկացությունների հողատիրության
ձևի հետևը չեն տեսնում ամբողջ ռուսական հասարակական
տնտեսության տնտեսական կազմակերպությունը։ Գյուղա-

յուն ապրանք արտադրող դարձնելով՝ այդ կազմակերպու-
թյունը նրան մեծ բուրժուա յե դարձնում,—շուկայի հա-
մար աշխատող մանր առանձնացած տնտեսատեր, և սրա
հետևանքով այդ կազմակերպությունը հնարավորություն
չի թողնում հետևելու «ապագայի առհավատ-
չյաններ» և ստիպում է վորոնելու նրանց առջևում—վոչ թե
«գյուղում», վորի մեջ «հին-ազնվական» և «նոր-քաղքենիա-
կան» խավերի զուգակցությունը սարսափելի վատացնում
է աշխատանքի դրությունը և նրանից խլում «նոր-քաղքե-
նիական» կարգերի տերերի դեմ կռվելու հնարավորությունը,
վորովհետև նրանց շահերի ու աշխատանքի շահերի բուն
հակադրությունը բավականաչափ զարգացած չե,—այլ վո-
րոնելու միանգամայն զարգացած, մինչև վերջը «նոր-քաղ-
քենիական» խավի մեջ, վոր բոլորովին ժաքրվել է «հին-
ազնվական» հրապույրներից, հանրայնացրել է աշխատան-
քը, ավարտել վերջացրել և պարզել է այն սոցիալական
հակադրությունը, վոր գյուղում դանվում է դեռևս սաղմ-
նային, ճնշված վիճակում։

Այժմ հարկավոր է նշել այն թեորիական սարքերու-
թյունները, վոր կան դեպի նարոդնիկությունն ու մարք-
սիզմը տանող ուսմունքների մեջ, և ռուսական իրակա-
նության ու պատմության թերեսների մեջ։

Առաջ գնանք հերինակին հետևելով։

Նա հավատացնում է «վոդեվիլ վրդովված պարոննե-
րին», վոր ժողովրդական չքավորության ու ժողովրդական
բարոյականության հարաբերակցությունը Ռասպենսկին ըմ-
բռնում է

«գյուղն շատ յերկրպագուներից ավելի լավ, վորոնց համար...
գյուղը ... յերեր ու անցագրի նման մի բան է, վոր սովորաբար ձեռք են
բերում բոլոր խելացի ու գրծնական բուրժուաները մեր ապրած գա-
ղաղջ ... նման դա-աղջանաերում»։

Ի՞նչպես եք կարծում դուք, պ. նարոդնիկ, այդ ինչու յե
աշխատանքի շահերը ներկայացնել ցանկացող մարդու հա-

ժար տեղն ունենում այնպիսի վշտալի ու վիրավորական բան, ինչպիսին դյուղի վոխակերպումն է «լիբերալ անցագրի», այն գյուղի, վորի մեջ նա տեսնում է «ապագայի առհավատչյաններ»։ Այդ ապագան պետք է վերացնի բուրժուազիային, իսկ այն, ինչի միջոցով վոր դուք կատենում եք գնալ դեպի այդ ապագան, վոչ միայն թշնամաբար չի դիմավորվում «գործնական ու խելացի բուրժուաների կողմից», այլ ընդհակառակը, հաճույքով վերցվում է, և վերցվում է վորպես «անցագիր»։

Ի՞նչպես եք կարծում դուք, արդյոք յերևակայելի՞ կլիներ այդպիսի սկանդալային բան, յեթե դուք «ապագայի առհավատչյանները» մատնացույց անեյիք վո՛չ թե այնտեղ, վորտեղ «գործնական ու խելացի բուրժուաների» տիրապետությամբ բնորոշվող անտեսակարգին հատուկ սոցիալական հակադրությունները դեռևս դտնվում են անզարգացած, սաղմային վիճակում, այլ այնտեղ, վորտեղ նրանք զարգացած են մինչև վերջը, մինչև nec plus ultra*, վորտեղ, հետևապես, չի կարելի սահմանափակվել պալիատիվներով ու կիսամիջոցներով, վորտեղ վոչ վոք չի կարող աշխատավորների desiderata**-ն ոգտագործել իր ոգտին, վորտեղ հարցը դրված է շեշտակի։

Արդյոք դուք ինքներդ ներքևում չե՞ք ասում այսպիսի բան.

«Ժողովրդի պասսիվ բարեկամները չեն կամենում հասկանալ այն հասարակ բանը, վոր հասարակության մեջ բոլոր գործող ուժերը սովորաբար դասավորվում են վորպես յերկու փոխադարձաբար-հակադիր հարթություններ, վոր ըստ յերևութին կռվին չմասնակցող պասսիվ ուժերը ծառայում են այն ուժին միայն, վորը գերակշռություն ունի ավյալ րոպեին» (էջ 132)։

Մի՞թե գյուղը չի ասում այս բնութագրի տակ, մի՞թե նա

* —մինչև ծայրահեղ սահմանները, խմբ։

** —ցանկությունները, պահանջները, խմբ։

ինչ-վոր առանձին աշխարհ է, վորի մեջ չկան այդ «փոխադարձաբար-հակադիր ուժերն» ու կռիվը, վորպեսզի նրա համար կարելի լինի խոսել առանց քննության՝ չվախենալով, վոր ոժանդակած կլինենք «գերակշռություն ունեցող ուժին»։ Բանի վոր արդեն խոսք բացվեց կռվի մասին, մի՞թե հիմնավոր մտածում է, յերբ սկսում եք այնտեղից, վորտեղ այդ կռվի բովանդակությունը խճճված է մի կույտ կողմնակի հանգամանքներով, վորոնք խանգարում են հաստատուն կերպով և վերջնականապես սեմյանցից բաժանել այդ փոխադարձաբար հակադիր ուժերը, խանգարում են պարզ տեսնել գլխավոր թշնամուն։ Արդյոք ակներև չե՞, վոր հեղինակի կողմից հոդվածի վերջում առաջադրվող ծրագիրը—դյուղացիական հողատիրության գոյացում, ընդլայնում, հարկերի պակասեցում,—ի վիճակի չէ մի նշանակից անգամ դիմակազերծելու գերակշռություն ունեցողին, իսկ ծրագրի վերջին կետը—«ժողովրդական արդյունաբերության կազմակերպում»—չե՞ վոր արդեն յենթադրում է, թե կռիվը վո՛չ միայն յեղել է, այլ, բացի դրանից, վոր նա արդեն վերջացել է հաղթությամբ։ Ձեր ծրագիրը մի կողմ է քաշվում այն հակասություններից, վորի առկայությունը դուք ինքներդ չեք կարող չընդունել։ Ուստի և նա սարսափելի չէ «նոր-քաղքենիական խավի» տերերի համար։ Ձեր ծրագիրը ժանր-բուրժուական ցնորք է։ Ահա թե ինչու նա միայն ապիտանի յե «լիբերալ անցագիր» լինելու համար։

«Մարդիկ, վորոնց համար գյուղը վերացական հասկացողություն է, իսկ մուժիկը՝ վերացական նարիկիս, նույնպես վատ են մտածում, յերբ ասում են, թե գյուղը պետք է միայն դովել և պնդել, վոր նա հնանալի դիմադրում է իրեն քայքայող բոլոր ազդեցություններին։ Յեթե գյուղը դրված է այնպիսի պայմանների մեջ, վոր յուրաքանչյուր որ պետք է տանջվի կռվելի համար, յեթե նրան թալանում են վաշխառուները, խաբում կուլակները, նեղում կալվածատերերը, յեթե նրան ներքինն ծեծում են գավառային վարչության մեջ, ապա այդ մի՞թե կարող է չազդել նրա բարոյական կողմի վրա .. Յեթե ռուբլին, այդ կա-

պիտալիստական լուսինը, դուրս է լողում դյուղական դաշտանկարի առաջին պլանը, յերբ նրան են ուղղվում բոլոր հայացքները, բոլոր խոհերն ու հոգեկան ուժերը, յերբ նա դառնում է անհատի կյանքի նպատակն ու ընդունակությունների չափանիշը, ապա մերթ կարելի յե թագցնել այդ իրողությունն ու աճել մուժկին այնպիսի հոսմա-անարծաթասեր ե, վորին անհնին հարկավոր չե փողը։ Յերբ դյուղում պառակտման ձգտումներ են նկատվում, փոքրամորեն փքվում և կուլակությունը և ձգտում ամենաթույլ դյուղացիությունը ծառայացրելով բառարակ դարձնելու, խորտակելու համարները և այլն, ապա, հարց եմ տալիս յես, մերթ կարելի յե թագցնել այդ բոլոր փաստերը։ Մենք կարող ենք ցանկանալ նրանց ավելի ժանրամասն ու հանրակողմանի հետազոտությունը, կարող ենք մեզ համար բացատրել, վոր նրանց պատճառը չքավորության ճնշող պայմաններն են (ժարդիկ սովից դողություն են անում, սպանում, իսկ ծայրահեղ դեպքերում ուտում իրար), բայց դրանք թագցնել բոլորովին անհնարին ե։ Թագցնել դրանք՝ նշանակում ե պաշտպանել status quo*-ն նշանակում ե պաշտպանել անթարհնչակ laissez faire, laissez aller**-ն, մինչև վոր ուժեր յերևույթները կընդունեն զարհուրելի չափեր ձնշարատությունը կարմիր գույնով շղարշն առհասարակ միշտ ավելորդ ե։

Ցավ դարձյալ, վիրքան լավ և դյուղի այս բնութագիրը, և վիրքան մանր՝ նրանից արվող յեղրակացությունները, վիրքան ճիշտ են նշմարվել իրողությունները և վիրքան չնչին՝ նրանց բացատրությունը, ընդունում։ Մենք այստեղ նորից տեսնում ենք հսկայական վիհ աշխատանքի պաշտպանության desiderat-ների և նրանց իրագործման յեղանակների միջև։ Այս հեղինակի աչքում կապիտալիզմը դյուղում ավելին չե, քան մի «տխուր յերևույթ»։ Զնայած վոր նա քաղաքում ել և տեսնում նույնպիսի կապիտալիզմ խոշոր չափերով, տեսնում ե, թե ինչպես և կապիտալիզմը յինթարկել իրեն վիհ մյուս ժողովրդական աշխատանքի բոլոր բնագավառները, այլև նույնիսկ «պրոդրնսիվ» արտադրանությունը, վորը բուրժուական միջոցներ և հրամցնում ժողովրդի անունից և հանուն ժողովրդի,—չնայած դրան,

*—Նախկին, անփոփոխ դրությունն Խմբ.։

**—Թողեք դեպքերը դնան իրենց կարգով։ Խմբ.։

նա չի կամենում ընդունել վոր բանը մեր հասարակական տնտեսության հատուկ կազմակերպությունն ե, և իրեն մխիթարում և ցնորքներով, վոր այդ միայն «ճնշող պայմաններից» առաջացած տխուր յերևույթ ե։ Իսկ յերթե, իրը, կողմնակից չլինենք չմիջամտելու թեորիային, այն ժամանակ կարելի յե վերացնել այդ պայմանները։ Այո, յերթե ու գուցե թե։ Բայց դեռևս յերբեք Ռուսիայում չի յեղել չմիջամտելու քաղաքականություն, միշտ յեղել և միջամտություն... հոգուտ բուրժուազիայի, և «հետաձգյա հանգստության» քաղցր անուրջները միայն կարող են սրա վոխհատան հույս ծնել՝ առանց «դասակարգերի միջև սոցիալական ուժը վերաբաշխելու», ինչպես ալ. Ստրուվեն և ասում։

«Մենք ուռանում ենք, վոր մեր հասարակությանը հարկավոր են իդեալներ—քաղաքական, քաղաքագիտական ու այլ իդեալներ—գլխավորապես նրա համար, վորպեսզի նրանց պաշարն անելուց հետո կարելի լինի արդեն վոչ մի բանի մասին չմտածել, վոր նա այդ իդեալները վորոնում և վոչ թե պատահականական հույզով, այլ հետաձգյա հանգստության համար, վոր նա հիասթափվում և այդ իդեալների նկատմամբ, վոչ թե հոգեկան տանջանքներով, այլ արկածախնդրության համար։ Այդպես և մեր հասարակության գոնե անդրին մեծամասնությունը, Այդպես և մեր հասարակության գոնե անդրին մեծամասնությունը նրան, իսկապես ասած, հարկավոր ել չե վոչ մի իդեալ, վորովհետև նա կուշտ և և միանգամայն բավարարվում և վորովայնային պրոցեսներով»։

Մեր լիբերալ-նարոդնիկական հասարակության հիանալի բնութագիրը։

Հարցնում ենք, ով և հիմա ավելի հետևողական. «նարոդնիկներն» արդյոք, վորոնք շարունակում են իրենց հոգատարությունն ու դայակությունն այդ «հասարակության» նկատմամբ, հյուրասիրում նրան «դալիք» կապիտալիզմի, ինչպես հոդվածի հեղինակն և արտահայտվել, «սպառնացող չարիքի»* սարսափների նկարագրությամբ, վորոնք նրա

* Ինչին սպառնացող,—վորովայնային պրոցեսներին կապիտալիզմը վոչ միայն չի «սպառնում» նրանց, այլ ընդհակառակը, խոստանում և ամենաանուրջ ու ամենաքնքուշ խորտիկները։

ներկայացուցիչներին կոչում են թողնելու այն սխալ ուղին, դեպի վորը «մենք» թեքվել ենք և այլն,—թե՞ մարքսիստները, վորոնք այնպես «նեղմիտ» են, վոր իրենց կտրակատեսակ բաժանում են հասարակությունից և անհրաժեշտ են համարում դիմել բացառապես նրանց, ովքեր չեն «բավարարվում» և չեն կարող բավարարվել «վորովայնային պրոցեսներով», ում համար իդեալները հարկավոր են, ում համար նրանք ամենօրյա կյանքի հարց են։

Այս՝ ինստիտուտի սահմանում վերաբերմունք է,—շարունակում է հեղինակը։ Այս

«վկայում է մարքի ու զգացմունքի խորին ապականման մասին... դեռևս չերեկը չի եղել այդպիսի վայելուչ, լաքած, այդպիսի անմեղ ու միևնույն ժամանակ խորին ապականություն։ Այդ ապականությունն ամբողջությամբ արդյունք է մեր նորագույն պատմության, քաղքենիական կուլտուրայի սաացվածք (այսինքն, ավելի հզգրիտ ասած՝ բուրժուական, կապիտալիստական կարգերի։ Կ. Տ.*), վոր զարգացել է պայուքյան, աղնվական սենտիմենտալիզմի, տգիտության ու ծուլության հողի վրա։ Քաղքենիությունը կյանքի մեջ մտցրեց իր դիտությունը, իր բարոյական կոդեքսն ու իր սոցիալական հարաբերությունները»։

Թվում է, թե հեղինակն այնքան ճիշտ է գնահատել իրականությունը, վոր հասկանա նաև միակ հնարավոր ելքը։ Ցեթե ամբողջ բանը մեր բուրժուական կուլտուրան է,—նշանակում է՝ չեն կարող լինել ապագայի այլ «առհավատչյանքեր», բացի նրանից, ինչ կա այդ բուրժուազիայի «հոգևոր» մեջ, վորովհետև մենակ նա է վերջնականապես «շերտավորված» այդ «քաղքենիական կուլտուրայից», վերջնականապես ու անդառնալի կերպով թշնամական դրված նրա հանդեպ և անընդունակ է մի վորևե այնպիսի կոմպրոմիսի, վորից այնքան հարմար և «լիբերալ անցագիրը» ձեռվելը։

Բայց վոչ։ Դեռևս կարելի չի չերազել «կուլտուրան»

* Կ. Տ. տառերը Լենինի Կ. Տաուլին կեղծանվան սկզբնատառերն են։ Խմբ.

իրոք սոսկ քաղքենիություն էր, սոսկ ապականություն։ Բայց չե՞ վոր այդ միայն հետևանք է հին ապայության (հենց ինքը նոր ընդունեց, վոր այն առեղծել է նորագույն պատմությունը, այն պատմությունը, վորը հենց վոչնչացրել է հին ապայությունը) ու ծուլության, նշանակում է՝ մի պատահական բան է, չունի հաստատուն արմատներ և այլն և այլն։ Սկսում են ֆրազները, վորոնք վոչ մի խնայած չունեն, բացի փաստերից չերես դարձնելուց ու այն անհամեմատ չերազանքից, վորն աչքերը փակում է «փոխադարձաբար հակադիր ուժերի» առկայության հանդեպ։ Լսեցնք.

«Ներան (քաղքենիությանը) հարկավոր է, վոր նրանք (գիտությունը, բարոյական կոդեքսը) հաստատվեն ամբոխի վրա, գերակայության մեջ, դատարանում ու կյանքի այլ կետերում [Վերևում մենք տեսանք, վոր քաղքենիությունը նրանց արդեն արմատացրել է կյանքի այնպիսի խորը հետում, ինչպիսին գյուղն է։ Կ. Տ.]։ Նա, նախ և առաջ, չի գտնում սրա համար բավականաչափ ոլիտանի մարդիկ և անհրաժեշտության մղումով դիմում է այլ սոցիալական մարդկանց [Ուբեմն այդ ռուսական բուրժուազիան է, վոր «չի գտնում մարդիկ»։ Այս հերքել անգամ չարժե, մանավանդ վոր ինքը հեղինակն իրեն հետքի հետևում է Կ. Տ.]։ Այդ մարդիկ գործը չգիտեն [ռուս կապիտալիստները։ Կ. Տ.], նրանց քայլերն անփորձ են, շարժումներն անճոռնի [բավականաչափ «գործը դիտեն», վորպեսզի տասնյակ և հարյուրավոր տոկոսներով շահույթ ստանան, բավականաչափ «փորձված» են, վորպեսզի ամենուրեք գործադրեն trucksystem*-ը, բավականաչափ ճարպիկ են, վորպեսզի ստանան հովանավորական մաքսեր։ Միայն մանր բուրժուայի, միայն այն մարդու չերևակայության մեջ կարող էր ծագել այսպիսի ֆանտազիա, ով իր վրա անմիջապես և ուղղակի չի զգում այդ մարդկանց ճնշումը։ Կ. Տ.]։ Նրանք աշխատում են նմանվել արևմտա-չեվրոպական բուրժուազիային, գրքերն են բերել տալիս, ջանք են [ինքը հղինական արդեն պետք է ընդունի իր այս բոպեին հարմնած չերազանքի ֆանտաստիկությունը, վոր իբրև թե մեզանում «քաղքենիական կուլտուրան» պարտացել է տգիտության հողի վրա։ Սխալ և հենց նա չի բերել հետևեվրոպական ռուսաստանին սրա կուլտուրականությունը,

*—բանվորների աշխատավարձն ապրանքով վճարելու սիստեմը. Խմբ.։

803
37

«կրթվածությունը»։ «Կարմիր դույնով շպարել հմարաուեյությունը», քշնամուն պատկերել անդոր ու վոտքի տակ հող չունեցող՝ «առհասարակ մեջտ ավելորդ է» և Ց. Տ.]։—յերբեմն նրանք ցավում են անցյալի համար. քան յերբեմն խորհում ապագայի մասին, վորովհետև ինչ-վոր տեղից ձայներ են լսվում, թե քաղքենիության լիակ իշխանությունը միայն ժամանակավոր է, թե նրա դիտությունը չի դիմանում քննադատության, իսկ բարոյական կոդեքսն անպետք է բոլորովին»։

Այդ ոռւս բուրժուազիան և մեղանչում՝ «անցյալի հանար ցավելով», «ապագայի մասին խորհելով»։ Գնացեք, Ք։ Ինչ հաճույք են ստանում մարդիկ՝ իրենք իրենց ձեռք առնելով, այնպես անսահմանորեն զրպարտելով ռուսական խեղճ բուրժուազիային, վորն իրրև թե շփոթվել և «քաղքենիության անպետքությունը» հավատում ձայներից։ Դրա հակառակը չի՞ մխթե. արդյոք «չշփոթվեցրին» այդ «ձայները», յերբ վոր նրանց վրա մի լավ բղավեցին, այդ նրանք չեն արդյոք, վոր խորհում են ապագայի մասին»...

Ցեղ այսպիսի պարոնները դեռ զարմանում են և ձևացնում են, վոր չեն հասկանում, թե ինչի համար են նրանց ռոմանտիկները կոչում։

«Այնինչ փրկվել և պետք։ Քաղքենիությունը չի խնդրում, այլ կոբըստյան մտնելու սպառնալիքով հրամայում է աշխատանքի գնալ* Գնաս—առանց հագի կմնաս և կհևես փողոցում կանգնած բարձր կանչել. «պարտոնաթող շատրս-կապիտանին վողորմացեք», կամ թե չե բոլորովին կատակս սպվեց։ Ցեղ ահա սկսվում է աշխատանքը, լսվում ճվոց, ճռնչոց, դատարկաբանություն, տեղ չե ունենում իրարանցում։ Աշխատանքը ջատագովական և, անհետաձգելի։ Վերջապես մեխանիզմը բանի չե գցվել կարծես թե սկսում են պակասել ճվոցն ու սուր հընչյունները, մասերը կարծես թե դործում են կանոնավոր, միայն լսվում*

---

* Նկատեցեք այս, ընթերցող։ Ցերբ վոր նարոդնիկն է ասում, վոր մեզանում, Ռուսաստանում «բաղքենիությունն է հրամայում աշխատանքի գնալ»,—այն ժամանակ այս ճշմարիտ է։ Իսկ յերբ մարքսիստն ասի, թե մեզանում սերտաճում և արտադրության կապիտալիստական յեղանակը,—այն ժամանակ պ. Վ. Վ.-ն կճչա, թե նա ձգտում է «ժողովրդատական (sic!!!) հասարակակարգը կապիտալիստականով փոխարինելու»։

և ինչ-վոր անճոռնի բանի դերդյուն։ Բայց այդ ել ավելի սարսափելի չե, տախտակներն ավելի ու ավելի յեն ծռվում, պատատակները թուլանում—վելվելում են, և մեկ ել տեսար, այդ ամենը ջարդուփշուր ցերեսցան յեղավ։

Այս տեղն այն պատճառով է առանձնապես բնորոշ, վոր ցայտուն, հակիրճ, գեղեցիկ ձևով պարունակում է այն դատողություններն սխեման, վորոնց գիտական ձև տալ են սիրում Ռուսաստանի նարոդնիկները։ Ցեղնելով անվիճելի, միանգամայն անտարակուսելի փաստերից, վորոնք ապացուցում են կապիտալիստական տնտեսակարգի որով յերևան յեկող հակասությունների առկայությունը, առկայությունը հարստահարման, ժահացման, գործազրկության և այլն, նրանք ձիգ են գործ դնում ապացուցելու, վոր կապիտալիզմն անչափ վատ բան է, «անճոռնի» մի բան [համմ. Վ. Վ.-ին, Կաբլուկովին (Բանվորների հարցը դյուղատնտեսության մեջ), մասամբ պ. Նիկոլայ —ոնին], վորը «ուեկ ել տեսար» ջարդուփշուր ցերեսցան յեղավ։

Նայում ենք, ահա շատ ու շատ տարի յե արդեն, ինչ նայում ենք և տեսնում, վոր ռուս ժողովրդին աշխատանքի դնալու հրամանն ուղղ այդ ուժը շարունակ ամրանում է և աճում, ամբողջ Ցեվրոպայի առաջ պարծենում իր կողմից ստեղծվող Ռուսաստանի հզորությամբ և ուրախ է, իհարկե, վոր «ձայներ են լսվում» միայն այն մասին, վոր անհրաժեշտ է հուսալ, թե «պատուտակները կվթուլանան—կլընկլընկան»։

«Թույլ մարդկանց սիրտը մաղում է վախից։ «Ավելի լավ», ասում են ըմբոստ մարդիկ։ «Ավելի լավ», ասում է նաև բուրժուազիան... «արտասահմանից ավելի շուտ բերել կատնք նոր մեխանիզմ, ավելի շուտ կղտարտատենք տանու նյութերենից պլատֆորմաներ, տախտակներ ու այլ կոպտա մասերը, ավելի շուտ կունենանք հմուտ մեքենավարներ։ Մինչդեռ հասարակության բարոյական կողմն այդ ամբողջ ժամանակ դանվում է ամենավատ վիճակում։ Վոմանք բնտելանում են նոր դերծունչության և ջանում ուժից վեր, վոմանք ճռում են և հիասթափվում կյանքից»։

Եվ ոչ ռուսական բուրժուազիան «ոչ միայն չկամեցավ յուրացնելու դերարժեքը և իրեն վատ ու ոչնչով բարոյական տեսակետից (մի մոռանանք, որ մի ողջ առաջ այդ ամբողջ բարոյականությունը հանդիսացվում էր վորովայնային պրոցեսների և սպասականության)։ Հասկանալի չի, որ այստեղ արդեն ոչ մի հարկ չկա կռիվ մղելու նրա դեմ—այն էլ ինչ-որ դասակարգային կռիվ,—այլ պարզապես պետք է մի լավ կշտացնել, և նա կդադարի իրեն բռնադատելուց։

«Ժողովրդի մասին այժմ գրեթե ոչ ոք չի մտածում. մինչդեռ, ըստ բուրժուազիայի կանոնների, ամեն ինչ արվում է ժողովրդի համար, և հաշիվ նրա, մինչդեռ յուրաքանչյուր հասարակական գործիչ ու դրական-ության պարտք են համարում չերկարաբանել նրա բարիքի մասին... Այս լիբերալ-սեթևեթ ուղղությունը ճնշել է բոլոր մնացածներին և դարձել գերակշռող։ Մեր դեմոկրատական դարում ոչ մեկն պարոն Սուվորինն է հրապարակով խոստովանում իր սերը դեպի ժողովուրդը և ասում. «մի բան կա մեջս սիրել եմ և կմնանեմ այդ սիրո հետ մինչև—այդ ժողովուրդն է։ կա ինքս ժողովրդի մեջից եմ գալիս

և, թե պետք և չերես դարձնել հասարակությունից և գնալ բուրժուազիայի հակոտնյայի մոտ։

Վոչ, պետք և վարկ քարոզել «իսկական չքավորներին» համար։

«Ո՞վ և ավելի մեղավոր իրերի այսպիսի խառնաշփոթ դրության համար, գրականությունը թե հասարակությունը—դժվար և վորոշելը, ասենք վորոշելն էլ բոլորովին անօգուտ եւ Ասում են, ձուկը գլխից է հոտում, բայց չես այդ զուտ խոհարարական դիտողությանը վոչ մի նշանակություն չեմ տալիս։

Բուրժուական հասարակությունը քայքայվում և—ահա ուրեմն հեղինակի միտքը։ Արժե ընդգծել, վոր հենց այդ և մարքսիստների չելակետը։

«Մինչդեռ, չերբ մենք սեթևեթում ենք գյուղի հետ և աչքով անում նրան, պատմության անիվը պտտում է, գործում են տարերային ուժերը, կամ ավելի հասկանալի ու պարզ ասած՝ կյանքին կառչում են ամեն տեսակի ծակամուտ մարդիկ և յուրակերպ վերակառուցում այնՄինչ գրականությունը կվիճի գյուղի մասին, մոժիկի բարեկեցության ու գիտելիքների բացակայության մասին, մինչ հրապարակախոսությունը ամբողջ դյուլերով թանաք կգործածի հողատիրության ձևերի հարցերին նվիրված հոդվածների համար, մինչ հարկային հանձնաժողովը կշարունակի քննության չենթարկել հարկային բարեկարգումը,—գյուղը վերջնականապես ընչազուրկ կդառնա։

Ահա թե ինչ։ «Մինչ մենք խոսում ենք—պատմության անիվը պտտվում է, գործում են տարերային ուժերը»։

Ինչպիսի աղմուկ կբարձրացնեիք դուք, բարեկամներ, եթե չես ասեի այդ։

Չերբ վոր մարքսիստները խոսում են «պատմության անիվի ու տարերային ուժերի» մասին՝ միաժամանակ ճշտորեն պարզաբանելով, վոր այդ «տարերային ուժերը» զա, գացող բուրժուազիայի ուժերն են,—սլ. նարոդնիկները գերադասում են լուռթյան մատնել այն հարցը, թե ճիշտ և արդյոք և ճիշտ են գնահատված այդ «տարերային ուժերի» աճման միտումները, և անանցանելի անհեթեթություն շաղակրա-

տել այն մասին, թե վորպիսի «միստիկներ ու մետաֆիզիկներ» են այն մարդիկ, վորոնք ընդունակ են խոսելու «պատմության անիվի» ու «տարերային ուժերի» մասին։

*Նարոդնիկի՝ մեջբերված խոստովանության ու մարքսիստների սովորական դրույթի միջև տարբերությունը,—և շատ էական տարբերությունն, — այն է, վոր մինչդեռ նարոդնիկի համար այդ «տարերային ուժերը» վերածվում են «ծակամուտ մարդկանց», վորոնք «կառչում են կյանքին)», մարքսիստի համար տարերային ուժերը մարմնանում են բուրժուազիայի դասակարգի մեջ, վորը կապիտալիստական ֆորմացիա հանդիսացող հասարակական «կյանքի» արդյունքն ու արտահայտությունն է, և վոչ թե պատահաբար կամ դրսից՝ լինչ-վոր տեղից «կառչում են կյանքին»։ Զանազան վարկերի, հարկերի, հողատիրության ձևերի, վերաբաժանումների, բարելավումների ու այլ նման չերևույթների մակերեսի վրա մնալով՝ նարոդնիկը չի կարող տեսնել բուրժուազիայի խոր արմատները ռուսական արտադրական հարաբերությունների մեջ, ուստի և իրեն մխիթարում է ժանկական պատրանքներով, թե դրանք միայն «ծակամուտ մարդիկ» են, և ուրիշ վոչինչ։ Ցավ բնական է, վոր այդպիսի տեսակետից, իրոք, բացարձակապես անըմբռնելի կլինի, թե այստեղ լինչ առնչություն ունի դասակարգային կռիվը, չերբ վոր բանը միայն «ծակամուտ մարդկանց» վերացնելն է։ Բնական է, վոր պ. պ. նարոդնիկները մարքսիստների՝ այդ կռվին վերաբերող ուժգին ու հաճախակի ցուցումներին պատասխանում են մի այնպիսի մարդու վոչինչ չհասկացող լռությամբ, վորը չի տեսնում դասակարգը, այլ տեսնում է միայն «ծակամուտ մարդիկ»։

Դասակարգի դեմ կռվել կարող և միայն ուրիշ դասակարգը, այն էլ անպատճառ այնպիսի դասակարգը, վորն արդեն միանգամայն «շերտավորված» և իր ճշնամուց, միանգամայն հակադիր և նրան՝ բայց «ծակամուտ մարդկանց» դեմ, հասկանալի չե, բավական է, վոր կռվի մենակ վոստիկանու-

թյունը, ծայրահեղ դեպքում՝ «հասարակութիւնն» ու «պետութիւնը»։

Սակայն մենք կտեսնենք շուտով, թե ովքեր մարդիկ են այն «ծակամուտ մարդիկ» իր իսկ նարոդնիկի բնութագրությամբ, ովքեր են նրանց արմատները, ովքեր համաչնապարփակ՝ նրանց հասարակական ֆունկցիաները։

Այնուհետև, «ժողովրդի պասիվ բարեկամներին» վերաբերող՝ վերը մեջբերած խոսքերից հետո հեղինակն անմիջապես շարունակում է.

«Այդ ավելի վատ բան է, քան թե դիվված չեզոքությունը քաղաքականության մեջ, ավելի վատ՝ այն պատճառով, որ այստեղ միշտ ակտիվ ոգնություն է ցույց տրվում ուժեղագույնին։ Վորքան էլ որ անկեղծ լինի պասիվ բարեկամն իր զգացմունքներով, վորպիսի հաճախ ու հանդիսո տեղ նա չգնա զբաղվել կենսական ասպարեզում, նա, մեկ է, պիտի վնասի բարեկամներին»...

...«Այն մարդկանց համար, վորոնք ավելի կամ պակաս ամբողջական են ու անկեղծ սիրում են ժողովուրդը»*, իրերի այսպիսի դրությունը վերջապես դառնում է անտանելի ստիճանի նողկալի։ Նրանք ամոթի ու զղվանքի զգացումով են լսում այդ մնապաղաղ ու քաղցր-մեղցր սիրային բացատրությունը, վոր տարեցտարի կրկնվում է յուրաքանչյուր որ, կրկնվում է թե դիվանատներում, թե բարձրաշխարհիկ սալոններում, թե գինետներում՝ կլիկայի շրի առաջ, և յերբեք չի վերածվում գործի։ Ահա թե ինչու չին նրանք վերջնվերջո հանդում այդ ամբողջ խառնուրդի համաչնապարփակ բացատրանը»։

Ռուսական նախկին նարոդնիկների՝ լիբերալների նկատմամբ ունեցած վերաբերմունքի այս բնութագիրը գրեթե ամբողջովին հարմար է գալիս մարքսիստների՝ այժմյան նարոդնիկների նկատմամբ ունեցած վերաբերմունքին։ Մարքսիստների համար նույնպես արդեն «անտանելի չի» լսել «ժողովրդին» պրվելիք ոգնության մասին, վոր լինելու չի վարկերով, հողերի գնումներով, տեխնիկական բարելավումներով, արտելներով, հասարակական հերկումներով*, և այլն։ Նրանք էլ այս ամբողջ լիբերալ-նարոդնիկական խառնուրդի «համաչնապարփակ բացատրանն» են պահանջում այն մարդկանցից, վորոնք կամենում են լինել, չասենք «ժողովրդի», վնչ, այլ նրա կողմը, ում բուրժուազիան հրամայում է աշխատանքի գնալ։ Նրանք գտնում են, վոր «անտանելի» կեղծավորություն է Ռուսաստանի համար ուղիներ վորոնելու մասին խոսելը, ինչպես և «սպառնացող» կապիտալիզմի արհավիրքների մասին, «ժողովրդական արդյունաբերության կարիքների» մասին խոսելը, յերբ վոր այդ ժողովրդական արդյունաբերության բոլոր բնագավառներում կապիտալն է թագավորում, տեղն ունի շահերի խուզ կռիվ, և պետք է վնչ թե կռծկել այն, այլ յերևան հանել,—վնչ թե յերազել, թե «լավ կլիներ առանց կռվի»**, այլ զարգացնել այդ կըռիվը ամբողջ դեմոկրատական հաջորդականության, հետևողականության ու, վոր գլխավորն է, գաղափարականության տեսակետից։

«Ահա այդ պատճառով էլ վերջին-վերջո յերևան են գալիս քաղաքական վորոշ պահանջներ, կարգին լինելու վորոշ կատեգորիկ պահանջներ, խիստ ու հաճախ նույնիսկ նեղ պահանջներ, և այդ հատկությունների համար նրանց մանավանդ չեն սիրում լայնաթև լիբերալները, վորոնք սիրում են լայնարձակություն խավարի մեջ և մոռանում են նրանց տրամաբանական ծագումը»։

Հիանալի ցանկություն։ Անպայման անհրաժեշտ են իսկ վոր «խիստ» և «նեղ» պահանջներ։

Բայց ցավը այն է, վոր նարոդնիկների բոլոր հիանալի

---

* Վերջին անորոշ են այստեղ «պասիվ բարեկամներից» տարբերվող հատկանիշները։ Չէ՞ վոր նրանք էլ լինում են «ամբողջական» մարդիկ և, անտարակույս, «անկեղծորեն» սիրում են ժողովրդին։ Նախընթաց հա-

կադրությունից ակնհայտ է, վոր պասիվ մարդուն պետք է հակադրել նրան, ով ժանակցում է «փոխադարձաբար հակադրը» ֆասատական ուժերի կռվին։ Hier liegt der Hund begraben (Ահա թե վորտեղ է թաղած շան գլուխը)։ Խմբ.։

* Գ. Ռուժակովը «Р. Б-во»-յի 1894 թ № 7-ում։

** Գ. Կրիվենկոյի արտահայտությունն է («Р. Б.» 1894, № 10) ի պատասխան պ. Սաբուվեյի այն խոսքերի, վորոնք վերաբերում են «հասարակական գործակարգերի դժան կռվին»։

մտադրությունները մնում էին «անմեղ ցանկություններին» ընդառաջառում։ Չնայած մի որ նրանք գիտակցում էին այդպիսի պահանջների անկատարությունը, չնայած մի որ նրանք բավականաչափ շատ ժամանակ ունեին նրանց իրագործման համար,—նարոդնիկները մինչև այժմ չեն մշակել այդ պահանջները, նրանք շարունակ մխաձուլվել են Ռուսաստանի լիբերալ հասարակության հետ՝ մի ամբողջ շարք աստիճանական փոխանցումներով, նրանք շարունակում են միաձուլվել նրա հետ մինչև այժմ էլ *։

Ուստի—թող նրանք արդեն իրենցից դժգոհեն, յերբ այժմ մարքսիստները նրանց դեմ առաջադրում են իրոք շատ «խիստ» ու շատ «մեղմ» պահանջներ, — բացառաբար մեկ դասակարգի (հայտնապես այն դասակարգին, որ «շերտավորված և կյանքից») բացառապես ծառայելու պահանջները, այդ դասակարգի ինքնուրույն զարգացմանն ու ամրապնդությանը ծառայելու պահանջները, Ռուսաստանի «կարգին» լուրջ ուսանողների «քաղաքացիական» «կարգինության» իրենց լիովին խղելու պահանջները։

«Վորքան էլ խիստ թվան այս պահանջները մանավանդ կնոջերում, համենայն դեպս վոչինչ չես կարող ասել ընդհանուր պահանջի. յերկուսից մեկը. կամ յերկոք իրոք բարեկամներ, կամ դարձեք բացահայտ թշնամիներ»։

«Մենք ներկայումս ապրում ենք խիստ կարևոր պատմական պրոցես—յերբորդ դասի ձևավորման պրոցեսը։ Մեր աչքի առաջ կատար-

* Պարզամիտ նարոդնիկներից վոմանք, միամտաբար չհասկանալով, վոր իրենց դեմ են գրում, նույնիսկ պարծենում են սրանով։

«Մեր ինտելիգենցիան ընդհանրապես, դրականությունը մասնավորապես,—գրում է պ. Վ.-ն Սալտիկովի դեմ — նույնիսկ ամենահեղափոխական հոսանքների ներկայացուցիչներն, այսպես ասած, կրում են նարոդնիկական բնույթ» («Неделя» 1894 թ. № 47, էջ 1506)։

Ինչպես վոր կյանքում մանր արտադրողը մի շարք աննկատելի փոխանցումներով միաձուլվում է բուրժուազիայի հետ,—այդպես էլ գրականության մեջ նարոդնիկական անմեղ ցանկությունները դառնում են «լիբերալ անցագիր» վորովայնային պրոցեսներ պարունակողների, կաթի ռեբը քաղողների համար և այլն։

վում և ներկայացուցիչների բնարանք և տեղ ունի կազմակերպված հասարակական նոր ուժի, վորը պատրաստվում է կյանքը կառավարելու։

Դեռևս «պատրաստվում» է միայն։ Իսկ ով է «կառավարում»։ Ուրիշ վոր «հասարակական ուժը»։

Արդյոք վոչ այն ուժը, վորն արտահայտվում էր à la «Вестъ» որգաններում։ Անհնարին է։ Մենք վերջ թե 1894 թվականին ենք գտնվում, այլ 1879 թ., «սրտի դիկտատուրայի»* նախորյակին,—յերբ վոր, հոդվածի հեղինակի արտահայտությամբ, «ծայրահեղ» պահպանողականներին մատով են ցույց տալիս փողոցում», նրանց վրա «քրքջում են ամբողջ կոկորդով մեկ»։

Ժողովուրդը, աշխատավորները—բացառական պատասխան և տալիս հեղինակի ամբողջ հոդվածը։

Այն էլ է ասում դեռևս, թե «պատրաստվում և կառավարելու»։ Ջե, այդ ուժը շատ վաղուց և «պատրաստված է», շատ վաղուց է «կառավարում»,—իսկ «պատրաստվում են» միայն ու միայն նարոդնիկները—Ռուսաստանի համար լավագույն ուղիները ընտրելու և յերևի այդպես էլ պիտի պատրաստվեն մինչև այն ժամանակ, յերբ դասակարգային հակասությունների հետևողական զարգացումը հետ կմղի, ասպարեզից դուրս կշպրտի բոլորին, ովքեր խուսափում են այդ հակասություններից։

«Այդ պրոցեսը, վոր Ձեվրոպայում սկսվել է մերից շատ ավելի առաջ, շատ պետությունների մեջ արդեն հասել է վախճանին**, մյուսներում

* «Սրտի դիկտատուրա» կոչվել է Գեներալ-կարգադրիչ հանձնաժողովի պետ Լորիս-Մելիքովի քաղաքականությունը կրճատելի դեմ 1880 թ. ժողած պայքարում։ Այդ քաղաքականությունը ռուսական բյուրոկրատիայի շատ կարճաառ մի վորձն էր՝ լիբերալների ու հեղափոխի հետ սիրաբանելով նրանց համակրանքները հետացնելու յերկրում աճող հեղափոխական շարժումից։ Խմբ.։

** Այսինքն լինչ է նշանակում այդ՝ «հասել է վախճանին»։ Արդյոք այն, վոր արդեն յերևում է նրա վախճանը, վոր արդեն հավաքված է «նոր ուժը»—այն ժամանակ նա մեռնում էլ է հասնում վախճանին։ Թե

Նա դեռևս կասեցվում է ֆեոդալիզմի բեկորներով և բանվորական դասակարգերի հակազդեցությամբ, բայց պատմական անիվը այստեղ էլ տարեցտարի ավելի ու ավելի չի վիշտում այդ բեկորները և կյանքը հարթում նոր կարգերի համար»:

Ահա թե ինչ ստիճան մեր նարոդնիկները չեն հասկանում արևմտա-եվրոպական բանվորական շարժումը: Նա, ինչպես տեսնում եք, «կասեցնում է» կապիտալիզմը,—և նրան, ինչպես «բեկոր», դնում են ֆեոդալիզմի կողքին:

Ակնառու ապացույց այն բանի, որ ոչ միայն Ռուսաստանի, այլև Արևմուտքի վերաբերմամբ մեր նարոդնիկները ի վիճակի չեն ըմբռնելու, թե ինչպես կարելի է կռվել կապիտալիզմի դեմ ոչ թե նրա զարգացումը «կասեցնելով», այլ նրա արագացումով, ոչ թե հետևից, այլ առջևից, ոչ թե ռեակցիոն կերպով, այլ պրոգրեսիվ:

«Ընդհանուր գծերով այդ պրոցեսը հետևյալն է. աղնվականության ու ժողովրդի միջև գոյանում է նոր հասարակական խավ այն տարրերից, որոնք իջնում են վերևից, ու այնպիսիներից, որոնք բաքձրանում են. դրանք, չեթե կարելի է այսպես արտահայտվել, ունեն համամասն տեսակարար կշիռ: Այդ տարրերը սերտորեն համախմբվում են, միանում, ներքին խորը փոփոխություն կրում և սկսում փոխոխել թե վերին ու թե ներքին խավերը՝ նրանց հարմարեցնելով իրենց պահանջներին: Այդ պրոցեսն ինքնըստինքյան չափազանց հետաքրքրական է, իսկ մեզ համար նա ունի առանձնապես կարևոր նշանակություն: Այստեղ մեզ համար մի ամբողջ շարք հարցեր են ծագում. արդյոք չերրորդ դասի ակրապետությունը կազմում է յուրաքանչյուր ժողովրդի քաղաքակրթության ճակատագրական ու անխուսափելի ստիճանը...»:

Ի՞նչ անհեթեթություն է: Վիրտեղից է և ինչ կապ ունի այստեղ որհասական «անխուսափելիությունը»: Ինքը հեղինակը չէ՞ր, որ նկարագրում էր և ներքևում էլ ավելի ամրապնդելու չի չերրորդ դասի տիրապետությունը մեզանում, սուրբ Ռուսիայում 70-ական թվականներին:

այն, որ այնտեղ այլևս ծնունդ չի առնում 3-րդ դասը. այդ սխալ է, որովհետև այնտեղ էլ կան դեռևս մանր արտադրողներ, որոնցից ծնունդ են առնում բուրժուազիայի խմբիկները ու պրոլետարիատի մասնաճյուղերը:

Հեղինակն, ակներև է, վերցնում է այն թեորիական ապացույցները, որոնց հետևը թաղնվում էին մեր բուրժուազիայի ներկայացուցիչները:

Դե, մինթե չերազական մակերեսայնություն չի այսպիսի հերյուրանքները դուռ վռնդու տեղ ընդունելը, չերբ չեն հասկանում, որ այդ «թեորիական» դատողությունների հետևը կանգնած են շահերը, այն հասարակության շահերը, որը կանգնած է նրանց հետևում,—բուրժուազիայի շահերը:

Միայն ռոմանտիկը կարող է կարծել, թե կարելի չի շահերի դեմ կռվել սիլլոգիզմներով:

«...չի կարելի արդյոք, որ պետությունը մի սահմանից ուղղակի անցնի այսօրին, առանց որևէ ապառս-մորտալների, որ յուրաքանչյուր քայլափոխում չերևում են չափազանց նախատես փիլիստերների աչքերին, և առանց լսելու ֆատալիստներին, որոնք պատմության մեջ տեսնում են մի ճակատագրական կարգ, որի հետևանքով չերրորդ դասի տիրապետությունը նույնպես անխուսափելի չի պետության համար, ինչպես մարդու համար անխուսափելի չի ծերությունը կամ պատահելությունը...»:

Ահա թե մեր իրականության վորպիսի խոր ըմբռնում ունեն նարոդնիկները: Չեթե պետությունն աջակցում է կապիտալիզմի զարգացմանը, այդ տեղի չի ունենում վոչ թե այն պատճառով, որ բուրժուազիան ունի այնպիսի նյութական ուժ, որ «աշխատանքի չի ուղարկում» ժողովրդին և իր կողմը թեքում քաղաքականությունը: Ամենևին վոչ: Բանն այն է պարզապես, որ պրոֆեսորներ Վերնադսկիները, Զիչերինները, Մենդելեյեվները և այլն սխալ թեորիաներ են դավանում «ճակատագրական» կարգի մասին, իսկ պետությունը «լսում է» նրանց:

...«Վերջապես չի կարելի արդյոք չերկրորդ կարգի բացառական կողմերը մեղմացնել, մի կերպ փոխակերպել այն կամ կրճատել նրա տիրապետության ժամանակը: Մինթե իսկապես պետությունը մի այնպիսի բներա, անկամ ու անզոր բան է, որը չի կարող ազդել իր ճակատագրի վրա և փոփոխել այն. մինթե իսկապես նա նախախնամության կողմից դրվող մի հոլ է, որը շարժվում է միայն վորոշ ուղիով, մեկայն

վորոշ ժամանակ և կատարում է վորոշ թվով պատյանները, կամ նման է խիստ սահմանափակված կամք ունեցող օրգանիզմի. մինչև խոպոպը նրան կառավարում է թուջե վիթխարի անիվը նման մի բան, վորը հզոում է ամեն մի խիղճի, ով համարձակվում է գնալ մարդկային չհրճանկությունը առնող միջամտության ուղիները փորձելու։

Այս շատ բնորոշ տեղ է, վորն առանձին ակնառություն ցույց է տալիս ռեակցիոնության, մաձր-բուրժուական ստահակների շահերի այն ներկայացուցչության, վոր հանդես էր բերվում հանդես է բերվում Ռուսաստանում նարոդնիկների կողմից։ Թշնամաբար տրամադրված լինելով կապիտալիզմի դեմ՝ մանր արտադրողները մի անցումային դասակարգ են, վորը շաղկապվում է բուրժուազիայի հետ և այդ պատճառով ի վիճակի չէ հասկանալու, վոր իրենց համար անհաճելի խոշոր կապիտալիզմը պատահականություն չէ, այլ ուղղակի արդյունքն է ժամանակակից ամբողջ տնտեսական (թե սոցիալական, թե քաղաքական ու թե իրավական) կարգի, վորը գոյանում է վերթափոխությամբ հակադիր հասարակական ուժերի կռվից։ Միևնույն այս բանը չհասկանալն է, վոր ի վիճակի չի հասցնում այնպիսի բացարձակ անհիմնություն, ինչպես «պետությունը» գիտնի է, կարծես թե քաղաքական կարգերը չեն արմատացած անտեսականների մեջ, չեն արտահայտում նրանց, չեն ծառայում նրանց։

Մինչև պետությունը մի իներտ բան է,—հուսահատությամբ հարցնում է մանր արտադրողը, տեսնելով, վոր նրա շահերի վերաբերմամբ պետությունն, իրոք, զարմանալի իներտ է։

Վո՛չ—կարող եմինք պատասխանել մենք նրան,—պետությունը վո՛չ մի դեպքում իներտ բան չէ, նա միշտ գործում է և գործում է շատ յուրահատուկ, միշտ ակտիվ և յուրքեք պասսիվ,—և հեղինակն ինքը մի փոքրիկ ևջ առաջ բնութագրեց այդ ակտիվ գործունեությունը, նրա բուրժուական բնույթը, նրա բնական պատուհասը։ Միայն այն և վատը, վոր հեղինակը չի կամենում տեսնել նրա այդպիսի բնույթի ու ուսուցման հասարակական տնտեսության կապիտալիստական կազմակերպության մեջ յուրած «շաղկապը», և այդ պատճառով այնպես մակերեսային է։

Մինչև պետությունը հոլ է, մինչև թուջե անիվ է այն,—հարց է տալիս Kleinbürger*-ը՝ տեսնելով, վոր «անիվը» պտտվում է ամենևին վոչ այնպես, ինչպես նա կկամենար։

Ո՛չ, վո՛չ—կարող եմինք մենք պատասխանել նրան.—հոլ չէ այն, անիվ չէ, ֆատալի ուրենք չկա, նախախնամության կամք չէ, նրան «կենդանի անհատները» են շարժում «խոչընդոտների շարքի միջով»** (որինակ, այն դժվարության նման, վոր ցույց են տալիս անմիջական արտադրողները կամ հին-ազնվական խավի ներկայացուցիչները), հենց այն «կենդանի անհատները, վորոնք պահանջումն են գերակշռություն ունեցող հասարակական ուժին։ Ցավ այդ պատճառով վորպեսզի ատիպենք, վոր անիվը պտտվի այլ կողմ, պետք է «կենդանի անհատների» հակառակ (այսինքն հասարակական այն տարրերի, վորոնք պահանջում են վո՛չ թե իդեոլոգիական կացությունների, այլ ուղղակի արտահայտում են կենսական տնտեսական շահը) դիմենք նույնպես «կենդանի անհատների», դասակարգի դեմ պետք է դիմենք նույնպես դասակարգի։ Դրա համար բարի ու անմեղ ցանկությունները «միջամտողական ուղիների» մասին ամենևին բավական չեն,—դրա համար հարկավոր է «սոցիալական ուժի վերաբաշխումը դասակարգերի միջև», դրա համար պետք է դառնալ վո՛չ թե անմիջական արտադրողի իդեոլոգը,

* —մանր բուրժուա։ Խմբ.։

** Պ-ն Ն Միխայլովսկուն խոսքերը, վոր բերված են պ. Սարուվեյի գրքում, եջ 8. «Կենդանի անհատն իր բոլոր խոնարհությամբ ու զոհողություններով դառնում է պատմության գործիչ սկզբական պատասխանատվության Գատմության մեջ նա յե—և վո՛չ թե վորևե միստիկական ուժ—դնում նպատակները և դեպքերը շարժում նրանց ուղղությամբ այն խոչընդոտների շարքի միջով, վոր անհատի առաջ դնում են բնության ու պատմական պայմանների տարերային ուժերը։

վոր հեռու մի կողմ և կանգնած կռվից, այլ այն արտադրողն, վոր գտնվում է ամենաառաջ կռվի մեջ, վորն արդեն վերջնականապես բուրժուական հասարակության «կյանքից շերտավորված է»։ Այս է միակ, ուստի և մերձավորագույն «ուղին դեպի մարդկային յերջանկությունը», մի ուղի, վորի վրա վիճ միայն կարելի յե մեղմացնել իրերի դրության բացասական կողմերը, վոչ վիայն նրա դոյությունը կրճատել իր զարգացումն արագացնելով, այլև բոլորովին վերջ տալ նրան՝ ստիպելով, վոր «անիվը» (արդեն վոչ թե պետական, այլ սոցիալական ուժերի անիվը) պտտվի բոլորովին այլ կողմ։

...«Մեզ զբաղեցնում է յերրորդ դասի կազմակերպման պրոցեսը միայն, նույնիսկ միայն այն մարդկի, վորոնք դուրս են դալիս ժողովրդական միջավայրից և մտնում նրա շարքերը։ Այդ մարդիկ շատ քիչ են, նրանք կատարում են խիստ կարևոր հասարակական ֆունկցիաներ, նրանցից և ուղղակի կախված բուրժուական կարգի ինտենսիվության ուժեղանալը։ Առանց նրանց չի կարողանալ և վոչ մի յերկիր, վորտեղ էլ այդ կարգը մտել և։ Ցավոք նրանք չկան յերկրում կամ բավականին քիչ են կազմում, ապա անհրաժեշտ է նրանց դուրս քաշել ժողովրդից, անհրաժեշտ է այնպիսի պայմաններ ստեղծել ժողովրդական կյանքում, վորոնք նպաստեն նրանց դոյացմանն ու զարգացմանը, վերջապես անհրաժեշտ է պահպանել նրանց ու ոգնել նրանց ամեմանը, մինչև վոր կամրապնդվեն նրանք։ Այստեղ մենք պատմական ճակատագրին ուղղակի միջամտելու իրավունքն ենք հանդիսանում—միջամտություն ամենից յերեսան դուն մարդկանց կողմից, վորոնք հանդամանքներից ու բոլելյից ոգտվում են իրենց շահերի համար։ Այդ հանդամանքները դլխավորապես արդյունաբերական առաջադիմության անհրաժեշտության մեջ են (նրանում, վոր տնայնագործական արտադրությունը փոխարինվում է մանուֆակտուրային արտադրությամբ և մանուֆակտուրայինը՝ դործարանային դաշտագործության մեկ սիստեմը փոխարինվում է այլ, ավելի ազդեցիկ դաշտագործությամբ), իսկ առանց այդ առաջադիմության պետությունն, իրաք վոր, կառավարվել չի կարող բնակչության վրա իշխության ու ինջազդային հարաբերությունների պարագայում, ինչպես և քաղաքական ու բարոյական այն դժության մեջ, վոր պայմանավորվում է քիչ անտեսական զոհողություններով ու քիչ գաղափարների աճումով։ Գետակոն կյանքում անհրաժեշտ հենց այս փոփոխություններն էլ սովորաբար շաղկապում են հարուկ մարդիկ իրենց հետ ու վորոշ կարգերի հետ, վորոնք առանց դրան տարակույսի կարող կլինեն փոխարինվել և միշտ կարող են

փոխարինվել այլ կարգերով, յեթե այսօր ավելի լինեն ավելի խելոք ու յեռանդուն, քան նրանք յեղել են մինչև այժմ։

Այսպես ուրեմն, հեղինակը չի կարող չընդունել, վոր բուրժուազիան կատարում է «կարևոր հասարակական ֆունկցիաներ»,—ֆունկցիաներ, վոր ընդհանրապես այսպես կարելի յե արտահայտել—ժողովրդական աշխատանքի յենթարկումն իրեն, այդ աշխատանքի զեկավարությունն ու նրա արտադրողականության բարձրացումը։ Հեղինակը չի կարող չտեսնել այն, վոր տնտեսական «առաջադիմությունն», իրոք, «շաղկապվում է» այդ տարրերի հետ, այսինքն՝ վոր մեր բուրժուազիան իսկապես իր հետ բերում է տնտեսական, ավելի ճշգրիտ ասած՝ տեխնիկական առաջադիմություն։

Բայց այստեղ էլ սկսվում է արմատական տարբերությունը մեր արտադրողի իդեալոգի ու մարքսիստի միջև։ Նարոդնիկն այդ **իրողությունը** (բուրժուազիայի ու առաջադիմության շաղկապի իրողությունը) բացատրում է նրանով, վոր «ճարպիկ մարդիկ» ոգտվում են հանդամանքներից ու բոլելյից իրենց շահերի համար»—այլ խոսքով, այդ յերևույթը համարում է պատահական, ուստի և պարզամիտ համարձակությամբ յեզրակացնում է—«առանց վորևե տարակույսի, այդ մարդիկ միշտ (!) կարող են փոխարինվել այլ մարդկանցով», վորոնք նույնպես կատն առաջադիմություն, բայց վոչ բուրժուական առաջադիմություն։

Մարքսիստն այդ փաստը բացատրում է նյութական արժեքների արտադրության բնագավառում մարդկանց ունեցած այն հասարակական հարաբերություններով, վորոնք գոյանում են ապրանքային տնտեսության մեջ, աշխատանքը դարձնում ապրանք, աշխատանքը կապիտալին յենթարկում և բարձրացնում նրա արտադրողականությունը։ Նա այստեղ վոչ թե պատահականություն է տեսնում, այլ մեր հասարակական տնտեսության կապիտալիստական կազմակերպության անհրաժեշտ արդյունքը։ Այդ պատճառով նա յելքը տեսնում է վոչ թե այն մասին արվող շաղակրատանքների մեջ, թե

ինչ «կարող են անտարակույս» անել բուրժուաններին վտանգող մարդիկ (չե՞ որ առաջ դեռ պետք է «վտանգել», իսկ դրա համար սոսկ խոսքերը և հասարակության ու պետության դիմելը բավական չեն), այլ ավյալ տնտեսակարգի դասակարգային հակասությունների զարգացման մեջ։

Ամեն վոք հասկանում է, վոր այս յերկու բացատրությունները տրամագծորեն հակադիր են, վոր նրանցից բըղխում են գործողության յերկու միմյանց ժխտող սխեմաներ։ Պատահականությունը համաբերով բուրժուազիային՝ նրա դոգմիկը չի տեսնում նրա կապերը պետության հետ և «պարզամիտ մուժիկի» դյուրահավատությամբ ոգնության և դիմում հենց նրան, ով պաշտպանում է այդ բուրժուազիայի շահերը։ Նրա գործունեությունը հանգում է այն չափավոր ու ճշտապահ, կազմակերպ-լիբերալ գործունեության, վոր բոլորովին հավասարազոր է ֆիլանտրոպիային, վորովհետև լուրջ կերպով չի դիպչում «շահերին» և նրանց համար ամենևին սարսափելի չե։ Մարքսիստը յերես և դարձնում այս շիլափլավից և ասում, վոր ապագայի այլ «առհավատչյաներ» լինել չեն կարող, բացի «տնտեսական դասակարգերի դաժան կռվից»։

Հասկանալի յե նույնպես, վոր յերես գործողության սխեմաների այդ տարբերությունները անմիջապես ու անխուսափելիորեն բղխում են մեր բուրժուազիայի տիրապետության իրողությունը բացատրելու տարբերությունից,— ապա մարքսիստը՝ բնորիկան վիճաբանություն մղելով՝ սահմանափակվում և այդ բուրժուազիայի անհրաժեշտության ու անխուսափելիության ապացույցով (ինչպես անում և պ. Ստրուվեյի դեպքը՝ նկատի առնելով հասարակական տնտեսության ավյալ կազմակերպությունը), և յերես նարոդնիկը, մի կողմ թողնելով բացատրության այդ տարբեր յեղանակների հարցը, զբաղվում և այնպիսի խոսակցություններով, վորոնք վերաբերում են հեղեղականության ու անհատի վե-

բաբերմամբ ցուցահանվող «դաժանության»*,— ապա այս միայն նրա անզորության և ցույց տալիս ակնառու կերպով։

«Ցերբորդ դասի պատմությունն Արևմտյան Յեվրոպայում չափազանց յերկար է... Մենք, իհարկե, այդ ամբողջ պատմությունը չենք կրկնի՝ ֆաբալիստների ուսմունքին հակառակ։ Մեր յերրորդ դասի լուսավորված ներկայացուցիչներն, իհարկե, նույնպես չեն գործադրի այն բոլոր միջոցները իրենց նպատակներին հասնելու համար, վորոնց դիմում էին առաջ. և նրանցից կվերցնեն ամենահարմարները և տեղի ու ժամանակի պայմաններին համապատասխանները։ Դյուղացիությունը հողազրկելու և դործարանային պրոլետարիատ ստեղծելու համար նրանք, իհարկե, չեն դիմի ռազմական կռվին կամ կալվածները վոչ պակաս կոպտաբար մաքրելուն»...

«Չեն դիմի՞»... Միայն քաղցրավուն ոպտիմիզմի թեորետիկներին մոտ կարելի յե հանդիպել անցյալի ու ներկայի իրողություններին այսպիսի դիտավորյալ մոռացման, վորոնք արդեն ասել են իրենց «այո»-ն,— և վարդագույն հույսի, թե ապագայում, իհարկե, կլինի «վոչ»։ Իհարկե, այս ստությունն է։

...«Այլ կդիմեն համայնական հողատիրության վոչնչացմանը, ֆերմերության, ունևոր դյուղացիների վոչընչացմանը **և առհասարակ այնպիսի միջոցների, վորոնց գործադրության դեպքում ինքնըստինքյան կորստյան և մատնվում տնտեսապես թուլը։ Նրանք այժմ չեն ձեռնարկի համքարությունների ստեղծմանը, այլ կկազմակերպեն վաճառային, հումքային, սպառողական և արտադրողական ասոցիացիաները, վորոնք ընդհանուր յերջանկության խոստանալով՝ միայն պիտի ոգնեն ուժեղին ավելի ուժեղ դառնալու, իսկ թուլին՝ եղ ավելի թույլ։ Նրանք չեն մտահոգվի պատրիմոնիալ դատարանի հարցով, բայց կջանան որենսդրություն ստեղծել՝ խլտխտելու համար աշխատավորությունը, ժուժկալությունն ու կրթությունը, վորոնց մեջ հանգեց կդա միայն յերիտասարդ բուրժուազիան, վորովհետև մասսան առաջվա նման հարբեցողության կտա իրեն, կլինի տգետ և կաշխատի ուրիշի ոգուտին»։

---

* Գ-ն Միխայլովսկին «Ր. Բ»-յի 1894 թ. №-10-ում։

** Այդ հիանալի իրագործվում է առանց համայնքի վոչնչացման ել, վորովհետև համայնքը բոլորովին չի վերացնում գյուղացիության յերկձեղությունն, ինչպես այդ հատատել է զեմստվային վիճակագրությունը։

Ինչպես լավ են բնութագրված այստեղ այդ բոլոր վարկային, հուձքային և ուրիշ ամեն տեսակ ասոցիացիաները, աշխատասիրության ժուժկալության ու կրթության աջակցող այդ բոլոր միջոցները, որոնց այնպես սրտանուշ վերաբերմունք և ցույց տալիս մեր այժմյան լիբերալ-նարոդնիկական ժամուլը, այդ թվում նաև «Р. Б.-во»-ն: Մնում է, որ մարքսիստը միայն ընդգծի ասվածը, մանգամայն համաձայնի, որ իրոք այս ամենը վոչ այլ ինչ է, բայց յերե յերոպդ դասի ճերկայացուցչությունը, և, հետևաբար, այն մարդիկ, որոնք չեն մտահոգություն ունեն այդ մասին, վոչ այլ ինչ են, բայց յերե մանր բուրժուաներ:

Այս մեջբերումը բավարար պատասխան է արդի նարոդնիկներին, որոնք այսպիսի միջոցների հանդեպ մարքսիստների ցուցահանած արհամարհական վերաբերմունքից յեզրակացնում են, թե նրանք կամենում են լինել «հանդիսատես-ներ», թե նրանք կամենում են նստել ձեռքները ծալած: Այո, իհարկե, նրանք յերբեք իրենց ձեռքները չեն մոցնի բուրժուական գործունեության մեջ, նրանք միշտ կմնան նրա վերաբերմամբ «հանդիսատեսներ»:

«Այս դասակարգի (ժողովրդից դուրս յեկածների, մանր բուրժուազիայի) դերը, զգալատարար, շատ քիչ է հետաքրքրել պատմաբաններին ու անտեսագետներին, մինչդեռ նրա դերը, կրկնում ենք, չափազանց կարևոր է, որովհետև նա կազմում է բուրժուական գորաբանակի պահեստան ուղեկալները, հրաձգային շղթան ու ավանգարդը: Ճերբ վոր կատարվում եր համայնքի կործանումն ու գյուղացիության հողազրկումը, այդ միայն լորդերի ու ասպետների կողմից չեր կատարվում ամենևին, այլև հենց գյուղացու յեղբայրակցի կողմից, այսինքն գաղջալ ժողովրդից դուրս յեկածների, որոնք սկզբում եղել գործնական հնարավորությամբ ու ճկուն մեջքով, արժանացել են պետական վարչության, պետը Ջրում վորսացել են կամ թալանով ձեռք են բերել վորոշ փոքրիկ կապիտալ,— ժողովրդից դուրս յեկածների կողմից, որոնց ձեռք եյին մեկնում վերին դասերն ու օրենսդրությունը: Նրանց անվտանում եյին ժողովրդի ամենից աշխատասեր, ընդունակ ու ժուժկալ տարրերը»...

Այս դիտողությունը շատ ճիշտ է փաստական կողմից: Իսկապես, հողազրկումը կատարվում եր գլխավորապես «գյուղացու իսկ յեղբայրակցի», մանր բուրժուազիայի կողմից: Բայց նարոդնիկն անբավարար չափով է ըմբռնում այս փաստը: Նա չի տարբերում յերկու հակամարտ գասակարգերը, ֆեոդալներին ու բուրժուազիային, «հին-ազնվական» ու «նոր-քաղքենիական» կարգերի ներկայացուցիչներին, չի տարբերում տնտեսական կազմակերպության զանազան սիստեմները, չի տեսնում յերկրորդ դասակարգի առաջադիմական նշանակությունն առաջինի համեմատությամբ: Այս՝ մեկ: Յերկրորդ, նա բուրժուազիայի աճումը՝ վերագրում է թալանին, հնարամտությանը, լաքեյությանը և այլն, այնինչ մանր տնտեսությունը ապրանքային արտադրության հողի վրա մանր բուրժուա յե դարձնում ամենաժուժկալ, աշխատասեր տնտեսատիրոջը. նա ունենում է «խնայողություններ», և շրջապատող հարաբերությունների հետևանքով այս «խնայողությունները» կապիտալ են դառնում: Այս մասին կարդացեք տնայնագործական արհեստագործության ու գյուղացիական տնտեսության նկարագրություններում մեջ, մեր բելետրիստ-նարոդնիկների յերկերում:

...«Այս նույնիսկ հրաձգային շղթան ու ավանգարդը չե, այլ բուրժուական գլխավոր զորաբանակն է, Ջոկատների մեջ միացած շարքային հասարակ գինվորներ են, Ջոկատներ, որոնց տնորինում են շտաբ- ու սպասպաներ, առանձին մասերի պետեր և գլխավոր շտաբ, վորը կազմված է հրետաբաներից, հեծելորներից ու գիտնականներից *: Առանց այս զորաբանակի բուրժուազիան վոչինչ չեր կարողանա անել: Մի քանի 30 հազարից պակաս քանակ ունեցող անգլիական լենդլորդերը կկարողանային առանց ֆերմերների կառավարել միքանի տասնյակ միլիոն կազմող ոռված մասսան: Ֆերմերն իսկական մարտական գինվոր է քաղաքական իմաստով և եքսպլոատացիայի յենթարկող փոքրիկ բջիջ՝ տնտեսական իմաստով... Ֆաբրիկաններում ֆերմերների դերը կատարում են վարպետ-

* Պետք է ավելացնել—վարչագետներից, բյուրոկրատիայից: Այլապես «գլխավոր շտաբի» կազմի նշումը մեղանչում է անհնարին թեթևությամբ,— անհնարին՝ ժամանակակից ռուսական պայմանների տեսակետից:

նեն ու վարպետացուները, որոնք շատ լավ առճիկ են ոտանում ոչ միայն ավելի ճարտար աշխատանքի համար, այլ այն բանի համար, որ պետքի հետևեն բանվորներին, որպեսզի բոլորից ուշ հեռանան հաստատից, որպեսզի թույլ չտան, որ բանվորների կողմից պահանջներ առաջադրվեն աշխատավարձի հավելման կամ աշխատանքի ժամերի պակասեցման վերաբերյալ, և որպեսզի տնտեսատերերին հնարավորություն տան նրանց ժամանակին ասելու՝ «տեսեք, որքան են վճարում նրանց, ովքեր աշխատում են և ոգուտ բերում մեզ», — խանութպանները, որոնք ամենամոտ հարաբերությունների ունեն գործարանատերերի ու գործարանային վարչության հետ,— գրասենյակային ծառայողները, ամեն տեսակի հսկիչներն ու սրանց նման ուրիշները, որոնց յերակներում դեռևս բանվորական արյուն է հոսում, բայց որոնց հոգում արդեն կապիտալն է նստել լիիրավ տիրակալ [Միանգամայն ճիշտ են Կ.Տ.]։ Իհարկե, նույն բանն, ինչ որ մենք տեսնում ենք Անգլիայում, կարելի յե տեսնել թե Ֆրանսիայում, թե Գերմանիայում և թե ուրիշ յերկիրներում [Միանգամայն ճիշտ են Ռուսաստանում էլ Կ. Տ.]։ Միքանի անգամ փոփոխվում են թերևս միայն ժամանակի յերևույթները, բայց նրանք մեծ մասամբ մնում են անփոփոխ Ֆրանսական բուրժուազիան, որը անցյալ դարի վերջում հաղթանակ տարավ աղնվականության դեմ, կամ ավելի լավ ասենք, ժողովրդական հաղթությունից ոգևորվեց, ժողովրդից գաղտնի մանր բուրժուազիային, որն ոգնեց կողոպտելու ժողովրդին և ինքը կողոպտեց, և ավանդությունների ձեռքը մատնեց նրան... Այն ժամանակ, յերբ գրականության մեջ որոներգներ էին յերգվում Ֆրանսական ժողովրդի հաղթության մեծ, յերբ մեծարվում էր նրա վեհությունը, մեծահոգությունն ու ազատության սերը, յերբ այս բոլոր խնկարկուները պատրաստ էին Ֆրանսիան, բուրժուական կառուն իր համար խժռում էր վարձկին և դրեթե ամբողջովին խժռեց նրան՝ միմիայն վոսկրներ թողնելով ժողովրդին։ Ժողովրդական փառաբանված հաղթությունը դարձավ միկրոսկոպիկ, որը չափվում էր մետրերով և հաճախ նույնիսկ չէր դիմանում հարկադանձյան ծախսերին»...

Կանգ առնենք սրա վրա։

Նախ, մեզ համար հետաքրքրական կլիներ հարց տալ Բորնհիկին, թե մեզանում ով «ոգտվեց ձորտային իրավունքի» դեմ, «հին-աղնվական խավի դեմ տարած հաղթությունից»։ Հավանորեն, վոչ բուրժուազիան։ Մեզանում «ժողովրդի» մեջ ինչ էր արվում այն ժամանակ, յերբ «գրականության մեջ» «հեղինակին» նոր բերած որոներգներն էին յերգ-

վում» ժողովրդի մասին, ժողովրդի նկատմամբ տածելիք սիրո մասին, մեծահոգության մասին, համայնական հատկությունների ու վորակների մասին, համայնքի ներսում իբր նկատվող «սոցիալական փոխհամակերպման ու համերաշխ գործունեության» մասին, այն մասին, թե Ռուսաստանն ամբողջապես մի արտել է. թե համայնքն այն «ամենն է, ինչ վոր կա դյուղական ժողովրդի մտքերի ու գործողությունների մեջ», և այլն, և այլն, և այլն, մի բան, վոր յերբեմն մինչև այժմ էլ (թեպետ և մի նոր տոնով) լիբերալ-նարոդնիկական մամուլի էջերում։ Հողերն, ինարկե, չէին խլվում գյուղացիությունից. բուրժուական կառուն չէր խժռում վառելին, չէժռեց նրան դրեթե ամբողջովին. «ժողովրդական վարաբանված հողատիրությունը» չ«դարձավ միկրոսկոպիկ», նրա մեջ չկար վճարքների դերակշռություն յեկամուտների նկատմամբ ։—Չե, միայն «մխտիկներն ու մետաֆիզիկներն» են ընդունակ պնդելու այդ, վաստ համարելու այդ, վերցնելու այդ փաստը վորպես մեր գործերի մասին արվող դատողությունների յելակետ, յելակետ իբրև նոր գործունեության, վորի նպատակը վոչ թե «հայրենիքի համար ուրիշ ուղիներ» վորոնելն է, այլ տվյալ արդեն բոլորովին վորոշված կապիտալիստական ճանապարհի վրա աշխատելը։

Յերկրորդ։ Հետաքրքրական և համեմատել հեղինակի մեթոդը մարքսիստների մեթոդի հետ։ Նրանց տարբերությունը շատ ավելի լավ կարելի յե պարզաբանել կոնկրետ դատողությունների որինակով, քան թե վերացական կշռադատությունների միջոցով։ Այդ ինչու՞ յե հեղինակը Ֆրանսական «բուրժուազիայի» մասին ասում, թե նա անցյալ դարի վերջում հաղթանակ տարավ աղնվականության նկատմամբ. ինչու՞ բուրժուական և անվանվում մի գործունեություն,

* Յես վոչ միայն «հաճախ», ինչպես Ֆրանսիայում, այլ վորպես ընդհանուր կանոն, ընդվորում դերակշռությունը արտահայտվում է վոչ միայն տոնայակ, այլ մինչև անգամ հարյուրավոր տոկոսներով։

վորը դերազանցապես ու գրեթե բացառապես յեղել է ինտելիգենցիայի գործունեությունն, և հետո, իսկապես, չե՞ վոր կառավարությունը գործում եր՝ հողերը խլելով գյուղացիությունից, բարձր վճարքներ բարդելով և այլն։ Վերջապես, չե՞ վոր այդ գործիչները խոսում էին ժողովրդի նկատմամբ տածելիք սիրո մասին, հավասարության ու ընդհանուր յերջանկության մասին, ինչպես խոսում էին և խոսում են Ռուսաստանի լիբերալներն ու նարոդնիկները.— արդյոք կարելի՞ յե այդ պայմաններում այս ամենի մեջ տեսնել միայն «բուրժուազիա».— «նեղ» չե՞ արդյոք այդ հայացքը, վոր քաղաքական ու դաղափարային շարժումները վերածում է Plusmacherei-ի *։—Տեսնք, սրանք նույն այն հարցերն են, վոր մեծ քանակությամբ թափում են ռուս մաքսիստների գլխին, յերբ վոր նրանք նույնանման բաներ են ասում մեր գյուղացիական ռեֆորմի մասին (նրա տարբերությունը միայն «մասնակի» յերևույթների մեջ տեսնելով), առհասարակ հետռեֆորմյան Ռուսաստանի մասին։ Կրկնում եմ, յես այստեղ խոսում եմ վոչ թե մեր հայացքի փաստական ճշտության մասին, այլ այն մեթոդի, վոր տվյալ դեպքում գործ է ածում նարոդնիկը։ Վորպես չափանիշ նա վերցնում է հետևանքները (ժողովրդական հողատիրությունը «դարձավ» միկրոսկոպիկ, կատուն «խըժռում եր» ու խժռեց վառելիքին), այն էլ բացառապես տնտեսական հեռեվանգիներ։

Հարց է ծագում, այդ ինչո՞ւ յե նա այդ մեթոդը կիրառում միայն Ցրանսիայի վերաբերմամբ՝ չցանկանալով այն դործածել նաև Ռուսաստանի համար։ Չե՞ վոր մեթոդն ամենուրեք պետք է լինի միևնույնը։ Յեթե Ցրանսիայում կառավարության ու ինտելիգենցիայի գործունեության հետևը դուք վորոնում եք ծաներ, ապա ինչո՞ւ դուք հիշյալները չեք վորոնում սուրբ Ռուսիայում. յեթե այնտեղ ձեր չափանիշը

*—հավելյալ արժեքի։ Խմբ.

հարց է դնում այն մասին, թե ինչ «դարձավ» ժողովրդական հողատիրությունը, ինչո՞ւ յե այնտեղ չափանիշը դրվում այն մասին, թե ինչ «կարող է» դառնալ այն։ Յեթե այնտեղ ժողովրդին ու նրա մեծահոգությանը նվիրված ֆրազները «վառելիք խժռելու» պարադաններում արդարացի ըզգվանք են ներշնչում ձեզ,—ինչո՞ւ դուք այստեղ յերես չեք դարձնում—վորպես քուրժուական փիլիսոփաներից—այն մարդկանցից, ովքեր ընդունակ են «խժռելու» անտարակուսելի՝ ձեր իսկ կողմից ընդունվող առկայության հանդամանքներում՝ խոսելու «սոցիալական վոխհամակերպման» մասին, «ժողովրդական համայնականության» մասին, «ժողովրդական արդյունաբերության կարիքների» մասին ու սրա նման բաներ։

Պատասխանը մեկ է. վորովհետև դուք մանր բուրժուազիայի իդեոլոգ եք, վորովհետև ձեր դաղափարները, այսինքն վոչ թե Իվանի, Պյոտրի, Սիդորի, այլ առհասարակ նարոդնիկական դաղափարները հետևանք են մանր արտադրողի շահերի ու տեսակետի արտացոլման և ամենևին վոչ հետևանք՝ «զուտ»* մտքի։

«Բայց մեզ համար այս տեսակետից մանավանդ ուսանելի յե Դերմանիան, վորի բուրժուական ռեֆորմն ուշացել է, ինչպես և մերը ուշացել է այդ յերկիրն ոգտվել է ուրիշ ժողովուրդների փորձից, ինարկե, վոչ թե դրական, այլ բացասական իմաստով։ Գյուղացիության կազմը Դերմանիայում նույնպես չեր,—կրկնում է հեղինակը Վասիլչիկովի պատմածը.—գյուղացիները բաժանվում էին թե ըստ իրավունքների և թե ըստ տիրության, ըստ հողաբաժինների չափերի։ Ամբողջ պրոցեսը հասցրեց «գյուղացիական արիստոկրատիայի», «վոչ-աղնվական ծագում ունեցող մանր կալվածային հողատերերի դասի» դոյացմանը և մասսային «տնտեսերերից սևագործ բանվորներ» դարձրեց։ «Վերջապես, բանն իր վախճանին հանգեց և բանվորների դրությունն ուղղելու բոլոր լեգալ ճանապարհները կտրեց 1849 թվականի կիսաբիստոկրատական, կիսաբազբենիական սահմանագրու-

* Պ-ն Վ. Վ.-ի արտահայտությունն է։ Տես «Наши направления» նմանապես է 1894 թ. «Недели»-ն, №№ 47—49։

թյունը, վորը ձայնի իրավունք տվեց միայն ազնվականությանը և ուներով քաղքենիությանը։

Ցուրտրինակ դատողությունն է։ Սահմանադրությունը «կտրե°ց» լեզալ ճանապարհները։ Այս դարձյալ Ռուսաստանի նարոդնիկների այն հին բարեհիշատակ թեորիայի արտացոլումն է, վորի համաձայն «ինտելիգենցիան» հրավիրվում եր զոհաբերելու «ազատությունը», վորովհետև այդպիսին իբրև թե միայն նրան կծառայեր, իսկ ժողովուրդը կմատներ «ուներով քաղքենիության» ճեռքը։ Մենք չենք վիճի այդ անհեթեթ ու ռեակցիոն թեորիայի դեմ, վորովհետև նրանից հրաժարվել են արդի նարոդնիկներն առհասարակ և մեր մերձավորագույն հակառակորդները, «Русское Богатство»-յի պ.պ. հրապարակախոսները մասնավորապես։ Բայց մենք չենք կարող չմատնանշել, վոր այդ դաղափարից հրաժարվելով, մի քայլ առաջ գնալով դեպի Ռուսաստանի տվյալ ուղիների բացահայտ ճանաչումը՝ այլ ուղիների հնարավորության մասին ճոռոմաբանելու վրտարեն,—այդ նարոդնիկները դրանով իսկ վերջնականապես հաստատեցին իրենց մանր-բուրժուականության, վորովհետև մանր, քաղքենիական բարենորոգությունների վրա պնդելով ու բացարձակապես չընդունելով դասակարգային կռիվը՝ նրանք լիբերալների կողմն են բռնում ընդդեմ այն մարդկանց, ովքեր անցնում են «հակոտնյայի» կողմը, նրա մեջ տեսնելով այն բուրժուքներին, այսպես ասած, միակ դեստրուկտիվներին*, վորոնց մասին խոսում ենք մենք։

«Գերմանիայում եվ այդ ժամանակ կային քաղմաթիվ մարդիկ, վորոնք համոզիչ ձևով տարվում էին միայն հնացմունքներով, տարվում տասը տարի, քսան տարի, յերեսուն տարի ու ավելի»—մարդիկ, վորոնք ամեն մի սկեպտիցիզմ, ամեն մի դժգոհություն բարենորոգության վերաբերմամբ համարում էին ռեակցիայի համար ճեռնտու և նզովքի յենթարկում նրանց։ Դրանցից պարզամիտները ժողովրդին պատկերացնում էին վորպեսմի բացարձակած յերիվար, վորին դարձյալ

*—ստեղծողին։ Խմբ.

կարելի յե սխոռը տանել և նրան հեծած սկսել փոսատային վազքը (մի բան, վոր ամենևին էլ հնարավոր չե միշտ)։ Բայց այդտեղ կային նաև խարդախներ, վորոնք շողոքորթում էին ժողովրդին, բայց իրարանցման մեջ բռնում էին ուրիշ գիծ, խարդախներ, վորոնք մտնում էին այդպիսի անկեղծ ժողովրդասեր բացթերաններին, վորոնց կարելի յեր մոլորության մեջ գցել ու շահագործել։ Ա՛խ, այդ անկեղծ բացթերանները։ Ցերբ սկսվում է քաղաքացիական կռիվը, ապա ամենևին էլ բոլորը պատրաստ չեն նրա համար և ամենևին էլ բոլորն ընդունակ չեն այդ կռվին»։

Հիանալի խոսքեր, վորոնք լավ են ձևակերպում հին ռուսական նարոդնիկության լավագույն տրադիցիաները և վորոնցից մենք ոգտվել կարող ենք՝ բնութագրելու համար ռուսական մարքսիստների վերաբերմունքը դեպի արդի ռուսական նարոդնիկությունը։ Այդպիսի գործածության համար հարկ չկա շատ բան փոփոխելու, նրանց մեջ այնքան նույնասեռ և յերկու յերկրի էլ կապիտալիստական զարգացման պրոցեսը, այնքան նույնասեռ են այդ պրոցեսն արտացոլող հասարակական-քաղաքական գաղափարները։

Մեղանում էլ «առաջավոր» գրականության մեջ թագավորում և կառավարում են մարդիկ, վորոնք խոսում են «մեր դյուղացիական ռեֆորմի եյական տարբերությունների» մասին՝ արևմտյան բարենորոգության հետ համեմատած, «ժողովրդական (sic!) արտադրության նվիրագործման» մասին, մեծ «հողահատկացման» մասին (այդ փրկմունքն և մեծ հողահատկացում...) և այլն, և այդ պատճառով իշխանությունից սպասում են «աշխատանքի հանրայնացում» կոչվող հրաշքը, սպասում են «տասը տարի, քսան տարի, յերեսուն տարի և ավելի», իսկ կատուն—վորի մասին մենք հենց նոր խոսում էինք—խժռում և վառեկին՝ կուշտ ու հանգիստ գազանի փաղաքշոտությամբ նայելով «անկեղծ բացթերաններին», վորոնք խոսում են հայրենիքի համար ուրիշ ուղի ընտրելու անհրաժեշտության մասին, «սպառնացող» կապիտալիզմի ջնջման մասին, ժողովրդին ցույց տրվելիք ոգնության մեջոցների մասին, ոգնություն, վոր լինելու յե վարկերով, ար-

տելներով, հասարակական հերկումներով ու սրա նման անմեղ կարկատանքով։ «Ա՛խ, այդ անկեղծ բացըերաննե՛րը»։

«Ահա յերրորդ դասի գոյացման հենց այս պրոցեսն ենք ապրում քե՛ մենք ու քե՛ գլխավորապես մեր գյուղացիությունը։ Ռուսաստանն այդ բանում հետ է ընացել ամբողջ Յևվրոպայից, նույնիսկ իր ինստիտուտային ընկերուհուց կամ, ավելի ճիշտ, ուսուցչության քեկնածուհուց— Գերմանիայից։ Յևվրոպայում ամենուրեք քաղաքներում և խմորվել և առեղծվել յերրորդ դասը Մեզանում, ընդհակառակը»,—անհամեմատ պակաս է քաղաքային բնակիչների քիվը··· «Այդ տարբերության գլխավոր պատճառը մեր ժողովրդական հողատիրությունն է, վոր դյուղում և պահում բնակչությունը։ Յևվրոպայում քաղաքային բնակչության բազմացումը սերտորեն կապված է ժողովրդի հողազրկման ու գործարանային արդյունաբերության հետ, վորն արտադրության կապիտալիստական պայմաններում կարիք ունի եժան աշխատանքի ու նրա առաջարկի ավելցուկի։ Մինչդեռ գյուղերից արտաքսվող յեվրոպական դյուղացիությունը քաղաքներն է գնում աշխատանքի, մեր գյուղացիությունը մնում է հողին կպած, քանի ուժը պատում է։ Ժողովրդական հողատիրությունը գյուղացիական դիրքի գլխավոր սոցիալիստական կետն է, գլխավոր բանալին, վորի նշանակությունը շատ լավ են հասկանում քաղքենիության առաջնորդները, ուստի և նրա վրա յեն ուղղում իրենց ամբողջ վարպետությունն ու իրենց բոլոր ուժերը։ Այստեղից էլ ծագում են բոլոր հարձակումները համայնքի վրա, այստեղից էլ դուրս են գալիս մեծ քանակությամբ զանազան նախագծեր հողագործին հողից կտրելու մասին՝ հանուն ազնոնոմիայի, հանուն արդյունաբերության ծաղկման, հանուն ազգային առաջադիմության ու փառքի»։

Այստեղ արդեն ակնառու կերպով յերևան և գալիս մակերեսայնությունը նարոդնիկական թեորիայի, վորն «այլ ուղիների» մասին ունեցած յերազանքների պատճառով բոլորովին սխալ և գնահատում իրականությունը. «գլխավոր կետը» տեսնում է արմատական դեր չխաղացող այնպիսի իրավական հաստատությունների մեջ, ինչպես գյուղացիական հողաֆոնդի ձևերն են (համայնական կամ ծխական)։ Ինչ-վոր առանձնահատուկ բան և տեսնում մեր գյուղացիական մանր տնտեսության մեջ, կարծես թե այդ՝ մանր արտադրողների այնպիսի սովորական տնտեսություն չե, վորն ըստ իր քաղաքատնտեսական կազմակերպության

տիպի բոլորովին նույնանման և աբսոլուտա-յեվրոպական արհեստավորներին ու գյուղացիներին տնտեսությանը, այլ ինչվոր «ժողովրդական» (!?) հողատիրություն և։ Մեր լիբերալ-նարոդնիկական մամուլում հաստատված տերմինաբանության համաձայն «ժողովրդական» բառը նշանակում է աշխատավորի շահագործումը բացատող,—այնպես վոր հեղինակն իր տված բնութագրով ուղղակի մթագնում է այն անտարակուսելի իրողությունը, վոր մեր գյուղացիական տնտեսության մեջ գոյություն ունեն գերարժեքի նույն յուրացումը, նույն աշխատանքն ուրիշի ոգուին, վորպեսզի բազավորում և նաև «համայնքից» դուրս և լայն դուռ և բաց անում տնտեսին ու քաղցրավուն վարձեսեցիության առաջ։

«Մեր ներկա համայնքը, սակավահող ու հարկերով ծանրաբեռնված համայնքը, դեռևս այնքան էլ մեծ յերաշխիք չե գյուղացին առանց այն էլ քիչ հող ունենը, իսկ այժմ բնակչության ամման ու բարեբերության վատթարացման հետևանքով ավելի յե քչացել հարկային բեռը չի փոքրանում, այլ մեծանում է· արհեստագործությունները քիչ են. տեղական դաստակներն՝ ավելի քիչ, կյանքը գյուղում դառնում է այնքան ծանր, վոր գյուղացիությունն ամբողջ գյուղերով դատապարտի հետևից գնում է հեռավոր վայրեր՝ տանը թողնելով միայն կանանց ու յերեխաներին։ Այդպիսով ամբողջ գավառներ են դատարկվում··· Կյանքի հենց այդ ծանր պայմանների ազդեցության տակ, մի կողմից, գյուղացիությունից էլ դուրս է գալիս մարդկանց հատուկ դասակարգ—յերբեմնասարդ բուրժուազիան, վորը ձգտում է հող գնելու գյուղից դուրս, միայնակներն, ձգտում է ուրիշ զբաղմունքների—առևտրի, վաշխառության, իր գլխավորությամբ բանվորական արտելներ կազմակերպելու, զանազան կապալներ ստանալու և սրա նման մանր աֆյորաների»։

Արժե ամբողջ մանրամասնությամբ կանդ առնել այս տեղի վրա։

Մենք այստեղ տեսնում ենք՝ 1) հավաստումն հայտնի իրողությունների, վորոնք կարելի յե արտահայտել յերկու բառով—գյուղացիները վաչխում են, 2) նրանց գնահատությունը (բացատական) ու 3) նրանց բացատրությունը, վորից անմիջապես բղխում և նաև մի ամբողջ ծրագիր, վորն

այստեղ չէ շարադրված, բայց շատ լավ հայտնի է (պետք է հողերն ավելացնել, հարկերը պակասեցնել, արհեստագործությունները «բարձրացնել» ու «զարգացնել»)։

Անհրաժեշտ է ընդգծել, որ մարքսիստի տեսակետից և՛ առաջինը, և՛ յերկրորդը միանդամայն ու անպայման արդարացի յեն (և միայն արտահայտված են, ինչպես կտեսնենք հիմա, խիստ անբավարար)։ Բայց յերրորդն* ամենևին բանի նման չե արդեն։

Բացատրեմ այս։ Արդարացի է առաջինը։ Արդարացի է այն իրողությունը, որ մեր համայնքը յերաշխիք չե և որ դյուղացիությունը լքում և դյուղը, հեռանում հողից. պետք եր ասել՝ եքսպրոպրիացիայի է ենթարկվում,— որովհետև նա (մասնավոր սեփականության իրավունքով) տիրում եր արտադրության որոշ միջոցների (նրանցից հողին՝ հատուկ իրավունքով, որը, սակայն, նույնպես մասնավոր շահագործման եր տալիս համայնքների կողմից վերցվող հողն էլ) և կորցնում է նրանց։ Արդարացի է, որ անմայնադործական արհեստագործություններն «ընկնում են»— այսինքն՝ այստեղ էլ դյուղացիները ենթարկվում են եքսպրոպրիացիայի, կորցնում արտադրության միջոցներն ու դործիքները, լքում տնային ջուլհակությունը և գնում են վարձով աշխատելու, որպես յերկաթուղիներ կառուցող բանվորներ, քարտաշներ, սևաբանվորներ և այլն։ Արտադրության այն միջոցները, որոնցից ազատվում են դյուղացիները, ընկնում են չնչին փոքրամասնության ձեռքը՝ դառնալով աշխատանքային ուժի հարստահարման աղբյուր, կապիտալ։ Ուստի իրավացի է հեղինակը, որ արտադրության այդ միջոցների տերերը դառնում են «բուրժուազիա», այսինքն մի դասակարդ, որը հասարակական տնտեսության կապիտալիստական կազմակերպության որով իր ձեռքումն

* Ահա թե ինչու յեն մարքսիզմի թեորետիկները նարոդնիկության դեմ մարտնչելիս այնպես շեշտում բացատրության, ըմբռնման օբյեկտիվ կողմը։

և պահում «ժողովրդական» աշխատանքը։ Այս բոլորը իրողությունները հավաստված են ճիշտ, գնահատված են ճշտորեն իրենց շահագործողական նշանակության պատճառով։

Բայց արված նկարագրությունից ընթերցողն արդեն տեսավ, իհարկե, որ մարքսիստը բոլորովին այլ կերպ է բացատրում այս իրողությունները։ Նարոդնիկն այս յերեվույթների պատճառները տեսնում է նրանում, որ «հողը քիչ է», հարկերը ծանր են, «դատուճներն» ընկնում են— այսինքն՝ տեսնում է քաղաքականության առանձնահատկությունների մեջ — հողային քաղաքականության, հարկային, արդյունաբերական,— և վոչ թե արտադրության հասարակական կազմակերպության առանձնահատկությունների մեջ, վորպեսի կազմակերպությունից արդեն անխուսափելիորեն բղխում է տվյալ քաղաքականությունը։

Հողը քիչ է — դատում է նարոդնիկը — և ավելի ու ավելի է քչանում։ (Ձեռ վերցնում եմ վոչ թե հողվածի հեղինակի անպայման այս հայտարարությունը, այլ նարոդնիկական ուսմունքի ընդհանուր դրույթը)։ Մի խանդամայն արդարացի է, բայց ինչո՞ւ ենք դուք ասում միայն, որ հողը քիչ է, իսկ չենք ավելացնում — քիչ են վաճառում։ Ձե՞ որ դուք գիտեք, որ մեր գյուղացիները իրենց հողաբաժինները վերկանքով են գնում կալվածատերերից։ Ինչո՞ւ ենք դուք մեր գլխավոր ուշադրությունը դարձնում այն բանի վրա, որ քիչ է, այլ վոչ այն բանի վրա, որ վաճառում են։

Վաճառքի, վերկանքով գնելու բուն այս փաստն արդեն մատնանշում և այնպիսի սկզբունքների տիրապետությունը (փողով արտադրության միջոցներ ձեռք բերելը), որոնց պարագայում աշխատավորները, մեկ է, կլինան առանց արտադրության միջոցների, այդպիսի միջոցներ շատ ծախելու լինեն, թե քիչ։ Հատկությունն տալով այս փաստը՝ դուք լռության եք տալիս արտադրության այն կապիտալիստական

յեղանակը, վորի հողի վրա միայն կարող եր յերևան գալ այդպիսի վաճառքը։ Լուսթյան տալով այն՝ դուք դրանով իսկ վոտք եք դնում արդեն այդ բուրժուական հասարակության հողի վրա և հասարակ պոլիտիկան դառնում, վորը դատում է այն մասին, թե շատ հող պետք է ծախել, թե քիչ։ Դուք չեք տեսնում, վոր վերևանքի այդ փաստն իսկ ապացուցում է արդեն, վոր «արդեն լիիշխանաբար կապիտալը և նատել» այն մարդկանց «հոգում», վորոնց շահերը «մեծ» ռեֆորմն իրականացրին, ովքեր կենսագործեցին այն, — վոր այդ ամբողջ լիբերալ-նարոդնիկական «հասարակության» համար, վորը հենվում և ռեֆորմի ստեղծած կարգերի վրա՝ իր պոլիտիկանության անելով նրանց զանազան բարեկավումների մասին, — միայն «կապիտալիստական լուսնի» լույսը գոյություն ունի։ Հենց այս պատճառով էլ նարոդնիկն այնպիսի ատելությամբ և ծաղրանում այն մարդկանց դեմ, ովքեր հետևողական կերպով կանգնում են սկզբունքորեն այլ հողի վրա։ Նա ճիշ և բարձրացնում, թե նրանք չեն հոգում ժողովրդի մասին, թե նրանք կամենում են հողազուրկ անել գյուղացիներին ...

Նա, նարոդնիկը, հոգում և ժողովրդի մասին, նա չի կամենում հողազուրկ անել գյուղացությունը, նա կամենում և, վոր գյուղացիությունն ավելի հող ունենա (նրան ավելի հող վաճառեն)։ Նա ազնիվ խանութպան և։ Ճիշտ և, նա լուսում և այն մասին, վոր հողերը ձրի չեն տրվում, այլ վաճառվում են, — բայց մի քանի խանութներում խոսում են այն մասին, վոր ապրանքների համար պետք և փող վճարել։ Առանց ասելու էլ ամեն վոք գիտե այդ։

Հասկանալի յե, վոր նա ատում և մարքսիստներին, վորոնք ասում են, թե պետք և բացատրել նրանց դիմել, ովքեր արդեն «շերտավորված են» այդ խանութպանությանն հասարակությունից, «մերժված» են նրանից, — յերեք թուլատրելի յե գործածել պարոնայք Միխայլովսկիների ու Յուժակովների այս ամենարնորոշ մանր-բուրժուական արտահայտությունները*։

Գնանք առաջ։ «Արհեստագործությունները քիչ են» — ահա նարոդնիկի տեսակետը տնայնագործական արհեստագործությունների վերաբերմամբ։ Յեվ դալթյալ նա լուսում և այն մասին, թե ինչ կազմակերպություն ունեն այդ արհեստագործությունները։ Նա բարեհոգությամբ փակում և իր աչքերը հանդեպ այն իրողության, վոր թե «ընկնող» արհեստագործությունները և թե «զարգացողները» հավասարապես կազմակերպված են կապիտալիստական յեղանակով, վոր նրանց մեջ աշխատանքը լիովին ստրկացված և մեծագնորդների, վաճառականների ու այլոց կապիտալի կողմից, և սահմանափակվում և առաջադիմության, բարելավումների, արտելների ու այլ ձեռնարկումների քաղաքենիական սահմանջներով, կարծես թե նման միջոցները կարող են գեթ չնչին չափով դիպչել կապիտալի տիրապետության իրողությանը։ Ինչպես հողագործության բնագավառում, այնպես էլ մշակող արդյունաբերության բնագավառում նա կանգնում և նրանց տվյալ կազմակերպության հողի վրա և մարանչում և վրչ թե բուն այդ կազմակերպության դեմ, այլ նրա զանազան անկատարելությունների դեմ։ Ինչ վերաբերում և հարկերին, այստեղ նարոդնիկն ինքն արդեն հերքեց իրեն՝ ցայտուն կերպով առաջադրելով նարոդնիկության հիմնական բնորոշ գիծը — կոմպրոմիսներ անելու ընդունակությունը։ Վերը նա ինքն եր պնդում, վոր ամեն մի հարկ (մինչև անգամ յեկամտայինը) կծանրանա բանվորական ձեռքերի վրա՝ գերարժեքը յուրացնելու սիստեմի առկայության պարագայում, — բայց, այնուամենայնիվ, նա

---

* Փրկանքի կապիտալիստական բնույթը լուսթյան տալուց ու չըմբռնելուց զատ պ. պ՝ նարոդնիկները համեստորեն շրջանցում են նաև այն փաստը, վոր գյուղացիների «սակավահողությունը» լրացվում և «հին-ազնվական» խավի ներկայացուցիչների շատ լավ հողակտորների առկայությամբ։

չի հրաժարվում լիբերալ հասարակության հետ խոսելուց այն մասին, թե մեծ են արդյոք հարկերը, թե փոքր, և «քաղաքացիական կարգինության» պատշաճ խարհուրդներ է տալիս հարկերի ու տուրքերի դեպարտամենտին։

Մի խոսքով, մարքսիստի կարծիքով պատճառը քաղաքականության չէ, պետության չէ և ոչ էլ «հասարակության», — այլ Ռուսաստանի տնտեսական կազմակերպության ոլորտ սխտեմը։ Բանն այն չէ, որ «ճարպիկ» կամ «ծակամուտ» մարդիկ ձուկ են որսում պղտոր ջրում, այլ այն, որ ժողովուրդը ներկայացնում է յերկու միմյանց հակադիր, միմյանց ժխտող դասակարգեր. «հասարակության մեջ գործող բոլոր ուժերը դասավորվում են ոլորտես յերկու փոխադարձաբար-հակադիր համազորներ»։

«Իրենց նախագծերի խորհրդանշով* բուրժուական կարգի հաստատումով շահագրգռված մարդիկ կանգ չեն առնում դրա վրա. նը-

---

* Այստես ուրեմն, համայնքը վոչնչացնելու նախագծի խորհրդանշով նշանակում է հաղթություն «բուրժուական կարգի հաստատման» ջահերի նկատմամբ...

«Համայնքից» քաղքենիական ուտոպիա հերյուրելով իր համար՝ նարոդնիկը հանում է իրականության այնպիսի յերեսակային անդիտացման, որ հակահամայնական նախագծի մեջ տեսնում է բուրժուական կարգի ամբողջ հաստատումն, մինչդեռ այդ հասարակ սոլիդիկանության և արդեն միանգամայն «հաստատված» բուրժուական հասարակակարգի հողի վրա։

Մարքսիզմի դեմ ամենավճռական փաստարկությունը նրա համար այն հարցն է, որ և արվում է վերջնականապես հաղթանակողի տեսքով. վե՛չ, դուք ասացեք, կամենում եք վոչնչացնել համայնքը, թե վոչ— այո՛, թե վոչ—Նրա համար այստեղ է ամբողջ հարցը, ամբողջ «հաստատումը»։ Նա բացարձակորեն չի կամենում հասկանալ, որ մարքսիստ տեսակետից «հաստատումն» արդեն վաղուցվա ու անդառնալի իրողություն է, որին չի դիպչի վոչ համայնքի վոչնչացումը, վոչ էլ նրա ամրապնդումը,—ինչպես որ այժմ էլ կապիտալի տիրապետությունը մնալով և թե համայնական ու թե ծխային գյուղում։

Ավելի խորը բողոքն ընդդեմ «հաստատման» նարոդնիկը չանում է ներկայացնել որպես հաստատման չատագովություն։ Նեղդվողը ձեռքը դյուրին է գցում

քանք ջարունակ կրկնում են գյուղացիության առաջ, թե ամեն բանում մեղավորը համայնքն է և համերաշխները, դաշտերի վերաբաժանումները ու համայնական կարգերը, վորոնք քաջալերում են ծուլերին ու հարբեցողներին։ Նրանք ունեցող գյուղացիների համար փոխառու-խնայողական ընկերություններ են սարքում և հոգ տանում հողային մանր վարկի մասին՝ հողամասային հողաերիության համար։ Նրանք քաղաքներում սարքում են տեխնիկական, արհեստավորական և գանազան տեսակի այլ դպրոցներ, վորոնց մեջ դարձյալ ընկնում են միայն ունևոր տղերքները, մինչդեռ մասսան մնում և առանց դպրոցի մարդկանց յերեխաները. մինչդեռ ոգնում են անասունների տեսակը բարելավելու՝ ցուցահանդեսներով, մրցանակներով, ցեղային արտադրողներով, վորոնք դեպոյից արվում են վճարով և այլն։ Այս բոլոր մանր ջանքերը վեր են ածվում մի նշանավոր ուժի, որը գյուղական աշխատանքի վրա քայքայիչ կերպով և ազդում և գյուղացիությունը ավելի ու ավելի յև պառակտում յերկու մասի։

«Մանր ջանքերի» բնութագիրը լավ է։ Միանգամայն արդարացի յև հեգնական այն միտքը, թե այդ բոլոր մանր ջանքերը (որ այժմ այնպես յերանդագին պաշտպանում են «Русское Богатство»-ն ու մեր ամբողջ լիբերալ-նարոդնիկական մամուլը) նշանակում են, արտահայտում և կենսագործում են «նոր-քաղքենիական» խավ, կապիտալիստական կարգերը։

Հենց այդ հանգամանքն և պատճառը, որ մարքսիստները բացասաբար են վերաբերվում այդպիսի ջանքերին։ Իսկ այն փաստը, որ այդ «ջանքերն», անտարակույս, մանր արտադրողների միրճավորագույն desiderata-ն են,— նրանց կամքով, ապացուցում և իրենց հիմնական դրույթի ճշտությունը, թե գյուղացու մեջ չի կարելի առանձել աշխատանքի գաղափարի ներկայացուցչին, վորովհետև տնտեսության կապիտալիստական կազմակերպության ոլորտ մանր բուրժուա հանդիսանալով՝ նա դրա հետևանքով կանգնում և տվյալ կարգերի հողի վրա, դրա հետևանքով նա իր կյանքի (ու իր գաղափարների) մեքանիկ կողմերով հարում և բուրժուազիային։

Անոգուտ չի լինի նույնպես այստեղից ոգտվելը, վոր-

պետի ընդգծենք հետևյալը։ Մարքսիստների բացասական վերաբերմունքը դեպի «մանր ջանքերն» առանձնապես առնիթ և տալիս պարոն նարոդնիկների կշտամբանքներին։ Հիշեցնելով նրանց իրենց նախնիքը՝ մենք դրանով իսկ ցույց ենք տալիս, որ կար ժամանակ, երբ նարոդնիկներն այլ կերպ էին նայում այս բանին, երբ նրանք այնքան էլ հաճույքով ու ջանասիրությամբ չէին համաձայնում կոմպրոմիսների (թեպետ և այն ժամանակ էլ, այնուամենայնիվ, համաձայնում էին, ինչպես նույն այդ հոդվածն է ապացուցում), երբ նրանք—չեմ ասի՝ հասկանում էին,—բայց գոնե զգում էին այդպիսի ջանքերի բուրժուականությունը, երբ նրանց բացատրումը միայն ամենապարզամիտ լիբերալների կողմից էր դատապարտվում որպես «պետական ժողովրդի հանդեպ»։

Պարոն նարոդնիկների, որպես «հասարակության» ներկայացուցիչների, հաճելի կապն այդ վերջինների հետ, ըստ երևույթին, ոգեշնչել էր նրանց։

Բուրժուական առաջադիմության «մանր ջանքերով» բավարարվելու անընդունակությունն ամենևին չի նշանակում մասնավոր բարեկեցության բացարձակ բացառում։ Մարքսիստներն ամենևին չեն ժխտում այդ ձեռնարկումների որոշ (թեպետ և չնչին) ոգուտը. նրանք կարող են աշխատավորին նրա զրկության որոշ (թեպետ և չնչին) բավարարում բերել։ Նրանք կարագացնեն կապիտալի առանձնապես հետամնաց ձևերի՝ վաշխառության, սարկացման ու սրանց նման այլ ձևերի վոչնչացումը, կարագացնեն նրանց փոխակերպումը կապիտալիզմի ավելի ժամանակակից ու մարդկային ձևերի։ Ուստի, չեթե հարց տային մարքսիստներին, թե արդյոք հարկավոր և նման միջոցների ձեռնարկել, նրանք, իհարկե, կպատասխանեին՝ հարկավոր և, բայց դրա հետ միասին կպարզեին իրենց վերաբերմունքն առհասարակ դեպի այն կապիտալիստական հասարակարգը, որն այդ միջոցներով բարելավվում է,—

միաժամանակ նրանք իրենց համաձայնությունը կպատճառաբանեին այդ հասարակակարգի զարգացումն ու, հետևաբար, նրա վախճանն արագացնելու ցանկությամբ*։

«Ձեզնե մենք ուշադրություն դարձնենք, որ մեզանում, ինչպես Գերմանիայում, գյուղացիությունը զանազան կատեգորիաների չի բաժանված, ըստ իրավունքների ու տիրության (պետական գյուղացիներ, արքունական գյուղացիներ, նախկին կալվածատիրական գյուղացիներ և նրանց միջից էլ՝ լրիվ հողաբաժիններ, միջակ և քառորդ չափով հողաբաժիններ ստացած գյուղացիներ, դարբասի գյուղացիներ)։ որ համայնական կենցաղը մեզանում ընդհանուր կենցաղ չե. որ հարավային ծայրերկրում անձնական հողատիրության կողքին մենք զարձյալ հանդիպում ենք լծկանատեր, անլծկան, բանջաբանոցային, միակ ու բանրատեր գյուղացիների, որոնցից վոմանք ունեն 100-ական դեսյատին ու ավելի, իսկ մյուսները մի վերշոկ հող չունեն. որ Բալթիկ նահանգներում ագրարային կարգը կատարյալ ընդրիմախոսություն է գերմանական ագրարային կարգի և այլն,—ապա կտեսնենք, որ մեզանում էլ հող կա բուրժուազիայի համար»։

Այստեղ չի կարելի չընդգծել համայնքի նշանակության այն յերազական չափազանցումը, որով միշտ մեղանչել են նարոդնիկները։ Հեղինակն այնպես և արտահայտվում, կարծես թե «համայնական կենցաղն» անհնարին և զարգնում բուրժուազիայի դյուրությունը, անհնարին և զարգնում գյուղացիների մանրացումը։ Բայց չէ՞ որ այդ ուղղակի սուտ է։

Ամեն վոք գիտե, որ համայնական գյուղացիները էլ նույնպես մասնատված են ըստ իրավունքների ու հողաբաժինների. որ յուրաքանչյուր ամենահամայնական գյուղում գյուղացիները դարձյալ մասնատված են թե «ըստ իրավունքների» (հողազուրկ գյուղացիներ, հողաբաժին ունեցողներ, նախկին դարբասի գյուղացիներ, հողաբաժինները հատուկ ժուծուկներով գնողներ, համայնքի մեջ նոր ընդուն-

* Այս վերաբերում է վոչ միայն «տեխնիկական ու այլ գործոններին», գյուղացիների ու անայնագործների տեխնիկայի բարելավման, այլ և «գյուղացիական հողատիրության ընդլայնմանը, վարկին» և այլն։

վածներ etc. etc.) և թե «ըստ տիրությեան»—դյուղացիներ, վորոնք հանձնել են հողաբաժիններըը, վորոնցից հողերը խլել են ապառքների դիմաց այն հիման վրա, վոր չեն մշակում և անուշադիր են թողնում,—և վորոնք վարձում են ուրիշների հողաբաժիններըը. դյուղացիներ, վորոնք ունեն «հավիտենական» հող կամ «տարիներով դնում են» միքանի դեսյատին. վերջապես, դյուղացիներ, վորոնք չունեն տուն, վորևե անասուն, ձիազուրկ ու բազմաձի դյուղացիներ: Ամեն վոք գիտե, վոր յուրաքանչյուր ամենահամայնական դյուղում տնտեսական մանրատվածության ու ապրանքային տնտեսության հողի վրա բուսնում են վաշխառուական կապիտալի, սորվացման բոլոր ձևերի փարթամ ծաղիկները: Իսկ նարոդնիկները դեռևս իրենց քաղցր-մեղցր հեքիաթներն են պատմում ինչ-վոր «համայնական կենցաղի» մասին:

«Ցեվ յերիտասարդ բուրժուազիան մեղանում, իրոք, աճում և վիշ քե որերով, այլ ժամերով, աճում վիշ միայն հրեական ծայրագավառներում, այլև Ռուսաստանի ներսում: Նրա քանակը թվանշաններով արտահայտելն առայժմ շատ դժվար է, բայց հողատերերի աճող թվին նայած, նկատի ունենալով առևտրական վկայականների մեծացող թիվը, կուլակության ու համայնակերության դեմ դյուղերից լսվող գանգատների մեծացող թիվը և սրա նման այլ հատկանիշներ* կարելի յե կարծել, վոր նրա թիվը արդեն մեծ է»:

Մի նգամայն ճիշտ է 1879 թվականի համար ճիշտ ու 1895 թվականի համար անհամեմատ ավելի մեծ զարգացած ժամը անվիճելի այդ փաստն էլ հենց ռուսական իրականության մարքսիստական ըմբռնման հիմքերից մեկն է:

* Վորոնց պետք է ավելացնել—գնումները դյուղացիական բանկի ոգնությամբ, «առաջադիմական հոսանքները դյուղացիական տնտեսության մեջ»—տեխնիկայի ու մշակույթի բարելավումները, բարելավված գործիքներ մացնելը, խոտացանությունը և այլն, մանր վարկի զարգացումն ու վաճառականության կազմակերպումը անայնադործների համար և այլն:

Մեր վերաբերմունքը դեպի այդ փաստը միանհսկ բացասական է. մենք հաճաձայն ենք յերկուսս էլ, վոր նա արտահայտում է յերևույթները, վորոնք հակադիր են անմիջական արտադրողների շահերին,—բայց մենք բոլորովին տարբեր կերպով ենք նասկացնում այդ փաստերը: Այդ տարբերության թեորիական կողմը յես արդեն բնութագրեցի վերևում, իսկ այժմ կդիմեմ գործնականին:

Բուրժուազիան—մանավանդ դյուղականը—մեզանում դեռևս թույլ է, նա դեռ միայն ծնունդ է առնում,—ասում է նարոդնիկը: Ուստի և նրա դեմ դեռևս կարելի յե կռվել: Բուրժուական ուղղությունը դեռևս շատ թույլ է, ուստի դեռևս կարելի յե հետ շրջել: Ժամանակը չի անցել:

Այս կերպ դատելու իվնասի յե միայն մետաֆիզիկ-սոցիոլոգը (վորը գործնականում դառնում է վախկոտ ռեակցիոնյոր): Յես արդեն չեմ խոսի այն մասին, վոր դյուղական բուրժուազիայի «թուլությունը» բացատրվում է նրա ուժեղ տարրերի, նրա վերնախավի տեղատվությամբ դեպի քաղաքները,—վոր դյուղերում միայն «գինվորներն» են, իսկ քաղաքներում արդեն նատած է «գլխավոր շտաբը»,—յես չեմ խոսի փաստի այն բոլոր ծայրահեղորեն ակնհայտ ապացույցների մասին, վոր կատարում են նարոդնիկները: Այդ դատողության մեջ մի սխալ էլ կա, վորը հենց մետաֆիզիկական է դարձնում նրան:

Մենք մեր առջև ունենք վորոշ հասարակական հարաբերություն, հարաբերություն դյուղական մանր բուրժուազիայի (հարուստ դյուղացու, փերեզակի, կուլակի, հատկացակաների և այլն) ու «աշխատավոր» դյուղացու միջև:

Այդ հարաբերությունը դոյություն ունի—նարոդնիկը չի կարողանա ժխտել նրա համատարած լինելը: Բայց նա թույլ է,—ասում է նարոդնիկը,—ուստի և նրան դեռևս կարելի յե ուղղել:

Պատմությունը կերտում են «կենդանի անհատները»,

կասենք մենք այդ նաբոդնիկին՝ հյուրասիրելով նրան իր իսկ բարիքով։ Հասարակական հարաբերությունների ուղղությը, փոփոխումն, իհարկե, հնարավոր և, բայց հնարավոր միայն այն ժամանակ, երբ կատարվում է ուղղման կամ փոփոխման ենթակա այդ հասարակական հարաբերությունների բուն անդամների կողմից։ Այդ պարզ և որվա լույսի պես հարց է ծագում. կարող է արդյոք «աշխատավոր» դյուղացին փոփոխել այդ հարաբերությունները։ Ի՞նչ է այդ հարաբերությունը։—Այն, որ երկու մարդ արտադրողներ տնտեսություն են վարում ապրանքային արտադրության սխեմի պայմաններում, որ այդ ապրանքային տնտեսությունը նրանց պառակտում է «երկուսման», որ նա մեկին տալիս է կապիտալ, մյուսին հարկադրում է աշխատել «ուրիշի ոգուն»։

Ասա ինչ կերպ մեր աշխատավոր դյուղացին կփոփոխի այդ հարաբերությունը, քանի որ նա ինքը մի վոտքով կանգնած է հենց այն հողի վրա, որը պետք է փոփոխել. ինչպես կարող է նա հասկանալ մեկուսացման ու ապրանքային տնտեսության անպետքությունը, քանի որ նա ինքը մեկուսացած է և տնտեսություն է վարում իր պատասխանատվությամբ, արտադրում է շուկայի համար. երբ կյանքի այդ պայմանները նրա մեջ դնում են այն մարդուն հատուկ «խոհեր ու զգացմունքներ», ով միայնակ աշխատում է շուկայի համար. քանի որ նա մասնատված է իր տնտեսության բուն նյութական պայմաններով, մեծությամբ ու բնույթով, և դրա հետևանքով նրա հակադրությունը կապիտալին դեռևս այնքան էլ զարգացած չէ, որ նա չի կարող հասկանալ, թե դա հենց կապիտալ է, և չի թե միայն «ծանր ժամանակ» ու ճարպիկ մարդիկ։

Ակնարկ չե՞ մրթե, որ պետք է դիմել այնտեղ, որտեղ նույն այդ (nota bene) հասարակական հարաբերությունը զարգացած է մինչև վերջը, որտեղ այդ հասարակական հարաբերության անդամները, որոնք անմիջական արտադրողներ են, երբ արդեն վերջնականապես «շերտավորված»

են և «ներժված» բուրժուական կարգերից, որտեղ հակադրությունն արդեն այնպես է զարգացած, որ ինքնըստինքյան պարզ է. որտեղ արդեն անհնարին է երկակի կիսատ-պռատ հարցադրում։ Ճիշ երբ այդ առաջավոր պայմաններում կանգնած անմիջական արտադրողները «շերտավորված» կլինեն բուրժուական հասարակության կյանքից վոչ միայն փաստորեն, այլև իրենց գիտակցության մեջ,—այն ժամանակ «աշխատավոր» դյուղացիությունը ևս՝ դերված լինելով հետամնաց, ավելի վատ պայմանների մեջ—կտեսնի, թե «ինչպես է արվում այդ», և կհարի իր այն ընկերներին, որոնք նույնպես «ուրիշի ոգին» են աշխատում։

«Ճերբ մեզանում խոսում են դյուղացիների կողմից հող դնելու փաստերի մասին և բացատրում են, որ դյուղացիությունը հող դնում է թե վորպես անձնական սեփականություն ու թե համայնքով, ապա գրեթե երբեք չեն ավելացնում սրան, թե համայնական գնումներն անձնական գնումների ընդհանուր կանոնից միայն հազվադեպ ու չնչին բացառություն են»։

Այնուհետև տվյալները բերելով այն մասին, թե ինչպես 1861 թ. 103.158-ի հասնող մասնավոր հողատերերի թիվը ըստ 60-ական թվականների տվյալների՝ դուրս յեկավ 313.529 և, ասելով, թե այդ բացատրվում է նրանով, որ յերկրորդ անգամ հաշվի չեն առնված ճորտային իրավունքի ժամանակ չհաշված մանր սեփականատեր դյուղացիները, հեղինակը շարունակում է.

«Հենց այս էլ մեր դյուղական յերիտասարդ բուրժուազիան է, որն անմիջապես հարում և միանում է մանր կալվածատիրական ազնվականությանը»։

Ճիշտ է,—կասենք մենք դրան,—միանգամայն ճիշտ,—մանավանդ այն մասին, որ նա «հարում է» և «միանում»։ Այդ պատճառով մենք մանր բուրժուազիայի իդեոլոգների շարքն ենք դասում նրանց, ովքեր լուրջ նշանակություն են տալիս (անմիջական արտադրողների շահերի խմաստով)

«գյուղացիական հողատիրության ընդլայնմանը», այսինքն հեղինակին էլ, վորն ասում է այդ 152-րդ եջում։

Հենց այդ պատճառով էլ մենք սոսկ պոլիտիկաններ ենք համարում այն մարդկանց, վորոնք քննության են առնում անձնական ու համայնական դնումների հարցն այնպես, կարծես թե բուրժուական կարգերի «հաստատումը» նրանցից և կախված թեկուզ մի նշանախեցի չափով։ Մենք թե՛ մեկ ու թե՛ մյուս դեպքը վերագրում ենք բուրժուականության, վորովհետև յերկու դեպքում էլ գնումը գնումն է, վորը՝ վոր, այսինքն այնպիսի ապրանք, վոր ընկնում է միայն մանր բուրժուայի ձեռքը*, մեկ է, այդ բուրժուան միավորված լինի արդյոք համայնքում «սոցիալական վոխհամակերպման ու համերաշխ գործունեության համան», թե մասնավոր հողատիրությամբ բաժան-բաժան յեղած։

«Սակայն նա (գյուղական յերկտասարդ բուրժուազիան) այստեղ վեհաս տմբողջը չե ամենևին։ «Աշխարհակերը» բառն, իհարկե, նոր չե Ռուսիայում, բայց նա յերբեք չի ունեցել այնպիսի նշանակություն, վորպիսին ստացել է այժմ, յերբեք այնպիսի ճնշում չի գործել համագյուղացիների վրա, վորպիսին գործում է այժմ։ Ներկայի համեմատությամբ աշխարհակերը յեղել է ինչ-վոր նահապետական անձ, մի անձ, վոր միշտ յինքնարկվել է համայնքին, իսկ յերբեմն էլ յեղել է ծույլի մեկը, վորն առանձնապես չի էլ ընկել ջահել հասկից։—Ներկայումս աշխարհակերը բառն ունի ուրիշ նշանակություն, իսկ նահանդների մեծ մասում նա արդեն դարձել է միայն ընդհանրական հասկացողություն, համեմատաբար քիչ է գործածվում և փոխարինվում է հետևյալ բառերով—կուլակ, աշխարհակեր, վաճառական, մեկնատանջ, կասկի մորթի գնող, չարչի, կապալառու, գրավառու և այլն։ Մի բառի այդ ժանտաությունը մեքանն այնպիսի բառերին, վորոնք մասամբ նույնպես նոր չեն, իսկ մասամբ բոլորովին նոր կամ մինչև որս չեն պատահել գյուղացիական գործածության մեջ, նախ և առաջ այն և ցույց տալիս, վոր ժողովրդի շահագործման ասպարեզում տեղի յե ունեցել աշխատանքի բաժանում,

* Ասում, իհարկե, վերաբերում է վոչ այնպիսի փողի, վոր միջոց և ծառայում միայն սպառման անհրաժեշտ առարկաներ ձեռք բերելու համար, այլ այնպիս փողին, վոր կարող է ներկայել արտադրության միջոցներ գնելու համար։

և վոր գիշատչությունն ընդարձակ աճում է ստացել և ժամանակակից յենթարկվելը գրեթե յուրաքանչյուր գյուղաքաղաքում և յուրաքանչյուր գյուղում կան մեկ կամ մի քանի այդպիսի շահագործողներ։

Անվիճելի յե, վոր գիշատչության աճման այդ փաստը ճիշտ և նշմարված։ Միայն հեղինակին, ինչպես և բոլոր նարոդնիկները, չնայած այդ բոլոր վկայություններին, դուր չի գալիս, վոր այդ սիստեմատիկ, ընդհանրական, կանոնավոր (նույնիսկ աշխատանքի բաժանում ունեցող) կուլակությունը կապիտալիզմի արտահայտությունն և հողագործության մեջ, տիրապետությունը նախնական ձևերով ապրուսդ կապիտալի, վորը, մի կողմից, շարունակ առաջ է բերում այն քաղաքային, բանկային, առհասարակ յեվրոպական կապիտալիզմը, վոր նարոդնիկները համարում են բնչվոր մակերեսային բան, իսկ մյուս կողմից,—անվում է այդ կապիտալիզմով՝ նրա կողմից ոժանդակություն ստանալով, մի խոսքով, վոր այս ռուսական ժողովրդական տնտեսության կապիտալիստական կազմակերպության կողմերից ժեկըն է։

Բացի դրանից՝ աշխարհակերի «եվոլուցիայի» ընթացքը մեզ հնարավորություն կտա ելի մերկացնելու նարոդնիկին։

1861 թվականի ռեֆորմի մեջ նարոդնիկը տեսնում է ժողովրդական արտադրության նվիրատվություն՝ նրա մեջ եյական տարբերություն նկատելով արևմտյան կարգերի համեմատությամբ։

Այն ձեռնարկությունները, վորոնց նա ծարավի յե այժմ, նմանապես հանդում են նույնատիպ «նվիրատվության»—հայտնքի և այլն, նույնատիպ «ապահովություններ»—աղքատ հողաբաժնով ու առհասարակ արտադրության միջոցներով։

Իսկ այդ ինչո՞ւ, պ. նարոդնիկ, այն բարենորոգությունը, վորը «նվիրատվեց ժողովրդական (և վոչ թե կապիտալիստական) արտադրությունը», միայն այն հետևանքն ունե-

ցավ, որ «նահապետական ծուլից» սառցվից համեմատաբար չեռանդուն, կայտառ, քաղաքակրթությամբ թեթևակի պատած գիշատիչ,—որ գիշատչության ձևը միայն փոխվեց, ինչպես որ նաև համապատասխան մեծ ուշիմություններն են արել Արևմուտքում։

Ինչո՞ւ ձեզ կարծում, թե «նվիրատուծման» հետևյալ քայլերը (որոնք միանգամայն հնարավոր են դյուդացիական հողատիրության ընդլայնման, գաղթեցումների, վարձակալության կարգավորումների ու այլ անտարակուսելի առաջադիմությունների, բայց միայն բուրժուական առաջադիմությունների ձևով),—ինչո՞ւ ձեզ կարծում դուք, որ նրանք այլ բանի կհանգեցնեն և ոչ թե կապիտալի ձեվի հետագա կերպարանափոխման, այդ կապիտալի հետագա չեվրոպականացման, նրան առևտրի կապիտալից վերասերելով ու վերածելով արտադրողական կապիտալի, միջնադարյանից՝ նորագույնի։

Այլ կերպ չի կարող լինել—այն պարզ պատճառով, որ նմանորինակ միջոցները ոչ մի կերպ չեն շոշափում կապիտալը, այսինքն այն հարաբերությունը մարդկանց միջև, որի որով մի շարք մարդկանց ձեռքում փողն է կիսվել—ապրանքային տնտեսության կազմակերպած հասարակական աշխատանքի արդյունքը,—իսկ մյուսները ոչինչ չունեն բացի ազատ «ձեռքերից»*, ազատ հենց այն արդյունքից, որ կենտրոնացած է նախընթաց տարակարգի մարդկանց մոտ։

...«Դրանցից (այդ կուլակներից և այլն) կապիտալ չունեցող մանր մարդիկ սովորաբար հարում են խոշոր առևտրականներին, որոնք վարկ են ստանում նրանց կամ իրենց հաշվին գնում հանձնարարություն նրանց։ Ավելի ունևորները գործը վարում են ինքնուրույնաբար, իրենք են հարաբերություն պահպանում առևտրական ու նավահանդստային մեծ քաղաքների հետ, իրենց անունից վագոններ ուղարկում այնտեղ և իրենք են ուղևորվում տեղում հարկավոր ապրանքներ գնելու։ Ինչ էր-կաթուղի կամենում եք, նստեցեք և դուք անպատճառ կհանդիպեք III կարգում (հազվագյուտ դեպքերում II) տասնյակներով այդպիսի մարդիկ, որոնք իրենց գործերով ուղևորվում են մոտակա քաղաքները։ Կամ էլ նրանց կճանաչեք թե հաճախ հազուստից, թե վերաբերմունքի ծայրահեղ անպատշաճություններից և թե մոտ խոսքի վրա խոտորին հանելուց, մորը խնդրում է չծխել, կամ գեղջուկի վրա հանդգնելուց [այդպես էլ գրած է՝ «գեղջուկին»։ Կ. Տ.], մորը մոտ տեղ դատում չի գնում, մոր «անկիրթ» է համարվում այն պատճառով, որ մոչինչ չի հասկանում առևտրից և արհեստներ է հանդնում։ Դուք այդ մարդկանց կճանաչեք խոսակցությունից էլ։ Նրանք սովորաբար խոսում են «մորթիների» մասին, ձեթի տեսակների», կաշվի չորացրած ձկան մասին, կոբեկի մասին և այլն։ Ճիշտ դուք կլսեք ցինիկ պատմություններ նրանց կողմից զործադրվող խարդախությունների ու ապրանքների կեղծումների մասին—այն մասին, թե ինչպես «սառած հում» ունեցող աղ դրած միսը «սաղացրին» ֆաբրիկայի վրա, այն մասին, թե «մեն մարդ էլ կկարողանա չային ռանգ տալ, չեթե մի անգամ ցույց տաս նրան», թե «կարելի չի ջրով շաքարի յուրաքանչյուր գլխի քաշն ավելացնել իրենք ֆունտ այնպես, որ գնորդը ոչինչ չի նկատի» և այլն։ Այս ամենը պատմվում է այնպիսի անկեղծությամբ ու անպատճառաճարտությամբ, որ դուք պարզ տեսնում եք—այդ մարդիկ բուֆետներում գռալներ չեն դողանում և կայարաններում զապալամպեր չեն հանում տեղերից միմիայն այն պատճառով, որ վախենում են՝ բանտ ընկնեն։ Այդ նոր մարդկանց բարոյական կողմը ցածր է ամենատարրական պահանջներից, նա ամբողջովին հիմնված է ռուբլու վրա և սպառվում է այսպիսի սիֆորիզմներով. վաճառականը—վորսկան. միշտ ուշքդ վրադ պահիր· բացթերան մի լինի· աչք ածա այն բանին, ինչ որ լավ չի պահպանվում· օգտվիր բոպեյից, չերը վոչ վոք չի նայում. մի խնայի թուլլին· գլուխ տուր և սողա, չերը հարկավոր եմ։ Այնուհետև լրագրային թղթակցությունից բերվում և արձնակ թե ինչպես մի միկիտանչի ու վաշխառու, ինչ-որ վաղիով, հրվիրեց իր տունը, որ ապահովագրված եր մեծ գումարով։ Այդ մարդուն «իբենց ամենահարգելի ծանոթն են համարում ուսուցչուհին ու տեղական քահանան», մի ուսուցչուհի գրում և նրա համար բոլոր խարդախական թղթերը իբրև վարձ գինի ստանալով։ «Գիավառակային գրագիրը նրան խոստանում է ցանցի մեջ դնել «մորդվային», «Մի գեմստվային գործակալ և

...

* «Մասսան առաջվա նման... կաղնաստի ուրիճի ոգիին» (քննվող հոդվածը, եջ 135). չեթե նա «ազատ» չլիներ (de facto,—իսկ de jure** դուցե և «հողաբաժնով ապահովված եր») — այդ, իհարկե, չեր կարող լինել

**—de facto — փաստորեն, իրոք. de jure — իրավաբանորեն, ըստ գրված իրավունքի ևմբ։

Այնուհետև ժամանակ գեմստվային վարչության անդամ ապահովագրում է նրա հին տունը 1000 ռուբլու և այլն։ Վոլկովն ամենևին յեղակի յերևույթ չէ, այլ տիպ եւ Չկա մի վայր, վորտեղ տեղական Վոլկովները չլինեին, վորտեղ չպատմեին ձեղ վրէ միայն դյուղացիների հենց նմանորինակ թալանման ու սարկացման մասին, այլ և հենց նմանորինակ հրկիզումների դեպքերի մասին»...

...Սակայն հապա ինչպես և դյուղացիությունը վերաբերվում այդպիսի մարդկանց։ Յեթե նրանք հնմար են, բրտորեն անխիղճ ու մանրախնդիր, ինչպես Վոլկովը, դյուղացիությունը չի սիրում նրանց և վախենում է նրանցից, վախենում և այն պատճառով, վոր նրանք դյուղացիներին կարող են շատ ինասել, մինչդեռ վերջիններս վոչինչ չեն կարող անել։ Նրանց տներն ապահովագրված են, ունեն արագադնաց յերիվարներ, ամուր փականքներ, կատաղի շներ ու կապեր տեղական իշխանության հետ։ Բայց յեթե այդ մարդիկ Վոլկովից խելոք են ու խորամանկ, յեթե նրանք դյուղացիության թալանումն ու սարկացումը կատարում են բարեձևության քողի տակ, յեթե նրանք ռուբլին թագցնելով՝ մինուրյն ժամանակ և լուր աշխարհի գեղջում են մի դրոշ, չեն խնայում հրդեհի դոհ դարձած դյուղի համար ավելորդ կիսաշաոիկ ողի կամ մի կոտ հոգեկ, ապա նրանք դյուղացիների կողմից վայելում են պատիվ, հեղինակություն ու հարգանք, վորպես չքավորների կերակրիչներ, վորպես բարեբարներ, առանց վորոնց նրանք, թերևս, կորչելին։ Դյուղացիությունը նայում է նրանց, վորպես խելոք մարդկանց և նույնիսկ յերբեմն նրանցից սովորելու յե տալիս նրանց մոտ՝ պատիվ համարելով, վոր տղան նոտած և խանութում, և հավատացած լինելով, վոր մարդ դուրս կդա նրանից»։

Յես դիտմամբ ավելի մանրամասն քաղեցի հեղինակի դատողությունները, վոր մեջ բերեմ մեր յերիտասարդ բուրժուազիայի այն բնութագիրը, վոր տվել և հակառակորդն այն դրության, թե ռուսական հասարակական տնտեսությունը բուրժուական կազմակերպություն ունի։ Նրա քննությունը շատ բան կարող և պարզել ռուսական մարքսիզմի թեորիայի մեջ, այն տարածված հարձակումների բնույթի մեջ, վորոնք մարքսիզմի դեմ են ուղղվում ժամանակակից նարոդնիկության կողմից։

Այդ բնութագրի սկզբից յերևում է, վոր հեղինակը կարծես թե ըմբռնում է այդ բուրժուազիայի խոր արմատները, ըմբռնում է նրա կապը խոշոր բուրժուազիայի հետ, վորին

«հարում է» մանր բուրժուազիան, նրա կապը դյուղացիության հետ, վորը «յերևխանելին սովորելու» նրա մոտ է տալիս, բայց հեղինակի որինակներից յերևում է, վոր նա բոլորովին էլ բավականաչափ չի գնահատում այդ յերևույթի ուժն ու ամրությունը։

Նրա որինակները խոսում են քրեական հանցանքների, խարդախությունների, հրկիզումների մասին և այլն։ Այն տպավորությունն է ստացվում, թե դյուղացիության «թալանումն ու սարակացումն» ինչ-վոր պատահականություն է, հետևանք (ինչպես դրանից վերև արտահայտվել է հեղինակը) կյանքի ծանր պայմանների, «բարոյական գաղափարների կորստության», հետևանք այն բանի, վոր կաշկանդումների յի յենթարկվում «գրկանության մուտքը ժողովրդի մեջ» (եջ 152) և այլն — մի խոսքով, վոր այդ ամենը բոլորովին չի բղխում անխուսափելիորեն մեր հասարակական տնտեսության ժամանակակից կազմակերպությունից։

*Մարքսիստը հենց այդ վերջին կարծիքին է. նա պնդում է, վոր այդ պատահականություն չի ամենևին, այլ անհրաժեշտություն, մի անհրաժեշտություն, վոր պայմանավորված է արտադրության՝ Ռուսաստանում տիրապետող կապիտալիստական յեղանակով։ Քանի վոր դյուղացին դառնում է ապրանքային արտադրող (իսկ այդպիսին արդեն բոլոր դյուղացիներն են դարձել), — ապա նրա «բարոյականությունն արդեն անխուսափելիորեն կլինի «ռուբլու վրա հիմնված», և նրան այդ բանի համար չի կարելի մեղադրել, վորովհետև կյանքի բուն պայմանները հարկադրում են վորոշել այդ ռուբլին ամեն տեսակ առևտրական խորամանկություններով *։ Այս պայմաններում առանց վորևե քրեականության, առանց վորևե լաքեյության, առանց վորևե կեղծման,— «դյուղացիությունից» զատվում են հարուստները ու աղքատները։ Հին հավասարությունը չի կարող դիմանալ*

*Հմմտ. Ուսպենսկուն։

շուկայական տատանումներին։ Այս դատողություն չէ,—այս իրողություն է։ Փաստ է նաև այն, որ այդ պայմաններում սակավաթիվների «հարստությունը» դառնում է կապիտալ, իսկ մասսայի «աղքատությունը» նրան հարկադրում է վաճառել իր ձեռքերը, աշխատել ուրիշի ոգուտին։ Այսպիսով, մարքսիստի տեսակետից, կապիտալիզմն արդեն հաստատապես բուն է դրել, կազմավորվել և միանգամայն ձևորոշվել մեջ, այլ և գյուղում ու առհասարակ Ռուսիայում ամենուրեք։

Այժմ կարող եք պատկերացնել, թե ինչպիսի սրամտություն են ցուցաբերում պ. պ. նարոդնիկները, երբ նրանք պատասխան մարքսիստի փաստարկմանը, թե գյուղերի այդ «ցավալի երևույթների» պատճառը քաղաքականությունը չէ, սակավահողությունը չէ, վճարքները չեն, վատ «անձնավորություններ» չեն, այլ կապիտալիզմը, որ այդ ամենն անխուսափելի արտադրության կապիտալիստական ձևաղանակի գոյության, բուրժուազիայի տիրապետության որով, — երբ նրանք պատասխան դրան նարոդնիկը ճչալ և սկսում, թե մարքսիստները կամենում են հողազուրկ անել գյուղացիությունը, թե նրանք պրոլետարին «դերադասում են» «ինքնուրույն» գյուղացուց, թե նրանք «ցուցաբերում են «արհամարհանք ու դաժանություն հանդեպ «անհատի», — ինչպես ասում են գավառական որիորդներն ու պ. Մ[illegible]յլովսկին՝ պ. Ստրուվեյին տված պատասխանի մեջ։

Գյուղի այս փոքրիկ պատկերում, որը հետաքրքրական և նրանով, որ հակառակորդի կողմից է բերվում, մենք կարող ենք ակնառու կերպով տեսնել մարքսիստների դեմ արվող տարածված առարկությունների անհեթեթությունը, նրանց մտացածին լինելը, երբ առարկողները շրջանցում են փաստերը, մուտացության տալիս իրենց նախկին հայտարարությունները, — այդ ամենը նրա համար, որպեսզի

coûte que coûte* փրկեն չբռնազանքների ու կոմպրոմիսների այն թեորիանները, որոնց, բարեբախտաբար, այժմ արդեն չի փրկի վոչ մի ուժ։

Ռուսաստանի կապիտալիզմի մասին խոսելիս մարքսիստները փոխ են առնում պատրաստի սխեմաներ, որոնցից դուրս են գալիս այնպիսի դրույթներ, որոնք ընդգրկում են բոլորովին այլ պայմաններ։ Նրանք Ռուսաստանի կապիտալիստական արտադրությունը, որ իր զարգացմամբ ու նշանակությամբ չնչին է (մեր ֆաբրիկաններում և գործարաններում ընդամենն զբաղված են 1.400 հազար մարդ), տարածում են գյուղացիության մասսայի վրա, որը դեռևս տիրում է հողին։ Այս և լիբերալ-նարոդնիկական բանակում սիրված առարկություններից մեկը։

Յեվ ահա գյուղի նույն այդ պատկերը ցույց է տալիս մեզ, որ «համայնական» ու «ինքնուրույն» գյուղացիների կարգերը[illegible] նկարագրելիս նարոդնիկը չի կարողանում յոլա գնալ առանց նույն այդ արտարակա սխեմաներից ու ոտար դրույթներից փոխառած բուրժուազիայի կատեգորիայի, չի կարող չհավատալ, որ նա գյուղացիական տիպ է և վոչ թե յեզակի դեպք, որ նա ամենից ամուր թելերով կապված է քաղաքների խոշոր բուրժուազիայի հետ, որ նա կապված է գյուղացիության հետ ել, որը «յերեխաներին սովորեցնում է տալիս նրա մոտ», որից ել, այլ խոսքով, դուրս է գալիս այդ յերիտասարդ բուրժուազիան։ Հետևապես, մենք տեսնում ենք, որ այդ յերիտասարդ բուրժուազիան աճում է մեր «համայնքի» ներսից և վոչ թե նրա դրսից, որ նա ծնունդ է առնում ապրանքարտադրող դարձած գյուղացիության միջավայրի բուն հասարակական հարաբերություններից։ Մենք տեսնում ենք, որ վոչ միայն «1.400 հազար մարդը», այլև ռուսական գյուղական ժողովրդի ամբողջ մասսան աշխատում է կապիտալի համար, դառնում է նրա

*—ինչ գնով ել լինի։ Խմբ։

«անորինութեան» տակ։ Ուրեմն ոչ և ավելի ճիշտ յեզրակացութիւններ անում այդ փաստերից, որոնք հավաստվում են վերջ ի վերոյ «մխտիկ ու մետաֆիզիկ» մարքսիստի կողմից, որը հավատում է «տրիադաններին», այլ ոնաբուշա նարոդնիկի կողմից, որը դիտե գնահատել առւսական կենցաղի առանձնահատկութիւնները։ Արդյոք նարոդնիկը, յերբ նա խոսում է լավագույն ուղու ընտրութեան մասին, կարծես թե կապիտալն արդեն չի արել իր ընտրութիւնը, — յերբ նա խոսում է դեպի այլ հասարակակարգը կատարելիք շրջադարձի մասին, որպիսի հասարակակարգը ապահովում է «հասարակութիւնից» ու «պետութիւնից», այսինքն այնպիսի տարրերից, որոնք միայն այդ ընտրութեան հողի վրա և նրա համար են ծագել, — թե մարքսիստը, որն ասում է, թե յերազել այլ ուղիների մասին, նշանակում է լինել պարզամիտ ռոմանտիկ, որովհետև իրականութիւնը ցույց է տալիս ամենից ակներև կերպով, որ «ուղին» ընտրված է արդեն, որ կապիտալի տիրապետութիւնը մի փաստ է, որից չի կարելի հրաժարվել կշտամբանքներով ու դատապարտութիւններով, — մի փաստ, որի հետ կարող են հաշվի նստել միայն անմիջական արտադրողները։

Մի ուրիշ տարածված կշտամբանք։ Մարքսիստները խոշոր կապիտալիզմը Ռուսաստանում համարում են առաջադեմական յերևույթ։ Այսպիսով նրանք պրոլետարին զերադասում են «ինքնուրույն» գյուղացուց, համակրում են ժողովրդի հոգազրկմանը և այն թեորիայի տեսակետից, որն իբրև իդեալ և ցանկացրում արտադրութեան միջոցների՝ բանվորներին պատկանելը, համակրում են բանվորի՝ արտադրութեան միջոցներից կտրվելուն, այսինքն ընկնում են անհաշտելի հակասութեան մեջ։

Այո, մարքսիստներն առաջադիմական յերևույթ են համարում խոշոր կապիտալիզմը, — վոչ այն պատճառով, իհարկե, որ նա «ինքնուրույնութիւնը» վոխարինում է անինքնուրույնութեամբ, այլ այն պատճառով, որ նա պայմանները և ստեղծում անինքնուրույնութիւնը վոչնչացնելու համար։ Ինչ վերաբերում է ռուս գյուղացու «ինքնուրույնութեանը», — ապա այդ նարոդնիկական քաղցրավուն հեքիաթ և, ուրիշ վոչինչ, — իրականութեան մեջ այն չկա։ Յուր բերված պատկերը (ինչպես և գյուղացիութեան մնուհասկան դրութեանը նվիրված բոլոր յերկերն ու հետազոտութիւնները) նույնպես պարունակում է այդ փաստի ճանաչումը (որ իրականութեան մեջ ինքնուրույնութիւն չկա)։ Գյուղացիութիւնն էլ, բանվորների նման, աշխատում է «ուրիշի ոգուն»։ Այդ ընդունում էին հին ռուսական նարոդնիկները։ Բայց նրանք չէին հասկանում այդ անինքնուրույնութեան պատճառները ու բնույթը, չէին հասկանում, որ այդ նույնպես կապիտալիստական անինքնուրույնութիւն է, որը քաղաքային մարքերվում է պակաս զարգացած լինելով, կապիտալի միջնադարյան կիսաճորտատիրական ձևերի ավելի շատ մնացորդներով, և ուրիշ վոչինչ։ Համեմատենք գործարանի հետ թեկուզ այն գյուղը, որը նկարեց մեզ համար նարոդնիկը։ Տարբերութիւնը (ինքնուրույնութեան տեսակետից) միայն այն է, որ այնտեղ մենք տեսնում ենք «մանր ցեցերին», այստեղ—խոշոր, այնտեղ—միայնակների չհատգործում՝ կիսաճորտատիրական յեղանակներով, — այստեղ — մասսաների չհատգործում, և այն էլ արդեն զուտ կապիտալիստական չհատգործում։ Հասկանալի չե, որ յերկրորդն առաջադիմական է. նույն այն կապիտալիզմը, որը զարգացած չէ գյուղում, ուստի և զարգացված է վաշխառութեամբ ու նման յերևույթներով, այստեղ զարգացած է. նույն այն հակադրութիւնը, որը կա գյուղում, այստեղ արտահայտված և լիովին. այստեղ պատակտումն արդեն լիակատար է, և հնար չկա այնպիսի կիսատ-պռատ հարցադրման, որով բավարարվում է մանր արտադրողը (և նրա իդեոլոգը), որն ընդունակ է նահատակու, հանդիմանելու և անիծելու կապիտալիզմը, բայց ընդունակ չե հրաժարվելու

այդ կապիտալիզմի բուն հոդից*, այդ կապիտալիզմի ծառայների վերաբերմամբ ունեցած վստահությունից, վարդապետական տեսություններից այն մասին, թե «ավելի լավ կլիներ առանց կռվի», ինչպես ասաց հոյակապ պ. Կրիվենկոն։ Այստեղ արդեն անհնարին են տեսությունները,— հենց միևնույն այս էլ հսկայական քայլ է դեպի առաջ. այստեղ արդեն պարզ երևում է, թե ուժ կողմն է ուժը, և չի կարելի շաղակրատել ուղղու ընտրության մասին, վերոհիշյալ պարզ և, վոր նախ պետք է «վերապահել» այդ ուժը։

«Քաղցրավուն ոսոխությունը»— այսպես է՛ բնութագրել պ. Սարուխանն նարոդնիկությունը, և այս խորապես ճիշտ է։ Հազա ինչպես ոսոխիզմ չէ, երբ կապիտալի ամենալիակատար տիրապետությունը դյուղում անդիտացվում է, լռության տրվում, պատկերացվում վորպես պատահականություն. երբ առաջարկվում են զանազան վարկեր, արտելներ, հասարակական հերկումներ, կարծես թե այդ բոլոր «կուլակները, դռիդները, վաճառականները, միկիտանչիները, կապալառուները, գրավառուները և այլն, կարծես թե այս ամբողջ «երկիտասարդ բուրժուազիան» արդեն իր «ձևավորում» չի պահում «յուրաքանչյուր գյուղ»:— Ի՞նչպես չասենք.

---

* Թյուրիմացություններից խուսափելու համար պարզեմ, վոր կապիտալիզմի «հոդ» ասելով չես հասկանում եմ այն հասարակական հարաբերությունը, վոր տարբեր ձևերով թագավորում և կապիտալիստական հասարակության մեջ և վոր Մարքսն արտահայտել է այս բանաձևով՝ փող—ապրանք—փող պլյուսով։

Նարոդնիկական միջոցները չեն շոշափում այդ հարաբերությունը՝ չատանելով վոչ ապրանքային արտադրությունը, վոր մանավանդ անձերի ձևերն և տալիս փողը=հասարակական աշխատանքի արդյունքը, վոչ էլ «ժողովրդի» պատահական կերկու մասը—փղպատիների ու սկլոտների։

Մարքսիստը դիմում է այդ հարաբերության ամենադարպացած ձևին վորը բոլոր մնացած ձևերն կվինտեսենցիան է, և արտադրողին ժամանակույց և անում այսպիսի խնդիր ու նպատակ—վոչնչացնել այս հարաբերությունը, այս փոխարինել մի ուրիշ հարաբերությամբ։

քաղցրավուն, յերբ մարդիկ շարունակում են ասել՝ «10 տարի, 20 տարի, 30 տարի և ավելի», «ավելի լավ կլիներ առանց կռվի», այնինչ կռիվն արդեն տեղի ունի, բայց միմիայն խուլ, անգիտակցական, դաղափարով չլուսավորված կռիվ։

«Այժմ, ընթերցող, անցնենք քաղաքները։ Այստեղ դուք կհանդիպեք յերիտասարդ բուրժուազիայի էլ ավելի մեծ թվի ու էլ ավելի մեծ բազմազանության։ Այն ամենն, ինչ վոր գրագետ է դառնում և իրեն պիտանի համարում ավելի ազնիվ գործունեության համար, այն ամենն, ինչ վոր իրեն արժանի չի համարում ավելի լավ վիճակի, քան թե շարքային գյուղացու վողորմելի վիճակն է, վերջապես, այն ամենն, ինչ վոր այդ պայմաններում չի տեղավորվում գյուղում, այժմ ձգտում է քաղաքները»...

Ձեվ այնուամենայնիվ պ.պ. նարոդնիկները քաղցրավուն շեշտով խոսում են քաղաքային կապիտալիզմի «արհեստականության» մասին, այն մասին, թե այդ «մի ջերմոցային բույս» է, վորին յերեք չինամես, նա ինքը կվոչնչանա և այլն։ Բավական է, վոր ավելի պարզ նայենք փաստերին, և ակներև կլինի, վոր այդ «արհեստական» բուրժուազիան պարզապես քաղաքները վերաղրված գյուղական աշխատակերներն են, վորոնք ճաշում են բոլորովին ինքնաբերաբար այն հողի վրա, վորին լույս է տալիս «կապիտալիստական լուսինը» և յուրաքանչյուր շարքային գյուղացու հարկադրում՝ ավելի հեժան դնել, ավելի թանգ վաճառել։

...Դուք այստեղ հանդիպում եք—գործակատարների, գրասենեկային ծառայողների, մանրավաճառների, չարչիների, զանազան տեսակի կապալառուների (ավազիչների, հյուսների, քարտաշների և այլն), կոնդուկտորների, ավազ դռնապանների, վոսկեկանների, բորսային արտելշչիկների, փոխադրական միջոցների, պարեհային թաղուների ու պանդոկների պահողների, զանազան արհեստանոցների տերերի, գործարանային վարպետների և այլն։ Այս ամենն իսկական յերիտասարդ բուրժուազիա չի իր բոլոր բնորոշ հատկանիշներով։ Նրա բարոյականության կռդքան այստեղ էլ չափազանց նեղ է. ամբողջ գործունեությունը հիմնված է

աշխատանքի շահագործման վրա*, իսկ կենսական խնդիրը կապիտալ կամ կալվածատիրական ձևով բերելն է բթամիտ ժամանցի համար»...:

...«Ձեզ գիտեմ, ով շատերն ուրախանում են այդ մարդկանց նայելիս նրանց մեջ տեսնելով խելք, յուրաքանչյուրին, նրանց համար բում են ժողովրդի ամենից առաջադեմ տարրերը, նրանց մեջ տեսնում են ուղիղ ու բնական քայլը հայրենական քաղաքակրթության, ովքեր անհարթությունները կվերանան ժամանակով: Ո՛, յես վաղուց արդեն դեմ, ով մեզանում բարձրադույն բուրժուազիա չի առեղծվել կրթված մարդկանցից, վաճառականներից ու աղնվականությունից, ովքեր կամ չի դիմացել 1861 թվականի ճգնաժամին և ընկել է, կամ թե ժամանակի վրդով է տոգորվել, ով այդ բուրժուազիան արդեն կազմել է յերբորդ դասի կազմը և ով նրան մխիթար պահպանում են ժողովրդից դուրս եկած հենց այն տարրերը, առանց որոնց նա ոչինչ չի կարող անել և որոնք նրան այդ պատճառով էլ դուր են գալիս»...

Այստեղ էլ վոքրիկ անցք է թողնված «քաղցրավուն ոպտիմիզմի» համար. խոշոր բուրժուազիային «մխիթար պահպանում են» բուրժուական տարրերը ժողովրդի մեջ: Ապա վո՞րտեղից և դուրս եկել ինքը խոշոր բուրժուազիան, յեթե ոչ ժողովրդի մի՞ջից: Հո չի ժխտի հեղինակը մեր «վաճառականության» կապը գյուղացիության հետ:

Այստեղ ձգտում է նշմարվում յերկուսասարդ բուրժուազիայի այդ ամուսը դուրս բերելու մի պատահական բան,

---

* Ճշդրիա չեն Մանը բուրժուան հենց նրանով էլ տարբերվում է խոշորից, ով ինքն էլ է աշխատում,—ինչպես աշխատում են նաև հեղինակի թվարկած մարդիկ: Աշխատանքի շահագործում կա, իհարկե, բայց ոչ բացառապես միմիայն շահագործում:

Մի վոքրիկ նկատողություն էլ. շարքային գյուղացու վիճակով չբավարարվողների կենսական խնդիրը կապիտալ ձևով բերելն է: Այսպես է ասում (զրաստության բոլենների) նարոդնիկը—Ռուսական գյուղատնտեսության տենդենցը վո՞չ թե համայնական, այլ մանր-բուրժուական հասարակակարգն է: Այսպես է ասում մարքսիստը:

Ի՞նչ տարբերություն կա այս յերկու դրույթների միջև: Արդյոք այն չի միմիայն, ով մեկը տալիս է եմպիրիկ կենցաղային դիտողություն, իսկ մյուսն ընդհանրացնում է դիտվող փաստերը (վորոնք արտահայտում են իրական «կենդանի անձնավորությունների» իրական «խոհերն ու զգացմունքները») և վերածում քաղաքատնտեսական որենքի:

վորպես հետևանք քաղաքականության և այլն: Նարոդնիկի համար խիստ տիպիկ է ըմբռնողության այս մակերեսայնությունը, վոր ընդունակ չէ յերևույթի արմատները տեսնելու հասարակության բուն տնտեսական կառուցվածքի մեջ. վորն ընդունակ է ամբողջ մանրամասնությամբ թվարկելու մանր բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներին, բայց անընդունակ՝ ըմբռնելու, վոր դյուղացու ու տնայնագործի բուն իսկ մանր ինքնուրույն տնտեսությունն արդեն տնտեսական տվյալ կարգերի պարագայում—վո՛չ թե ինչ-վոր «ժողովրդական» տնտեսություն է, այլ մանր-բուրժուական տնտեսություն է:

...«Ձեզ գիտեմ, ով հին տոհմերի շատ շատավիղները արդեն սկսել են զբաղվել ողի քաշելով ու դինեհանների, յերկաթուղային կոնցեսիաների ու հետաղոտությունների, ասել են բռնել բաժնետրական բանկերի վարչությունների մեջ, նույնիսկ հաստատվել գրականության մեջ և այժմ յերգում են նոր յերգեր: Ձեզ գիտեմ, վոր գրական յերգերից շատերը չափազանց քնքուշ են ու զգայուն, վոր նրանց մեջ խոսվում է ժողովրդական կարիքների ու ցանկությունների մասին,—բայց յես զրեմ նաև այն, վոր կարդին գրականության պարտականությունն է՝ յերևան հանել հարցի փոխարեն ժողովրդին քար հրամցնելու դիտավորություններըն:

Վո՞րպիսի արկածական խղճմտանք: Դեռ միայն հրամցնելո՞ւ «դիտավորությո՞ւն»:

Ցեղ ինչպես եղ այս ներդաշնակում է. «գիտե», վոր «վաղուց արդեն» զոյացել է բուրժուազիա,—և դեռ ելի իր խնդիրը համարում է բուրժուազիա ստեղծելու «դիտավորություններ» յերևան հանելը:

Ահա այս եղ կոչվում է «բարեհոգություն», յերբ արդեն զորահավաքած բանակի հանդեպ, շարված զինվորների հանդեպ, վորոնք մխավորված են «վաղուց արդեն» զոյացած «զլխավոր շտաբի» կողմից,—մարդիկ դեռևս խոսում են դիտավորություններ «յերևան հանելու» մասին և վո՛չ թե շահերի արդեն միանգամայն յերևան յեկած կռվի մասին:

...«Ֆրանսական բուրժուազիան էլ նույնացնում էր իրեն ժողովրդի հետ և միշտ իր պահանջներն առաջադրում էր ժողովրդի անունից, բայց միշտ խաբում էր նրան։ Վերջին տարիների ընթացքում մեր հասարակության բռնած բուրժուական ուղղությունը մենք ժողովրդական բարոյականության բարեկեցության համար վնասակար ու վտանգավոր ենք համարում»։

Այս ֆրազի մեջ թերևս ամենից ակնառու կերպով հայտաբերվել հեղինակի մանր-բուրժուականությունը։ Նա բուրժուական ուղղությունը «վնասակար ու վտանգավոր» է հռչակում ժողովրդի բարոյականության ու բարեկեցության համար։ Այդ վո՞ր «ժողովրդի», պատվելի պ. բարոյախոս.— մի՞ն ժողովրդի, որն աշխատում էր կալվածատերերի համար ճորտային իրավունքի ժամանակ, երբ վերջինս ամբացնում էր «ընտանեկան ոջախը», «ընտանեկությունն» ու «աշխատանքի սուրբ պարտականությունը*, թե՞ այն ժողովրդի, որը հետո դնում էր փրկանքի ռուբլին ճարելու։ Դուք լավ գիտեք, որ այդ ռուբլու վճարումն «ազատագրման» հիմնական ու գլխավոր պայմանն էր և որ այդ ռուբլին գյուղացին վոչ մի տեղից ճարել չէր կարող, բացի պարոն Կուպոնի մոտից։ Դուք հենց ինքներդ նկարագրեցիք, թե ինչպես էր տնտեսությունը վարում այդ պարոնը, ինչպես «քաղքենիությունը կլանքի մեջ մտցրեց իր դիտությունը, իր բարոյական կողքոն ու իր «սովետությունները», թե ինչպես գոյացավ արդեն մի գրականություն, որը յերգում է բուրժուազիայի «խելքի, ձեռնարկու ոգու և յեռանդի» մասին։ Պարզ է, որ ամբողջ բանը հանգում է հասարակական կազմակերպության յերկու ձևերի հերթափոխության. հին կազմակերպության յերկու ձևերի հերթափոխության. հողից ամբացված, ճորտ գյուղացիների հավելյալ աշխատանքի յուրացման սիստեմն ստեղծել և ճորտատիրական բարոյականություն. նրա փոխարեն բուրժուական բարոյականություն և ստեղծել «ազատ աշխատանքի» սիստեմը, որ աշխատում է «ուրիշի ոգտին», փողատիրոջ համար։

* Պ-ն Ծուժակովի խոսքերն են։

Բայց մանր բուրժուան վախենում է ուղղակի նայել իրերին ու նրանց տալ իրենց անունը. նա յերես է շրջում այդ անվիճելի փաստերից և սկսում է յերազել։ Նա «բարոյական» համարում է միայն մանր ինքնուրույն տնտեսությունը (որը օուկյալի համար է աշխատում.—այս մասին հաճելատարար լուռ է պահպանվում), իսկ վարձու աշխատանքը՝ «անբարոյական»։ Մեկի կապը մյուսի հետ—և այն էլ անխզելի կապը—նա չի հասկանում և կարծում է, թե բուրժուական բարոյականությունն ինչ-որ պատահական հիվանդություն է և վոչ թե ուղղակի արդյունքը բուրժուական կարգերի, որոնք առաջ են գալիս ապրանքային տնտեսությունից (որի դեմ նա իհարկե վոչ մի առարկություն չունի)։ Ցավ ան՝ նա սկսում է իր պատմական քարոզը՝ «վնասակար է և վտանգավոր»։ Նա չի բաղդատում շահագործման նորագույն ձևը նախընթացի, ճորտատիրականի հետ, նա չի նայում այն փոփոխություններին, որ այդ ձևը մտցրել է արտադրողի ու արտադրության միջոցների սեփականատիրոջ հարաբերությունների մեջ.—նա այդ ձևը համեմատում է անիմաստ, քաղքենիական ուտոպիայի հետ—այնպիսի «մանր ինքնուրույն տնտեսության» հետ, որն ապրանքային տնտեսություն լինելով՝ չառանց դեպի այն հեռանքը, դեպի որը տանում է (համմա. վիրևում—«փարթամորեն փթթում է կուլակությունը և ձգտում արագացնելու ամենաթուլլին՝ բատրակ գարձնելով նրան») և այլն)։ Ուստի նրա բողոքը կապիտալիզմի դեմ (որն իրրև այնպիսին, որպես բողոք—մի՞անգամայն օրինական ու արդարացի բողոք է) դառնում է ռեակցիոն վողբասացության։

Նա չի հասկանում, որ «բուրժուական ուղղությունն» ողտակար աշխատանք էր կատարում, աշխատավորին մի տեղից ամբացնող շահագործման ձևը փոխարինելով այնպիսի ձևով, որը նրան ամբողջ յերկրով մեկ տեղից տեղ և նետում. որ շահագործման այնպիսի ձևը, որը ժամանակ հավելյալ արդյունքի յուրացումը պատած էր լինում շա-

հագրծողի՝ արտադրողի վերաբերմամբ ունեցած անձնական հարաբերությունների, քաղաքացիական քաղաքական փոխադարձ պարտավորությունների, «հողաբաժին ապահովելով» և այլն, շահագործման այսպիսի ձևը փոխարինելով այնպիսի ձևով, որն այդ ամենի տեղը դնում է «անսիրտ կանխիկ դրամը», աշխատանքային ուժը համեմատում է ամեն մի ուրիշ ապրանքի, իրի հետ. որ սրանով իսկ «բուրժուական ուղղությունը» մերկացնում է շահագործումն իր բոլոր մթագնումներից ու պատրանքներից, իսկ շահագործումը մերկացնելն արդեն մեծ ծառայություն է։

Հետո նույնպես ուշադրություն դարձրեք այն հայտարարության վրա, որ մեր հասարակությունը «վերջին տարիներում» ընկել է բուրժուական ուղղություն—Մ[illegible]այն «վերջին տարիների ընթացքում»։ Սրտյուք նա միանգամայն պարզ չի՞ արտահայտվել 60-ական թվականներին էլ։ Նա չի՞ ներկայացրել ամբողջ 70-ական թվականների ընթացքում էլ։

Մանր բուրժուան այստեղ էլ աշխատում է մեղմացնել բանը, մեր «հասարակությունը» ամբողջ հեռանկարի ժամանակաշրջանի ընթացքում բնորոշող բուրժուականության ներկայացնել [illegible]-որ ժամանակավոր հաջողություն, մոդա։ Ծառերը նշմարելով անտառը չտեսնելը մանր-բուրժուական ուսմունքի հիմնական գիծն է։ Ճորտային իրավունքի դեմ ուղղված բողոքի ու կատաղի հարձակումների հետևը նա (մանր բուրժուազիայի իդեոլոգը) չի տեսնում բուրժուականությունը, որովհետև վախենում է այն կարգերի անտեսական հիմքերին ուղղակի նայելուց, որոնք կառուցվում էին այս կատաղի ճիչերի ուղեկցությամբ։ Նա միայն «վերջին տարիների» բուրժուականությունն է տեսնում ամբողջ առաջավոր («[illegible]», եջ 129) գրականության այն խոսակցությունների հետևը, որոնք նվիրված են վարկերին, փոխատու-խնայողական ընկերությունների, հարկերի ծանրությանը, հողատիրության ընդ-

լայնմանն ու «ժողովրդին» ոչնչելու ուրիշ նմանորինակ միջոցներին։ Վերջապես, «ռեակցիայի» նկատմամբ բարձրացող որոտումների հետևը, «60-ական թվականներին» նվիրված վողբի հետևը նա արդեն բոլորովին չի տեսնում այդ ամենի հիմքը կազմող բուրժուականությունը, ուստի ավելի ու ավելի չի ձուլվում այդ «հասարակությանը»։

Իրոք—հեռանկարման պատմության այս բոլոր չերեք շրջանների ընթացքում մեր դյուղացիության իդեոլոգը միշտ կանգնած է եղել «հասարակության» կողքին և նրա հետ միասին՝ չհասկանալով, որ այս «հասարակության» բուրժուականությունը խլում և բուրժուականության դեմ ուղղված նրա բողոքի ամբողջ ուժը և անխուսափելիորեն դատապարտում նրան կամ չերազանքների, կամ մանր-բուրժուական վողոմելի կոմպրոմիսների։

Մեր նարոդնիկության այս մերձավորությունը լիբերալ հասարակությանը (նարոդնիկությունն «սկզբունքով» թշնամի չի լիբերալիզմին) շատերին և սրտառուչ թվացել և նույնիսկ մինչև այժմ շարունակում է սրտառուչ թվալ պ-ն վ.վ.-ին (հմմտ. նրա հոդվածը «Неделя»-յում, 1894 թ., №№ 47—49)։ Սրանից հետևցնում են բուրժուական լինելիության թուլությունը կամ նույնիսկ բացակայությունը մեզանում, որ և կապվում և այն հանգամանքի հետ, թե ռուսական կապիտալիզմը հող չունի։ Իսկ իրոք սրա հակառակն է հենց. այդ մերձավորությունն ուժեղագույն ապացույցն է նարոդնիկության դեմ, նրա մանր-բուրժուականության ուղղակի հաստատումը։ Ինչպես որ կյանքում մանր արտադրողը ձուլվում է բուրժուազիային՝ շուկա հանելու ապրանքների առանձնացած արտադրության առկայությամբ, լայն ասպարեզ դուրս գալու, խոշոր տնտեսատեր դառնալու իր շանսերով, այնպես էլ մանր արտադրողի իդեոլոգը ձուլվում է լիբերալի հետ՝ միանգամայն քննության առնելով զանազան վարկերի, արտելների ու այլ ձեռնարկումների հարցերը. ինչպես որ մանր արտադրողն

անընդունակ է կռվելու բուրժուազիայի դեմ և ապավինում է ոգնութ֊յան այնպիսի միջոցների, ինչպես հարկերի պակասեցումն է, հողի ավելացումը etc.,—այնպես էլ նարոդնիկը հավատ է ընծայում լիբերալ «հասարակութ֊յանն» ու նրա՝ «անվերջանալի ստահոդութ֊յամբ ու կեղծավորութ֊յամբ» պատած շաղակրատանքներին «ժողովրդի» մասին։ Յեթե յերբեմն նա հայհոյի էլ «հասարակութ֊յանը», ապա խիստ ևեթ կավելացնի, վոր այս միայն «վերջին տարիների ընթացքումն է» հասարակութ֊յունը վչացել, իսկ առհասարակ ու ինքնըստինքյան վատ չէ։

«Նորերս քննութ֊յան առնելով մեղանում ռեֆորմից հետո կազմավորված տնտեսական նոր դասակարգը, «Современные Известия»-ն * այսպես լավ և բնութ֊յամբ այն «Համեստ ու մորուքավոր, յուղած ճաքավոր կոշիկները հագին, հին ժամանակվա մլլլոնատերը, վոր վոսկեհանական փոքր ատիճանավորի առաջ խոնարհում էր, արագորեն փոխակերպվեց՝ դառնալով յեվրոպականորեն ազատ նկատելիքի տեր, դարձնելիկ անձարձակ ու զգոող մի անտրեպրենյոր, վոր յերբեմն զարմանալի և չատ յերեկի չքաղաղնով ու բարձր ատիճանով։ Ուշադրութ֊յամբ զննելով այս անսպասելիորեն աճած մարդկանց՝ զարմանքով նկատում ես, վոր որվա այս լուսատուների մեծ մասը—յերեկվա մլկնատներն են, կապալառուները, գործակատարները և այլն։ Նորեկները աշխուժացրին քաղաքային կյանքը, բայց չբարեկավեցին այն։ Նրանք այդ կյանքի մեջ մացրին անհանգիստ շարժում ու հասկացողութ֊յուններ կրի չափազանց շռայլութ֊յուն։ Շրջանառութ֊յունների ուժեղացումը, կրի պետական պահանջը զարգացրին ձեռնարկութ֊յունների տենդը, վոր զարձավ խաղի մոլեգնութ֊յուն։ Անսպասելի-անբերեկական կերպով առեղծված բազմաթիվ կարողութ֊յուններն անհամբերութ֊յան բարձրացրին ապրանքին հասցրին չանելու ախորժակը» և այլն…

«Անտարակույս է, վոր այսպիսի մարդիկ ամենաիրաստաբեր ազդեցութ֊յունն են անում ժողովրդական բարոյականութ֊յան վրա [անհա թե ցավը ինչ է—բարքերի փչացումը և վոչ թե կապիտալիստական արտադրական հարաբերութ֊յունները։ Կ. Տ.] և յեթե չտարակուսենք այն փաստի նկատմամբ, վոր քաղաքային բանվորները դյուղական բանվորներից ավելի յեն ապականված, ապա, իհարկե, չի կարելի տարակուսել նաև այն մասին, վոր այս կախված է նրանից, վոր նրանք այստեղ շատ ավելի յեն շրջապատված այդպիսի մարդկանցով, նրանց ոգն են շնչում և նրանց ստեղծած "կյանքով ապրում»։

Ակնառու հաստատումն պ. Սորոկինի այն կարծիքի, վոր նարոդնիկութ֊յունը ռեակցիոն է։ Բաղաքային բանվորներին «ապականութ֊յունը» վախեցնում է մանր բուրժուազիային, վորը դերադասում է «ընտանեկան ոջախը» (հարստացողծութ֊յամբ ու մահակով հանդերձ), «նստակեցութ֊յունը» (բթամտութ֊յամբ ու վայրենութ֊յամբ հանդերձ) և չի հասկանում, վոր «դրաստե»* մեջ մարդու արթնացումը — մի արթնացում, վորն ունի այնպիսի հակայական, համաշխարհային-պատմական նշանակութ֊յուն, վոր սրա համար որինական են բոլոր զոհաբերութ֊յունները, — չի կարող չընդունել վայրագ ձևեր առհասարակ կապիտալիստական, մանավանդ ռուսական պայմաններում։

«Յեթե ռուս կալվածատերն աչքի յի ընկնում վայրենութ֊յամբ և բավական եր՝ մի փոքր քերկիլը նրան, վոր նրա մեջ տեսնկիլը թաթարին, ապա ռուս բուրժուային սկի քերել էլ հարկավոր չեն Յեթե ռուսական հին վաճառականութ֊յունն ստեղծից խավար թաղավորութ֊յունը, ապա այժմ նա նոր բուրժուազիայի հետ մրասին կստեղծեն այնպիսի մթութ֊յուն, վորի մեջ կորսյան կմատնվի ամեն մի միտք, ամեն մի մարդկային զգացմունք։

Հեղինակը չարաչար սխալվում է։ Այստեղ պետք է դերված լինի անցյալ և վոչ թե ապառնի ժամանակ, պետք է դերված լիներ՝ նաև այն ժամանակ, 70-ական թվականներին։

«Նոր նվաճողների վոհմակները ցրվում են բոլոր կողմերը և վոչ մի տեղ ու վոչ վոքի կողմից չեն հանդիպում հակազդեցութ֊յան։ Կալվածատերերը նրանց հովանավորում են և խնդութ֊յամբ դիմավորում նրանց, դեմոկրատական գործիչները նրանց վճարում են ամենից ապահովագրական պրեմիաներ, ժողովրդական ուսուցիչները նրանց համար դրում են խարտախական դրութ֊յուններ, հոգևորականութ֊յունն այցելութ֊յուններ և

* «Современные известия»—ամենօրյա պետական օրաթերթ, վորը լույս եր տեսնում Մոսկվայում 1867-ից մինչև 1887 թ. թ. Գիլյարով-Պլատոնովի խմբագրութ֊յամբ։ Խմբ։

* «Դրաստե»—Սալտիկով-Շչեդրինի հեքիաթը, վորի մեջ աշխատանքում տանջած դյուղացիական ձիու տեսքով նկարագրվում է ռուս դյուղացիության դրութ֊յունը։ Խմբ։

անում, իսկ ժողովածուին գրագիրները նրանց ոգնում են ցանցի մեջ դցելու մարդկային»։

Միանգամայն ճիշտ բնութագիրը եւ «Վոչ մի այն վոչ վոքի կողմից չեն հանդիպում հակադրեցություն», այլ ստանում են աջակցություն «հասարակության» ու «պետության» բոլոր ներկայացուցիչների կողմից, վորոնց նոր թվարկից հեղինակն որինակի համար։ Ուստի—ինքնատիպ տրամաբանություն—վոր պետք բանը փոխվի, պետք և խորհուրդ տալ այլ ուղի ընտրելու, խորհուրդ տալ հենց «հասարակությանն ու պետությանը»։

«Սակայն ինչ պետք և անել այդպիսի մարդկանց դեմ»։

...«Շահագործողների մտավոր զարգացմանն ու հասարակական կարծիքի բարելավմանն ապահել հնարավոր չի վոչ արդարության տեսակետից, վոչ էլ բարոյական ու քաղաքական տեսակետից, վորոնցով պետք և առաջնորդվի պետությունը»։

Հաճեցեք տեսնել. պետությունը պետք և առաջնորդվի «բարոյական ու քաղաքական տեսակետից»։ Այս արդեն պարզապես ֆրազյորություն և լոկ։ Մինչեւ «պետության» հենց նոր նկարագրած ներկայացուցիչները ու գործակալները (սկսած վոլոստային գրագիրներից ու մինչև ավելի բարձրերը) արդեն չեն կանգնած «քաղաքական» տեսակետի վրա [հմմտ. վերևում—«շատերն ուրախանում են... նրանց համարում են ժողովրդի ամենից առաջադեմ տարրեր, նրանց մեջ տեսնում են հայրենի քաղաքակրթության ուղիղ ու բնական քայլը»] և «բարոյական» տեսակետի վրա [հմմտ. նույնտեղ—«խելք, յեռանդ, ձեռնարկու վոգի»]։ Ել ինչու՞ ես դուք կոծկում բարոյական ու քաղաքական գաղափարների պատակտման վատը, գաղափարներ, վորոնք նույնքան թշնամական են միմյանց նկատմամբ, ինչպես կյանքում անպայման թշնամական են «նոր ծիլերն» այն մարդկանց վերաբերմամբ, «վորոնց վոր բուրժուազիան հրամայում և աշխատանքի գնալ»։ Ի՞նչ նպատակով եք դուք մթագնում այս

գաղափարների կռիվը, վորը սոսկ վերնաշենքն և հասարակական դասակարգերի կռիվ։

Այս ամենը մանր-բուրժուական տեսակետի բնական ու անխուսափելի հետևանքն և։ Մանր արտադրողը խիստ տառապում և ժամանակակից կարգերից, բայց նա մի կողմ և կանգնած ուղղակի, միանգամայն մերկացած հակասություններից, վաևենում և նրանցից և իրեն միևիթարում պարզամիտ ռեակցիոն յերազանքներով, թե իբր, «պետությունը պետք և կանգնի բարոյական տեսակետի վրա» և հենց ճիշտ այն բարոյականության տեսակետի վրա, վոր սիրելի յե ժանր արտադրողին։

Վոչ, դուք իրավացի չեք։ Այն պետությունը, վորին դիմում եք դուք, ժամանակակից, ավյալ պետությունը պիտի կանգնի այն բարոյականության տեսակետի վրա, վորը սիրելի յե բարձրագույն բուրժուազիային, պիտի կանգնի այն պատճառով, վոր այսպես և սոցիալական ուժի բաշխումը հասարակության առկա դասակարգերի մեջ։

Դուք վրդովված եք։ Դուք սկսում եք ճչալ այն մասին, թե այս «պետականությունը», այս անհրաժեշտությունն ընդունելով՝ մարքսիստը պաշտպանում և բուրժուազիային։

Մուտ եւ։ Դուք դղում եք, վոր փաստը ձեր դեմ և, ուստի և դիմում եք արդեն ֆոկուսատրության, բուրժուաներին պաշտպանելու ցանկություն եք վերագրում այն մարդուն, ով հերքում և ձեր քաղքենիական յերազանքներն առանց բուրժուազիայի ուղի ընտրելու մասին՝ հիշատակելով բուրժուազիայի տիրապետության փաստ.— ով հերքում և ձեր մանր, չնչին միջոցների պետքականությունը բուրժուազիայի դեմ՝ հիշատակելով այս բուրժուազիայի խոր արմատները հասարակության տնտեսական կառուցվածքի մեջ, դասակարգերի տնտեսական կռիվը, վոր հիմքն և «հասարակության» ու «պետության».— ով աշխատավոր դասակարգի խղճմտանքից պահանջում և կապերի լիակատար խզումն այս տար-

բերից ու բացառապես սոցսապրկումն այն տարբերին, որը «շերտավորված և» բուրժուական հասարակության կյանքից։

«Մենք, իհարկե, դրականության աղեցությունը չենք համարում բոլորովին անդորը, բայց որա համար դրականությունը պետք է՝ 1) ավելի լավ ըմբռնի իր կոչումը և չսահմանափակվի միմիայն (sic!!!) կուլտուրության դաստիարակությամբ, այլ և հասարակական կարծիք արթնացնի։

Ահա և ձեզ դռեա տեսակի petit bourgeois*։ *Յեթե դրականությունը կուլտուրության և դաստիարակում, այդ նրանից է, որ նա իր կոչումը վատ է հասկանում։ Յեվ այս պարոնները դեռ դատմանում են, յերբ նրանց պարզամիտներ են անվանում, յերբ նրանց մասին ասում են, թե նրանք ռոմանտիկներ են։*

*Ընդհակառակը, պատվելի պ. նարդունիկ. կուլտուրությունն է** դաստիարակում դրականությունը—նա յի դրականությանը տալիս դաղափարներ (խելքի,յուանդի, ձեռնարկու վոգու, հայրենի քաղաքակրթության բնական քայլի մասին), նա յի միջոցներ տալիս դրականությանը։ Դրականությանն ուղղած ձեր դիմումը նույնքան ծիծաղաշարժ է, որքան ծիծաղաշարժ կլիներ, յեթե մարևի մեկը յերկու միմյանց դեմ կանգնած թշնամական զորաբանակների առջև դիմեր թշնամու ֆելդմարշալի համարձին և խոնարհաբար խնդրեր «ավելի միասան դործել»։ Բոլորովին նույն բանն է։*

Նույնպիսի յանկություն է, թե դրականությանը պետք է «հասարակական կարծիք արթնացնի»։ Ա՞յն հասարակության կարծիքը, որը «հետաձգյա հանդստությամբ և վորոնում իդեալներ»։ Պ. պ. նարդունիկների համար սովորական մի դրաղմունք, որին նրանք նվիրվում են այնպիսի փայլուն հաջողությամբ «10 տարի, 20 տարի, 30 տարի ու ավելի»։

Ելի ջանացեք, պարոններ։ Հետաձգյա հանդիստը վայելող հասարակությունը յերբեմն բառաչում է — հավատարիմն

*—Մանր բուրժուա։ Խմբ։

** Այս չափազանց նեղ խոսք է։ Պետք էր ավելի ճշդրիտ ու վորոշակի ասել՝ բուրժուազիան։

այս նշանակում է, թե նա պատրաստվել է միասան գործելու ընդդեմ կուլակության։ Ելի խոսեցեք նրա հետ։ Allez toujours!*։

... «Իսկ, յերկրորդ, նա պետք է ավելի ունենա խոսքի ազատություն և ավելի մեծաք ժողովրդի մեջ»։

Լավ ցանկություն է։ «Հասարակությունը» համակրում է այս «իդեալին»։ Բայց վորովհետև նա այս իդեալն էլ «վորոնում է» հետաձգյա հանդստությամբ և վորովհետև նա աշխարհում ամենից շատ վախենում է այս հանդստության խախտումից, ուստի... ուստի և նա շատպում է շատ դանդաղ, առաջադիմում այնպես իմաստուն կերպով, որ տանկացատրի ավելի ու ավելի յի հեռում հետևում։ Պ. պ. նարդունիկները կարծում են, թե այս պատահականություն է, թե հետաձգյա քունը կվերջանա հենց հիմա և կսկսվի խելացի առաջադիմությունը։ Աչքներդ համպիր պահեցեք։

«Մենք նմանապես բոլորովին անուժ չենք համարում նաև դաստիարակության և կրթության աղեցությունը, բայց կարծում ենք նախ և առաջ, 1) որ կրթությունը պետք է տրվի բոլորին ու յուրաքանչյուրին և վոչ թե բացառիկ անհատներին միայն՝ մի ջավայրից դատելով նրանց ու կուլտիներ դարձնելով»։

«Բոլորին ու յուրաքանչյուրին»...—հենց այս են կամենում մարքսիստները։ Բայց նրանք կարծում են, որ այս անհատանելի յի ավյալ հասարակական-անտեսական հարաբերությունների հողի վրա, վորովհետև անդամ ձրի և պարտադիր ուսման դեպքում «կրթության» համար հարկավոր կլինեն փող, որ մեկայն «յիսուկինները» ունեն։ Նրանք կարծում են, հետևապես, որ այստեղ էլ յերբ չկա «հասարակական դաստիարդների դաժան կուվից» դուրս։

...«2) որ ժողովրդական դպրոցների մուտքը պետք է բաց լինի վոչ միայն պաշտոնաթող սերժանտների, ասիմանավորների ու դանագան ավազանների համար, այլ իրոք կարգինու անկեղծ ժողովրդասեր մարդկանց համար»։

* —Շարունակեցեք, շարունակեցեք Խմբ։

Սբտաւոիւչ և։ Բայց չէ՞ վոր նրանք, ովքեր «խելոք» ձեռնարկու վոգի ու յեռանդ տեսնում են «ժողովրդից յելածների» մեջ, նույնպես հավատացնում են (և վոչ միշտ կեղծորեն), վոր «սիրում են ժողովուրդը», նրանցից շատերն, անտարակույս, «լիրոք կարգին» մարդիկ են։ Ապա ո՞վ և պատելու այստեղ։ Քննադատաբար մտածող ու բարոյապես զարգացած անհատներըը։ Բայց մ՛իթե ինքը հեղինակը չասաց, վոր արհամարհանքով չի կարելի ներգործել այս յելուկների վրա*։

Ձեզրափակման մեջ մենք զարձյալ կանգնած ենք նարոդնիկության նույն այն հիմնական դծի առաջ, վորն առիթ ունեցանք հավատելու հենց սկզբում. այս դիծը փաստերից յերես շրջելն է։

Ձերը նարոդնիկը տալիս է իրողությունների նկարագրությունը, — նա ինքը միշտ ստիպված է ընդունելու, վոր իրականությունը պատկանում է կապիտալին, վոր մեր իրական եվոլուցիան կապիտալիստական է, վոր ուժը գտնվում է բուրժուազիայի ձեռքում։ Այս բանը հիմա ընդունեց մեկնաբանվող հոդվածի հեղինակն էլ, վոր հավատում է, թե մեզանում առեղծվել է «քաղքենիական կուլտուրա», վոր ժողովրդին բուրժուազիան է հրամայում աշխատանքի գնալ, վոր բուրժուական հասարակությունն ղբաղված է մխիթարական վորովայնային պրոցեսներով և հետաքրքրությամբ, վոր «քաղքենիությունը» նույնիսկ ստեղծել է բուրժուական դիտություն, բուրժուական բարոյականություն, քաղաքականության բուրժուական սովետություններ, բուրժուական դրականություն։

Ձեվ այնուամենայնիվ, նարոդնիկական բոլոր դատողությունները միշտ հիմնված են հակառակ յենթադրության

* Եջ 151՝ «... արդյոք նրանք առաջուց արդեն (լավ նկատեցեք այս «առաջուց արդեն»-ը) չեն արհամարհում այն մարդկանց, ովքեր կարող են արհամարհել նրանց։

վրա, վոր ուժը վոչ թե բուրժուազիայի կողմն է, այլ «ժողովրդի» կողմը։ Նարոդնիկը խոսում է ուղղ ընտրության մասին (սրա հողքին ընդունելով իրական ուղղ կապիտալիստական բնույթը), աշխատանքի հանրայնացման մասին (այնինչ աշխատանքը գտնվում է բուրժուազիայի «անտրիտության» տակ), այն մասին, վոր պետությունը պիտք է կանգնի բարոյական ու քաղաքական տեսակետի վրա, վոր ժողովրդին պետք է ուսուցանեն հենց նարոդնիկները և այլն, կարծես թե ուժն արդեն աշխատավորների կամ նրանց լուսավորների կողմն է և միմիայն մնում է արդեն, վոր մատնանշվեն այս ուժը դործածելու «մերձավորագույն», «նպատակահարմար» և այլն յեղանակները։

Այս ամենը քաղցր-մեղցր ստություն է ամբողջովին։ Կարելի չէ զեռևս պատկերացնել raison d'être *այդպիսի պատրանքների համար կես դար առաջ, այն ժամանակներում, յերբ պրուսական ռեգիրունգսրատը** հայտնադործում եր Ռուսաստանում «համայնքը», — բայց այժմ, «ազատ» աշխատանքի ավելի քան 30-ամյա պատմությունից հետո, այս, չգիտես, ծաղր է, չգիտես, վարխեցիություն և ու քաղցրավուն կեղծավորություն։

Այս բարեմիտ և բարեհոգի ստության խորտակումը մարքսիզմի հիմնական թեորիական խնդիրն է։ Ովքեր կամենում են վորոնել «ուղիներ դեպի մարդկային յերջանկությունը»,

* —հիմունք։ Խմբ.։

** Պրուսական ռեգիրունգսրատ (պետական խորհրդական)—խոսքը ծայրահեղ պահպանողական հայացքների տեր գերմանական անտեսագետ, պրուսական բարոն Ֆ. Հաքսհաուզենի մասին է, վորն անցյալ դարի 40-ական թվականներին յեղել է Ռուսաստանում և իր հետազոտությունների մեջ նկարագրել ռուսական գյուղացիական համայնքը։ Իդեալականացնելով համայնքն ու արտելը, Հաքսհաուզենը ճորտատիրական իրավունքի ջերմ յերկրպագուն եր և նիկոլայան Ռուսաստանը՝ նրա մեջ «պրոլետարիատի խոց» չլինելուն համար բարձր եր դասում Արևմտյան Յեվրոպայի հանդեպ։ Խմբ.։

նրանց առաջին պարտականությունն այն է, որ ձեռք չառնեն իրենց, քաղաքացուն ունենան շիտակորեն ընդունելու այն, ինչ որ կա։

Ցավ իրը աշխատավոր դասակարգի իդեալոգները կըմբռնեն այս և կզգան խորապես, — այն ժամանակ նրանք կընդունեն, որ «իդեալները» պետք է վերջ թե լավագույն ու մերձավորագույն ուղիների կառուցման մեջ պարունակվեն, այլ նրանում, որ ձևակերպվեն մեր կապիտալիստական հասարակության մեջ մեր աչքի առաջ ունեցող, «հասարակական դասակարգերի դաժան կռվի» խնդիրն ու նպատակները,— որ մեր ձգտումների հաղորդության չափանիշն է վերջ թե «հասարակության» ու «պետության» տրվելիք խորհուրդների մշակումը, այլ այս իդեալների տարածման աստիճանը հասարակության որոշ դասակարգի մեջ։ — որ ամենատարբեր իդեալների գինը՝ պղնձե գրոշ է, քանի դեռ չեք կարողացել անխղելի կերպով միաձուլել այդ իդեալները անտեսական կռվի բուն մասնակիցների շահերի հետ, միաձուլել տվյալ դասակարգի այն «նեղ» ու մանր կենսական հարցերի հետ, ինչպիսին է, օրինակ, «աշխատանքի արդար վարձատրության» հարցը, հարցեր, որոնց այնպիսի վեհաշուք արհամարհանքով է նայում մեծատարբեր Նարոդնիկը։

... «Բայց այս քիչ է. մտավոր զարգացումը, ինչպես այս տեսնում ենք, դժբախտաբար, ամեն քայլափոխում մարդուս դեմս չի ապահովում դիշատիչ ձգտումներից ու բնազդներից։ Ուստի և անհապաղ պետք է միջոցներ ձեռք առնվեն դյուրը դիշատչությունից պաշտպանելու համար, պետք է նաև և առաջ միջոցները գործադրվեն՝ պաշտպանելու համար մեր համայնքը, որպես համակեցության մի ձև, որ ոգնում է մարդկային բնության բարոյական ամբարտավանությանը։ Համայնքը պետք է ապահովված լինի մի անգամ ընդմիշտ։ Բայց այս ևս քիչ է դեռ. համայնքն իր նեղ տնտեսական պայմաններում ու հարկային բեռների տակ դյուրացիական առնել չի կարող, ուստի և միջոցներ են հարկավոր դյուրացիական հոգսատիրությունն ընդլայնելու, հարկերը պակասեցնելու, ժողովրդական արդյունաբերությունը կազմակերպելու համար»։

«Ահա այն» միջոցներն ընդդեմ կուլակության, որոնց նկատմամբ պետք է համամիտ լինի ամբողջ դրականությունը և պաշտպան կանգնի նրանց։ Այս միջոցներն, իհարկե, նոր չեն, — բայց բանն այն է, որ սրանք միակ միջոցներն են իրենց տեսակի մեջ, իսկ սրանում դեռ բոլորը չեն համոզված ամենևին»։ (Վերջ)։

Ահա ձեզ այս մեծաբարբառ նարոդնիկի ծրագիրն ու փաստերի նկարագրությունից մենք տեսանք, որ ամենուրեք յերևան և գալիս տնտեսական շահերի լիակատար հակասությունն,—«ամենուրեք» վերջ միայն այն իմաստով, որ թե քաղաքում, թե դյուղում, թե համայնքի ներսում ու թե նրանից դուրս, թե ֆաբրիկա-գործարանային ու թե «ժողովրդական» արդյունաբերության մեջ, այլև տնտեսական յերևույթների սահմաններից այն կողմ, թե դրականության ու թե «հասարակության» մեջ, բարոյական, քաղաքական, իրավաբանական ու այլ գաղափարների ոլորտում և այլն։ Իսկ մեր ասպետ Kleinbürger-ը դառն արցունքներ և թափում և աղաղակում — «պետք է անհապաղ միջոցներ ձեռք առնել դյուղի պաշտպանության համար»։ Ըմբռնողության քաղքենիական մակերեսայնությունն ու կոմպրոմիսներին համաձայնելու պատրաստակամությունը հանդես են գալիս լիակատար ակնհայտությամբ։ Բուն իսկ այս դյուղը, ինչպես տեսանք, հենց տեղից պատակում է ու կռիվ, հակադիր շահերի մի հասարակակարգ, — բայց նարոդնիկը չարիքի արմատը տեսնում է վերջ թե այդ իսկ հասարակակարգում, այլ նրա մանավանդ թերությունների մեջ, իր ծրագիրը կառուցում է վերջ թե այն բանի վրա, որ տեղ ունեցող կռիվն դաղափարայնություն հաղորդի, այլ այն բանի վրա, որ դյուղը «պաշտպանի» պատահական, ապրելին, դրսից յեկող «դիշատիչներից»։ Ցավ այն էլ ոչ պետք է պաշտպանության միջոցների գործադրի, արժանապատիվ պ. առնանաիկ։ Ա՞յն «հասարակությունը», որը բավարարվում է վորովայ-

նային պրոցեսներով հենց այն մարդկանց հաշվին, որոնց պետք է պաշտպանել։ Ջեմսովային, վոլոսատային ու այլ կարդի դործակալները, որոնք ապրում են հավելյալ արժեքի բաժիններով, ուստի և, ինչպես մենք նոր տեսանք, ցույց են տալիս վճռ թե հակադրեցություն, այլ աջակցություն։

Նարոդնիկը դանում է, որ այդ տխուր պատահականություն է, և վոչ ավելի, — հետևանք «իր կոչման» վատ ըմբռնման. որ բավական է մի կոչ՝ «համախմբվելու և միասին գործելու», որպեսզի բոլոր նման տարբերը «թողնեն սխալ ուղին»։ Նա չի կամենում տեսնել, որ մեր տնտեսական հարաբերությունների մեջ գոյացել է Plusmacherei-ի սիստեմ, ստեղծվել են այնպիսի կարգեր, որ կրթության համար միջոցներ ու ազատ ժամանակ կարող է ունենալ միմիայն «ժողովրդից դուրս եկածը», իսկ «մասսան» պետք է «ինա տգետ և աշխատի ուրիշի օգտին»,—ապա նրանց ուղղակի ու անմիջական հետևանքն այն է, որ հասարակության» մեջ ընկնում են միմիայն առաջինների ներկայացուցիչները, որ հենց միմիայն այդ «հասարակությունից» ու «յելուկներից» կարող են նշանակվել վոլոսատային գրագիրներ, դեմստվային գործակալներ և այլն, որոնց նարոդնիկը միամտություն ունի համարելու ինչ-որ մի բան, որը կանգնած է տնտեսական հարաբերություններից ու դասակարգերից բարձր, նրանցից վեր։

Ուստի և նրա կոչը—«պաշտպանեցեք»—ըստ հասցեի չի դիմում ամենևին։

Նա հանգստանում է կամ քաղքենիական կիսամիջոցներով (հոխի կուլտուրթյան դեմ—տես վերևում փոխատուները նահապետական ընկերությունների մասին, վարկի մասին, ժուժկալության, աշխատասիրության ու կրթության խրախուսող որենսդրության մասին. դյուղացիական հողատիրության ընդլայնում—տես վերևում հողային վարկի ու հողի գնման մասին. հարկերի պակասեցում—տես վերևում յեկամտահարկի մասին), կամ վարդագույն ինստիտուտային յեղանքներով, թե պետք է «կազմակերպել ժողովրդական արդյունաբերությունը»։

Բայց մթթե նա արդեն կազմակերպված չե։ Մթթե վերևում նկարագրած այդ ամբողջ յիրիտասարդ բուրժուազիան արդեն յուրակերպ, բուրժուականորեն չի կազմակերպել այդ «ժողովրդական արդյունաբերությունը»։ Այլ կերպ նա ինչպես կարող կլիներ «իր ձեռքում պահել յուրաքանչյուր գյուղը», նա ինչպես կարող կլիներ ժողովրդին հրամայել աշխատանքի գնալու և ինչպես կարող եր ինքը յուրացնել գերարժեքը։

Նարոդնիկը հասնում է բարձր բարոյական վրդովմունքի գերագույն աստիճանին։ Անբարոյականություն է—ճչում է նա—կապիտալիզմը «կազմակերպություն» ճանաչելը, յերբ վոր նա կառուցված է արտադրության անարքիայի վրա, ճգնաժամերի վրա, մասսաների մշտական, նորմալ և ավելի ու ավելի խորացող գործազրկության վրա, աշխատավորների դրության անչափ վատթարացման վրա։

Ընդհակառակը։ Անբարոյականություն է ճշմարտությունը կաթիլիր դուխով շղարշելը, ամբողջ հետևեցորմյան ճուռասատանը բնորոշող կարդերն իրրև մի ինչ-որ պատահական, հանկարծական բան պատկերելը։ Վոր ամեն մի կապիտալիստական ազգ տեխնիկական առաջադիմություն ու աշխատանքի հանրայնացում է բերում՝ արտադրողին հաշմ ու խեղանդամ դարձնելու դնով,—այդ վաղուց արդեն հաստատված է։ Բայց այդ փաստը նյութ դարձնել «հասարակության» հետ բարոյական զրույցներ անելու և աչք փակելով տեղի ունեցող կռվի հանդեպ՝ թողնովել հետաքրքրությամբ—«պաշտպանեցեք», «ազատվեցեք», «կազմակերպվեցեք—ենթադնում է լինել ռոմանտիկ, պարզամիտ, ռեակցիոն ռոմանտիկ։

Ընթերցողին, հավանորեն, կթվա, թե այս մեկնաբանությունը վոչ մի կապ չունի պ. Ստրուվեյի գրքի քննության հետ։ Բայց, այդ լոկ արտաքին կապի բացակայություն է։

Պարոն Ստրուվեյի գիրքն ամենևին չի հայտնագործում ռուսական մարքսիզմը։ Նա միմիայն առաջին անգամ մեր մամուլի էջերն է դուրս բերում թեորիաներ, վորոնք արդեն առաջ են կազմավորվել և շարադրվել*։ Այդ դուրս բերելուն նախորդել է, ինչպես նկատված է արդեն, մարքսիզմի դաժան քննադատությունը լիբերալ-նարոդնիկական մամուլում, մի քննադատություն, վորը խճճել և ոդճատել է բանը։

Այդ քննադատությանը չպատասխանած՝ չեր կարելի, նախ, մոտենալ հարցի արդի դրությանը, յերկրորդ, չեր կարելի հասկանալ պ. Ստրուվեյի գրքը, նրա բնույթն ու կոչումը։

Պատասխանի համար վերցված է նարոդնիկական հին հոդվածն այն պատճառով, վոր հարկավոր եր սկզբունքային հոդված է, բայի դրանից, մի հոդված, վորը պահպանում է ռուսական հին նարոդնիկության՝ մարքսիզմի համար արժեքավոր գոնե մի քանի պատգամներ։

Այս մեկնաբանությամբ մենք աշխատել ենք ցույց տալ լիբերալ-նարոդնիկական բանակռվի տարածված յեղանակների մասացածին ու անհեթեթ լինելը։ Դատարկ շաղակրատանք են դուրս գալիս դատողություններն այն թեմայի մասին, թե մարքսիզմը շաղկապվում է հեգելականության հետ*, այն հավատի հետ, վոր տածում են տրիադաների նկատմամբ, աբստրակտ, փաստերով ատուգում չպահանջող դոգմաների ու սխեմաների նկատմամբ, այն գրության նկատմամբ, թե յուրաքանչյուր յերկրի համար պարտադիր է կապիտալիզմի փուլից անցնելը և այլն։

Մարքսիզմն իր չափանիշը հասարակական դասակարգերի ու տնտեսական շահերի՝ մեր աչքերի առաջ տեղի ունեցող կռվի ձևակերպման ու թեորիական բացատրության մեջ է տեսնում։

Մարքսիզմը չի հիմնվում վոչ մի այլ բանի վրա, բացի ռուսական պատմության ու իրականության փաստերից. նա նույնպես աշխատավոր դասակարգի իդեոլոգիան է, բայց միայն բոլորովին այլ կերպ և բացատրում ռուսական կապիտալիզմի ածման ու հաղթության հանրահայտ փաստերը, բոլորովին այլ կերպ և ըմբռնում այն խնդիրները, վոր մեր իրականության և դնում անմիջական արտադրողների իդեոլոգների առջև։ Ուստի, յերբ մարքսիստը խոսում է ռուսական կապիտալիզմի անհրաժեշտության, անխուսափելիության, առաջադիմականության մասին, նա յելնում է հանրահռետորված փաստերից, վորոնք հենց իրենց հանրահռետորված լինելու հանգամանքով, իրենց նոր չլինելու պատճառով մեջ են բերվում վոչ միշտ.—նա այլ բացատրություն է տալիս այն ամենին, ինչ վոր պատմված է և վերապատմված է նարոդնիկական դրականության մեջ,—և յերեն նարոդնիկը դրան է պատասխան ճչում և, թե մարքսիստը չի կամենում դիտենալ իրողություններն, այն ժամանակ նարոդնիկին դիմակազերծ անելու համար բավական է պարզապես հիշատակել 70-ական թվականների մի վորևե նարոդնիկական սկզբունքային հոդված։

Այժմ անցնենք պ. Ստրուվեյի գրքի քննությանը։

---

* Հմմտ. В. В. „Очерки теоретической экономии", СПБ. 1895, եջ 257—8։ (Այս տեղը այն «յեղոպոսյան» լեզվի նմուշներից մեկն է, վորին հարկ եր լինում դիմելու՝ այն ժամանակվա դրականության ապաթափից անցնելու համար։ Վլադիմիր Իլյինն ուղղակի չի հուշում այն մի շարք մարքսիստական աշխատությունները, վոր այդ ժամանակներն արդեն հրատարակված էին («Աշխատանքի ազատագրում» խմբինը, Պլեխանովի յերկերը և այլն), այլ հարկադրված է վկայակոչելու մարքսիստների հետ բանավիճող Վ. Վ.-ին։ Ռ մ բ)։

* Տես, հարկե, խոսում եմ վոչ թե մարքսիզմի պատմական ծագման մասին, այլ նրա արդի բովանդակության։

II ԳԼՈՒԽ

ՆԱՐՈԴՆԻԿԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նարոդնիկութեան «էութիւնը», նրա «հիմնական գաղափարը» հեղինակը տեսնում է «Ռուսաստանի տնտեսական ինքնօրինակ զարգացման թեորիայի» մէջ։ Այս թեորիան, նրա խոսքերով, «յերկու հիմնական աղբյուր ունի. 1) մի վորոշ ուսմունք այն դերի մասին, վոր անհատն ունի պատմական պրոցեսում, և 2) անմիջական համոզմունքն այն մասին, թե ռուս ժողովուրդն ազգային յուրահատուկ բնավորութիւն ու վարք ունի, և թե առանձնահատուկ և նրա պատմական ճակատագիրը» (2)։ Այս հատվածին կցված ծանոթագրութեան մէջ հեղինակը մատնանշում է, վոր «նարոդնիկութեան համար բնորոշ են սոցիալական միանդամայն վորոշ իդեալները»*, և ասում է, թե նարոդնիկների տնտեսական աշխարհայացքը նա շարադրում է ներքևում։

Նարոդնիկութեան էութեան այսպիսի բնութագիրը, թվում է ինձ, մի վորոշ ուղղում է պահանջում։ Այդ բնութագիրը՝ ցույց տալով նարոդնիկութեան թեորիական իշխող

* Իհարկե, այս՝ «միանգամայն վորոշ իդեալներ» արտահայտութիւնը չի կարելի բառացի հասկանալ, այսինքն՝ այն առթով, թե նարոդնիկները «միանգամայն վորոշակի» դիտելին, թե ինչ և նրանց ուզածը։ Այսպես հասկանալը բոլորովին սխալ կլիներ։ «Միանգամայն վորոշ իդեալները» ասելով պիտք է հասկանալ վոչ ավելին, քան անմիջական արտադրողների իդեոլոգիան, թեկուզ և այդ իդեոլոգիան ամենաճապաղը լիներ։

դաղափարները, բայց ցույց չտալով նարոդնիկութեան վրչ «էութիւնը»՝ վրչ էլ նրա «աղբյուրը»,—չափազանց վերացական, իդեալիստական է։ Միանգամայն մութն է ծնում, թե ինչու մատնանշած իդեալները միացվում էին ինքնուրույնակ զարգացման հավատի հետ, անհատի դերի առանձին ուսմունքի հետ, թե ինչու այդ թեորիաները գալիս էին հասարակական մտքի «ամենից աղճատիկ» հոսանքը։ Յեթե հեղինակը խոսելով «նարոդնիկութեան սոցիոլոգիական գաղափարների» մասին (առաջին գլխի վերնագիրը)՝ չի կարողացել, սակայն, սահմանափակվել դուրս սոցիոլոգիական հարցերով (մեթոդը սոցիոլոգիայի մեջ), այլ շոշափել է ռուսական տնտեսական իրականութեան վերաբերմամբ նարոդնիկների ունեցած հայացքներն էլ, ապա նա պետք է ցույց տար այդ հայացքների էութիւնը։ Այնինչ մատնացույց արված ծանոթագրութեան մեջ այս բանն արված է միմիայն կիսով չափ։ Նարոդնիկութեան էութիւնը—արտադրողների շահերի ներկայացուցիչ լինելն է և մանր արտադրողի, մանր բուրժուայի տեսակետից։ Պ-ն Սարուվին պ. Ն—ոնի գրքին վերաբերող իր գերմաներեն հոդվածում (Socialpolitisches Centralblatt, 1893, № 1) նարոդնիկութեունն անվանել է «ազգային սոցիալիզմ» («Р. Бог-во», 1893, № 12, եջ 185)։ «Ազգային»-ի տեղ պետք էր ասել «գյուղացիական»՝ ռուսական հին նարոդնիկութեան վերաբերմամբ, և «քաղքենիական»—արդի նարոդնիկութեան վերաբերմամբ։ Նարոդնիկութեան «աղբյուրը» մանր արտադրողների դասակարգի գերակշռումն է հետևեֆորմյան կապիտալիստական Ռուսաստանում։

Անհրաժեշտ է պարզաբանել այս բնութագիրը։ «Ինքնատիպական» արտահայտութիւնը չես գործ եմ ածում բառիս վրչ թե սովորական, այլ քաղաքատնտեսական նշանակութեամբ։ Մանր արտադրող, վոր տնտեսավարում է ապրանքային սրընտեսութեան սիստեմի պայմաններում,—անա յերկու հատկանիշ, վոր կազմում են՝ «մանր բուրժուա», Kleinbürger կամ,

վոր միևնույնն և, քաղքենի հասկացողությունը։ Այսպիսով այս հասկացողության տակ մտնում են թե գյուղացին և թե տնայնագործը, վորոնց նարոդնիկները միշտ միևնույն շարքն են դասել և միանգամայն իրավացիորեն, վորովհետև յերկուսն էլ այնպիսի արտադրողներ են, վորոնք աշխատում են շուկայի համար և տարբերվում են իրարից միմիայն ապրանքային տնտեսության զարգացման աստիճանով։ Այնուհետև, յես տարբերում եմ հին* ու արդի նարոդնիկությունն այն հիման վրա, վոր հին նարոդնիկությունը վորոշ չափով մի ներդաշնակ դոկտրինա էր՝ կազմված այնպիսի դարաշրջանում, յերբ կապիտալիզմը Ռուսաստանում տակավին շատ թույլ էր զարգացած, յերբ գյուղացիական տնտեսության մանր-բուրժուական բնույթը դեռ բնավ չէր հայտաբերված, յերբ դոկտրինայի զործնական կողմը դուռ ուտոպիա էր, յերբ նարոդնիկներն իրենց կարականապես հեռու էին պահում լիբերալ «հասարակությունից» և դնում էին ժողովրդի մեջ։ Այժմ այն չե. Ռուսաստանի զարգացման կապիտալիստական ուղին այլևս վոչ վոք չի ժխտում, գյուղի քայքայումն անվիճելի փաստ է։ Նարոդնիկության ներդաշնակ դոկտրինայից, վոր ստղծված էր «համայնքի» նկատմամբ ունեցած ժանկական հավատով, միայն ցնցոտիներ են մնացել։ Գործնական տեսակետից մենք տեսնում ենք, վոր ուտոպիայի տեղը հանդես է գալիս ժանր-բուրժուական «պրոգրեսներով» ծրագիրը, վոր ամենևին ուտոպիկ չէ, և միմիայն շքեղ ֆրազներն են հիշեցնում պատմական այն կապի մասին, վոր ունեն այդ խղճուկ կոմպրոմիսները հայրենիքի լավագույն ու ինքնօրինակ ուղիների յերազանքների հետ։ Լիբերալ հասարակությունից անջատ լինելու փոխարեն, մենք տեսնում ենք ամենասրտառուչ մերձեցում նրա հետ։ Ահա այս իսկ փոփոխությունն է, վոր սակայում է տարբե-

* Հին նարոդնիկներ ասելով յես հասկանում եմ վոչ թե նրանց, ովքեր դեկավարում էին, օրինակ, „Отеч. Зап.„, այլ հենց նրանց, ովքեր զնում էին ժողովրդի մեջ։

լել գյուղացիության իդեալական ժանր բուրժուազիայի իդեալից։

Նարոդնիկության իրական բովանդակության վերաբերմամբ այս ուղղումն անհրաժեշտ եր թվում ժամավանդ այն պատճառով, վոր պ. Սարուվեյի շարադրանքի՝ ժամանակագրված վերացականությունը շարադրանքի հիմնական թերությունն է. այս՝ առաջին։ Իսկ յերկրորդ, այն դոկտրինայի «մեքանի հիմնական» դրույթները, վորով պ. Սարուվեն կապված չէ, պահանջում են հենց հասարակական գաղափարները վերածել հասարակական-տնտեսական հարաբերությունների։ Յեվ մենք այժմ կաշխատենք ցույց տալ, վոր առանց այս վերածման չի կարելի պարզել նարոդնիկության մինչև անդամ զուտ թեորիական գաղափարները, ինչպես, որինակ, մեթոդի հարցն է սոցիոլոգիայի մեջ։

Մատնանշելով, վոր նարոդնիկական ուսմունքը սոցիոլոգիայի առանձին մեթոդի մասին ամենից լավ շարադրել են պ. պ. Միրտովն ու Մ[illegible]յակովսկին, պ. Սարուվեն այս ուսմունքը բնորոշում է վորպես «սուբյեկտիվ իդեալիզմ» և ի հաստատություն սրա բերում հիշված անձերի յերկերից մի շարք տեղեր, վորոնց վրա արժե կանգ առնել։

Յերկու հեղինակն էլ հիմնական են համարում այն դրույթը, թե պատմությունը կերտել են «հսկող միայնակ անհատները»։ «Անհատներն են պատմություն ստեղծում» (Միրտով)։ Ե՛լ ավելի պարզ և արտահայտում Միխայլովսկին. «Կենդանի անհատն և իր բոլոր խոհերով ու զգացմունքներով դառնում պատմության գործիչ՝ իր սեփական պատասխանատվությամբ։ Անհատն և, և վոչ թե ինչ-վոր վիսմիկհան ուժ, վոր պատմության մեջ նպատակներ և դնում և դեպի այդ նպատակները և շարժում յեղելությունները այն արդելքների շարքի միջով, վոր դնում են անհատի առջև բնության ու պատմական պայմանների տարերային ուժերը» (8)։ Այս դրույթը—թե պատմությունը կերտում են անհատները—թեորիապես միանգամայն անբովանդակ է։ Պատմությու-

նը հենց ամբողջապես բաղկացած է անհատների գործողություններից, և հասարակական դիտության անելիքն այն է, որ բացատրի այդ գործողությունները, այնպես որ դատարկ նույնաբանության և վերածվում «կեղևությունների ընթացքին միջամտելու իրավունքի» ցուցումը (Մխայլովսկու խոսքերը, որ մեջբերված են պ. Սորելի հոդվածում, եջ 8)։ Այս բանն առանձնապես պարզ կերպով կերևան և դալիս պ. Մխայլովսկու վերջին տրքատությում։ Կենդանի անհատը,— դատում է նա,— շարժում է կեղևություններն այն արգելքների շարքի միջով, որ դնում են պատժական պայմանների տարերային ուժերը։ Իսկ ինչ են այդ «պատժական պայմանները»։ Հեղինակի տրամաբանությամբ՝ դարձյալ այլ «կենդանի անհատների» գործողություններն են։ Ճիշտ է, չէ, պատմության ինչ խորը փիլիսոփայություն է այս. կենդանի անհատը շարժում է կեղևություններն այն արգելքների շարքի միջով, որ դնում են կենդանի այլ անհատներ։ Ցավ այդ ինչու՞ անհատներից վոմանց գործողությունները անվանվում են տարերային, իսկ մյուսների մասին ասվում է, թե նրանք «շարժում են կեղևությունները» դեպի նախապես դրված նպատակները։ Պարզ է, որ այստեղ դեթ վորևե թեորիական բովանդակություն վորոնելը դրեթե անհուսալի մի ձեռնարկում կլիներ։ Ամբողջ բանն այն է, որ այն պատմական պայմանները, վորոնք մեր սուբյեկտիվիստներին նյութ էին տալիս թեորիայի համար, համամասն հարաբերություններ էին (ինչպես և այժմ), արտադրողի եքսպրոպրիացիա էին առաջ բերում։ Չկարողանալով ըմբռնել հակամարտ այդ հարաբերությունները, չկարողանալով գտնել ներից ներաց մեջ հասարակական այնպիսի տարրեր, վորոնց հարել կարողանային «միայնակ անհատները»,— սուբյեկտիվիստները սահմանափակվում էին այնպիսի թեորիաներ հնարելով, վորոնք միխիթարում էին «միայնակ անհատներին» նրանով, թե պատմությունը կերտել են «կենդանի անհատները»։ Հոչակավոր «սուբյեկտիվ մեթոդը

սոցիոլոգիայում» վճռապես վոչինչ չի արտահայտում, բացի լավ ցանկություններից ու վատ ըմբռնողություններից։ Այս բանն ակնառու հաստատում է պ. Մխայլովսկու հետագա դատողությունը, վոր բերում է հեղինակը՝

Ցեվրոպական կյանքը,— ասում է պ. Մխայլովսկին,— «այնպես անխմասա ու բարոյազուրկ կերպով է կազմվել, ինչպես բնության մեջ հոսում է գետը և աճում է ծառը։ Գետը հոսում է վոքրագույն դիմադրության ուղղությամբ, սրբում-տանում է այն, ինչ վոր կարողանում է տանել, թեկուզ այդ լինի ադամանդի հանք, վորը բացառապես անցնում է այն բանի մոտով, ինչ չի կարողանում սրբել-տանել, թեկուզ այդ լինի մի աղրակույտ։ Ջրաղթելակները, ամբարտակները, ջրջատները ու հեռատար կանալները կատարվում են մարդկային բանականության ու զգացմունքի նախաձեռնությամբ։ Այս բանականությունն ու այս զգացմունքը, կարելի չի ասել, ներկա չեն եղել (?Պ.Ս.) արդի անտեսակարգի՝ Ցեվրոպայում ծագելու ժամանակ։ Նրանք սաղմնային վիճակում էլին գտնվում, և նրանց ներգործությունը չնչին և չեղել իրերի բնական, տարերային ընթացքի վրա» (9)։

Պ-ն Սորելին հարցական նշան է դնում, և մենք տարակուսում ենք, թե ինչու նա այդ հարցական նշանը դրել և միայն մի խոսքի մոտ, և վոչ թե բոլոր խոսքերի մոտ. այնքան անբովանդակ և այս ամբողջ տրքատան։ Այս ինչ անհեթեթություն է, իբր թե բանականությունն ու զգացմունքը ներկա չեն եղել կապիտալիզմի ծագման ժամանակ։ Հապա ինչ է կապիտալիզմը, եթե վոչ մարդկանց միջև յեղած վորոշ հարաբերություններ, իսկ դեռևս հայտնի չեն այնպիսի մարդիկ, վորոնք չունենային բանականություն ու զգացմունք։ Ցավ այս ինչ կեղծիք է, իբր թե այն ժամանակվա «կենդանի անհատների» բանականության ու զգացմունքի ներգործությունը «իրերի ընթացքի» վրա «չընչին» և յեղել։ Բոլորովին հակառակն է։ Մարդիկ առողջ մտքով ու քաջ հիշողությամբ այն ժամանակ կատուցում էին

չափազանց ճարտարարուեստները և ամբարտակները, որոնք անհնազանդ գյուղացուն քշում էին կապիտալիստական շահագործման հունը, նրանք ստեղծում էին քաղաքական ու ֆինանսական ձեռնարկումների չափազանց խորամանկ շղթաներ, որոնցով ընթացել են կապիտալիստական կուտակումն ու կապիտալիստական եքսպլոատացիան, որոնք չեն բավականացել միմիայն տնտեսական որենքների գործողության համար։ Մի խոսքով, պ. Միխայլովսկու բոլոր այս հայտարարությունները այնքան հրեշավոր չափով անճիշտ են, որ դրանք չի կարելի բացատրել միմիայն թեորիական սխալներով։ Նրանք լիովին բացատրվում են քաղքենիական այն տեսակետով, որի վրա կանգնած է այդ գրողը։ Կապիտալիզմն արդեն միանդամայն պարզորոշ չերևան և բռնել իր տենդենցները, նա իրեն հատուկ հակամարտությունը զարգացրել և մինչև վերջը, շահերի հակասությունն արդեն սկսում է ստանալ զորոշ ձևեր արտացոլվել նույնիսկ ռուսական որինադրության մեջ,— սակայն մանր արտադրողն այս կռվից մի կողմ է կանգնած։ Նա իր պասիվ տնտեսությամբ դեռ կապված է բուրժուական հին հասարակության հետ և այս իսկ պատճառով ճնշված լինելով կապիտալիստական հասարակակարգի կողմից՝ ի վիճակի չէ ըմբռնելու իր կեղեքման իսկական պատճառները և շարունակում է իրեն մխիթարել այն պատրանքներով, թե բոլոր դժբախտությունները նրանից են, որ մարդկանց բանականությունն ու զգացմունքը գտնվում են դեռ «սոցիալական վիճակում»։

«Իհարկե,—շարունակում է այդ մանր բուրժուազիայի խղճմտքը,—մարդիկ միշտ աշխատել են, այսպես թե այնպես, ազդել իրերի ընթացքի վրա»։

Հենց «իրերի ընթացքը» մարդկանց գործողություններն ու «ազդեցությունները» են և ուրիշ ոչինչ, այնպես որ այս նույնպես դատարկ ֆրազ է։

«Սակայն այն ժամանակ նրանք ղեկավարվում էին տնտեսագրական փորձի ցուցումներով ու ամենակոպիտ շահերով. և հասկանալի չէ, որ որերին աստիճանի հազվադեպ եր լինում, որ այդ ղեկավարը կարներողանային սպառնամբ մղել դեպի այն ուղին, որ ցույց են տալիս արդի գիտությունն ու արդի բարոյական գաղափարները» (9)։

Քաղքենիական բարոյախոսությունը, որն իր «իդեալները» կենսական վորևե շահերի հետ մոտեցնելու անկարողության պատճառով՝ դատապարտում է «շահերի կոպտությունը». քաղքենիորեն աչք փակել արդեն կատարված այն ճեղքվածքի հանդեպ, որը վառ կերպով անդրադառնում է թե՛ արդի գիտության ու թե՛ արդի բարոյական գաղափարների վրա։

Հասկանալի չէ, որ պ. Միխայլովսկու դատողությունների այս բոլոր հատկությունները անփոփոխ են մնում այն ժամանակ էլ, երբ նա անցնում է Ռուսաստանին։ Նա «ամբողջ հոգով վողջունում է» վոմն պ. Յակովլևի նույնքան տարորինակ այն հերյուրանքները, թե Ռուսաստանը tabula rasa * չէ, թե նա կարող է սկսել սկզբից, խուսափել այլ երկիրների սխալներից և այլն և այլն։ Ցավ -այս ամենն ասվում է այն բանի կատարյալ գիտակցությամբ, թե այդ tabula rasa-չի վրա դեռ շատ հաստատուն կանգնած են «հին աղնվականն» կացութաձև ներկայացուցիչները հողային խոշոր սեփականությամբ ու քաղաքական ահագին արտոնություններով, թե նրա վրա արագությամբ աճում է կապիտալիզմն իր ամեն տեսակի «պրոգրեսներով»։ Մանր բուրժուան երկչոտությամբ փակում է աչքերն այս իրողությունների հանդեպ և տարվում է այն անմեղ երազանքների աշխարհը, թե «մենք սկսում ենք ապրել այժմ, երբ գիտությունն արդեն ունի վորոշ ճշմարտություններ ու վորոշ հեղինակավորություն»։

Այսպես ուրեմն, պ. Միխայլովսկու արդեն այդ դա-

*—մաքուր տախտակ։ Խմբ։

աղուէթյուններից, վոր բերում է պ. Սարուվեն, պարզվում է նարոդնիկութեյան սոցիոլոգիական դաղափարների դասակարգային ծագումը։

Ձենք կարող առանց սուարկութեյան թողնել պ. Սարուվեյի մի դիտողութեյունը պ. Միխայլովսկու դեմ։ «Ընդհայացքով,—ասում է հեղինակը,—գոյութեյուն չունեն պատմական անհաղթահարելի անդունդներ, վորոնք, ինչպես այդպիսիք, պետք է ծառայեն, մի կողմից՝ վորպես յելակետ, մյուս կողմից՝ վորպես պարտադիր սահմաններ անհատի ու հասարակական խմբերի նպատակահարմար գործունեության համար» (11)։

Այս որյեկտիվիստի և վոչ թե մարքսիստի (մատերիալիստի) լեզու յե։ Այս գաղափարների (հայացքների սխատեմների) մեջև կա տարբերութեյուն, վորի վրա պետք է կանգ առնել, վորովհետև այս տարբերութեյան վոչ-լրիվ պարզաբանումը պատկանում է պ. Սարուվեյի գրքի հիմնական թերութեյանը՝ արտահայտվելով նրա դատողութեյունների մեծամասնութեյան մեջ։

Որյեկտիվիստը խոսում է տվյալ պատմական պրոցեսի անհրաժեշտութեյան մասին։ Մատերիալիստը ճշտութեյամբ հավատում է տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիան և վերջինիս առաջացրած հակամարտ հարաբերութեյունները։ Որյեկտիվիստն ապացուցելով փաստերի տվյալ շարքի անհրաժեշտութեյունը՝ միշտ ուխտ է անում շեղվելու և կանգնելու այդ փաստերը չատագովողի տեսակետի վրա. մատերիալիստը բաց է անում դասակարգային հակասութեյունները և դրանով իսկ վորոշում է իր տեսակետը։ Որյեկտիվիստը խոսում է «պատմական անհաղթահարելի տենդենցների» մասին։ Մատերիալիստը խոսում է այն դասակարգի մասին, վորը «կառավարում է» տվյալ տնտեսակարգը՝ առեղծելով մյուս դասակարգերի դիմադրության այս-ինչ ձևերը։ Այսպիսով, մատերիալիստը, մի կողմից՝ ավելի հետևողական է որյեկտիվիստից և ավելի խորը,

ավելի լրիվ է կիրառում իր որյեկտիվիզմը։ Նա չէ սահմանափակվում պրոցեսի անհրաժեշտութեյունը մատնանշելով, այլ պարզում է, թե հասարակական-տնտեսական վոր ֆորմացիան է բովանդակութեյուն տալիս այդ պրոցեսին, թե հենց վո՛ր դասակարգն է վորոշում այդ անհրաժեշտութեյունը։ Տվյալ դեպքում, որինակ, մատերիալիստը չէր բավականանա «պատմական անհաղթահարելի տենդենցներին» հավատալով, այլ կմատնանշեր, թե գոյութեյուն ունեն վորոշ դասակարգեր, վորոնք վորոշում են տվյալ կարգերի բովանդակութեյունը և բացառում են յելքի հնարավորութեյունը իրենց խիստ արտադրողների յելույթից դուրս։ Մյուս կողմից՝ մատերիալիզմն իր մեջ ուներ, այսպես ասած, կուսակցականութեյուն՝ պարտավորեցնելով յեղելութեյան ամեն մի գնահատականի ժամանակ ուղղակի ու բացորոշ կանգնելու հասարակական վորոշ խմբի տեսակետի վրա*։

Պ.ն Միխայլովսկուց հեղինակն անցնում է պ. Յուժակովին, վորը ինքնուրույն ու հետաքրքրական չէ ամենևին։ Պ-ն Սարուվեն մանրամասն իրավացիորեն և արտահայտվում նրա սոցիոլոգիական դատողութեյունների մասին, թե «դրանք շքեղ խոսքեր են», «զուրկ վորևե բովանդակութեյունից»։ Արժե կանգ առնել պ. Յուժակովի ու Միխայլովսկու միջև յեղած (ընդհանրապես նարոդնիկութեյան համար) չափազանց բնորոշ տարբերութեյան վրա։ Պ-ն Սարուվեն նշում է այս տարբերութեյունը՝ անվանելով պ. Յուժակովին «նացիոնալիստ», մինչդեռ, իրավ թե, «պ. Միխայլովսկուն մշտապես մանրամասն խորթ է յեղել ամեն մի նացիոնալիզմ», և նրա համար, նրա սեփական խոսքերով, «ժողովրդական ճշմարտութեյան հարցն ընդգրկում է ոչ միայն ռուս ժողովրդին, այլև բովանդակ քաղաքակիրթ աշխարհին

* Պ-ն Սարուվեյի կողմից մատերիալիզմը վոչ լրիվ կիրառելու ու դասակարգային կռվի նրա թեորիայի հասուն չլինելու վերաբերյալ կոնկրետ որինակներ մատնացույց կարվեն ստորև ամեն մի առանձին դեպքում։

աշխատավոր ամբողջ բազմութիւնը»։ Ինձ թվում է, թե այս տարբերութեան մեջ դեռևս կերևում է այն մանր արտադրողի կերկակի դրութեան արտացոլումը, որ առաջադիմական տարր է, որքան որ նա սկսում է, ը. Յուժակովի անդիտակցորեն հաջող արտահայտութեամբ, «դիֆերենցիացի յի յինթարիվիլ հասարակութեունից»,—և ռեակցիոն տարր, որքան որ նա կռվում է իր, որպես մանր տնտեսատիրոջ, դրութեունը պահելու համար և աշխատում է կասեցնել տնտեսական զարգացումը։ Այս պատճառով էլ ռուսական նարոդնիկութեունը կարոդանում է դուդորդել դոկտրինայի առաջադիմական, դեմոկրատիկ գծերը նրա այն ռեակցիոն գծերի հետ, որոնք առաջ են բերում «Московские Ведомости»-ի հաճակրանքը։ Ինչ վերաբերում է այդ ռեակցիոն գծերին, ապա, թվում է, դժվար կլինեը նրանք ավելի ցայտուն ցուցադրել, քան այդ արել է ը. Յուժակովը հետևյալ տիրադայի մեջ, որ բերում է ը-ն Սարուվեն։

«Մխիթարյան դյուղացիութեունն է միշտ ու ամենուրեք հանդիսացել աշխատանքի մաքուր գաղափարի կրողը։ Ըստ յերևութեին, հենց այս գաղափարն է, որ ժամանակակից պատմութեան ասպարեզն է հանել այսպես կոչված չորրորդ դասը, քաղաքային պրոլետարիատը, սակայն միաժամանակ այդ գաղափարի կյութեան կրած փոփոխութեուններն այնքան մեծ են, որ դյուղացին այդ գաղափարի մեջ հազիվ թե ճանաչեր իր կենցաղի սովորական հիմքը։ Աշխատանքի իրավունք, և վոչ թե աշխատանքի սուրբ պարտականութեուն, իր ճակատի քրտինքով իր հացը հայթայթելու պարտականութեուն [ահա թե ինչ է թաղնված յեղել «աշխատանքի մաքուր գաղափարի» հետևում։ Զուտ ճորտատիրական գաղափար դյուղացու հաց հայթայթելու «պարտականութեան» մասին... իր պարտուքյունները կատարելու համար։ Այս «սուրբ պարտականութեան մասին ասվում է ճնշված և այդ պարտակա-

նութեամբ ճղմված յարուքին]*. հետո, աշխատանքի զատումն ու աշխատանքի վարձատրութեուն, այս ամբողջ ապիտացիան աշխատանքի արդար վարձատրման մասին, կարծես թե ինքն աշխատանքը չե, որ իր պատուղներով ստեղծում է այդ վարձատրութեունը։ [«Այս ինչ բան է»,—հարցնում է ը. Սարուվեն,—«sancta simplicitas**, թե՞ մի այլ բան»։ Ավելի վատ է։ Այդ՝ հողին ամրացված բատրակի հնազանդութեան ապոթեոզն է, բատրակի, որ սովորել է ուրիշների համար աշխատել դրեթե ձրի]. աշխատանքի տարբերացում կյանքից և նրա վերածում ինչ-որ վերացական (?! Պ. Ս.) կատեգորիայի, որը պատկերացվում է գործարանում այնքան ժամ լինելով և որը ուրիշ վոչ մի (? ! Պ. Ս.) առնչութեուն, վոչ մի կապ չունի գործավորի առորյա շահերի հետ [մանր արտադրողի քաղքենիական վախկոտութեուն, որն արդի կապիտալիստական կազմակերպութեան պատճառով յերբեմն շատ ու շատ վատ վիճակի մեջ է ընկնում, սակայն որն աշխարհում ամենից ավելի վախենում է այն տարրերի այս կազմակերպութեան դեմ ուղղված լուրջ շարժումից, որոնք վերջնականապես «անջատված» են այդ կազմակերպութեան հետ ունեցած ամեն մի կապից]. վերջապես, նատակեցութեան, աշխատանքով ստեղծված ընտանեկան ոջախի բացակայութեունը, աշխատանքի ասպարեզի փոփոխականութեունը,—այս ամենը բոլորովին խորթ է դյուղացիական աշխատանքի դաղափարին։ Աշխատանքային, հայրերից ու պապերից ավանդված ոջախը, աշխատանք,

* Հեղինակը, յերևի, չդիտե,—ինչպես և վայել է փոքր բուրժուային,—որ արևմտա-յեվրոպական աշխատավոր ժողովուրդը վաղուց է անել և անցել զարգացման այն աստիճանից, յերբ նա պահանջում էր «աշխատանքի իրավունք», և այժմ նա պահանջում է «ժուլության իրավունք», չափազանց մեծ աշխատանքից հանդստանալու իրավունք, մի աշխատանքից, որը ճնշում և հաշմանդամ է դարձնում աշխատավորին։

** —սուրբ միամտություն։ Խմբ։

տողությունները, վոր բերում է պ. Սորուվկին, պարզվում է նարոդնիկության սոցիոլոգիական դաղափարների դասակարգային ծագումը։

Չենք կարող առանց առարկության թողնել պ. Սորուվկի մի դիտողությունը պ. Միխայլովսկու դեմ։ «Ներա հայացքով,—ասում է հեղինակը,—գոյություն չունեն պատմական անհաղթահարելի տենդենցներ, վորոնք, ինչպես այդպիսիք, պետք է ծառայեն, մի կողմից՝ վորպես չկատ, մյուս կողմից՝ վորպես պարտադիր սահմաններ անհատի ու հասարակական խմբերի նպատակահարմար գործունեության համար» (11)։

Այս որյեկտիվիստի և վոչ թե մարքսիստի (մատերիալիստի) լեզու չի։ Այս գաղափարների (հայացքների սիստեմի) մեջև կա տարբերություն, վորի վրա պետք է կանգ առնել, վորովհետև այս տարբերության վոչ-լրիվ պարզաբանումը պատկանում է պ. Սորուվկի գրքի հիմնական թերության՝ արտահայտվելով նրա դատողությունների մեծամասնության մեջ։

Որյեկտիվիստը խոսում է տվյալ պատմական պրոցեսի անհրաժեշտության մասին։ Մատերիալիստը ճշտությամբ հավատում է տվյալ հասարակական-տնտեսական ֆորմացիան և վերջինիս առաջացրած հակասարտ հարաբերությունները։ Որյեկտիվիստն ապացուցելով փաստերի տվյալ շարքի անհրաժեշտությունը՝ միշտ ուսկ է անում շեղվելու և կանգնելու այդ փաստերը ջաստագովորի տեսակետի վրա. մատերիալիստը բաց է անում դասակարգային հարաբերությունները և դրանով իսկ վորոշում է իր տեսակետը։ Որյեկտիվիստը խոսում է «պատմական անհաղթահարելի տենդենցների» մասին։ Մատերիալիստը խոսում է այն դասակարգի մասին, վորը «կառավարում է» տվյալ տնտեսակարգը՝ առեղծելով մյուս դասակարգերի դիմադրության այս-ինչ ձևերը։ Այսպիսով, մատերիալիստը, մի կողմից՝ ավելի հետևողական է որյեկտիվիստից և ավելի խորը,

ավելի լրիվ է կիրառում իր որյեկտիվիզմը։ Նա չի սահմանափակվում պրոցեսի անհրաժեշտությունը մատնանշելով, այլ պարզում է, թե հասարակական-տնտեսական վոր ֆորմացիան և բովանդակության տալիս այդ պրոցեսին, թե ինչ վո՛ր դասակարգն է վորոշում այդ անհրաժեշտությունը։ Տվյալ դեպքում, որինակ, մատերիալիստը չէր բավականանա «պատմական անհաղթահարելի տենդենցների» հավատումով, այլ կմատնանշեր, թե գոյություն ունեն վորոշ դասակարգեր, վորոնք վորոշում են տվյալ կարգերի բովանդակությունը և բացառում են յելքի հնարավորությունը իրենց խիզ արտադրողների յելույթից զատ։ Մյուս կողմից՝ մատերիալիզմն իր մեջ ունի, այսպես ասած, կուսակցականության՝ պարտավորեցնելով յեղելության ամեն մի զննահատական ժամանակ ուղղակի ու բացորոշ կանգնելու հասարակական վորոշ խմբի տեսակետի վրա*։

Պ.ն Միխայլովսկուց հեղինակն անցնում է պ. Յուժակովին, վորը ինքնուրույն ու հետաքրքրական չէ ամենևին։ Պ-ն Սորուվկին միանգամայն իրավացիորեն և արտահայտվում նրա սոցիոլոգիական դատողությունների մասին, թե «դրանք չքեղ խոսքեր են», «զուրկ վորևե բովանդակությունից»։ Արժե կանգ առնել պ. Յուժակովի ու Միխայլովսկու միջև յեղած (ընդհանրապես նարոդնիկության համար) չափազանց բնորոշ տարբերության վրա։ Պ-ն Սորուվկին նշում է այս տարբերությունը՝ անվանելով պ. Յուժակովին «նատյոնալիստ», մինչդեռ, իրրև թե, «պ. Միխայլովսկուն միշտ միանգամայն խորթ է յեղել ամեն մի նացիոնալիզմ», և նրա համար, նրա սեփական խոսքերով, «ժողովրդական ճշմարտության հարցն ընդգրկում է վոչ միայն ռուս ժողովրդին, այլև բովանդակ քաղաքակիրթ աշխարհին

* Պ-ն Սորուվկի կողմից մատերիալիզմը վոչ լրիվ կիրառելու ու դասակարգային կռվի նրա թեորիայի հասուն չլինելու վերաբերյալ կոնկրետ որինակներ մատնացույց կարվեն ստորև ամեն մի առանձին դեպքում։

աշխատավոր ամբողջ բազմությունը»։ Ինձ թվում է, թե այս տարբերության մեջ դեռևս չերևում և այն մասը արտադրողի չերկակի դրության արտացոլումը, որ առաջադիմական տարր է, որքան որ նա սկսում է, պ. Յուժակովի անդիտակցորեն հաջող արտահայտությամբ, «դիֆերենցիայի չենթարկվել հասարակությունից»,—և ռեակցիոն տարր, որքան որ նա կռվում է իր, որպես մանր անտեսատիրոջ, դրությունը պահելու համար և աշխատում է կասեցնել տնտեսական զարգացումը։ Այս պատճառով էլ ռուսական նարոդնիկությունը կարոդանում է դուգորդել դոկտրինայի առաջադիմական, դեմոկրատիկ գծերը նրա այն ռեակցիոն գծերի հետ, որոնք առաջ են բերում «Московские Ведомости»-ի համակրանքը։ Ինչ վերաբերում է այդ ռեակցիոն գծերին, ապա, թվում է, դժվար կլիներ նրանք ավելի ցայտուն ցուցադրել, քան այդ արել է պ. Յուժակովը հետևյալ տիրադայի մեջ, որ բերում է պ-ն Սորուվկին։

«Մխիթար դյուղացությունն է միշտ ու ամենուրեք հանդիսացել աշխատանքի մաքուր գաղափարի կրողը։ Ըստ չերևութին, հենց այս գաղափարն է, որ ժամանակակից պատմության ասպարեզն է հանել այսպես կոչված չորրորդ դասը, քաղաքային պրոլետարիատը, սակայն միաժամանակ այդ գաղափարի կյանքյան կրած փոփոխությունները այնքան մեծ են, որ դյուղացին այդ գաղափարի մեջ հաղիվ թե ճանաչեր իր կենցաղի սովորական հիմքը։ Աշխատանքի իրավունք, և վոչ թե աշխատանքի սուրբ պարտականություն, իր ճակատի քրտինքով իր հացը հայթայթելու պարտականություն [ահա թե ինչ է թաղնված յեղել «աշխատանքի մաքուր գաղափարի» հետևում։ Ջուտ ճորտատիրական գաղափար դյուղացու՝ հաց հայթայթելու «պարտականության» մասին... իր պարտությունները կատարելու համար։ Այս «սուրբ պարտականության մասին ասվում է ճնշված և այդ պարտակա-

նության ճղմված յարությունն]*. հետո, աշխատանքի զատումն ու աշխատանքի վարձատրություն, այս ամբողջ ապիտացիան աշխատանքի արդար վարձատրման մասին, կարծես թե ինքն աշխատանքը չե, որ իր պտուղներով ստեղծում է այդ վարձատրությունը։ [«Այս ինչ բան է»,—հարցնում է պ. Սորուվկին,—«sancta simplicitas**, թե՞ մի այլ բան»։ Ավելի վատն է։ Այդ՝ հողին ամրացված բատրակի հնազանդության ապրեհողն է, բատրակի, որ սովորել է ուրիշների համար աշխատել դրեթե ձրի]. աշխատանքի տարբերացում կյանքից և նրա վերածում ինչ-որ վերացական (?! Պ. Ս.) կատեգորիայի, որը պատկերացվում է գործարանում այնքան ժամ լինելով և որը ուրիշ վոչ մի (? ! Պ. Ս.) առնչություն, վոչ մի կապ չունի գործավորի առորյա շահերի հետ [մանր արտադրողի քաղքենիական վախկոտությունն, որոն արդի կապիտալիստական կազմակերպության պատճառով յերբեմն շատ ու շատ վատ վիճակի մեջ է ընկնում, սակայն որոն աշխարհում ամենից ավելի վախենում է այն տարրերի այս կազմակերպության դեմ ուղղված լուրջ շարժումից, որոնք վերջնականապես «անջատված» են այդ կազմակերպության հետ ունեցած ամեն մի կապից]. վերջապես, նատակեցության, աշխատանքով ստեղծված ընտանեկան ոջախի բացակայությունը, աշխատանքի ասպարեզի փոփոխականությունը,—այս ամենը բոլորովին խորթ է գյուղացիական աշխատանքի գաղափարին։ Աշխատանքային, հայրերից ու պապերից ավանդված ոջախը, աշխատանք,

* Հեղինակը, յերևի, չգիտե,—ինչպես և վայել է փոքր բուրժուազիային,—որ արևմտա-յեվրոպական աշխատավոր ժողովուրդը վաղուց է ածել և անցել զարգացման այն աստիճանից, յերբ նա պահանջում էր «աշխատանքի իրավունք», և այժմ նա պահանջում է «ծնելության իրավունք», չափազանց մեծ աշխատանքից հանդստանալու իրավունք, մի աշխատանքից, որը ճնշում և հաշմանդամ է դարձնում աշխատավորին։

** —սուրբ միամտություն։ Խմբ։

վորն իր շահերով ստրկել և ամբողջ կյանքը և կառուցում և կյանքի բարոյախոսությունը,—սերը դեպի շատ սերունդների քրտնքով վաղողված անդասաանը,—այս ամենը, վոր կազմում և դյուղացիական կենցաղի անկապտելի հատկանիշը, բնավ ծանոթ չէ բանվոր պրոլետարիատին, ուստի և մինչդեռ վերջինիս կյանքը, թեկուզ և աշխատավորական, հիմնվում և բուրժուական բարոյախոսության վրա (վորն անհատապաշտական և և հենվում և ձեռքբերովի իրավունքի սկզբունքի վրա), իսկ լավագույն դեպքում՝ վերացական-փիլիսոփայական բարոյախոսության վրա,—դյուղացիական բարոյախոսության հիմքում դրված և հենց աշխատանքը, նրա արամաբանությունն ու նրա պահանջները» (18)։ Այստեղ արդեն մաքուր ձևով հանդես են գալիս մանր արտադրողի ռեակցիոն գծերը,—նրա ծնծկվածությունը, վոր սահմանում և նրան հավատալու այն բանին, թե նրան հավիտյան վիճակված և յարաբ լինելու «սուրբ պարտականության», «հայրերից ու պապերից ավանդված» ծառայականությունը, նրա կառչած լինելն առանձին սեփականությանը, մի սեփականություն, վորը կորցնելու չերկյուղը նրան հարկադրում և նույնիսկ հրաժարվել «արդարացի վարձատրության» ամեն մի մտքից և հանդես գալ վորպես ամեն տեսակի «ապիտացիայի» թշնամի. սեփականություն, վորն աշխատանքի ցածր արտադրողականության և աշխատավորի՝ մի տեղից կպած լինելու շնորհիվ աշխատավորին վայրենի չի դարձնում և արդեն իսկ մխիթարական պայմաններով զորությամբ անհրաժեշտորեն առաջ և բերում աշխատավորի ծնծկվածություն և ծառայականություն։ Այս հետադիմական գծերի խորտակումն անպայման պետք և համարել մեր բուրժուազիայի չերախտիքը բուրժուազիայի առաջադիմական աշխատանքը հենց այն և, վոր նա խզեց աշխատավորի բոլոր կապերը ճորտատիրական կարգերից, ճորտատիրական տրադիցիաներից։ Շահագործման մինչնադարյան ձևերը, վորոնք քողարկված եյին ա-

պայի կողմից դեպի նրա հպատակը, տեղական կուլակի ու ճեմադնորդի կողմից դեպի տեղական դյուղացիներն ու տնայնագործները, նահապետական «համեստ ու մորուքավոր միլիոնատիրոջ» կողմից դեպի նրա «տղերքը» յեղած ամենամոտ հարաբերություններով, և վորոնք (ձևերը) սրա պորբությամբ ծնում եյին ծայր աստիճանի հետադիմական պղպատիարներ,—մինչնադարյան այս ձևերը բուրժուազիան վոխարինեց և շարունակում և վոխարինել «յեվրոպականացրեն սանձարձակ անտերելրինյորի» շահագործումով, անդեմ, մերկ, վոչնչով չքողարկված և հենց սրանով իսկ անհեթեթ պատրանքներն ուչերազանքները վոչնչացնող շահագործումով։ Բուրժուազիան խորտակեց դյուղացու նախկին կղզիացումը («նատակեցությունը»), դյուղացուն, վորը վոչինչ չեր ուզում իմանալ, յեվ չեր կարող վոչինչ իմանալ բացի իր մի կտոր հողից, և նա (բուրժուազիան), հանրայնացնելով աշխատանքն ու չափազանց բարձրացնելով նրա արտադրողականությունը, սկսեց արտադրողին ուժով դուրս մղել դեպի հասարակական կյանքի ասպարեզը։

Պ-ն Ստրուվեն պ. Յուժակովի այս դատողության առթիվ ասում և. «Պ-ն Յուժակովը այսպիսով լուսաւոր պարզությամբ վավերագրում և նարոդնիկության սլավյանոֆիլական արմատները» (18) և ներքևում տալով նարոդնիկության սոցիոլոգիական դաղափարների իր շարադրանքի հանրագումարները՝ նա ավելացնում և, վոր «Ռուսաստանի ինքնուրեք զարգացման» հավատը կազմում և «պատմական այն կապը, վոր կա սլավյանոֆիլության ու նարոդնիկության միջև», և այս պատճառով մարքսիստների վեճը նարոդնիկների հետ հանդիսանում և «սլավյանոֆիլության ու պոպնիկության միջև յեղած տարաձայնությունների բնական շարունակությունը» (29)։

Այս վերջին դրույթը, ինձ թվում և, սահմանափակում և պահանջում։ Անվիճելի յե, վոր նարոդնիկները շատ ու շատ մեղք ունեն ամենացածր տեսակի թեթև ազգասիրու-

թյան համար (որինակ, պ. Յուժակովը)։ Անվիճելի յե այն եւ, վոր Մարքսի սոցիոլոգիական մեթոդն ու նրա՝ անմիջական արտադրողներին վերաբերող հարցերի դրման անտեսումը արեւմտյան «քաղաքակրթությունից» լիովին ոտարանալուն և հավասարազոր այն ուռս մարդկանց համար, վորոնք կամենում են ներկայացնել այս անմիջական արտադրողների շահերը։ Սակայն նարոդնիկության էությունն ավելի խորն է. նրա էությունը վոչ թե ինքնորինակության ուսմունքն է կամ սլավյանոֆիլությունը, այլ ուռս մանր արտադրողի շահերն ու գաղափարները ներկայացնելն է։ Այս պատճառով նարոդնիկների մեջ յեղել են գրողներ եւ (և սրանք նարոդնիկներից լավագույններն են), վորոնք, ինչպես այդ խոստովանեց նաև պ. Ստրուվեն, վոչ մի ընդհանուր բան չեն ունեցել սլավյանոֆիլության հետ, վորոնք մինչև անգամ ընդունում էին, վոր Ռուսաստանը վոտք և դրել հենց այն ուղին, վոր դրել և Արեւմտյան Յեվրոպան եր։ Ռուսական նարոդնիկության հարցերից վոչ մի կերպ չի կարելի գլուխ հանել այնպիսի կատեգորիաներով, ինչպիսին են սլավյանոֆիլությունն ու զապադնիկությունը։ Նարոդնիկությունն արտացոլել և ուռսական կյանքի մի այնպիսի իրողություն, վորը գրեթե դեռ բացակայում եր այն ժամանակաշրջանում, յերբ կազմակերպվում էին սլավյանոֆիլությունն ու զապադնիկությունը, այն է՝ աշխատանքի ու կապիտալի շահերի հակադրությունը։ Նարոդնիկությունն այդ իրողությունն արտացոլել և մանր արտադրողի կենսական պայմանների ու շահերի պրիզմայի միջով, այս իսկ պատճառով արտացոլել և այլանդակորեն, յերկչոտությամբ, ստեղծելով մի թեորիա, վորն առաջ և քաշում վոչ թե հասարակական շահերի հակասությունը, այլ զարգացման մի տարբեր ուղու անպատուղ ակնկալություններ, և մեր խնդիրն է՝ ուղղել նարոդնիկության այս սխալը, ցույց տալ, թե հասարակական վոր խումբը կարող և լինել անմիջական արտադրողների շահերի իսկական ներկայացուցիչը։

Այժմ անցնում ենք պ. Ստրուվեյի գրքի յերկրորդ գլխին։

Հեղինակի շարադրանքի պլանը հետևյալն է. նա սկզբում ցույց և տալիս այն ընդհանուր նկատառումները, վորոնք ստիպում են մատերիալիզմը համարելու հասարակական դիտության միակ ճիշտ մեթոդը. այնուհետև նա շարադրում և Մարքսի ու Ենգելսի հայացքները և, վերջապես, ստացված յեղրակացությունները կիրառում և ուռսական կյանքի մի քանի յերևույթների վերաբերմամբ։ Այս գլխի առարկայի առանձին կարևորության հետևանքով մենք կփորձենք ավելի մանրամասնորեն վերլուծել նրա բովանդակությունը՝ նկատի ունենալով այն բոլոր կետերը, վորոնք առարկություն են հարուցում։

Հեղինակն սկսում և այն բանի միանգամայն արդարացի մատնանշումից, թե թյուրիմացության հետևանք և այն թեորիան, վորը հասարակական պրոցեսը հանգեցնում և «կենդանի անհատների» գործողություններին, վորոնք «իրենց համար նպատակներ են դնում» և «շարժում են դեպքերը»։ Հարկավ, վոչ վոք յերբեք չի ել մտածել այն մասին, վոր «սոցիալական խմբին ինքնուրույն, նրա բաղկացուցիչ անհատներից անկախ գոյություն» վերագրի (31), սակայն քանն այն է, վոր «անհատը, վորպես կոնկրետ անհատականություն, բոլոր առաջ ապրած և իրեն ժամանակակից անհատների, այսինքն՝ սոցիալական խմբի ածանցյալն է» (31)։ Պարզաբանենք հեղինակի միտքը։ Պատմությունը կերտում և—դատում և պ. Միխայլովսկին—«կենդանի անհատն իր բոլոր խոհերով ու զգացմունքներով»։ Միանգամայն ճիշտ եւ։ Բայց ինչով են վորոշվում այդ «խոհերն ու զգացմունքները»։ Արդյոք կարելի յե լրջորեն պաշտպանել այն կարծիքը, թե նրանք հայտնվում են պատահմամբ, և վոչ թե անհրաժեշտորեն բղխում են հասարակական տվյալ միջավայրից, վորը ծառայում և իբրև նյութ, որյեկտ անհատի հոգեկան կյանքի համար և վորն արտացոլում և ան-

հատի «խոհերի ու զգացմունքների» մեջ դրական կամ բացասական կողմից, հասարակական այս կամ այն դասակարգի շահերի ներկայացուցչության մեջ։ Ցավ հետո, ինչ հատկանիշներով մենք պետք է դատենք իրական անհատների իրական «խոհերի ու զգացմունքների» մասին։ Հասկանալի է, որ այդպիսի հատկանիշ միայն մեկը կարող է լինել՝ այդ անհատների գործողությունները,—և որովհետև խոսքը միայն հասարակական «խոհերի ու զգացմունքների» մասին է, ապա և պետք է ավելացնել՝ անհատների հասարակական գործողությունները, այսինքն, սոցիալական իրողությունները։ «Սոցիալական խումբն անհատից առանձնացնելով,—ասում է պ. Սորոկինն,—մենք առաջինով հասկանում ենք անհատների մեջն ընկած այն բոլոր բազմատեսակ փոխազդեցությունները, որոնք ծագում են սոցիալական կյանքի հողի վրա և որչեկտիվանում են սովորույթների ու իրավունքի, բարքերի ու բարոյականության, կրոնական պատկերացումների մեջ»(32)։ Ուրիշ խոսքերով ասած՝ սոցիոլոգ-մատերիալիստը, որ իր ուսումնասիրության առարկա է դարձնում մարդկանց հասարակական վորոշ հարաբերությունները, սրանով խոսքը տարածում է նաև իրական անհատների, որոնց գործողություններից էլ գոյանում են այդ հարաբերությունները։ Սոցիոլոգ-սուբյեկտիվիստն իր դատողություններն սկսելով իբր թե «կենդանի անհատներից»՝ իրոք սկսում է նրանից, որ այդ անհատների մեջ դնում է այնպիսի «խոհեր ու զգացմունքներ», որ նա ապագայում է համարում (որովհետև մեկուսացնելով իր «անհատներին» հասարակական կոնկրետ իշխանությունից, սրանով խոսքը նա իրեն զրկել է նրանց իսկական խոհերն ու զգացմունքներն ուսումնասիրելու հնարավորությունից), այսինքն, «սկսում է ուտոպիայից», մի բան, որը հենց հարկադրված էր խոստովանելու պ. Միխայլովսկին *։ Իսկ հետո, որովհետև այդ սոցիոլոգի սեփական պատկերացումները ապագայի մասին արտացոլում են (իր համար անգիտակցաբար) սոցիալական ավյալ միջավայրը, ապա և դատողությունից արված նրա վերջնական յեզրակացությունները, որոնք նրան թվում են «արդի գիտության ու բարոյական արդի գաղափարների» «ցտագույն» արդյունք, իրոք քաղաքնությունն է միայն արտահայտում։

Առանձնապես կարևոր է այս վերջին կետը,—այսինքն այն, որ անհատի դերի կամ սուբյեկտիվ մեթոդի հատուկ սոցիոլոգիական թեորիան մատերիալիստական քննադատականն հետազոտման տեղը դնում է ուտոպիան, և որովհետև այս կետը բաց է թողել պ. Սորոկինն, ուստի և արժե նրա վրա մի քիչ կանգ առնել։

Լուսաբանելու համար վերցնենք նարոդնիկական շերջուն դատողությունը տնայնագործի մասին։ Նարոդնիկը նկարագրում է այդ տնայնագործի խղճուկ դրությունը, նրա արտադրության չնչինությունը, նրա ամենաայլանդակ կերպով շահագործվելը մեծագնորդի կողմից, որն իր գերպանն է դնում արդյունքի առյուծի բաժինը՝ արտադրողին թողնելով գրեթե 16—18 ժամ աշխատանքային որվա համար,—և սրանից նարոդնիկը յեզրակացնում է, թե տնայնագործի արտադրության խղճուկ մակարդակը և նրա աշխատանքի շահագործումը ավյալ կարգերի վատ կողմերն են։ Սակայն տնայնագործը վարձու բանվոր չե. այս լավ կողմն է։ Պետք է պահել լավ կողմը և վերնչացնել վատը, և սրա համար պետք է հիմնել տնայնագործական արտել։ Ահա նարոդնիկական լիակատար դատողությունը։

Մարքսիստն այլ կերպ է դատում։ Արհեստագործության դրությանը ծանոթանալը, բացի այն հարցից, որ այս բանը լավ է, թե վատ, նրա մեջ զարթեցնում է նաև այն հարցը, թե վորն է այս արհեստագործության կազմակերպությունը, այսինքն, թե ինչպես է ինչու հենց այսպես, և վոչ թե այլ

* Ծերկեր, հատ. III, եջ 155։ «Սոցիոլոգիան պետք է սկսի վորտեղից ուտոպիայից»։

կերպ են դասավորվում հարաբերությունները ավյալ արդյունքի արտադրությամբ զբաղվող տնայնագործների միջև։ Ցեխ մարքսիստը տեսնում է, որ այդ կազմակերպությունն ապրանքային արտադրություն է, այսինքն, մեկուսացած այն արտադրողների արտադրությունը, որոնք միմյանց հետ կապված են շուկայով։ Առանձին արտադրողի արդյունքը, որ նախանշված է ուրիշի սպառման համար, միմիայն վաղի ձև ընդունելով կարող է հասնել սպառողին և ամեն արտադրողին հասարակական այլ արդյունք ստանալու իրավունք, այսինքն, կանխապես չհենթարկվելով հասարակական հաշվառքի ինչպես որակական, այնպես և քանակական տեսակետներից։ Իսկ այս հաշվառքը կատարվում է արտադրողի թիկունքում շուկայական տատանումների միջոցով։ Արտադրողին անհայտ, նրանից անկախ շուկայական այս տատանումները չեն կարող արտադրողների միջև անհավասարություն չստեղծել, չեն կարող չուժեղացնել այս անհավասարությունը՝ վոմանց սնանկացնելով և մյուսների ձեռքը տալով վող=հասարակական աշխատանքի արդյունքը։ Սրանից պարզ և վողատիրոջ, մեծագնորդի հզորության պատճառն էլ. այս պատճառն այն է, որ որևէ, շատ-շատ՝ շրաթե-շրաթե ապրող տնայնագործների մեջ միմիայն մեծագնորդն ունի վող, այսինքն հատուկ նախկին աշխատանքի արդյունք, որը նրա ձեռքում դառնում է հենց կապիտալ, մյուս տնայնագործների հավելյալ արդյունքը յուրացնելու գործիք։ Այս պատճառով, յեղրակացնում է մարքսիստը, հասարակական տնտեսության այսպիսի կազմակերպման պայմաններում արտադրողի եքսպլուատացիան ու նրա շահագործումը բոլորովին անխուսափելի են, միանգամայն անհրաժեշտ և չունևորների յենթարկվելը ունևորներին և նրանց շահերի այն հակադրությունը, որը բովանդակություն և տալիս դասակարգերի կռվի գիտական ըմբռնմանը։ Ցեխ հետևաբար, արտադրողի շահն այդ հակադիր տարրերի հաշտեցման մեջ չի ամենևին, այլ ընդ-

հակառակը, հակադրության զարգացման մեջ է, այդ հակադրության դիտակցությունը զարգացնելու մեջ է։ Մենք տեսնում ենք, որ ապրանքային տնտեսության աճումը մեղմանում, Ռուսիայում էլ, բերում-հասցնում է հակադրության նույն զարգացմանը. որքան մեծանում է շուկան և ընդլայնվում է արտադրությունը, այնքան առևտրական կապիտալը դառնում է արդյունաբերական կապիտալ։ Մեքնիային ինդուստրիան վերջնականապես խորտակելով մանր կղիացած արտադրությունը (նրան արմատապես արմեն ջնասել և մեծագնորդը), հանրայնացնում է աշխատանքը։ Plusmacherei*-ի սիստեմը, որը տնայնագործական արտադրության մեջ քողարկված և տնայնագործի յերևութական ինքնուրույնության և մեծագնորդի իշխանության յերևութական պատահականության,—այժմ դառնում է պարզ և վոչնչով չքողարկված։ «Աշխատանքը», որը տնային արհեստագործության մեջ դեռ մասնակցում էր «կյանքին» սոսկ նրանով, որ մեծագնորդներին էր նվիրում հավելյալ արդյունքը, այժմ բուրժուական հասարակության «կյանքից տարբերացվում է» վերջնականապես։ Այդ հասարակությունը բացեիբաց դուրս է շպրտում նրան՝ մինչև վերջը պայման դարձնելով այդ հասարակության հիմքում դրված այն սկզբունքը, թե արտադրողն ապրուստի միջոցներ կստանա միայն այն ժամանակ, յերբ կգտնի վողատիրոջը, որը բարեհաճում է յուրացնել աշխատանքի հավելյալ արդյունքը,—և այն, ինչ չէր կարողանում հասկանալ տնայնագործը [և նրա իդեոլոգը—նարոդնիկը]—այն է՝ վերև մատնանշված հակադրության խորը, դասակարգային բնույթը, — ինքնըստինքյան պարզ է դառնում արտադրողի համար։ Ահա թե ինչու տնայնագործի շահերը կարող է ներկայացնել միմիայն այդ առաջավոր արտադրողը։

Այժմ համեմատենք այս դատողությունները նրանց սոցիոլոգիական մեթոդի կողմից։

* —հավելյալ արժեքի։ Խմբ։

Նարոդնիկը հավատացնում է, թե ինքը ռեալիստ է։ «Պատմութիւնը կերտում են կենդանի անհատները», և կես, ասում է, սկսում եմ՝ արդի կարգերի նկատմամբ բացասաբար տրամադրված անձնատուրծի «զգացմունքներից» և ավելի լավ կարդը ստեղծելու մասին յեղած նրա խոհերից, իսկ մարքսիստը խոսում է ինչ-որ անհրաժեշտության ու անխուսափելիության մասին, նա միստիկ է և մետաֆիզիկ։

Հերավի, պատասխանում է այդ միստիկը, պատմութիւնը կերտում են «կենդանի անհատները», — և կես, վերլուծելով այն հարցը, թե ինչու հասարակական հարաբերութիւնները անձնատուրծական արհեստագործութեան մեջ դասավորվել են այս կերպ և ոչ թե այլ կերպ (դուք այս հարցը նույնիսկ չեք էլ դրել), հատկապես վերլուծել եմ այն, թե ինչպես են կենդանի անհատներն իրենց պատմութիւնը կերտում և շարունակում են կերտել։ Յետ իմ ձեռքում կար այն բանի հուսալի չափանիշը, որ կես դրծ ունեմ «կենդանի», իսկական անհատների, իսկական խոհերի և զգացմունքների հետ. այս չափանիշն այն է, որ նրանց «խոհերն ու զգացմունքներն» արդեն արտահայտվել են դրծողութիւնների մեջ, ստեղծել են հասարակական վորոշ հարաբերութիւններ։ Յես, ճիշտ է, յերբեք չեմ խոսում այն մասին, որ «պատմութիւնը կերտում են կենդանի անհատները» (վորովհետև ինձ թվում է, որ այս դատարկ ֆրազ է), սակայն հետազոտելով հասարակական իրական հարաբերութիւններն ու նրանց իրական զարգացումը՝ կես հետազոտում եմ հենց կենդանի անհատների դրծունեութեան արդյունքը։ Իսկ դուք «կենդանի անհատների» մասին, ճիշտ է, խոսում եք, այնինչ իրոք վորպես յելակետ վերցնում եք միմնիկ և լցնում եք նրա գլուխը ձեր սեփական «խոհերով ու զգացմունքներով»։ Հասկանալի կա, վոր այսպիսի մի զբաղմունքից ստացվում են միմիայն անմեղ յերազանքներ. կյանքը ձեղնից մի կողմ է մնում, և դուք՝ կյանքից մի կողմ*։ Ու դեռ այս քիչ է. մեկ տեսնք, թե ինչով եք դուք լցնում այդ տիկնիկի գլուխը և ինչ միջոցներ եք դուք քարոզում։ Հանձնարարելով աշխատավորներին արտելը վերլես «մի ուղի, վոր ցույց են տալիս արդի դիտութիւնն ու արդի բարոյական գաղափարները», դուք նկատի չեք առել մի փոքրիկ հանդամանք, մեր հասարակական տնտեսութեան ամբողջ կազմակերպութիւնը։ Հասկանալով, վոր այս՝ կապիտալիստական տնտեսութիւն է, դուք չեք նկատել, վոր այս հողի վրա ամեն տեսակի արտելները կենան վերլես չնչին պալիատիվները, վորոնք ամենևին չեն վերացնում վոչ արտադրութեան միջոցների, վորոնց մեջ նաև հողն, համակենտրոնացումը փոքրամասնութեան ձեռքում (այս համակենտրոնացումն անվիճելի իրողութիւն է), վոչ էլ բնակչութեան հսկայական մասսայի կատարյալ թշվառացումը, — պալիատիվները, վորոնք լավագույն դեպքում միայն մի բուռ առանձին տնտեսությունների կբարձրացնեն և կմոցնեն մանր բուրժուազիայի շարքերը։ Աշխատավորի իդեոլոգից դուք դառնում եք մանր բուրժուազիայի իդեոլոգը։

Սակայն դառնանք պ. Ստրուվեյին։ Մատնանշելով նրա բողնիկների՝ «անհատի» մասին հայտնած դատողութիւնների անբովանդակութիւնը՝ նա շարունակում է. «Վոր սոցիոլոգիան իրոք ձգտում է անհատականութեան տարրերը միշտ վերածելու սոցիալական աղբյուրներին, այս բանին

* «Գրականկան անողոքաբար կրճատում է այն («պատմական նոր ուղու հնարավորութիւնը»). այդ հնարավորութիւնը, կարելի յե ասել, պահպանում է որևցող» (պ. Միխայլովսկու խոսքերը՝ բերված պ. Ստրուվեյի գրքում, եջ 16)։ Իհարկե, նվազում է վոչ թե «հնարավորութիւնը», վորը յերբեք չի յեղել, այլ նվազում են պատրանքները։ Յեվ լավ են անում, վոր նվազում են։

Նարոդնիկը հավատացնում է, թե ինքը ռեալիստ է։ «Գաղափարները կերտում են կենդանի անհատները», և ահա, ասում է, սկսում եմ՝ արդի կարգերի նկատմամբ բացասաբար տրամադրված անձնագործի «զգացմունքներից» և ավելի լավ կարգեր ստեղծելու մասին յուրաքանչյուրի, իսկ մարքսիստը խոսում է ինչ-որ անհրաժեշտության ու անխուսափելիության մասին, նա միստիկ է և մետաֆիզիկ։

Հիրավի, պատասխանում է այդ միստիկը, պատմությունը կերտում են «կենդանի անհատները», — և ահա, վերլուծելով այն հարցը, թե ինչու հասարակական հարաբերությունները անձնագործական արհեստագործության մեջ դասավորվել են այս կերպ և ոչ թե այլ կերպ (դուք այս հարցը նույնիսկ չեք էլ դրել), հատկապես վերլուծել եմ այն, թե ինչպես են կենդանի անհատներն իրենց պատմությունը կերտում և շարունակում են կերտել։ Ցավ իմ ձեռքում կար այն բանի հուսալի չափանիշը, որ ես գործ ունեմ «կենդանի», իսկական անհատների, իսկական խոհերի և զգացմունքների հետ. այս չափանիշն այն է, որ նրանց «խոհերն ու զգացմունքները» արդեն արտահայտվել են գործողությունների մեջ, ստեղծել են հասարակական որոշ հարաբերություններ։ Ահա, ճիշտ է, չեմ խոսում այն մասին, որ «պատմությունը կերտում են կենդանի անհատները» (որովհետև ինձ թվում է, որ այս դատարկ ֆրազ է), սակայն հետազոտելով հասարակական իրական հարաբերությունները ու նրանց իրական զարգացումը՝ ես հետազոտում եմ հենց կենդանի անհատների գործունեության արդյունքը։ Իսկ դուք «կենդանի անհատների» մասին, ճիշտ է, խոսում եք, այնինչ իրոք որպես յելակետ վերցնում եք վոչ թե «կենդանի անհատ» այն «խոհերով ու զգացմունքներով», որոնք հիրավի ստեղծվում են նրանց կյանքի պայմանների շնորհիվ, արտադրական հարաբերությունների տվյալ սիստեմի շնորհիվ, այլ վորպես յելակետ վերցնում եք տիկնիկ և լցնում եք նրա գլուխը ձեր սեփական «խոհերով ու զգացմունքներով»։ Հասկանալի չի, վոր այսպիսի մի զբաղմունքից ստացվում են միմիայն անմեղ յերազանքներ. կյանքը ձեղնից մի կողմ է մնում, և դուք՝ կյանքից մի կողմ*։ Ու դեռ այս քիչ է. մեկ տեսնք, թե ինչով եք դուք լցնում այդ տիկնիկի գլուխը և ինչ միջոցներ եք դուք քարոզում։ Հանձնարարելով աշխատավորներին արտելը վորպես «մի ուղի, վոր ցույց են տալիս արդի գիտությունն ու արդի բարոյական գաղափարները», դուք նկատի չեք առել մի փոքրիկ հանգամանք, մեր հասարակական տնտեսության ամբողջ կազմակերպությունը։ Չհասկանալով, վոր այս՝ կապիտալիստական տնտեսություն է, դուք չեք նկատել, վոր այս հողի վրա ամեն տեսակի արտելները կվնասեն վորպես չնչին պալիատիվները, վորոնք ամենևին չեն վերացնում վիշ արտադրության միջոցները, վորոնց մեջ նաև փողն, համակենտրոնացումը վոքրամասնության ձեռքում (այս համակենտրոնացումն անվիճելի իրողություն է), վիշ և բնակչության հսկայական մասսայի կատարյալ թշվառացումը, — պալիատիվները, վորոնք լավագույն դեպքում միայն մի քանի առանձին տնայնագործների կբարձրացնեն և կմացնեն մանր բուրժուազիայի շարքերը։ Աշխատավորի իդեոլոգից դուք պահում եք մանր բուրժուազիայի իդեոլոգը։

Սակայն դառնանք պ. Սարուվեյին։ Մատնանշելով նարոդնիկների՝ «անհատի» մասին հայտնած դատողությունների անբովանդակությունը՝ նա շարունակում է. «Վոր սոցիոլոգիան իրոք ձգտում է անհատականության տարրերը միջա վերածելու սոցիալական ազդյուրներին, այս բանին

* «Գրականն անողոքաբար կրճատում է այն («պատմական նորուղու հնարավորությունը»). «այդ հնարավորությունը, կարելի է ասել, պակասում է որևցե» (պ. Մ[իխայլովսկու] խոսքերը՝ բերված պ. Սարուվեյի վերի դրքում, եջ 16)։ Իհարկե, նվազում է վիշ թե «հնարավորությունը», վորը յերբեք չի յեղել այլ նվազում են պատրանքները։ Ցավ լավ հնանում, վոր նվազում են։

համոզում և պատմական հեղուզիայի այս կամ այն խաղը մոմենտը բացատրելու ամեն մի փորձ։ Ցերը բանը հասնում է «պատմական անհատին», «մեծ մարդուն»—միշտ ձգտում է առաջ գալիս նրան ցուցադրելու վորպես վորոշ դարաշրջանի վոգին «կրողի», վորպես իր ժամանակի ներկայացուցչի,—նրա գործողությունները, նրա հաջողություններն ու անհաջողությունները ներկայացնելու վորպես իրերի նախորդ ամբողջ ընթացքի անհրաժեշտ հետևանքները» (32)։ Սոցիալական յերևույթները բացատրելու, այսինքն՝ հասարակական գիտություն ստեղծելու ամեն մի փորձի այս ընդհանուր տենդենցն «իր վառ արտահայտությունը գտավ դասակարգային կռվի, վորպես հասարակական հեղուզիայի հիմնական պրոցեսի, ուսմունքի մեջ։ Քանի վոր անհատը հաշվից դուրս գցվեց, հարկավոր եր գտնել մի այլ տարր։ Այդպիսի տարր հանդիսացավ սոցիալական խումբը» (33)։ Պ-ն Սորելն միանգամայն իրավացի յե՝ մատնանշելով, վոր դասակարգային կռվի տեսությունը լրացնում է, այսպես ասած, սոցիոլոգիայի՝ «անհատականության տարրերը սոցիալական աղբյուրներին» վերածելու ընդհանուր ձգտումը։ Այս բավական չե. դասակարգային կռվի թեորիան առաջին անգամ կիրառում է այս ձգտումն այնպիսի լիակատարությամբ ու հետևողականությամբ, վոր սոցիոլոգիան բարձրացնում է գիտության աստիճանի։ Այս բանը կատարվեց «խմբի» գաղափարի մատերիալիստական վորոշումով։ Այս գաղափարն ինքնին դեռ շատ և անորոշ ու կամայական. «խմբերի տարբերման չափանիշ կարելի յե համարել թե կրոնական, թե ազգագրական, թե քաղաքական և թե իրավական յերևույթները և այլն։ Չկա մի հատատուն հատկանիշ, վորով կարելի լիներ այս բնագավառներից յուրաքանչյուրի մեջ տարբերել այս կամ այն «խումբը»։ Իսկ դասակարգային կռվի թեորիան հենց այն պատճառով և հանդիսանում գիտության հակայական նվաճում, վոր ամենայն ճշտությամբ ու վորոշությամբ սահմանում և անհատականը սոցիալականի

վերածելու յեղանակները։ Նախ, այս թեորիան մշակեց հասարակական-տնտեսական ֆորմացիայի գաղափարը։ Ցելակետ վերցնելով մարդկային ամեն մի համակեցության համար հիմնական իրողությունը՝ ապրուստի միջոցներ հայթայթելու յեղանակը, նա կապակցեց այդ յեղանակի հետ մարդկանց միջև յեղած այն հարաբերությունները, վորոնք գոյանում են ապրուստի միջոցներ հայթայթելու տվյալ յեղանակների պայմանությամբ, և այս հարաբերությունների (ըստ Մարքսի տերմինոլոգիայի՝ «արտադրական հարաբերությունների») սիստեմում ցույց տվեց հասարակության այն ձիւմբը, վորը պարզվում է քաղաքական-իրավական ձևերով ու հասարակական մտքի վորոշ հոսանքներով։ Արտադրական հարաբերությունների ամեն մի այսպիսի սիստեմ, ըստ Մարքսի թեորիայի, սոցիալական մի հատուկ որգանիզմ է, վորն ունի իր ծագման, զարգացման և ավելի բարձր ձևի անցնելու, սոցիալական այլ որգանիզմի փոխակերպվելու հատուկ որենքները։ Այս թեորիան սոցիալական գիտության նկատմամբ կիրառեց կլինելության այն բնկատիվ, ընդհանուր գիտական չափանիշը, վորը սոցիոլոգիայի նկատմամբ կիրառելու հնարավորությունը բացատրում եին սուբյեկտիվիստները։ Նրանք հենց այսպես եին դատում, թե սոցիալական յերևույթների ահագին բարդության ու նրանց բազմազանության հետևանքով չի կարելի ուսումնասիրել այս յերևույթները՝ չբաժանելով կարևորն անկարևորից, և թե այսպիսի զատման համար անհրաժեշտ և «քննադատորեն մոտածող» ու «բարոյապես զարգացած» անհատի տեսակետը,—և նրանք այսպիսով բարեհաջող կերպով հանում եին այն բանին, վոր հասարակական գիտությունը վեր եին ածում քաղքենիական այնպիսի բարոյախոսության մի շարք խրատների, վորի որինակները մենք տեսանք պ. Միխայլովսկու մոտ, վորը փիլիսոփայում եր պատմության աննպատակահարմարության և «գիտության լուսով» ղեկավարվող ուղու մասին։ Ահա հենց այս դատողությունների

արմատն ել, վոր կարեց Մարքսի թեորիան։ Կարևորն ու անկարևորը տարբերելու տեղը դրվեց հասարակության տնտեսական կառուցվածքի, վորպես բոլոգնդպեցության, և քաղաքական ու իդեական ձևի տարբերությունը։ Տնտեսական կառուցվածքի բուն իսկ հասկացողությունը ճշտությամբ պարզաբանվեց առաջվա տնտեսագետների հայացքի հերքումով, վորոնք բնության որենքները եյին տեսնում այնտեղ, վորտեղ գործում են արտադրական հարաբերությունների միմիայն ուրույն, պատմականորեն վորոշ սիստեմի որենքները։ Ընդհանրապես «հասարակության» մասին սուբյեկտիվիստների արած դատողությունների տեղը, անընդհանուր ու քաղքենիական ուտոպիաներից դենը չանցնող դատողությունների տեղը (վորովհետև չեր պարզված մինչև անգամ այն հնարավորությունը, վորով ամենատարբեր սոցիալական կարգերն ընդհանրացնելով դարձնում եյին սոցիալական որգանիզմների հատուկ տեսակներ) — դրվեց հասարակության կազմակերպության վորոշ ձևերի ներազդեցության։ Յերկրորդ, հասարակական տնտեսական յուրաքանչյուր այդպիսի ֆորմացիայի սահմաններում «կենդանի անհատների» գործողությունները, գործողություններ, վորոնք անհուն որեն բազմազան են և, թվում է, վոչ մի սիստեմատիզացիայի չեն յենթարկվում, — ընդհանրացվեցին և վերածվեցին անհատների խմբերի գործողությունների, խմբեր, վորոնք տարբերվում եյին արտադրական հարաբերությունների սիստեմում իրենց խաղացած դերով, արտադրության պայմաններով, և հետևաբար, նրանց կենսական շրջապատի պայմաններով, այն շահերով, վոր վորոշել եր այդ շրջապատը, — մի խոսքով վերածվեցին դասակարգերի գործողությունների, վորոնց կռիվը վորոշում եր հասարակության դարգացումը։ Սրանով հերքվեց մանկամարդ-միամիտ, դուստ մեխանիկական այն հայացքը, վոր պատմության մասին ունեցել են սուբյեկտիվիստները, վորոնք բավարարվում եյին վոչինչ չասող այն դրույթով, թե պատմությունը կերտում են կենդանի անհատները, և վորոնք չեյին կամենում հասկանալ, թե սոցիալական ինչ շրջապատով և հատկապես ինչ կերպ են պայմանավորվում կենդանի անհատների գործողությունները։ Սուբյեկտիվիզմի տեղը դրվեց սոցիալական պրոցեսի, վորպես բնական-պատմական պրոցեսի, վերաբերյալ հայացքը, — մի հայացք, առանց վորի, հարկավ, չեր կարող լինել հասարակական գիտություն։ Պ-ն Ստրուվեն ել կարող լինել հասարակական գիտություն։ Պ-ն Ստրուվեն շատ իրավացիորեն և մատնանշում, թե «սոցիոլոգիայի մեջ անհատի անտեսումը կամ, ավելի ճիշտն ասած, նրա վերացումը սոցիոլոգիայից եյապես դիտական իմացության ձգտումը մի մասնակի դեպք է» (33), թե «անհատականության մի մասնակի դեպք» դոյություն ունեն վոչ միայն հոգևոր, այլև ֆիզիկական աշխարհում։ Ամբողջ բանն այն է, վոր «անհատականությունները» վորոշ ընդհանուր որենքների տակ դնելը վաղուց և ավարտված ֆիզիկական աշխարհի վերաբերմամբ, իսկ սոցիալական բնագավառի վերաբերմամբ այս բանը հաստատապես սահմանից միմիայն Մարքսի թեորիան։

Պ-ն Ստրուվեյի հետագա առարկությունը ռուսական սուբյեկտիվիստների սոցիոլոգիական թեորիայի դեմ այն է, վոր բացի վերևում բերված բոլոր փաստարկություններից «սոցիոլոգիան վոչ մի դեպքում այն, ինչ մենք անվանում ենք անհատականություն, չի կարող ընդունել վորպես սկզբնական փաստ, վորովհետև (հետագա բացատրման վոչ յենթակա) անհատականության գաղափարն իսկ և նրան համապատասխանող փաստը հետևանք են սոցիալական յերկարատև պրոցեսի» (36)։ Այս շատ ճիշտ միտք է, վորի վրա հարկավոր է կանգ առնել, մանավանդ վոր հեղինակի փաստարկումը վորոշ անճշտություններ ունի։ Նա բերում է Զիմմելի հայացքները, վորն, իբրև թե, իր՝ «Սոցիալական դիֆերենցիացիայի մասին» աշխատության մեջ ապացուցել է անհատականության զարգացման և այն խոր դիֆերենցիացիայի մեջև յեղած ուղղակի կախումը, վորի մեջ մտնում է այդ անհատը։ Պ-ն Ստրուվեն այս դրույթը հակադրում է պ. Միխայլովսկու՝ անհա-

տականության զարգացման ու հասարակության դիֆերենցիացիայի («այլասեռության») միջև կեղծ հակադարձ կախման թեորիային «Ճտաբերեցված միջավայրում,—առարկում է պ. Ստրուվեն,—անհատը կլինի «ներդաշնակորեն ամբողջական...» իր «մխիթարականությամբ ու դիմազրկությամբ»։ «Բնավ անհատը չի կարող լինել «ընդհանրապես մարդկային որգանիզմին հատուկ բոլոր գծերի ամբողջություն» պարզապես այն պատճառով, որ բովանդակության այսպիսի լրիվություն իրական անհատի ուժերից վեր է» (38—39)։ «Վորպեսզի անհատը կարողանա դիֆերենցիացիայի չենթարկվել, նա պետք է դանվի դիֆերենցիացիայի չենթարկված միջավայրում» (39)։

Այս շարադրանքից պարզ չէ, թե Զիմմելն իսկապես ինչպես է դնում հարցը և ինչպես է նա փաստարկում։ Բայց պ. Ստրուվեյի հաղորդմամբ՝ հարցի դրումը մեղանչում է նույն թերությամբ, որ տեսնում ենք պ. Միխայլովսկու մոտ էլ։ Վերացական դատողությունն այն մասին, թե ինչ կախման մեջ է դտնվում անհատականության զարգացումը (և բարեկեցությունը) հասարակության դիֆերենցիացիայից,—բնավ դիտական չէ, որովհետև չի կարելի սահմանել վոչ մի հարաբերակցություն, որ պիտանի լինի հասարակության կազմության ամեն մի ձևի համար։ «Դիֆերենցիացիան», «այլասեռությունը» և այլն՝ դաղափարն էլ ստանում է միանդամայն տարբեր նշանակություն, նայած այն բանին, թե սոցիալական ան ինչ շրջապատի նկատմամբ պետք է կիրառել Պ-ն Միխայլովսկու հիմնական սխալը հենց նրա դատողությունների վերացական դոգմատիզմն է, դատողություններ, որոնք ձգտում են ընդգրկելու «պրոդրեսն» ընդհանրապես՝ փոխանակ ուսումնասիրելու հասարակական որևէ կոնկրետ ֆորմացիայի կոնկրետ «պրոդրեսը»։ Ցերը պ. Ստրուվեն պ. Միխայլովսկու դեմ բերում է իր ընդհանուր դրույթները (որոնք վերևում մեջ են բերված), նա կրկնում է նրա սխալը՝ հետանալով կոնկրետ պրոցեսը պատկերելուց ու պարզաբա-

նելուց և ընկնում է մշուշապատ ու անհիմն դոգմանների բնադավառը։ Վերցնենք մի որինակ. «Անհատի ներդաշնակ ամբողջականությունն իր բովանդակությամբ որոշվում է խմբի զարգացման, այսինքն, դիֆերենցիացիայի աստիճանով»,—ասում է պ. Ստրուվեն և այս նախադասությունը դրում է նոտրագիր։ Սակայն ինչ պետք է հասկանալ այստեղ խմբի «դիֆերենցիացիա» ասելով։ Ճորտային իրավունքի վոչնչացումը ուժեղացրեց, թե թուլացրեց այս «դիֆերենցիացիան»։ Պ-ն Միխայլովսկին հարցը լուծում է վերջին իմաստով («Ի՞նչ է պրոդրեսը» հոդվածը)։ Պ-ն Ստրուվեն, հավանորեն, կլուծեր առաջին իմաստով՝ հենվելով աշխատանքի հանրային բաժանման ուժեղացման վրա։ Մեկը նկատի ուներ դասային տարբերությունների վոչնչացումը, մյուսը—տնտեսական տարբերությունների ստեղծումը։ Ինչպես տեսնում եք, տերմինն այնքան անորոշ է, վոր նրան կարելի չի գործածել հակադիր առարկանների վերաբերմամբ։ Մի այլ որինակ։ Կապիտալիստական մանուֆակտուրայից մեքենային խոշոր ինդուստրիային անցնելը կարելի կլինի ընդունել վորպես «դիֆերենցիացիայի» նվաղում, վորովհետև աշխատանքի մանրամասն բաժանումը ամենագիտացած բանվորների մեջև դարում է։ Մինչդեռ կապածից դուրս է, վոր անհատականության զարգացման պայմաններն անհամեմատ բարենպաստ են (բանվորի համար) հենց վերջին դեպքում։ Այստեղից հետևությունն այն է, վոր հարցի դրումն սրղեն սխալ է։ Ինքը հեղինակն ընդունում է, վոր անհատի ու խմբի միջև նույնպես գոյություն ունի հակամարտություն (վորի մասին էլ խոսում է պ. Միխայլովսկին)։ «Բայց կյանքը,—ավելացնում է նա,—յերբեք չի դումարվում բացարձակ հակասությունների։ Նրա մեջ ամեն ինչ հոսուն և հարաբերական է, և միևնույն ժամանակ բոլոր առանձին կողմերը գտնվում են մշտական փոխազդեցության մեջ» (39)։ Ցերթե այսպես է,—ապա ինչ կարիք կար ցուցադրելու բացարձակ հարաբերակցությունները խմբի և անհատի միջև,—հարաբերակցությունը

ներ, որոնք չեն վերաբերում հասարակական որոշ ֆորմացիայի զարգացման խիստ որոշ ժամանակին. ինչու՞ ամբողջ փաստարկումը չվերաբերվեր Ռուսաստանի եվոլյուցիայի կոնկրետ պրոցեսի հարցի վերաբերմամբ։ Հեղինակը փորձ է անում հարցն այս կերպ դնելու, և յուրաքանչյուր ոք, ով ծանոթ է նորին մինչև վերջ հասցներ, նրա փաստարկումը շատ կշռեր։ «Միխայլովսկու աշխատանքի բաժանումը,—մարքսյան այս մեջբերումն ըստ պ. Միխայլովսկու ուսմունքի,—պայմաններ ստեղծեց այն «անհատի» զարգացման համար, հանուն որի պ. Միխայլովսկին արդարացի բողոքում է աշխատանքի բաժանման արդի ձևերի դեմ» (38)։ Այս հիանալի է ասված, միայն թե հարկավոր էր «աշխատանքի բաժանման» փոխարեն ասել «կապիտալիզմ» և նույնիսկ ավելի նեղ՝ ռուսական կապիտալիզմ։ Կապիտալիզմի առաջադիմական նշանակությունը հենց այն է, որ նա խորտակեց մարդու կյանքի նախկին նեղ պայմանները, որոնք մտավոր բթություն էին ծնում և հնարավորություն չէին տալիս արտադրողներին իրենց բոլոր իրենց ձևերն առնելու։ Առևտրական հարաբերությունների ու համաշխարհային փոխանակության հզոր կապակցությունը, բնակչության հսկայական մասսաների տեղափոխությունները քանդեցին ցեղի, ընտանիքի, տեբիտարիալ համայնքի հնամենի կապերը և ստեղծեցին մարդու այն բազմազանությունը, «տաղանդների բազմազանությունը, հասարակական հարաբերությունների հարբուսությունը»*, որն Աբևմուտքի նորագույն պատմության մեջ այսպիսի խոշոր դեր է խաղում։ Ռուսաստանում այս պրոցեսն ամբողջ ուժով արտահայտվեց հետռեֆորմյան դարաշրջանում, երբ աշխատանքի վաղեմի ձևերը խորտակվում էին հակայա-

* K. Marx, Der achtzehnte Brumaire, S. 98 u. s. w. (Կ. Մարքս, «Լուի Բոնապարտի՝ բրյումերի 18-ը», էջ 98 ու հետևյալները.—Վ. Ի. Լենինն այստեղ հիշատակում է գերմաներեն տեքստի ինչպես գրաքննության նկատառումներով, այնպես էլ այն պատճառով, որ այս աշխատության ռուսերեն թարգմանությունն այն ժամանակ դեռ չկար։ Խմբ.)։

կան արագությամբ, և առաջին տեղը գրավեց աշխատանքային ուժի առուծախը, վորը պահում էր գյուղացուն նահապետական կիսաճորտական ընտանիքից, գյուղի բթացուցիչ շրջապատից և գերաբժեքի յուրացման կիսաճորտական ձևերը փոխարինում էր դուս կապիտալիստական ձևերով։ Ծնտեսական այս պրոցեսն անդրադարձավ սոցիալական բնագավառում «անհատի զգացմունքների ընդհանուր բարձրացումով»», նրանով, վոր ռազնոչինեցները «հասարակության» դուրս վանեցին կալվածատեր դասակարգին, նրանով, վոր գրական հնության մեջ ամբ պայքար սկսվեց ընդդեմ անհատի վերաբերմամբ յեղած միջնադարյան անմիտ ճնշումների և այլն։ Վոր հենց հետռեֆորմյան Ռուսաստանը բերեց անհատի զգացմունքների, սեփական արժանապատվության զգացմունքի այս բարձրացումը,—հավանորեն նարոդնիկները չեն ժխտի այս բանը։ Բայց նրանք իրենց հարց չեն տալիս, թե նյութական ինչ պայմաններ հասցրին այդ բանին։ Ճորտային իրավունքի ժամանակ, պարզ է, նման վոչ մի բան լինել չէր կարող,—և ահա նարոդնիկը վողջունում է «ազատագրական» ռեֆորմը՝ չնկատելով, վոր ինքն ընկնում է նույնպիսի կարճատես լավատեսության մեջ, ինչպես բուրժուական պատմաբանները, վորոնց մասին Մարքսն ասել է, թե նրանք գյուղացիական ռեֆորմի վրա նայում են «համանախպացիայի» clair-obscur-ի* միջով՝ չնկատելով, վոր այս «համանախպացիան» կայանում էր մի ձևը մի ուրիշով փոխարինելու մեջ միայն, ֆեոդալական հավելյալ արդյունքը բուրժուական հավելյալ արժեքով փոխարինելու մեջ։ Բոլորովին նույնը յեղել է նաև մեզանում։ Հենց «հին-աղնվականական» տնտեսության սիստեմն էր, վոր կապելով բնակչությունը մի տեղից, բաժան-բաժան անելով նրան առանձին կալվածատերերի հպատակների խմբակներին,—ստեղծում էր անհատի ճնշվածություն։ Ցավ ասած՝ հենց կապիտալիզմն էր,

*—աքսովածություն։ Խմբ.

վոր ապահովի անհատին ճորտատիրական բոլոր կապանքներից, դնելով նրան շուկայի վերաբերմամբ ինքնուրույն հարաբերությունների մեջ, դարձնելով նրան ապրանքատեր (և վորպես այսպիսին՝ նրան հավասար դարձնելով ամեն մի այլ ապրանքատիրոջ),—ստեղծից անհատի զգացմունքի բարձրացում։ Յեթե պ. պ. նարոդնիկները փաբխանեցիաբար սարսափում են, յերբ նրանց ասում են ռուսական կապիտալիզմի առաջադիմականության մասին, ապա այս միմիայն պատճառով է, վոր նրանք մի փոքր միտք չեն անում «պրոդրեսի» այն «բարիքների» նյութական պայմանների հարցի մասին, վորոնք նշանավորում են հետեվողության Ռուսաստանը։ Յեթե պ. Միխայլովսկին իր «սոցիոլոգիան» սկսում է «անհատից», վորը բողոքում է ռուսական կապիտալիզմի դեմ վորպես ճիշտ ճանապարհից Ռուսաստանի կատարած մի պատահական ու ժամանակավոր շեղման դեմ, ապա այստեղ նա ինքն իրեն հարվածում է՝ չհաշկանալով, վոր հենց միմիայն կապիտալիզմն ստեղծից այն պայմանները, վորոնք հնարավոր դարձրին անհատի այս բողոքը։—Այս որինակից մենք մի անգամ ել տեսնում ենք, թե ինչ փոփոխության կարիք ունի պ. Սարուվեյի փաստարկումը։ Հարցն ամբողջապես պետք էր դնել ռուսական իրականության հողի վրա, այն բանը պարզելու հողի վրա, ինչ վոր կա և ինչու հենց այսպես և վոչ թե մի այլ կերպ կա. դուրս չե, վոր նարոդնիկներն իրենց ամբողջ սոցիոլոգիան կառուցում էին այն բանի վրա, վոր իրականությունը վերլուծելու փոխարեն դատում էին այն մասին, թե ինչ «կարող և լինել». նրանք չէին կարող չըտեսնել, վոր իրականությունն անողոքաբար ջախջախում և նրանց պատրանքները։

«Անհատների» թեորիայի իր վերլուծումը հեղինակն ամփոփում է այսպիսի ձևակերպումով. «անհատը սոցիոլոգիայի համար միջավայրի ֆունկցիան է», «անհատն այստեղ հանդիսանում է մի ձևական դաղափար, վորի բովանդակությունը տրվում է սոցիալական խմբի հետազոտությամբ» (40)։

վերջին հակադրումը հատկապես լավ է ընդգծում սուբյեկտիվիզմի ու մատերիալիզմի հակադրությունը. դատելով «անհատի» մասին՝ սուբյեկտիվիստներն այս դաղափարի բովանդակությունը (այսինքն, այս անհատի «խոհերն ու զգացմունքները»,նրա սոցիալական գործողությունները) վորոշում էին a priori, այսինքն «սոցիալական խմբի հետազոտության» փոխարեն հրամցնում էին իրենց ուտոպիաները։

Մատերիալիզմի մյուս «կարևոր կողմը»,—շարունակում է պ. Ստրուվեն,—«այն է, վոր տնտեսական մատերիալիզմը դաղափարը յենթարկում է իրողությանը, գիտակցությունը և պետականությունը—կեցությանը» (40)։ «Յենթարկում է»—այս, հարկավ, ավյալ դեպքում նշանակում և—հատկացնում է ստորադաս տեղ հասարակական յերևույթների բացատրության մեջ։ Սուբյեկտիվիստ-նարոդնիկները վարվում են հենց սրա հակառակը. նրանք իրենց դատողությունների մեջ յելնում են «իդեալներից»՝ բնավ չվտածելով այն մասին, վոր այդ իդեալները կարող էին հանդես գալ միմիայն վորպես իրականության վորոշ արտացոլում, վոր, հետևաբար, դրանք պետք է ստուգել փաստերով, վերածել փաստերի։—Ասենք, նարոդնիկի համար այս վերջին դրույթն անհասկանալի կլինի առանց պարզաբանումների։ Ի՞նչպես թե,—մտածում է նա,—իդեալները պետք է դատապարտեն փաստերը, պետք է ցույց տան, թե ինչպես կարելի յե փոխել նրանց, ստուգել փաստերը, և վոչ թե պետք է իդեալները ստուգվեն փաստերի կողմից։ Նարոդնիկին, վորը սովոր է ճախրելու անդրամպային վոլորտներում, այս վերջինը նշանակում է հաշտվել փաստի հետ։ Բացատրվենք։

«Ուբիյի հաշվին տնտեսավարելու» առակությունը, շահագործման առակությունը ինչպես իրենց, շահագործվողների, այնպես և «ինտելիգենցիայի» առանձին ներկայացուցիչների մեջ միշտ ել ծնելու յե այդ սխեմային հակադիր իդեալներ։

Այդ իդեալները չափազանց արժեքավոր են մարքսիստի համար. նա հենց բացառապես նրանց հողի վրա յե բանավի-

ձում նարոդնիկության հետ, նա բանավիճում է բացառապես այդ իդեալները կառուցելու և նրանց իրագործելու հարցի մասին։

Նարոդնիկի համար բավական և հավասարել այդպիսի իդեալները առաջացնող փաստը, հետո բերել ցուցումներ իդեալի ուրբինականության մասին «արդի դիտության ու արդի բարոյական գաղափարների»տեսակետից [ընդվորում նա չի հասկանում, վոր այդ «արդիական գաղափարները» նշանակում են միայն գիջումներ, վոր սրևմտա-յեվրոպական «հասարակական կարծիքն» անում է ծնունդ առած նոր ուժին] և այնուհետև կոչ անել «հասարակությանն» ու «պետությանը», թե՝ ապահովեցեք, պաշտպանեցեք, կազմակերպեցեք։

Մարքսիստը յելնում է հենց միևնույն իդեալից, բայց նրան բաղդատում է վոչ թե «արդի դիտության ու արդի բարոյական գաղափարների» հետ*, այլ գոյություն ունեցող դասակարգային հակասությունների հետ, և այս պատճառով նրան ձևակերպում է վոչ թե վորպես «դիտության» պահանջ, այլ վորպես այս-ինչ դասակարգի մի պահանջ, վոր առաջացել է հասարակական այս-ինչ հարաբերություններից (վորոնք յենթակա յեն որյեկտիվ հետազոտման) և իրագործելի յե այս-ինչ կերպով միայն այդ հարաբերությունների այս-ինչ հատկությունների հետևանքով։ Յեթե իդեալներն այս կերպ չհանգեցնենք իրողությունների, ապա այդ իդեալները կլինան վորպես անմեղ ցանկություններ, առանց վորևե շանս ունենալու, վոր մասսաները նրանց կընդունեն և, հետևաբար, կիրագործեն։

Այսպիսով մատնանշելով թեորիական այն ընդհանուր դրույթները, վորոնք սոխալում են մատերիալիզմին ընդունել

* Ենգելսն իր՝ «Herrn E. Dührings Umwälzung der Wissenschaft» դրքում հիանալի նկատել է, վոր այս հին հոգեբանական մեթոդ է— իր գաղափարը բաղդատել վոչ թե իրողության հետ, վորի արտացոլումն է այդ գաղափարը, այլ մի ուրիշ գաղափարի հետ, մի այլ իրողության ընդհանրության հետ։

վորպես հասարակական դիտության միակ ճիշտ մեթոդը, պ. Ստրուվեն անցնում է Մարքսի ու Ենգելսի հայացքների շարադրանքին՝ մեջբերումներ անելով գլխավորապես վերջին-նից յերկերից։ Այս՝ գրքի չափազանց հետաքրքրական և ուսանելի մասն է։

Անչափ արդարացի յե հեղինակի այն մատնանշումը, թե «վոչ մի տեղ չես հանդիպի Մարքսի մասին այնպիսի անհակացողության, ինչպես հուս հրապարակախոսների մոտ» (44)։ Իրըև որինակ բերվում է ամենից առաջ պ. Միխայլովսկին, վորըՄարքսի «պատմա-փիլիսոփայական թեորիան» համարում է «կապիտալիստական կարգի ծագման» պարզաբանումը միայն։ Պ-ն Ստրուվեն կատարյալ իրավունքով դոզում է սրա դեմ։ Հիրավի, այս վերին աստիճանի բնորոշ փաստ է։ Պ-ն Միխայլովսկին Մարքսի մասին շատ անդամ է գրել, բայց յերբեք էլ ծպտուն չի հանել այն հարաբերության մասին, վորի մեջ գտնվում է Մարխի մեթոդը «սոցիոլոգիայի սուբյեկտիվ մեթոդի» վերաբերմամբ։ Պ-ն Միխայլովսկին գրել է «Կապիտալի» մասին, հայտնել իր «հաճելի լինելը» (?) Մարքսի տնտեսական դոկտրինայի հետ, բայց խիստ լռություն է պահպանել,— որինակի համար ասենք,—այն հարցի մասին, թե արդյոք Ռուսաստանի սուբյեկտիվիստները չեն մտնում Պրուդոնի մեթոդի տակ, վորը ցանկանում է ապրանքային տնտեսությունը ձևափոխել ըստ արտադրության մասին իր ունեցած իդեալի*։ Ինչքա՜ն է տարբերվում (արդարության—justice éternelle) այս չափանիշը պ. Միխայլովսկու չափանիշից, վոր ե՝ «արդի դիտության ու արդի բարոյական գաղափարները»։ Յեվ ինչո՞ւ պ. Միխայլովսկին, վորը միշտ այնպես յեռանդագին բողոքել է հասարակական գիտությունների մեթոդը բնական գիտությունների մեթոդի հետ նույնացնելու դեմ, չի վիճել Մարքսի այն հայտարարության դեմ, թե Պրուդոնի այսպիսի մե-

* Das Kapital, I B., 2-te Aufl., S. 62 u. 38.

թողը բոլորովին. նույնպես անհեթեթ է, որքան և այն, յեթե քիմիկոսը, «նյութերի փոխանակության իսկական ո-րինքներն ուսումնասիրելու» տեղ, կամենար փոխակերպել այդ փոխանակությունն ըստ «մերձակցության» օրենքների. ինչու չէ վիճել պ. Միխայլովսկին Մարքսի այն հայացքի դեմ, թե սոցիալական պրոցեսը «բնապատմական պրոցես» է: Այս բանը չի կարելի բացատրել զրականության անծանոթ լինելով. ակներև է, որ բանը կատարելապես չհասկացելը կամ հասկանալ չկամենալն է: Պ-ն Սորուվեն մեր գրականության մեջ, կարծում, առաջինն է այս բանը հայտնել,—և այս՝ նրա մեծ ծառայությունն է:

Այժմ անցնենք մարքսիզմի առթիվ հեղինակի արած այն հայտարարություններին, որոնք քննադատություն են առաջ բերում: «Մենք չենք կարող չընդունել,—ասում է պ.Սորուվեն,—որ այս ուսմունքի զուտ փիլիսոփայական հիմնավորումը դեռ տրված չէ, և որ նա դեռ չի հաղթահարել այն հակայական կոնկրետ նյութը, որ ներկայացնում է համաշխարհային պատմությունը: Ակներև է, որ հարկավոր է փաստերի վերանայումնոր թեորիայի տեսակետից, հարկավոր և թեորիայի քննադատություն՝ փաստերի վրա հիմնված: Թերևս բազմաթիվ միակողմանիությունները ու չափազանց հապճեպ ընդհանրացումները կթողնվեն» (46): Շատ էլ պարզ չէ, թե ինչ է հասկանում հեղինակը «զուտ փիլիսոփայական հիմնավորում» ասելով: Մարքսի ու Ենգելսի տեսակետով փիլիսոփայությունն անջատ ինքնուրույն գոյության վոչ մի իրավունք չունի, և նրա նյութը բաժանվում է դրական գիտության զանազան ճյուղերի մեջև: Այսպես, փիլիսոփայական հիմնավորում ասելով կարելի չէ հասկանալ կամ փիլիսոփայության նախադրյալների առաջադրումը մյուս գիտություններին հատատուրեն սահմանված օրենքների հետ [և պ. Սորուվեն ինքն ընդունել է, որ արդեն հոգեբանությունը տալիս է դրույթներ, որոնք սահմանում են սուբյեկտիվիզմից հրաժարվելու և մատերիալիզմն

ընդունելու], կամ այս թեորիայի կիրառման փորձը: Իսկ այս կողմից մենք ունենք հենց իր, պ. Սորուվեյի, հայտարարությունն այն մասին, թե «միշտ մատերիալիզմի ծառայությունը կլինա այն, որ նա տվեց հակայական նշանակություն ունեցող պատմական մի շարք փաստերի (այս NB) խորը-գիտական, ճշմարտացիս փիլիսոփայական (ընդգծումը հեղինակինն է) մեկնաբանությունը» (50): Հեղինակի վերջին հայտարարությունը պարունակում է խոստովանություն այն մասին, որ մատերիալիզմը սոցիոլոգիայի միակ գիտական մեթոդն է, և այս պատճառով, հարկավ, հարկավոր է «փաստերի վերանայում» այս տեսակետից, մանավանդ ռուսական պատմության ու իրականության փաստերի վերանայում, փաստեր, որ այնքան ջանասիրությամբ ազավաղել են Ռուսաստանի սուբյեկտիվիստները: Ինչ վերաբերում է հնարավոր «միակողմանիությունների» ու «չափազանց հապճեպ ընդհանրացումների» մասին արված վերջին դիտողությանը՝ ապա մենք, կանգ չառնելով այս ընդհանուր, ուրեմն և անորոշ դիտողության վրա, ուղղակի կդիմենք այն ուղղումներից մեկին, որ մտցնում է «ուղղափառությամբ չվարակված» հեղինակը Մարքսի «չափազանց հապճեպ ընդհանրացումների» մեջ:

Խոսքը պատության մասին է: Ժխտելով պատությունը՝ «Մարքսն ու նրա հետևողները» «հավիշտակվեցին», «չափազանց հեռու գնացին առդի պեռության քննադատության գործում» և ընկան «միակողմանիության» մեջ: «Պատությունը,—ուղղում է պ. Սորուվեն այս հավիշտակությունը,—ամենից առաջ կարգի կազմակերպություն է. իսկ (դասակարգային) տիրապետության կազմակերպությունն է նա մի հասարակության մեջ, որտեղ խմբերից մեկքանիսի՝ մյուսներին յենթարկվելը պայմանավորվում է այդ հասարակության տնտեսական կառուցվածքով» (53): Հեղինակի կարծիքով տոհմային կենցաղին ծանոթ եր պատությունը, որը կիմա նաև դասակարգերի վոչնչացման մեջոցին, որովհետև

պետության հատկանիշը հարկադրական իշխանություն։

Միայն կարելի է զարմանալ այն բանի վրա, որ հեղինակն իր սրոճիստական տեսակետով քննադատում է Մարքսին՝ փաստարկությունների ապշեցուցիչ բացակայությամբ։ Ամենից առաջ նա բոլորովին սխալ կերպով և պետության տարբերիչ հատկանիշ համարում հարկադրական իշխանությունը. հարկադրական իշխանություն կա մարդկային ամեն մի համակեցության մեջ, թե տոհմային կազմակերպության մեջ և թե ընտանիքում, բայց այստեղ պետություն չի կեղև։ «Պետության էական հատկանիշը,—ասում է Ենգելսը հենց նույն էջերի մեջ, որից պ. Տարուվելն վերցրել և պետության մասին քաղվածքը,—ժողովրդի բազմությունից անջատ հանրային իշխանություն է» [Ursprung der Familie u. s. w., 2-te Aufl., S. 84, ռուսերեն թարգմ. եջ 109]*, և միևնույն վերևում նա խոսում է նավկրարիաների** կազմակերպության մասին, որ սա էլ կերևում էր քայքայում տոհմային կազմակերպությունը. նախ, նա ստեղծում էր հանրային իշխանություն (oeffentliche Gewalt—ռուսերեն թարգմանության մեջ սխալ և փոխադրած, հասարակական ուժ), որին արդեն պարզիպարզը չէր նույնանում զինված ժողովրդի ամբողջության» հետ (ib., S, 79, ռուս. թարգմ. եջ 105)։ Այսպես ուրեմն, պետության հատկանիշն անհատների ուրույն դասակարգի գոյությունն է, որի ձեռքում կենտրոնանում է իշխանությունը։ Հասկանալի է, որ

* «Ընտանիքի, մասնավոր սեփականության ու պետության ծագումը»։ Ռուսերեն թարգմանության եջերը ցույց են տրված ըստ 1894 թ. հրատարակության։ ИМЭЛ- Партиздат-ի 1933 թ. հրատարակության մեջ այս տեղը գտնվում է 201-րդ եջում։ Խմբ.։

** Նավկրարիաներ հին հույների տերիտորիալ վոքրիկ շրջանների կազմակերպություններն են, որոնցից յուրաքանչյուրը պետք է կառուցեր, զիներ և անձնակազմով ուժտեր մեկ ռազմանավ և տար իրենց ձիավորներ։ Խմբ.։

որևէ վոք չէր կարող պետություն անվանել այն հավաքը, որի մեջ «կարգի կազմակերպումը» հերթով կվարեյին նրա բոլոր անդամները։ Հետո, արդի պետության վերաբերմամբ պ. Տարուվելի դատողությունը էլ ավելի անհիմն է։ Ասել պետության մասին, թե նա «ամենից առաջ (sic!?) կարգի կազմակերպություն է»,—նշանակում է չհասկանալ Մարքսի թեորիայի շատ կարևոր կետերից մեկը։ Այն հատուկ շերտը, որը ձևավորում է իշխանությունն արդի հասարակության մեջ,—բյուրոկրատիան է։ Այդ որդանի անհիջականն ու ամենասերտ կապն արդի հասարակության մեջ իշխող բուրժուազիայի դասակարգի հետ պարզ կերևում է պատմությունից էլ (բյուրոկրատիան բուրժուազիայի առաջին քաղաքական զենքն էր ֆեոդալների դեմ, ընդհանրապես՝ «հին-աղնվականական»կացութաձևի ներկայացուցիչների դեմ, որոնք թե աղնվազարմ հողատերերի, այլ ռաղնոչինեցների, «քաղքենիության» առաջին կերպյքը քաղաքական տիրապետության ասպարեզի վրա) և այս դասակարգի կազմավորման ու համալրման բուն իսկ պայմաններից, դասակարգ, որի մեջ մուտքը բաց և միայն «ժողովրդից դուրս եկած» բուրժուական տարրերի համար և որը կապված է այս բուրժուազիայի հետ հազարավոր ամրագույն թելերով*։ Հեղինակի սխալը վրդովեցնող և մանավանդ այն պատճառով, որ հենց Ռուսաստանի նավրոդնիկները, որոնց դեմ պայքարելու այս լավ միտքն և ունեցել նա, գաղափար չունեն այն մասին, որ ամեն մի բյուրոկրատիա թե իր պատմա-

* Համմ. K. Marx, Bürgerkrieg in Frankreich, S. 23 (Lpz. 1876) (Կ. Մարքս, Քաղաքացիական կռիվը Ֆրանսիայում. Խմբ.) ու Der achtzehnte Brumaire, S. 45—46 (Hmb. 1885)։ «Ֆրանսիական բուրժուազիայի նյութական շահն ամենասերտ կերպով միահյուսված է այս լայն ու կրաւեյի մասին եղ։ Այստեղ ուղարկելով և նա ազատվում իր ավելորդ բնակչությունից և պետական ոռճկի ձևով նա լցացնում է այն, ինչ չեր կարող առանձ շահույթի, առևտակաների, ռենտայի ու հոնորարների ձևով։

կան ծագումով, թե իր արդի աղբյուրով և թե իր կոչումով դառա ու բացառապես մի բուրժուական հիմնարկություն և, վորին ի վիճակի չեն արտադրող շահերի տեսակետից դիմելու միմիայն մանր բուրժուազիայի իդեոլոգները։

Արժե մի քիչ կանգ առնել մարքսիզմի՝ ևթիկայի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա։ Հեղինակն էջ 64—65-ում բերում է Ենգելսի շատ դեղեցիկ պարզաբանություն այն հարաբերության մասին, վոր պատասխանն ունի անհրաժեշտության վերաբերմամբ. «Ազատությունն անհրաժեշտության ըմբռնումն է»։ Դետերմինիզմը վոչ միայն չի յենթադրում ֆատալիզմ, այլ ընդհակառակը, հենց հող է ստեղծում բանական նպատակադրման համար։ Սրան չի կարելի չավելացնել այն, վոր Ռուսաստանի սուբյեկտիվիստները չկարողացան գլուխ հանել նույնիսկ մի այնպիսի տարրական հարցից, ինչպիսին կամքի ազատության հարցն է։ Պ-ն Մ[illegible]ովսկին անզորությամբ ճճվում էր՝ շփոթելով դետերմինիզմը ֆատալիզմի հետ և յելք էր գտնում... յերկու աթոռի մեջտեղը նստելով. չուզենալով ժխտել որինաչափաչափությունը, նա պնդում էր, թե կամքն ազատությունը մեր գիտակցության իրողությունն է (իսկապես, այս՝ Մ[illegible]ովի գաղափարն է, վոր վերցրել է պ. Մ[illegible]ովսկին) և այս իսկ պատճառով կարող է ևթիկայի հիմք ծառայել։ Հասկանալի չի, վոր սոցիոլոգիայի նկատմամբ դիրքավորելով՝ այդ գաղափարները վոչինչ չեյին կարող տալ, լրացի ուտոպիայից կամ դատարկ բարոյախոսություններից, վորտեղ ուսում է հասարակության մեջ տեղի ունեցող դասակարգային կռիվը։ Այս պատճառով չի կարելի չհոստովանել Զոմբարտի այն պնդման իրավացիությունը, թե «մարքսիզմի իր մեջ սկզբից մինչև վերջը վոչ մի գրան ևթիկա չկա». մարքսիզմը թեորիական կողմից՝ «ևթիկական տեսակետը» յենթարկում է «պատճառականության սկզբունքին», գործնական կողմից՝ նա ևթիկան հանգեցնում է դասակարգային կռվի։

Մատերիալիզմի շարադրանքը պ. Սորոկինն լրացնում է նրանով, վոր մատերիալիստական տեսակետից է գնահատում «յերկու գործոնը, վորոնք չափազանց կարևոր դեր են խաղում նարոդնիկական բոլոր մտակառուցվածքների մեջ», այն է՝ «ինտելիգենցիան» ու «սիստեմությունը» (70)։ Այս գնահատման վրա էլ անդրադարձել է հեղինակի հենց նույն «վոչ-անուղղափառությունը», վորը նշվեց վերևում նրա սուբյեկտիվիզմի առթիվ։ «Յեթե... ընդհանրապես հասարակական բոլոր խմբերն իրական ուժ են միայն այն չափով, վորքան վոր... նրանք համընկնում են հասարակական դասակարգերի հետ կամ հարում են նրանց, ապա, ակնհայտ է, վոր «ապադասային ինտելիգենցիան» հասարակական իրական ուժ չէ» (70)։ Վերացական թեորիական խմաստով հեղինակը, իհարկե, իրավացի յե։ Նա, այսպես ասած, նարոդնիկներին բանում է իրենց խոսքով։ Դուք ասում եք, թե ինտելիգենցիան պիտի Ռուսաստանը ուղղի դեպի «այլ ճանապարհներ», — դուք չեք հասկանում, վոր, չհարելով մի դասակարգի, ինտելիգենցիան դերո յե։ Դուք պարծենում եք, թե ռուսական ապադասային ինտելիգենցիան միշտ աչքի յե ընկել գաղափարների «մաքրությամբ»,—հենց այդ պատճառով էլ նա միշտ անզոր և յեղել։ Հեղինակի քննադատությունը սահմանափակվում է՝ ինտելիգենցիայի ամենակարողության մասին նարոդնիկների ունեցած անհեթեթ գաղափարն առարկելով իր միանգամայն իրավացի այն գաղափարի հետ, թե «ինտելիգենցիան անզոր է տնտեսական պրոցեսում» (71)։ Բայց այդպիսի առարկումը քիչ է։ Վորպեսզի գաղափար ռուսական «ապադասային ինտելիգենցիայի» մասին, վորպես ռուսական հասարակության առանձին խմբի մասին, վորն այնպես բնորոշում է ամբողջ հետեփոքրմյան դարաշրջանը, — ռազնոչինեցի կողմից աղնվականին վերջնականապես դուրս մղելու դարաշրջանը, — վորն անկասկած խաղացել է և շարունակում է խաղալ պատմական վորոշ դեր, — սրա համար պետք է առարկել մեր «ապադասային ինտելիգենցիայի»

դաղափարները և ավելի ևս նրա ծրագրերը ռուսական հասարակության տվյալ դասակարգերի դրության ու շահերի հետ։ Վորպեսզի վերացնենք մեզ հաշտուել կապակցելու հնարավորությունը, մենք ինքներս չենք անի այդ առադրումը, այլ կսահմանափակվենք մատնանշելով այն հարցերին, վորի հոդվածը մեկնաբանվեց I գլխում։ Նրա բոլոր կարծիքներից միանգամայն պարզ կերպարացություն և ըըլխում, այն, վոր ռուսական առաջավոր, լիբերալ, «դեմոկրատիկ» ինտելիգենցիան բուրժուական ինտելիգենցիա չի կրել։ «Ազատասիրությունն» ամենևին չի բացառում ինտելիգենցիայի դաղափարների դասակարգային ծագումը։ Միշտ ու ամենուրեք բուրժուազիան ընդվզել է ֆեոդալիզմի դեմ հանուն ազատասիրության—և մեզանում հին-ազնվականի, դասային հասարակակարգի դեմ կռվել անդասային ինտելիգենցիան։ Միշտ ու ամենուրեք բուրժուազիան դասային՝ իրենց դարն անցրած շրջանակների ու միջնադարյան այլ հիմնարկների դեմ հանդես է եկել հանուն ամբողջ «ժողովրդի», վորի ներսում դասակարգային հակասությունները սակավին զարգացած չէին և նա իրավացի էր ինչպես Արևմուտքում, այնպես և Ռուսաստանում, վորովհետև քննադատվող հաստատությունները հիրավի նեղում էին բոլորին։ Հենց վոր Ռուսաստանում դասայնության վճռական հարված հասցվեց (1861 թ.),—անմիջապես սկսեց իրևան գալ «ժողովրդի» ներսում կեղած հակամարտությունը, իսկ սրա հետ միասին ու սրա զորությամբ իրևան եկավ ազատասիր ինտելիգենցիայի ներսի հակասությունը լիբերալների ու նարոդնիկների, գյուղացիության իդեոլոգների միջև (անմիջական արտադրողների ռուսական առաջին իդեոլոգները գյուղացիության ներսում չէին սեպում և չէին էլ կարող տեսնել հակադիր դասակարգերի գոյացումը)։ Տնտեսական հետագա զարգացման հետևանքով ավելի լրիվ իրևան եկան սոցիալական հակադրությունները ռուսական հասարակության մեջ, այդ զարգացումն

ստիպեց ընդունել այն իրողությունը, վոր գյուղացիությունը սրտնվում է գյուղական բուրժուազիայի ու պրոլետարիատի։ Նարոդնիկությունը գրեթե արդեն բոլորովին դարձավ մանր բուրժուազիայի իդեոլոգիա՝ իրենից անջատելով մարքսիզմը։ Այս պատճառով ռուսական «ազատասիրական ինտելիգենցիան» «հասարակական իրական ուժ» և, վորչափով վոր նա պաշտպանում է համաբուրժուական շահեր*։ Ցերեկ, այնուամենայնիվ, այդ ուժն իր պաշտպանած շահերի համար չկարողացավ ստեղծել համապատասխան հիմնարկություններ, չկարողացավ կերպարանափոխել «արդի Ռուսաստանի կուլտուրայի մթնոլորտը» (պ. Վ. Վ.), չեթե «քաղաքական կռվի շրջանում ակտիվ դեմոկրատիզմի տեղը բռնեց «հասարակական ինդիֆերենտիզմը» (պ. Վ. Վ. «Неделя»-յում, 1894 թ., № 47),—ապա սրա պատճառը վրկ միայն հայրենական «ազատասիրական ինտելիգենցիայի» կերպարն բնավորությունն և, այլև գլխավորապես այն դասակարգերի դրությունը, վորոնցից նա կեղել և և վորոնցից նա ուժ և քաղել։ պատճառը նրանց կերկդիմություն է։ Անվիճարկելի չե, վոր Ռուսաստանի «մթնոլորտը» նրանց համար ունեցել և շատ մինուսներ, բայց նա ավել և նրանց նաև ինչ-ինչ պլյուսներ։

Ռուսաստանում առանձնապես մեծ է այն դասակարգի պատմական դերը, վորը, նարոդնիկների կարծիքով, չի հանդիսանում «աշխատանքի մաքուր դաղափար» կրողը։ Նրա

---

* Նարոդնիկական ցանկությունների հակասական մասի մասին-բուրժուական բնույթը նշվել է I գլխում։ Այն ցանկությունները, վորոնք այս բնութագրմանը համապատասխան չեն (ինչպես, որինակ, «աշխատանքի հանրայնացումը»), արդի նարոդնիկության մեջ արդեն բոլորովին մինիմալ տեղ են գրավում։ Թե «Русское Богатство»-ն (93, № 11—12, Ցուժակովի «Ռուսաստանի տնտեսական զարգացման հարցերը» հոդվ.) և թե պ. Վ. Վ.-ն («Տնտեսական տնտեսագիտության ուրվագծեր», Մ.-Պետ., 1895) բողոքում են պ. Ն.—ոնի դեմ, վորը «խիստ» և արտահայտվել (պ. Ցուժակովի արտահայտությունն է) վարկերի հնամաշ համադարմանի մասին, հողատիրության ընդարձակման, դաղթեցումների մասին և այլն։

«ակտիվությունը» չի կարելի քննադատել «քաղցը հեքիաթներով», ուստի մարքսիստների մատնանշումները նրա վրա վրդովմունք են «կտրում դեմոկրատիկ թելը», ինչպես հավատացնում է պ. Վ. Վ.-ն, վորը մասնագիտացել է մարքսիստների մասին ամենաանհավանական անհեթեթություններ հնարելու մեջ, այլ, ընդհակառակը, իրենց ձեռն են առնում այս «թելը», վորը ինդիֆերենտ «հասարակությունը» բայց և թողնում ձեռքից, պահանջում են, վոր այս թելը զարդարնա, ամրանա, մոտենա կյանքին։

Ինտելիգենցիայի գնահատման թերության հետ կապակցված է պ. Ստրուվեյի հետևյալ դրույթի վոչ բոլորովին հաջող ձևակերպումը. «Պետք է ապացուցել,—ասում է նա,—թե հին տնտեսակարգի քայքայումն անխուսափելի չե» (71)։ Նախ, ինչ և հասկանում հեղինակը «հին տնտեսակարգ» ասելով։ Ճորտատիրություն,—բայց նրա քայքայումն ապացուցելու կարիք էլ չկա։—«Ժողովրդական արտադրություն», —բայց նա հենց ինքն և ստորև ասում և ասում է միանգամայն իրավացիորեն, վոր այս բառադրակցությունը «չի համապատասխանում վոչ մի իրական պատմական իրավակարգի» (177), վոր այդ, ուրիշ խոսքերով ասած, մի առասպել է, վորովհետև «ճորտային իրավունքի» վերացումից հետո մեզանում արտադրեն սկսեց զարգանալ ապրանքային տնտեսությունը։ Հավանորեն հեղինակը նկատի չե ունեցել կապիտալիզմի զարգացման այն ստադիան, յերբ նա դեռ լիովին դուրս չեր յեկել մինչդարյան հատատուրյունների կապանքներից, յերբ դեռ ուժեղ և առևտրական կապիտալը, և մանր արտադրությունը դեռ շարունակում է գոյություն ունենալ արտադրողների մեծ մասի համար։ Ցերկրորդ, հեղինակն ինչն է համարում այս անխուսափելիության չափանիշ։ Այս-ինչ դասակարգերի տիրապետությունը. արտադրական հարաբերությունների ավյալ սիստեմի հատկությունները։ Ցերկու դեպքումն էլ հարցը վերածվում է այս կամ այն (կապիտալիստական) կարգերի տևակայության հա-

վասմանը, հարցը վերածվում է իրողության հավասմանը, և վոչ մի դեպքում հարկավոր չեր այն տեղափոխել ապագայի վերաբերյալ դատողությունների բնագավառը։ Նման դատողություններ անելը պետք է թողնել վորպես մենաշնորհ պ. պ. նարոդնիկներին, վորոնք «այլ ուղիներ» են վորոնում «հայրենիքի հաժար»։ Հեղինակն ինքն և ասում հենց հաջորդ եջում, թե ամեն մի պետություն «հասարակական վոլոշ դասակարգերի տիրապետության արտահայտություն է», թե «պետք և սոցիալական ուժերի վերաբաշխում առանձին դասակարգերի միջև նրա համար, վոր պետությունն արմատապես փոխի իր ընթացքը» (72)։ Այս ամենը խորապես ճիշտ և և շատ դիպուկ ուղղված է նարոդնիկների դեմ, և, սրան համապատասխան, հարցը պետք եր այլ կերպ դնել. հարկավոր է ապացուցել արտադրական կապիտալիստական բարերությունների տևակայությունը Ռուսաստանում (վոչ թե «քայքայման անխուսափելիությունը» և այլն). հարկավոր է ապացուցել, վոր ռուսական ավյալներով էլ է արդարանում այն օրենքը, թե «ապրանքային տնտեսությունը կապիտալիստական տնտեսություն է», այսինքն թե մեզանում էլ ամենուրեք ապրանքային տնտեսությունը կապիտալիստականի է վերաճում. հարկավոր է ապացուցել վոր ամենուրեք իշխում են իրենց հյությամբ բուրժուական կարգերը, վոր այս դասակարգի տիրապետությունն է հենց և վոչ թե նարոդնիկական չարաբաստիկ «պատահականությունները» կամ թե «քաղաքականությունը» և այլն, վոր առաջ է բերում արտադրողի ապատադրումն արտադրության միջոցներից ու սրա ամենուրեք անտեսավարումը ուրիշի հաշվին։

Սրանով ավարտենք պ. Ստրուվեյի գրքի ընդհանուր քննության կրող առաջին մասի քննությունը։

III ԳԼՈՒԽ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԴՐՈՒՄԸ ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԻ ՈՒ Պ. ՍՏՐՈՒՎԵՅԻ ՄՈՏ

Սոցիոլոգիայի հարցը վերջացնելուց հետո հեղինակն անցնում է ավելի «կոնկրետ տնտեսական հարցերի» (73): Նա, ինչպես ասում է առաջաբանում, ընդամին «բնական» ու օրինական և համարում սկսել «ընդհանուր պրոբլեմներից ու պատմական տեղեկանքներից», «անվիճելի, համամարդկային փորձով սահմանված նախադրյալներից»:

*Չի կարելի չնկատել, որ այս յեղանակը մեղանչում է նույն վերացականության համար, որը հենց սկզբից նշվեց որպես վերլուծվող դրքի հիմնական թերություն: Այն գլուխներում, որոնց մենք այժմ անցնում ենք (յերրորդ, չորրորդ և հինգերորդ), այս թերությունը բերել և յերկու տեսակ անցանկալի հետևանքների: Մի կողմից՝ նա թուլացրել և թեորիական այն վորոշակի դրույթները, որ հեղինակը բերել և նարոդնիկների դեմ: Պ-ն Ստրուվեն դատում և քննադատում, նկարագրում և անցումը բնամթերքությունից ապրանքատնտեսության, մատնանշում և, որ աշխարհում մեծ մասամբ բանն ասա այսպես ու այսպես և յերեկ և միևնույն ժամանակ առանձին, թռուցիկ ցուցումներով անցնում և նաև Ռուսաստանին՝ սրա վրա ելատրածելով «ընտանեական կենցաղի պատմական զարգացման» ընդհանուր պրոցեսը: Անվիճելի յե, որ այսպիսի տարածումը միանգամայն օրինական է, և որ հեղինակի «պատմական տեղեկանքները» միանգամայն անհրաժեշտ են նարոդնիկության քննադատության համար, այն նարոդնիկության, որը միայն Ռուսաստանի պատմությունը չե, որ սխալ և պատկերացնում: Բայց հարկավոր եր այս դրույթներն արտահայտել ավելի կոնկրետ, դրանք ավելի վորոշակի հակադրել նարոդնիկների վաստաբկություններին, վորոնք ժխտում են ընդհանուր պրոցեսը Ռուսաստանի վրա տարածելու ճըշտությունը. հարկավոր եր ռուսական իրականության հենց այդպիսի ըմբռնումը, որ ունեն նարոդնիկները, զուգադրել միևնույն իրականության մյուս ըմբռնման հետ, որ ունեն մարքսիստները: Մյուս կողմից, հեղինակի դատողությունների վերացական բնույթի հետևանք և լինում նրա դրույթների թերասացությունը, այն, որ նա ճիշտ մատնանշելով այս-ինչ պրոցեսի առկայությունը՝ չի քննում, թե դրա հետ միասին ինչ դասակարգեր եյին զոյանում, թե ինչ դասակարգեր եյին հանդիսանում պրոցեսի կրողները՝ իրենցով ծածկելով բնակչության մյուս, իրենց յենթակա խավերը. մի խոսքով, հեղինակի որյեկտիվիզմն այստեղ չի հասնում մատերիալիզմի՝ այս տերմիններին վերոհիշյալ նշանակությամբ *:*

Պ-ն Ստրուվեյի յերկի մատնանշված գլուխների այսպիսի

---

* Որյեկտիվիզմի ու մատերիալիզմի այսպիսի հարաբերակցությունը, ի միջի այլոց, մատնանշել և Մարքսը իր «Der achtzehnte Brumaeir des Louis Bonapartes» յերկի առաջաբանում. Մարքսն ասում է, որ միևնույն պատմական դեպքի մասին գրել և Պրուդոնը [Coup d'état] և նրա տեսակետի մասին, ի հակադրություն իր տեսակետի, արտահայտվում է հետևյալ կերպով:

«Պրուդոնը, իր կողմից, ձգտում է պետական [դեկտեմբերի 2-ի] հեղաշրջումը ներկայացնել վորպես հետևանք պատմական նախընթաց զարգացման: Բայց պետական հեղաշրջման պատմական կառուցվածքը նրա մոտ վեր ածվում է այդ հեղաշրջման հերոսի պատմական չատագովության: Նա այդպիսով ընկնում է մեր, այսպես անվանած, որյեկտիվ պատմաբաններից սխալի մեջ: Ցես, ընդհակառակը, ցույց եմ տալիս, թե ինչպես դասակարգային կռիվը Ֆրանսիայում ստեղծեց պայմաններ ու հանգամանքներ, որոնք մի սովորական ու ծիծաղելի անձնավորության հնարավորություն տվին հերոսի դեր խաղալու» (Vorwort):

դնահատման ապացույցներ մենք խնդրեցինք՝ քննելով առանձին, ամենից ավելի կարևոր դրույթները։

Անչափ ճիշտ է նկատում հեղինակը, որ «ռուսական պատմության մեջ անմիջական արտադրողների «իրավական ու տնտեսական» կախումը տերերից մենք դիտում ենք գրեթե պատմության առաջին էջերից, որպես «ժողովրդական արտադրության» իդիլիայի պատմական ուղեկից» (81)։ Բնատնտեսության շրջանում գյուղացին ստրկացված էր հողատիրոջը, նա աշխատում էր միմիայն իր համար, այլ բոյարինի, վանքի, կալվածատիրոջ համար — և պ. Սորոկինն կատարյալ իրավամբ այս պատմական փաստը հակադրում է մեր ինքնատիպ սոցիոլոգների հերյուրանքներին այն մասին, թե ինչպես «արտադրության միջոցները պատկանում էին արտադրողին» (81)։ Այս հերյուրանքները մեկն են ռուսական պատմության այն խեղաթյուրումներից ի հաճույս մեղչանական ուտոպիայի, որոնցով մինչ այնքան առատաձեռն են եղել նարոդնիկները։ Վախենալով իրականության ուղիղ նայելուց, վախենալով այս հարատահարությունը իր իսկական անունով կոչելուց՝ նրանք գիմում էին պատմության՝ բանն այնպես պատկերելով, թե արտադրության միջոցների՝ արտադրողին պատկանելը եղել է գյուղացիական աշխատանքի «հնամենի» սկզբունքը, «դարավոր հիմքը» և թե գյուղացիության արդի եքսպլոատացիան այդ պատճառով բացատրվում է միմիայն նրանով, որ ֆեոդալական հավելյալ արդյունքին փոխարինում է բուրժուական դերաբժեքը, միմիայն թե մեր հնատարակական տնտեսության կապիտալիստական կազմակերպությամբ, այլ անհաջող քաղաքականության պատահականությամբ, ժամանակավոր «շեղումով այն ճանապարհից, որ նախագծված է ազգության պատմական ամբողջ կյանքով» (պ. Յուժակով, մեջբերումը կատարված է պ. Սորոկինից, եջ 15)։ Ցավ չեն առաջել այս անհեթեթ հեքիաթները պատմելու մի յերկրի

մասին, որտեղ միայն նորերս դադարեց* գյուղացիության ճորտատիրական շահագործումը ամենաբիրտ, ասիական ձևերով, յերբ միայն արտադրության միջոցները չեյին պատկանում արտադրողին, այլև իրենք՝ արտադրողները շատ քիչ էյին տարբերվում «արտադրության» որևե «միջոցից»։ Պ-ն Սորոկինն այս «քաղցրավուն ոպտիմիզմին» շատ դիպուկ հակադրում է Սալտըկովի խիստ կարծիքը «ժողովրդական արտադրության» ու ճորտային իրավունքի կապի մասին, այն մասին, թե ինչպես «դարավոր հիմքերի» դարաշրջանի «առատությունը»« բաժին էր ընկնում միայն [այս նկատեցեք] լեյբկամպանեցների ու այլ դրուժինիկների ժառանգներին» ** (83)։

Այնուհետև, նշենք պ. Սորոկինի հետևյալ դիտողությունը, որ պարզապես վերաբերում է ռուսական իրականության վրոշ փաստերին և չափազանց ճիշտ մի լուսաբանում։ «Յերբ արտադրողներն սկսում են աշխատել վճռ թե ուղղական, ճշտիվ սահմանագծված, այլ հեռավոր ու անորոշ շուկայի համար, և աճում և մրցումը, պայքարը շուկայի համար, ապա այս պայմանների հետևանք և լինում տեխնիկական պրոգրեսը... Գանի վոր հնարավոր և աշխատանքի բաժանումը, ապա այն պետք և կիրառվի, վորքան կարելի յե, լայնորեն, բայց արտադրության՝ տեխնիկական կողմից վերակազմվելուց առաջ փոխանակության (վաճառահանության) նոր պայմանների աղղեցությունը կարտահայտվի նրանով, վոր արտադրողը տնտեսական կախման մեջ կընկնի

* Նույնիսկ դեռ չի կարելի ասել, վոր վերջնականապես գաղարել է։ Մի կողմից մենք ունենք փրկանավճարները (իսկ հայտնի յե, վոր նրանց մեջ մտել և վճռ միայն հողի գինը, այլև ճորտային իրավունքի փրկանքը). մյուս կողմից, արևնակ, «հողատերերի համար գյուղացիների արած աշխատավճարումներում, վորոնք արտադրության ֆեոդալական յեղանակի ուղղակի մնացորդներ են։

** Լեյբկամպանեցներ Պրեոբրաժենսկի գնդի զինվորներն են, վորոնք դահ բարձրացրին Յելիզավետա Պետրոսյային, ինչի համար պարգևատրվեցին ազնվականի տիտղոսով ու կալվածներով։ Խմբ.։

վաճառականից (մեծագնորդից), և այս մոմենտը սոցիալական տեսակետից վճռական նշանակություն ունի։ Այս բանն աչքաթող են անում մեր այն «իսկական մարքսիստները», ինչպիսին է, որինակ, պ.վ. վ.-ն, որոնք շլացել են զուտ տեխնիկական պրոգրեսի նշանակությունից» (98)։ Մեծագնորդի յերևան գալու վճռորոշական նշանակությունն այս մասնանշումը խորապես ճիշտ է։ Նա վճռորոշական է այն տեսակետից, որ անալայման ապացուցում է արտադրության կապիտալիստական կազմակերպման առկայությունն արդեն, ապացուցում է, որ Ռուսաստանի վերաբերմամբ էլ կիրառելի չի այն դրույթը, թե «ապրանքային տնտեսությունը—դրամական տնտեսությունը—կապիտալիստական տնտեսություն է», ստեղծում է արտադրողի այն յենթարկումը կապիտալին, որից չի կարող լինել այլ յելք, քան արտադրողի ինքնագործունեության։ «Սկսած այն մոմենտից, յերբ ապառողի ու արտադրողի միջև կանգնում է կապիտալիստ-ձեռնարկուն,—իսկ այս անխուսափելի չի լայն ու անորոշ շուկայի համար արտադրելիս,—մենք մեր առջև ունենք կապիտալիստական արտադրության ձևերից մեկը»։ Յեվ հեղինակն իրավացիորեն ավելացնում է, որ «յերեք տնայնագործական արտադրություն ասելով հասկանանք այնպիսի մի արտադրություն, որի ժամանակ արտադրողն աշխատելով անորոշ ու հեռավոր շուկայի համար՝ ունենում է տեխնական կատարյալ իմիություն, այսպես դեպքս կգտնենք, որ այս իսկական մանufակտուրային արտադրությունը ռուսական իրականության մեջ բոլորովին բացակայում է»։ Միայն թե այստեղ դուբ է դործածված «թերևս» արտահայտությունն ու ապառնի ժամանակը. մեր մանufակտուրային արհեստագործության իրական կազմակերպության համառոտ ու գերակշռող փաստն այն է, որ նրա մեջ գերակշռում են խոշոր արտադրության տնային սիստեմն ու մանufակտուրների կատարյալ տիպացումը մեծագնորդներին։ Այս կազմակերպությունը վրչ միայն կապիտալիստական է,

այլ և, ըստ հեղինակի ճիշտ դիտողության, միաժամանակ մի կազմակերպություն է այս, որը «չափազանց ձեռնտու չի կապիտալիստների համար», որն ապահովում է նրանց համար հսկայական ոգուտներ, մսկալի ցածր աշխատավարձ և որը վերին աստիճանի դժվարացնում է բանվորների կազմակերպումն ու դարգացումը» (նշ 99—101)։ Չի կարելի չնշել, որ կապիտալիստական շահագործման գերիշխելու փաստը մեր տնայնագործական արհեստագործությունների մեջ շատ վաղուց է հայտնի, բայց նորոդնիկներն այս անտեսում են ամենից անպատկառ կերպով։ Նրանց հանդեսների ու լրագրերի գրեթե յուրաքանչյուր համարում, որտեղ խոսք է լինում այս առարկայի մասին, դուք կհանդիպեք այն արտահայտին, թե կառավարությունն «արհեստականորեն» թև է տալիս խոշոր կապիտալիզմին [որի ամբողջ «արհեստականությունն» այն է, որ նա խոշոր է և վոչ թե մանր, գործարանային է, և վոչ թե տնայնագործական, մեխանիկական է, և վոչ թե ձեռքով բանող] և վոչինչ չի անում «ժողովրդական արդյունաբերության կարիքների» համար։ Կատարյալ ակնթարթությամբ այստեղ դրսևորվում է սահմանափակությունը մանր բուրժուայի, որը պայքարում է մանր կապիտալի համար ընդդեմ խոշորի և համառորեն փակում է աչքերն անվիճելիորեն հաստատված այն փաստի հանդեպ, որ այդ «ժողովրդական» արդյունաբերության մեջ էլ կա շահերի նույնպիսի հակադրություն, և որը, հետևաբար, յելքը ժողովրդի վարկերն ու նման այլ միջոցները չեն։ Վորովհետև մանր տնտեսատիրոջը, որը կապած է իր տնտեսությունից և շարունակ վախենում է այն կորցնելուց, այս ամենը թվում է ինչ-որ նոսկալի բան, ինչ-որ «ագիտացիա» «աշխատանքի արդար վարձատրման մասին, կարծես թե ինքն աշխատանքը չէ, որ իր իսկ ապրուստների մեջ ստեղծում է այդ վարձատրությունը»,—ապա հասկանալի է, որ տնայնագործների աշխատավոր բազմության միակ ներկայացուցիչը կա-

րող է լինել միայն այն արտադրողը, որը կանգնած կա «ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության «արհեստական», «ջերմոցային» պայմաններում*։

Դարձյալ կանգ առնենք պ. Ստրուվեյի՝ յերկրագործության վերաբերյալ դատողությունների վրա։ Շոգեերանգորտն ստիպում է անցնելու փոխանակային անտեսության, նա դյուրատանեական արտադրությունը դարձնում է ապրանքային։ Իսկ արտադրության ապրանքային բնույթն անպայման պահանջում է, որ «նա տնտեսապես ու տեխնիկապես ռացիոնալ լինի» (110)։ Այս դրույթը հեղինակը համարում է առանձնապես կարևոր փաստարկություն նարոդնիկների դեմ, որոնք հաղթականորեն մատնանշում են խոշորարտադրության առավելությունների (իբր թե) ապացուցված չլինելը յերկրագործության մեջ։ «Ներանց, ովքեր հենվում են Մարքսի ուսմունքի վրա,—պատասխանում է հեղինակը նրանց,—վայել չէ ժխտել գյուղատնտեսական արտադրության տնտեսական ու տեխնիկական այն առանձնահատկությունների նշանակությունը, որոնց շնորհիվ մանր ձեռնարկությունները վորոշ դեպքերում ունեն տնտեսական առավելություններ խոշորների վերաբերմամբ,—թեկուզ հենց Մարքսն ինքը ժխտած լիներ այդ առանձնահատկությունների նշանակությունը» (111)։ Շատ մութ տեղ է այս։ Այս ինչ առանձնահատկությունների մասին է խոսում հեղինակը։ Ինչո՞ւ նա չի մատնանշում դրանք։ Ինչու՞ չի մատնանշում, թե վորտեղ և ինչպես է այս մասին իր կարծիքը հայտնել Մարքսը, և ինչ հիմունքներով համարվում է համարվում ուղղել այս կարծիքը։

«Յերկրագործական մանր արտադրությունը,—շարունակում է հեղինակը,—ավելի ու ավելի պետք է ստանա ապրանքային բնույթ, և յերկրագործական մանր տնտեսու-

* «Ամբողջ պրոցեսն արտահայտվում է նրանով, որ մանր արտադրությունը (արհեստը) իր միջոցի տարբերով մոտենում է «կապիտալիզմին», իսկ մյուս տարբերով՝ վարձու աշխատանքին, վորն ազատ է արտադրության միջոցներից» (էջ 104)։

թյունները, վորպեսզի դառնան կենսունակ ձեռնարկություններ, պետք է բավարարեն տնտեսական ու տեխնիկական ռացիոնալության ընդհանուր պահանջներին» (111)։ «Բայց այն չէ ամենևին, թե արդյոք յերկրագործական մանր ձեռնարկությունները կուլ կգնան խոշորներին,—հարկավ թե կարելի չէ տնտեսական ևվոլուցիայի այսպիսի վարկյան ասել,—այլ այն փոխակերպությունն է, վորին յենթարկվում է ամբողջ ժողովրդական տնտեսությունը փոխանակության ազդեցության տակ։ Նարոդնիկները աչքաթող են անում, վոր փոխանակային տնտեսության կողմից բնատնտեսության արտամղվելը, վերևում հավաստված «արդյունաբերության տարածման» կապակցությամբ, կատարելապես փոխում է հասարակության ամբողջ կառուցվածքը։ Նախկին հարաբերությունը, վոր կար յերկրագործական (գյուղական) ու վոչ-յերկրագործական (քաղաքային) բնակչության մեջ, խախտվում է հոդուտ վերջինի։ Գյուղատնտեսական արտադրողների տնտեսական տիպն ու հոգեկան կազմվածքն իսկ արմատապես փոխվում է տնտեսական կյանքի նոր պայմանների ազդեցության տակ» (114)։

Մեջբերված հատվածը մեզ պարզաբանում է, թե հեղինակին ինչ է ուզել ասել Մարքսի վերաբերյալ իր տիրապետվող, և միաժամանակ ակնառու լուսաբանում է վերևում արված այն դիտողությունը, թե շարադրանքի դոգմատիկ յեղանակը, վոր չի հենված կոնկրետ պրոցեսը պատկերելու վրա, մթագնում և հեղինակի մտքերը և նրանց թողնում են թերի տված։ Նրա դրույթը նարոդնիկական հայացքների սխալ լինելու մասին միանգամայն ճիշտ է, բայց թերի յե, վորովհետև չի ընթացակցվում դասակարգային հակամարտության այն նոր ձևերի մատնանշումով, վորոնք զարգացնում են անռացիոնալ արտադրությունը ռացիոնալ արտադրությամբ փոխարինելիս։ Հեղինակն, որինակ, սահմանափակվում է թռուցիկ հիշատակությամբ, թե «անտեսական ռացիոնալությունը» նշանակում է «ամենաբարձր ռենտա»

(110), բայց մոռանում է ավելացնել, որ ռեցեսը յենթադրում է յերկրագործության բուրժուական կազմակերպություն, այսինքն, առաջինը, նրա կատարյալ յենթարկումը շուկային, և, յերկրորդը, յերկրագործության մեջ բուրժուազիայի ու պրոլետարիատի նույնպիսի դասակարգերի գոյացումը, որոնք հատուկ են նաև կապիտալիստական ինդուստրիային։

Նարոդնիկները դատելով մեր յերկրագործության իբր թե վոչ-կապիտալիստական կազմակերպության մասին, հարցը սոսկալի նեղ ու սխալ են դնում՝ ամեն ինչ վերածելով մանրը տնտեսությունների՝ խոշորների կողմից արտամղվելուն և ուրիշ վոչինչ։ Պ-ն Սարուխանն միանգամայն իրավացի յե ասում նրանց, որը այսպես դատելով նրանք աչքաթող են անում յերկրագործական արտադրության ընդհանուր բնույթը, որը մանր արտադրության ժամանակ ել կարող է լինել (և մեզանում իսկապես հենց է) բուրժուական, ինչպես բուրժուական և արևմտա-յեվրոպական գյուղացիների տնտեսությունը։ Հայտնի յեն այն պայմանները, որոնց մեջ ինքնուրույն մանր տնտեսությունը («ժողովրդական տնտեսությունը»,—Ռուսաստանի ինտելիգենցիայի տերմինոլոգիայով) դառնում է բուրժուական. առաջինը, ապրանքային տնտեսության տիրապետությունն է և այդ, որը արտադրողների մենաշնորհման* պայմաններում նրանց մեջ առաջ է բերում մրցում և մասսան տնտեսազրկելով՝ հարստացնում է քչերին. յերկրորդ, աշխատանքային ուժն ապրանք ու արտադրության միջոցները կապիտալ դարձնելն է և այդ, այսինքն, արտադրողի ազատվելը արտադրության միջոցներից ու արդյունաբերության կարևորագույն ճյուղերի և կապիտալիստական կազմակերպությունը։ Ինքնուրույն մանր արտադրողն

* Հասկանալի յե, որ խոսքը ցեխական մենաշնորհման մասին է։ Համայնական հողատիրությունն ամենևին ել չի վերացնում այդ մենաշնորհումը։ Ամենից «հավասարարար» վերաբաժանումների ժամանակ գյուղացին միևնույն է տնտեսավարում իր հողաչիրի վրա, հետևաբար նա մենաշնորհված, առանձնացած արտադրող է։

այս պայմաններում բացառիկ դրության մեջ է դրվում արտադրողների մասսայի վերաբերմամբ,—ինչպես հենց սկզբում խոսվեց իմենուրույն տնտեսատերերն այժմ բացառության են կազմում մասսայի մեջ, որն աշխատում է ուրիշի հաշվին և որը վոչ միայն «ինքնուրույն» տնտեսություն չունի, այլ նույնիսկ ապրուստի միջոցներ ել չունի մի շաբաթվա համար։ Ինքնուրույն տնտեսատիրոջ դրությունն ու շահերը նրան առանձնացնում են այն արտադրողների մասսայից, որոնք ապրում են գլխավորապես աշխատավարձով. Մինչդեռ վերջիններն առաջ են քաշում «արդար վարձատրության» հարցը, որն անհրաժեշտորեն հանդիսանում է հասարակական տնտեսությունն այլ յեղանակով կազմակերպելու հիմնական հարցի նախադուռը,—առաջինին ավելի վաղ հետաքրքրում է բոլորովին այլ բան—վարկն ու մանավանդ մանր «ժողովրդական» վարկը, կատարելագործված եժանացված գործիքները, «վաճառահանման» կազմակերպումը, «հողատիրության ընդարձակումը» և այլն։

Խոշոր տնտեսությունների՝ մանրերի վերաբերմամբ ունեցած առավելության բուն որինքը միայն ապրանքային արտադրության որենք է և, հետևաբար, չի կարող կիրառվել այն տնտեսությունների նկատմամբ, որոնք դեռ վերջնականապես ներս չեն քաշված ապրանքային արտադրության մեջ և չեն յենթարկված շուկային։ Այս պատճառով այնպիսի փաստարկումը (որի մեջ, ի միջի այլոց, վարժվել է նաև պ. վ. վ.-ն), թե ռեֆորմից հետո աղնվական տնտեսությունների անկումն ու մասնատիրական հողերի՝ գյուղացիների կողմից վարձակալվելը հերքում է մեր յերկրագործության կապիտալիստական հեղափոխության ժամին յեղած կարծիքը,—այս փաստարկումը ցույց է տալիս միայն այն, որ նրան դիմողները կատարելապես չեն ըմբռնում բանի էությունը։ Հասկանալի յե, որ ճորտատիրական հարաբերությունների վոչնչացումը, որոնց ժամանակ մշակույթը գտնվում եր գյուղացիների ձեռքում, առաջ բերեց կալվածատերերի ճգնա-

ժամ։ Բայց դեռ չխոսելով այն մասին, վոր այս հզնաժամի հետևանքը յեղավ բատրակների ու որամշակների աշխատանքի ավելի ու ավելի մեծ չափերով կիրառումը, վորը փոխարինեց կիսաֆեոդալական աշխատանքի մեհնող ձևերին (աշխատավճարումների համար),—չխոսելով դեռ այս մասին՝ բուն իսկ դյուղացիական տնտեսությունն սկսեց ենթակա փոխել իր բնույթը. նա հարկադրված յեղավ աշխատելու շուկայի համար, մի հանդամանք, վորը և չհապաղեց դյուղացիությունը պառակտելու դյուղական մանր բուրժուազիայի ու դյուղական պրոլետարիատի։ Այս յերկճեղքումը վերջնականապես լուծում և կապիտալիզմի հարցը Ռուսաստանում։ Պ-ն Սարուվին մատնանշված պրոցեսը պարզաբանում և V գլխում, վորտեղ նա նկատում է. «Մանր յերկրագործը դիֆերենցիացիայի յև յենթարկվում. դարդանում և, մի կողմից «տնտեսապես ամուր» դյուղացիությունը [պետք եր ասել բուրժուականը], մյուս կողմից՝ պրոլետարական տիպի դյուղացիությունը։ Ժողովրդական արտադրության գծերը միանում են կապիտալիստական գծերի հետ և կազմում մի պատկեր, վորի վրա պարզորոշ խորտրված և «զոռբան և գախ» (177)։

Հարկավոր և ուշադրությունը դարձնել գործի անա հենց այս կողմի վրա, նոր, «ռացիոնալ» յերկրագործության բուրժուական կազմակերպության վրա։ Հարկավոր եր նարոդնիկներին ցույց տալ, վոր անտեսելով մատնանշված պրոցեսը՝ նրանք դյուղացիության իդեոլոգ լինելուց փոխարկվում են մանր բուրժուազիայի իդեոլոգներ։ «Ժողովրդական արտադրության բարձրացումը», վորին նրանք վերապրում են դյուղացիական տնտեսության այսպիսի կազմակերպման ժամանակ կարող և նշանակել միմիայն մանր բուրժուազիայի «բարձրացում»։ Ընդհակառակը, նրանք, ովքեր մատնանշում են կապիտալիստական ամենից ավելի զարգացած հարաբերություններում ապրող արտադրողին, ճիշտ են արտահայտում վոչ միայն այդ արտադրողի, այլև «պրոլետարական» դյուղացիության հակայական ամբողջ մասսայի շահերը։

Պ-ն Սարուվեյի շարադրանքի անբավարար լինելը, նրա կիսատությունն ու թերասածությունն այն բանին են հասցրել, վոր խոսելով ռացիոնալ յերկրագործության մասին՝ նա չի բնութագրել նրա հասարակա-տնտեսական կազմակերպությունը,—վոր ցույց տալով, թե ինչպես շոգետրանսպորտն անուսցիոնալ արտադրությունը փոխարինում և ռացիոնալ արտադրությամբ, բնատնտեսությունն՝ ապրանքային տնտեսությամբ, նա չի բնութագրել դասակարգային հակամարտության այն նոր ձևը, վոր գոյանում և այդ ժամանակ։

Հարցերի դրման հենց այս թերությունը քննարկվող գլուխներում արտահայտվում և դատողությունների մեծագույն մասի մեջ։ Նկարագարդելու համար մի քանի որինակ ևս կբերեմ։ Ապրանքատնտեսությունը,—ասում և հեղինակը,—և աշխատանքի լայն հասարակական բաժանումը «զորգա—նում են՝ հենվելով մանրավոր սեփականության ինստիտուտի, տնտեսական ապատության սկզբունքների ու անհատականության ղեցմունքի վրա» (91)։ Աղգային արտադրությանը կապված և «մանրավոր սեփականության պրոցեսը կապված՝ հասարակության վրա ունեցած իշխանության չափի» հետ։ «Դուրս այս յուրաքանչյուր յև, բայց բանն այսպես և կատարվում իրականության մեջ, այս՝ եմպիրիկորեն, պատմականորեն հաստատված գոյակցություն և։ Ներկայումս, մանավանդ XVIII յերբ այնպիսի թեթևամտությամբ արհամարհվում են դարի գաղափարներն ու սկզբունքները, ընդ վորում և յապես վերկնվում և հենց նույն դարի սխալը,—շատ հաճախ տեսնում ենք տրվում տնտեսական պրոցեսի այս կողմնորոշության և տրվում տնտեսական պրոցեսի այս կողմնորոշության և տրվում տնտեսական պրոցեսի այս կողմնորոշության և

պրոգրես ունենալ տնտեսապես ու կուլտուրապես անպարզագոյած հասարակութիւնը։ Մենք առանձին համակրանք չենք տածում դեպի այս սկզբունքները և շատ լավ ենք հասկանում նրանց պատմականորեն անցողիկ բնութիւնը, բայց և միևնոյն ժամանակ չենք կարող նրանց մեջ չտեսնել կուլտուրական հնկայական ուժ, վոչ միայն բացասական, այլ և դրական ուժ։ Այն կարող և չտեսնել միմիայն իդեալիզմը, վորը կարծում է, թե իր կառուցումներում կաշկանդված չէ վոչ մի պատմական հանգրդականութեամբ» (91)։

Հեղինակը միանդամայն իրավացի չէ «պատմական գոյակցութիւնների» իր «որլեհիով» հավատամքի մեջ, բայց ել ավելի ափսոսանք և հարուցում նրա փաստարկման թեթևամտութիւնը։ Հենց ուղում ես ասել հեղինակին՝ դե, մինչև վերջն ասեք-պրծնեք, այս ընդհանուր դրույթներն ու պատմական տեղեկանքները մոտեցրեք մեր ռուսական պատմութեան վորոշ ժամանակաշրջանին, նրանք այնպես ձևակերպեցեք, վոր ցույց տաք, թե ինչու և ինչ բանում ձեր բմբռնումը տարբերվում և նարոդնիկականից, նրանք դուգադրեցեք այն իրականութեան հետ, վորը չափանիշ պետք և ծառայի ռուսական մարքսիստի համար, ցույց տվեք այս բոլոր պրոգրեսների ու մշակութիների թաղցրած դասակարդային հակասութիւնները*։

Այն «պրոգրեսն» ու այն «կուլտուրան», վոր իր հետ բերեց հետռեֆորմյան Ռուսաստանը, անկասկած կապված են «մասնավոր սեփականութեան ինստիտուտի» հետ.— այդ ինստիտուտը առաջին անգամ ամենայն լիակատարութեամբ մենակ հո չկիրառվեց քաղաքացիական «մրցակցական» նոր

* Contra principia negantem disputari non potest (հիմնական դրույթները ժխտողի դեմ վիճել անկարելի է։— Ռուս. նրաս. խմբ.)— ասում և հեղինակը նարոդնիկների հետ կեղած վեճի մասին։ Այս կախված և նրանից, թե ինչպես պետք է ձևակերպել այդ principia,— արդյոք վորպես ընդհանուր դրույթներ ու տեղեկանքներ, թե վորպես ռուսական պատմության ու իրականության այս-ինչ իրողություններին այլ ըմբռնումը

պրոցեսի ստեղծումով, վորն ապահովեց նույնպիսի «հավատարութիւն» դատարանում, վորը կյանքում ծաղկանում էր իբրև «ազատ աշխատանք» և իբրև նրա վաճառք կապիտալին. այդ ինստիտուտը տարածվեց ինչպես պետական բոլոր պարհակներից և պարտավորութիւններից ազատված կալվածատերերի, այնպես ել այն դյուղացիների հողատերութեան վրա, վորոնք դարձել էին սեփականատեր դյուղացիներ. այդ ինստիտուտը դրվեց մինչև անգամ «քաղաքացիների» տեղական ինքնավարութեանը մասնակցելու (ցենզ) քաղաքական իրավունքների հիմքում և այլն։ Ավելի ևս անկասկած է մեր «պրոգրեսի» «կապը» «տնտեսական ազատութեան սկզբունքների» հետ. մենք արդեն լսեցինք I գլխում մեր նարոդնիկից, թե ինչպես այդ «ազատութիւնն» այն եր, վոր ռուսական յերկրի «հասեստ ու մորուքաժոր» հավաքիչներն ազատագրվում էին «վոստիկանական փոքրիկ պաշտոնյայի առաջ խոնարհվելու» անհրաժեշտութենից։ Մենք արդեն խոսեցինք այն մասին, թե ինչպես «անհատականութեան դգացմունքն» ստեղծվում եր ապրանքատնտեսութեան դարգացմամբ։ Ի մի ամփոփելով հայրենական պրոցեսի այս բոլոր գծերը՝ չի կարելի չգալ այն յեդրակացութեան (վոր արել է նաև 70-ական թվականների նարոդնիկը), վոր այդ պրոգրեսն ու կուլտուրան ամբողջապես բուրժուական են յեղել։ Արդի Ռուսաստանն անհամեմատ լավ է մինչռեֆորմյան Ռուսաստանից, բայց վորովհետև այդ բովանդակ բարելավումն ամբողջապես ու բացառապես բուրժուազիայի, նրա ագենտների և իդեոլոգների արածն է, ուստի և արտադրողները նրանից չդգվեցին ել։ Նրանց համար այդ բարելավումները նշանակում էին հավելյալ արդյունքի ձևի փոփոխութեան միայն, նշանակում էին արտադրողին արտադրութեան մեջոցներից ազատագրելու բարելավված ու կատարելագործված յեղանակներ միայն։ Այս պատճառով ալ. ալ. նարոդնիկները ցուցադրում են ամենաանհավատալի «թեթևամտութիւն» ու մոռացկոտութիւն, յերբ

պրոգրես ունենալ տնտեսապես ու կուլտուրապես անպարզացած հասարակություն։ Մենք առանձին համակրանք չենք տածում դեպի այս սկզբունքները և շատ լավ ենք հասկանում նրանց պատմականորեն անցողիկ բնույթը, բայց և միևնույն ժամանակ չենք կարող նրանց մեջ չտեսնել կուլտուրական հնձայական ուժ, ոչ միայն բացատական, այլ և դրական ուժ։ Այն կարող է չտեսնել միմիայն իդեալիզմը, որը կարծում է, թե իր կառուցումներում կաշկանդված չի ոչ մի պատմական հաջորդականությամբ» (91)։

Հեղինակը միանդամայն իրավացի չի «պատմական դասակցությունների» իր «օրյեկտիվ» հավատման մեջ, բայց նրա ավելի ափսոսանք և հարուցում նրա փաստարկման թեթևամտությունը։ Հենց ուղում եմ ասել հեղինակին՝ դե, մինչև վերջն ասեք-պրծեք, այս ընդհանուր դրույթներն ու պատմական տեղեկանքները մոտեցրեք մեր ռուսական պատմության վորոշ ժամանակաշրջանին, նրանք այնպես ձևակերպեցեք, վոր ցույց տաք, թե ինչու և ինչ բանում ձեր բռնումը տարբերվում և նարոդնիկականից, նրանք դուրս դրեցեք այն իրականության հետ, վորը չափանիշ պետք է ծառայի ռուսական մարքսիստի համար, ցույց տվեք այս բոլոր պրոգրեսների ու մշակույթների թաղցրած դասակարգային հակասությունները*։

Այն «պրոգրեսն» ու այն «կուլտուրան», վոր իր հետ բերեց հետռեֆորմյան Ռուսաստանը, անկասկած կապված են «մասնավոր սեփականության ինստիտուտի» հետ.—այդ ինստիտուտը առաջին անգամ ամենայն լիակատարությամբ մենակ հո չկիրառվեց քաղաքացիական «մրցակցական» նոր

* Contra principia negantem disputari non potest (հիմնական դրույթները ժխտողի դեմ վիճել անկարելի է։—Ռաւս. նրաս. խմբ.)—ասում է հեղինակը նարոդնիկների հետ կեցած վեճի մասին։ Այս կոթված և նրանից, թե ինչպես պետք է ձևակերպել այդ principia,—արդյոք վորպես քննհանուր դրույթներ ու տեղեկանքներ, թե վորպես ռուսական պատմության ու իրականության այս-ինչ իրողությունների տյլ ըմբռնում։

պրոցեսի ստեղծումով, վորն ապահովեց նույնպիսի «հավասարություն» դասարանում, վորը կյանքում մարմնանում էր իբրև «ազատ աշխատանք» և իբրև նրա վաճառք կապիտալին. այդ ինստիտուտը տարածվեց ինչպես պետական բոլոր պարհակներից և պարտավորություններից ազատված կալվածատերերի, այնպես էլ այն գյուղացիների հողատիրության վրա, վորոնք դարձել էին սեփականատեր գյուղացիներ. այդ ինստիտուտը դրվեց մինչև անգամ «քաղաքացիների»՝ տեղական ինքնավարության մասնակցելու (ցենզ) քաղաքական իրավունքների հիմքում և այլն։ Ավելի ևս անկասկած է մեր «պրոգրեսի» «կապը» «տնտեսական ազատության սկզբունքների» հետ. մենք արդեն լսեցինք I գլխում մեր նարոդնիկից, թե ինչպես այդ «ազատությունն» այն էր, վոր ռուսական յերկրի «համեստ ու մորուքավոր» հավաքիչներն ազատագրվում էին «վոստիկանական փոքրիկ պաշտոնյայի առաջ խոնարհվելու» անհրաժեշտությունից։ Մենք արդեն խոսեցինք այն մասին, թե ինչպես «անհատականության ղեպցմունքն» ստեղծվում էր ապրանքատնտեսության զարգացմամբ։ Ի մի ամփոփելով հայրենական պրոգրեսի այս բոլոր գծերը՝ չի կարելի չգալ այն յեզրակացության (վոր արել է նաև 70-ական թվականների նարոդնիկը), վոր այդ պրոգրեսն ու կուլտուրան ամբողջապես բուրժուական են յեղել։ Արդի Ռուսաստանն անհամեմատ լավ և մինչռեֆորմյան Ռուսաստանից, բայց վորովհետև այդ բուվանդակ բարելավումն ամբողջապես ու բացառապես բուրժուազիայի, նրա ագենտների և իդեոլոգների արածն է, ուստի և արտադրողները նրանից չոգտվեցին էլ։ Նրանց համար այդ բարելավումները նշանակում էին հավելյալ արդյունքի ձևի փոփոխություն միայն, նշանակում էին արտադրողին արտադրության մյջոցներից ազատագրելու բարելավված ու կատարելագործված յեղանակներ միայն։ Այս պատճառով պ. պ. նարոդնիկները ցուցադրում են ամենահամակրելի «թեթևամտություն» ու մոռացկոտություն, յերբ

ռուս կապիտալիզմի ու բուրժուականության դեմ ուղղած բողոքով դիմում են նրանց, ովքեր հենց յեղել են գրանց կրողներն ու հաղորդիչները։ Հենց նրանց մասին է, որ կարելի յե ասել՝ «իւրքն զիւրան ոչ ծանեան»։

Արդի նարոդնիկի ուժերից վեր կլինի համաձայնել հատուկ ռեֆորմյան Ռուսաստանի ու «հասարակության» այսպիսի վորակման հետ։ Իսկ այս վիճարկելու համար՝ նա հարկադրված կլիներ ժխտելու հետռեֆորմյան Ռուսաստանի բուրժուական բնույթը, ժխտելու հենց այն, հանուն-ինչի ընդվզում եր նրա հեռավոր նախնին, 70-ական թվականների նարոդնիկը, և «գնում եր ժողովրդի մեջ» հենց իրենց, անմիջական արտադրողների մոտ՝ ապագայի յերաշխիքները վորոնելու։ Իհարկե, արդի նարոդնիկը, մեկ ել տեսար, վոչ միայն սիրտ կանի ժխտելու այդ, այլև. թերևս, կսկսի ապացուցել, թե քննարկվող տեսակետից փոխհարաբերություն և տեղի ունենալ դեպի լավը, բայց սրանով նա միայն ցույց կտան բոլոր նրանց, ովքեր այդ դեռ չեն տեսնում, թե նա իրենից վրճռապես վոչինչ ավելին չի ներկայացնում, քան մի ամենասովորական, փոքրիկ բուրժուա։

Ինչպես տեսնում է ընթերցողը, ես սահմանված եմ մինչև վերջը հասցնել պ. Սորուվեյի դրույթները, սակայն նրանց այլ ձևակերպում, — «արտասանել նույն խոսքը, բայց այլ կերպ»։ Հարց է ծագում՝ կարիք կա արդյոք այս անելու։ Արժե՞ արդյոք այդպիսի մանրամասնության կանգ առնել այս լրացումների և յեզրակացությունների վրա։ Արդյոք նրանք ինքնին հասկանալի չե՞ն։

Ինձ թվում է՝ արժե, յերկու պատճառով։ Առաջինը, հետևինակի նեղ օբյեկտիվիզմը չափազանց վատնգավոր է, վորովհետև նա հանդում է այն սահմանների մոռացմանը, վոր կան հայեցակետի ուղիների ու վիճակի մասին մեր գրականության մեջ այնպես արմատացած պրոֆեսորական հին դատողություններն և վորոշ դասակարգերի առաջ ժողովրդական պրոցեսի հիշատ ընորոշման մեջ։ Այս նեղ օբյեկտիվիզմը, մարքսիզմն այդպես անհետևողականորեն կիրառելը պ. Սորուվեյի գրքի հիմնական թերությունն է, և դրա վրա անհրաժեշտ է առանձնապես մանրամասն կանգ առնել, վորպեսզի ցույց տանք, վոր այդ բղխում է վոչ թե մարքսիզմից, այլ նրա անբավարար կիրառումից, վոչ թե նրանից, վոր հեղինակն իր թեորիայի համար տեսներ այլ չափանիշներ, քան իրականությունը, վոր նա դոկտրինայից աներ գործնական այլ յեզրակացություններ (ներանք, կրկնում եմ, անհնարին են առանց խեղելու այդ թեորիայի բոլոր ամենակարևոր դրույթները), այլ նրանից է, վոր հեղինակը սահմանափակվել է թեորիայի մեկ, ամենից ընդհանուր կողմով և այն չի կիրառել լիակատար հետևողականությամբ։ Յերկրորդ, չի կարելի չհամաձայնել այն մտքի հետ, վոր հեղինակն արտահայտել է առաջաբանում, թե նարոդնիկությունը մասնավոր հարցերում քննադատելուց առաջ անհրաժեշտ եր «տարաձայնության բուն հիմքերը բաց անել» (VII) «սկզբունքային բանակռվի» միջոցով։ Բայց վորպեսզի հեղինակի այս նպատակը չերազործված չմնա, հենց անհրաժեշտ է ավելի կոնկրետ իմաստ հաղորդել նրա գրեթե բոլոր դրույթներին, անհրաժեշտ է նրա չափազանց ընդհանուր ցուցումները հանդեցնել ռուսական պատմության ու իրականության կոնկրետ հարցերին։ Ռուսական մարքսիստներն այս բոլոր հարցերի շուրջը դեռ մեծ աշխատանք ունեն կատարելու, — նրանք պետք է «վերանայեն վաստերը» մանրիալիստական տեսակետից, — «ինտելիգենցիայի» թեորիաների հետևում գտնեն և հայտնագործեն «հասարակության» ու «պետության» գործունեության մեջ յեղած դասակարգային հակասությունները, — վերջապես նրանք պետք է աշխատեն, վոր կապ հաստատվի հավելյալ արդյունքի յուրացման այն բոլոր առանձին, անհունորեն բազմազան ձևերի մեջ, վորոնք գոյություն ունեն Ռուսաստանի «ժողովրդական» արտադրություններում, և այս յուրացման այն ռուսական ամենազարգացած կապիտալիստական ձևի մեջ, վորն

ռուս կապիտալիզմի ու բուրժուականության դեմ ուղղած բողոքով դիմում են նրանց, ովքեր հենց յեղել են պրանց կրողներն ու հաղորդիչները։ Հենց նրանց մասին է, որ կարելի յե ասել՝ «իւրքն զիւրան ոչ ծանեան»։

Արդի նարոդնիկի ուժերից վեր կլինի համաձայնել հատուկ ֆոլքլոյան Ռուսաստանի ու «հասարակության» այսպիսի վորակման հետ։ Իսկ այս վիճարկելու համար՝ նա հարկադրված կլիներ ժխտելու հետևեֆորմյան Ռուսաստանի բուրժուական բնույթը, ժխտելու հենց այն, հանուն ինչի ընդվզում եր նրա հետևավոր նախնին, 70-ական թվականների նարոդնիկը, և «գնում եր ժողովրդի մեջ» հենց իրենց, անմիջական արտադրողների մոտ՝ ապագայի յերաշխիքները վորոնելու։ Իհարկե, արդի նարոդնիկը, մեկ ել տեսար, վրչ միայն սիրտ կանի ժխտելու այդ, այլև. թերևս, կսկսի ապացուցել, թե քննարկվող տեսակետից վոսկոխություն և տեղի ունեցել դեպի լավը, բայց սրանով նա միայն ցույց կտված կլիներ բոլոր նրանց, ովքեր այդ դեռ չեն տեսնում, թե նա իրենից վրճռական վոչինչ ավելին չի ներկայացնում, քան մի ամենասովորական, փոքրիկ բուրժուա։

Ինչպես տեսնում է ընթերցողը, յես սահմանված եմ մինչև վերջը հասցնել պ. Սարուվեյի դրույթները, սակ նրանց այլ ձևակերպում, — «արտասանել նույն խոսքը, բայց այլ կերպ»։ Հարց է ծագում՝ կարիք կա արդյոք այս անելու։ Արժե՞ արդյոք այդպիսի մանրամասնությամբ կանգ առնել այս լրացումների և յեզրակացությունների վրա։ Արդյոք նրանք ինքնին հասկանալի չե՞ն։

Ինձ թվում է՝ արժե, յերկու պատճառով։ Առաջինը, հետինակի նեղ օբյեկտիվիզմը չափազանց վատնգավոր է, վորովհետև նա հանում է այն սահմանների մոտացմանը, վոր կան հայրենիքի ուղիների ու վիճակի մասին մեր գրականության մեջ այնպես արմատացած պրոֆեսորական հին դատողությունների և վորոշ գաղափարների առաջ մղած իրական պրոցեսի ճիշտ բնորոշման միջև։ Այս նեղ օբյեկտիվիզմը, մարքսիզմն այդպես անհետևողականորեն կիրառելը պ. Սարուվեյի գրքի հիմնական թերությունն է, և դրա վրա անհրաժեշտ է առանձնապես մանրամասն կանգ առնել, վորպեսզի ցույց տանք, վոր այդ բղխում է վրչ թե մարքսիզմից, այլ նրա անբավարար կիրառումից, վրչ թե նրանից, վոր հեղինակն իր թեորիայի համար տեսներ այլ չափանիշներ, քան իրականությունը, վոր նա դոկտրինայից աներ գործնական այլ յեզրակացություններ (նրանք, կրկնում եմ, անհնարին են առանց խեղելու այդ թեորիայի բոլոր ամենագլխավոր դրույթները), այլ նրանից է, վոր հեղինակը սահմանափակվել է թեորիայի մեկ, ամենից ընդհանուր կողմով և այն չի կիրառել լիակատար հետևողականությամբ։ Յերկրորդ, չի կարելի չհամաձայնել այն մտքի հետ, վոր հեղինակն արտահայտել է առաջաբանում, թե նարոդնիկությունը մասնավոր հարցերում քննադատելուց առաջ անհրաժեշտ եր «տարաձայնության բուն հիմքերը բաց անել» (VII) «սկզբունքային բանակռվի» միջոցով։ Բայց վորպեսզի հեղինակի այս նպատակը չերազործված չմնա, հենց անհրաժեշտ է ավելի կոնկրետ իմաստ հաղորդել նրա գրեթե բոլոր դրույթներին, անհրաժեշտ է նրա չափազանց ընդհանուր ցուցումները հանդեցնել ռուսական պատմության ու իրականության կոնկրետ հարցերին։ Ռուսական մարքսիստներն այս բոլոր հարցերի շուրջը դեռ մեծ աշխատանք ունեն կատարելու, — նրանք պետք է «վերանայեն փաստերը» մանրիթերիալիստական տեսակետից, — «ինտելիգենցիայի» թեորիաների հետևում դտնեն և հայտնադործեն «հասարակության» ու «պետության» գործունեության մեջ յեղած դասակարգային հակասությունները, — վերջապես նրանք պետք է աշխատեն, վոր կապ հաստատվի հավելյալ արդյունքի յերկրորդական այն բոլոր առանձին, անհունորեն բազմազան ձևերի միջև, վորոնք գոյություն ունեն Ռուսաստանի «ժողովրդական» արտադրությունների, և այս յերկրորդական այն առանձնավոր ամենազարդացած կապիտալիստական ձևի միջև, վորն

լոր մեջ պարունակում է «ապագայի յերաշխիքները» և ներկայումս առաջին դծի վրա յե մղում «արտադրողի» դաստիարակն ու պատմական անելիքը։ Ուստի և, վորքան էլ հարմարձակ թվա այդ հարցերի լուծումը մատնանշելու փորձը, վորքան և փոփոխություններ, ուղղումներ բերի հետագա, մանրամասն ուսումնասիրությունը, — այնուամենայնիվ, արժե աշխատանք թափել՝ նշելու կանկրետ հարցերը, վորպեսզի այս հարցերի ըստ կարելույն ավելի ընդհանուր ու լայն քննարկումն առաջ բերենք։

Գ-ն Սարուխանի այն նեղ որյեկտիվիզմի դատապարտելը, վորը նրա գրքում հարցերի դրման անճշտություն է առաջ բերում, նրա դատողությունն և Լիստի մասին, նրա այն «նշանավոր ուսմունքի» մասին, վոր վերաբերում է «ազգային արտադրողական ուժերի կոնֆեդերացիային», այն կարևորության մասին, վոր դյուզտանոնոսության համար ունի գործարանային արդյունաբերության զարգացումը, մանուֆակտուրային-յերկրագործական պետության՝ յերկրագործական պետությունից գերազանց լինելու մասին և այլն։ Հեղինակը դառնում է, վոր այս «ուսմունքը» չափազանց «համոզիչ կերպով խոսում է և լայն ըմբռնումով վերցրած կապիտալիզմի պատմական անխուսափելիության ու օրինականության մասին» (123), «հաղթանակող ապրանքարտադրության կուլտուր-պատմական հզորության մասին» (124)։

Այստեղ առանձնապես ակնառու յե արտահայտվում հեղինակի դատողությունների պրոֆեսորական բնույթը, հեղինակի, վորը կարծես թե բարձր և կանգնում ամեն տեսակի վորոշ յերկիրներից, պատմական վորոշ ժամանակաշրջաններից, վորոշ դասակարգերից։ Ինչպես ել վոր նայելու լինենք այս դատողությանը,—դուռ թեորիական թե գործնական կողմերից,—հավասարապես ճիշտ կլինի այսպիսի դատաստանը։ Սկսենք առաջին կողմից։ Արդյոք տարբերնակ չե կարծել, թե գործարանային արդյունաբերության նշանակության վերաբերյալ վերացական, դոգմատիկ դրույթ-

ներով վորևե մեկին կարելի յե «համոզել», վոր «կապիտալիզմը պատմականորեն անխուսափելի և օրինական» է վորոշ յերկրի համար։ Արդյոք սխալ չե՞ հարցն այս հողի վրա դնելը, վորն այնքան սիրելի յե «Русское Богатство»-ի լիբերալ պրոֆեսորներին։ Արդյո՞ք մարքսիստի համար պարտավոր չե ամբողջ հարցը վերածել այն բանը պարզելուն, թե ինչ դրություն ունի և ինչու հենց այդպես դրություն ունի և վոչ թե այլ կերպ։

Նարոդնիկները մեր կապիտալիզմը համարում են արհեստական, ջերմոցային մի բույս, վորովհետև չեն հասկանում նրա կապը մեր հասարակական տնտեսության ապրանքային ամբողջ կազմակերպության հետ, չեն տեսնում նրա արմատները մեր «ժողովրդական արտադրության» մեջ։ Ցույց տվեք նրանց այդ կապերը և արմատները, ցույց տվեք, վոր կապիտալիզմը՝ ամենից ավելի քիչ զարգացած ու այս պահանջով վաճառագուն ձևով ներթափանցում է նույնպես ժողովրդական տնտեսության մեջ, — և դուք ապացուցած կլինեք ռուսական կապիտալիզմի «անխուսափելիությունը»։ Ցույց տվեք, վոր այս կապիտալիզմը՝ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը և հանրայնացնելով աշխատանքը՝ զարգացնում և պարզում է դասակարգային, տնտեսական այն հակադրությունը, վորն ամենուրեք դուրս է բերում «ժողովրդական տնտեսության մեջ, — և դուք ապացուցած կլինեք ռուսական խոշոր կապիտալիզմի «օրինականությունը»։ Ինչ վերաբերում է առևտրական քաղաքականության հարցի հետ շփվող այս դատողության գործնական կողմին, ապա կարելի յե հետևյալը նկատել։ Ռուսական մարքսիստներն ամենից առաջ և ամենից ուժեղ ընդգծելով այն, վոր առևտրի աղատության ու պրոտեկցիոնիզմի հարցը կապիտալիստական հարց է, բուրժուական քաղաքականության հարց է, պետք է պաշտպանեն առևտրի աղատությունը, վորովհետև Ռուսաստանում առանձին ուժով յերևան է գալիս հետադիմականությունը պրոտեկցիոնիզմի, վորը

կասեցնում և յերկրի տնտեսական զարգացումը, ծառայում և վոչ թե բուրժուազիայի ամբողջ դասակարգին, այլ միայն մի բուռն ոլիգարխ-առուզերի,—վորովհետև առևտրի ազատությունը նշանակում և այն պրոցեսի արագացում, վորը կապիտալիզմից ազատվելու միջոցները և բերում։

III գլխի վերջին §-ը (XI) նվիրված և «կապիտալիզմ» դաղափարի վերլուծմանը։ Հեղինակը շատ իրավացիորեն մատնանշում և, վոր այս բառը «շատ ազատ» և դրծ ածվում, որինակները և բերում նրա «շատ նեղ» և «շատ լայն» ըմբռնման, բայց վոչ մի ճշտությամբ վորոշված հատկանիշ չի սահմանում. «կապիտալիզմ» դաղափարը, չնայած հեղինակի վերլուծմանը, մնացել և չվերլուծված։ Այնինչ, թվում ևր, այս բանն առանձին դժվարություն չպիտք և ունենար. վորովհետև այս դաղափարը դիտության մեջ Մարքսն և մտցրել, և նա ել այն հիմնավորել և փաստորեն։ Բայց պ. Ստրուվեն այստեղ ել չևր կամենա վարակվել «ուղղափառությամբ»։ «Մարքսն ինքը,— ասում և նա,—ապրանքային արտադրության՝ ապրանքային-կապիտալիստականի վերածվելու պրոցեսը պատկերացնում ևր, գուցե, ավելի արագասլաց և ուղղագիծ քան նա իրոք ե» (նվ 127, ծանոթ.)։ Գուցե։ Բայց վորովհետև այս միակ պատկերացումն և, վոր հիմնավորված և դիտականորեն և հաստատված և կապիտալ պատմության մեջ, վորովհետև մենք ուրիշ, «գուցե» «նվազ արագասլաց» ու նվազ «ուղղագիծ», պատկերացումների ծանոթ չենք, ուստի մենք ել Մարքսին կդիմենք։ Կապիտալիզմի հյական հատկանիշը, ըստ նրա ուսմունքի, հանդիսանում են (1) ապրանքային արտադրությունը, վորպես արտադրության բնդհանուր ձև։ Աշխատանքն ապրանքի ձև և ստանում հասարակական ամենաբազմազան արտադրական որգանիզմների մեջ, սակայն միմիայն կապիտալիստական արտադրության մեջ և, վոր աշխատանքի արդյունքի այսպիսի ձևն ընդհանուր և,

և վոչ թե բացառիկ, վոչ թե յեղակի, վոչ թե պատահական։ Կապիտալիզմի յերկրորդ հատկանիշը (2)—վոչ միմիայն աշխատանքի արդյունքի, այլ և իր իսկ աշխատանքի, այսինքն, մարդու աշխատանքային ուժի ապրանքային ձև ստանալն և։ Աշխատանքային ուժի ապրանքային ձևի զարգացման աստիճանով և բնորոշվում կապիտալիզմի զարգացման աստիճանը*։—Այս վորոշման ոգնությամբ մենք հեշտությամբ դուրս կհանենք այս տերմինի սխալ ըմբռնման այն որինակները, վոր բերում և պ. Ստրուվեն։ Անկասկած և, վոր միանդամայն անհեթեթ և ռուսական կարգերի այն հակադրումը կապիտալիզմին, վորը հիմնված և մեր ժողովրդական տնտեսության տեխնիկական հետամնացության վրա, ձեռքով հաստատվող արտադրության գերակշռման վրա և այլն, և վորն այնքան հաճախ բերում են նարոդնիկները, վորովհետև կապիտալիզմը գոյություն ունի թե ցածր ու թե բարձր զարգացած տեխնիկայի պայմաններում, և Մարքսը շատ անգամ և ընդգծում «կապիտալ» մեջ, վոր կապիտալն սկզբում արտադրության իրեն և յենթարկում այնպես, ինչպես վոր այն գտնում և, և միայն հետագայումն և, վոր նրան փոխակերպում և տեխնիկապես։ Անկասկած և, վոր գերմանական Hausindustrie-ի**, ռուսական «խոշոր արտադրության տնային սիստեմն» արդյունաբերության կապիտալիստական կազմակերպություն են, վորովհետև այստեղ վոչ միայն ապրանքային արտադրությունն և իշխում, այլ և վոզատուն և իշխում արտադրողի վրա և յուրացնում և գերարժեքը։ Անկասկած և, վոր «հողին տիրող» ռուսական դյուղացիությունն արևմտա-յեվրոպական կապիտա-

* Das Kapital, II Band (1885), S. 93.—Անդրաժեշտ և վերապահում անել, վոր Մարքսը մատնանշված տեղում ամենևին չի տալիս կապիտալիզմի դեֆինիցիան (վորոշումը։ Խմբ.)։ Նա առհասարակ դեֆինիցիաներով չեր պարապում։ Այստեղ մատնանշվում և միմիայն ապրանքային արտադրության հարաբերությունը դեպի կապիտալիստականը, և տեքստում խոսքը հենց դրա մասին և։

** —տնային արդյունաբերություն։ Ռուս. հրատ. խմբ.։

լիզմին հակադրելը, որ սերում են անել նարոդնիկները, նույնպես ցույց է տալիս, որ նրանք չեն հասկանում, թե ինչ բան է կապիտալիզմը։ Արևմուտքում էլ, ինչպես միանգամայն իրավացի նկատում է հեղինակը, տեղ-տեղ պահպանվում է «գյուղացիների կիսաբնատնտեսությունը» (124), բայց այս փաստը վոչ Արևմուտքում, վոչ էլ Ռուսաստանում չի վերացնում վոչ ապրանքային արտադրության գերիշխումը, վոչ էլ արտադրողների ճնշող մեծամասնության յենթարկումը կապիտալին, մի յենթարկում, որը մինչև իր բարձրագույն, առավելագույն զարգացման հասնելն անցնում է շատ աստիճաններ, որ նարոդնիկները սովորաբար անտեսում են, չնայած որ բանը ճշտությամբ պարզաբանել է Մարքսը։ Այս յենթարկումն սկսվում է առևտրական ու վաշխառուական կապիտալով, հետո անցնում է արդյունաբերական կապիտալիզմի, որն իր հերթին սկզբներում տեխնիկապես բոլորովին պրիմիտիվ է լինում և վոչնչով չի տարբերվում արտադրության հին ձևերից, հետո կազմակերպում է մանուֆակտուրան, որը դեռևս հիմնվում է ձեռքի աշխատանքի վրա, հենվում է դերակշռող տնայնագործական արհեստագործությունների վրա՝ չխախտելով վարձու բանվորի կապը հողի հետ, — և զարգացումն ավարտում է մեքենայինն խոշոր ինդուստրիայով։ Միայն վերջին, դերագույն աստիճանն է հանդիսանում կապիտալիզմի զարգացման գագաթնակետը, միայն նա է ստեղծում խոսած հեքսպրոպրիատորիայի յենթարկված, թուլության նման ազատ բանվոր*, միայն նա է առաջ բերում (թե նյութական ու թե սոցիալական կողմից) կապիտալիզմի այն «միարար նշանակությունը», որ նարոդնիկները սովորել են կապել ընդհանրապես կապիտալիզմի հետ, միայն նա է կապիտալիզմին հակադրում նրա «հատազատ գոսվակին»։

* Նարոդնիկները միշտ բանն այնպես են պատկերում, թե հողազրկված բանվորն ընդհանրապես կապիտալիզմի անհրաժեշտ պայմանն է, և վոչ թե միայն մեքենայինի ինդուստրիայի։

Գրքի չորրորդ գլուխը — «Տնտեսական պրոգրես ու սոցիալական պրոգրես» — կազմում է չորրորդ գլխի ուղիղ շարունակությունը և վերաբերում է գրքի այն մասին, որը նարոդնիկների դեմ բերում է «համամարդկային փորձի» տվյալները։ Մենք պետք է այստեղ մանրամասն կանգ առնենք, նախ, հեղինակի մի սխալ հայացքի [կամ անհաջող արտահայտության] վրա, որ վերաբերում է Մարքսի հետևորդներին և, չորրորդ, նարոդնիկության տնտեսական քննադատության խնդիրների ձևակերպման վրա։

Գ-ն Ստրուվեն ասում է, որ Մարքսը կապիտալիզմից դեպի նոր հասարակարգ տանող անցումը պատկերացնում էր բրդե կապիտալիզմի խխտա անկում, խորտակում։ (Նա գտնում է, որ այդպես մտածելու հիմք են տալիս Մարքսի «մրքանի տեղերը», մինչդեռ իրականում այս հայացքը պարունակվում է Մարքսի բոլոր յերկերում)։ Նրա հետևորդները կռվում են ռեֆորմների համար։ 40-ական թվականների Մարքսի տեսակետի մեջ «մտցված և կարևոր կորրեկտիվ», փոխանակ «անդունդի» որ բաժանում է կապիտալիզմը նոր կարգից, ճանաչվեց «անցումների մի ամբողջ շարք»։

Մենք ամենևին չենք կարող ճիշտ համարել այդ «Մարքսի հետևորդները» վոչ մի «կորրեկտիվ» (մեր լեզվով՝ ուղղում), վոչ կարևոր, վոչ էլ անկարևոր, չեն մտցրել նրա տեսակետի մեջ։ Ռեֆորմների համար մղվող կռիվը յերբեք էլ չի վկայում «կորրեկտիվի» մասին, ամենևին չի շարում անդունդի ու խխտա անկման ուսմունքը, որովհետև այդ կռիվը մղվում է հայտնի ու որոշակի ճանաչված նպատակով, որը և՝ հասնել հենց «անկման»։ իսկ թե դրա համար անհրաժեշտ է «անցումների մի ամբողջ շարք» — կռվի մի ֆազի, նրա մի աստիճանի անցումը դեպի հաջորդ աստիճանները, — այս բանն ընդունում էր նաև Մարքսը 1840-ական թ. թ.՝ «Մանիֆեստի» մեջ ասելով, թե չի կարելի դեպի նոր հասարակարգ ձգտող շարժումն անջատել բանվորական շարժումից (ու, հետևաբար, ռեֆորմների համար մղվող կռվից) և հետո

լիզմին հակադրելը, վոր սիրում են անել նարոդնիկները, նույնպես ցույց և տալիս, վոր նրանք չեն հասկանում, թե ինչ բան և կապիտալիզմը։ Արևմուտքում էլ, ինչպես միանգամայն իրավացի նկատում է հեղինակը, տեղ-տեղ պահպանվում և «գյուղացիների կիսաբնատնտեսությունը» (124), բայց այս փաստը վոչ Արևմուտքում, վոչ էլ Ռուսաստանում չի վերացնում վոչ ապրանքային արտադրության գերիշխումը, վոչ էլ արտադրողների ճնշող մեծամասնության չենթարկումը կապիտալին, մի չենթարկում, վորը մինչև իր բարձրագույն, առավելագույն զարգացման հասնելն անցնում և շատ աստիճաններ, վոր նարոդնիկները սովորաբար անտեսում են, չնայած վոր բանը ճշտությամբ պարզաբանել և Մարքսը։ Այս չենթարկումն սկսվում և առևտրական ու վաշխառուական կապիտալով, հետո անցնում և արդյունաբերական կապիտալիզմի, վորն իր հերթին սկզբներում տեխնիկապես բոլորովին պրիմիտիվ և լինում և վոչնչով չի տարբերվում արտադրության հին ձևերից, հետո կազմակերպում և մանուֆակտուրան, վորը դեռևս հիմնվում և ձեռքի աշխատանքի վրա, հենվում և դերակշռող տնայնագործական արհեստագործությունների վրա՝ չխախտելով վարձու բանվորի կապը հողի հետ, — և զարգացումն ավարտում և մեքենային խոշոր ինդուստրիայով։ Միայն վերջին, դերագույն աստիճանն և հանդիսանում կապիտալիզմի զարգացման գագաթնակետը, միայն նա և ստեղծում խոպան եքսպլոատիրիչ չենթարկված, թշվառ նման ազատ բանվոր, միայն նա և առաջ բերում (թե նյութական ու թե սոցիալական հողից) կապիտալիզմի այն «միարար նշանակությունը», վոր նարոդնիկները սովորել են կապել ընդհանրապես կապիտալիզմի հետ, միայն նա չի կապիտալիզմին հակադրում նրա «հարազատ գործակից»։*

* Նարոդնիկները միշտ բանն այնպես են պատկերում, թե հողազրկված բանվորն ընդհանրապես կապիտալիզմի անհրաժեշտ պայմանն և, և վոչ թե միայն մեքենային ինդուստրիայի։

Գրքի չորրորդ գլուխը—«Տնտեսական պրոգրես ու սոցիալական պրոգրես»—կազմում և յերբորդ գլխի ուղիղ շարունակությունը և վերաբերում և գրքի այն մասին, վորը նարոդնիկների դեմ բերում և «համամարդկային փորձի» տվյալները։ Մենք պետք և այստեղ մանրամասն կանգ առնենք, նախ, հեղինակի մի սխալ հայացքի [կամ անհաջող արտահայտության] վրա, վոր վերաբերում և Մարքսի հետևորդներին և, յերկրորդ, նարոդնիկության տնտեսական քննադատության խնդիրների ձևակերպման վրա։

Պ-ն Ստրուվեն ասում և, վոր Մարքսը կապիտալիզմից դեպի նոր հասարակակարգ տանող անցումը պատկերացնում էր իբրև կապիտալիզմի խիստ անկում, խորտակում։ (Նա գտնում և, վոր այդպես մտածելու հիմք են տալիս Մարքսի «մինքանի տեղերը», մինչդեռ իրականում այս հայացքը պաշտպանվում և Մարքսի բոլոր յերկերում)։ Նրա հետևորդները կռվում են ռեֆորմիների համար։ 40-ական թվականների Մարքսի տեսակետի մեջ «մտցված և կարևոր կորրեկտիվ» փոխանակ «անդունդի» վոր բաժանում և կապիտալիզմը նոր կարգից, ճանաչվեց «անցումների մի ամբողջ շարք»։

Մենք ամենևին չենք կարող ճիշտ համարել այդ «Մարքսի հետևորդների» վոչ մի «կորրեկտիվ» (մեր լեզվով՝ ուղղում), վոչ կարևոր, վոչ էլ անկարևոր, չեն մտցրել նրա տեսակետի մեջ։ Ռեֆորմների համար մղվող կռիվը յերբեք էլ չի վկայում «կորրեկտիվի» մասին, ամենևին չի շարում անդունդի սև խոխոջ անկման ուսմունքը, վորովհետև այդ կռիվը մղվում և հայտնի ու վորոշակի ճանաչված նպատակով, վոր և՝ հանգել հենց «անկման», իսկ թե դրա համար անհրաժեշտ և «անցումների մի ամբողջ շարք»—կռվի մի ֆազի, նրա մի աստիճանի անցումը դեպի հաջորդ աստիճանները,—այս բանն ընդունում էր նաև Մարքսը 1840-ական թ. թ.՝ «Մանիֆեստի» մեջ ասելով, թե չի կարելի դեպի նոր հասարակակարգ ձգտող շարժումն անջատել բանվորական շարժումից (ու, հետևաբար, ռեֆորմների համար մղվող կռվից) և հետո

նա ինքն իրեն յեղրակացությունն առաջադրում եր մի շարք գործնական միջոցառումներ։

Յերե պ. Սարուվեն ուզում եր ժամանակ մնար Մարքսի տեսակետի զարգացումը, ապա նա, հարկավ, իրավացի յեր։ Բայց այն ժամանակ մենք այստեղ տեսնում ենք վիչ թե «կorrեկտիվ» նրա հայացքների նկատմամբ, այլ բոլորովին հակառակը՝ ետացից կիրառումը, իրագործումը։

Մենք չենք կարող նույնպես համաձայնել այն վերաբերմունքին, որ ունի հեղինակը նարոդնիկության նկատմամբ։

«Մեր նարոդնիկական գրականությունը,—ասում է նա,—արտահայտեց ազգային հարստության ու ժողովրդական բարեկեցության, սոցիալական պրոգրեսի, լուսման պրոգրեսի հակադրումը» (131)։

Նարոդնիկությունը վիչ թե իսկույն յուրացրեց այս հակադրումը, այլ միայն հավատաց այն իրողությունը, թե հետեվողական Ռուսաստանում հենց միևնույն հակադրությունը կա պրոգրեսի, կուլտուրայի, հարստության և արտադրողի՝ արտադրության միջոցներից ազատազրվելու միջև, ժողովրդական աշխատանքի արդյունքի մեջ արտադրողի բաժնի նվազման, աղքատության ու դործազրկության աճման միջև, մի հակադրություն, որն առաջ և բերել այս հակադրումը նաև Արևմուտքում։

...«Իր մարդասեր, ժողովրդասեր բնույթի շնորհիվ այդ գրականությունը հարցը միանգամից լուծեց հոգուտ ժողովրդական բարեկեցության, և որովհետև մեքենան ժողովրդատնտեսական ձևեր (համայնք, արտել), ըստ յերևության, իրենց մեջ մարմնացնում եյին տնտեսական հավասարության իդեալը և այսպիսով ապահովում եյին ժողովրդական բարեկեցությունը, իսկ արտադրության պրոգրեսն ու ժեզացած վոխանակության ազդեցությամբ ամենևին չեր խոստանում նպաստել այդ ձևերին՝ վերացնելով նրանց սոցիտեսական ու հողևան հիմքերը,—ուստի նարոդնիկները,

մատնանշելով Արևմուտքի՝ մասնավոր սեփականության ու անտեսական ազատության վրա հենված արտադրական պրոցեսի ախտոր վորձը—ապրանքային տնտեսությանը—կապիտալիզմին հակադրեցին ժողովրդական բարեկեցությունն ապահովող այսպես կոչված «ժողովրդական արտադրությունը», վորպես հասարակական-տնտեսական մի իդեալ, վորի պահպանման ու հետագա զարգացման համար հարկ և վոր պայքարի ուսա ինտելիգենցիան ու ուսա ժողովուրդը»։

Այս դատողության մեջ կատարյալ ակնթախության համար հանդես են գալիս պ. Սարուվեյի շարադրանքի թերությունները։ Նարոդնիկությունը պատկերվում է վորպես մի «մարդասեր» թեորիա, վորն արագ «յուրացրեց» ազգային հարստության ու ժողովրդական աղքատության հակադրումը, «հարցը լուծեց» հոգուտ բաշխման, վորովհետև «Արևմուտքի «վորձը» «չեր խոստանում» ժողովրդական բարեկեցություն։ Յեվ հեղինակն սկսում է վիճել հարցի այդպիսի «լուծման» դեմ, աչքաթող անելով, վոր նա մարտնչում է նարոդնիկության իդեալիստական ու այն էլ միամիտ-յերազկոտ պարսուման դեմ միմիայն և վոչ թե նրա բովանդակության դեմ, աչքաթող անելով, վոր խոշոր սխալ է կատարում արդեն հենց նրանով, վոր իր համար թուլյատրելի յե համարում պ. պ. նարոդնիկների սովորական պրոթեսորական հարցադրումը։ Ինչպես արդեն նկատվեց, ուսական մանր արտադրողի տեսակետն ու շահերի արտացոլումն է, վոր բավականություն է տալիս նարոդնիկությանը։ Թեորիայի «մարդասիրությունը և ժողովրդասիրությունը» մեր մանր արտադրողի ճղմված վիճակի հետևանքն է յեղել, վոր զարհուրելի աղետներ և կրել թե «հին-պատվականական» կարգերից ու արտոնյալներից և թե խոշոր կապիտալի ճնշումից։ Նարոդնիկության վերաբերմունքն «Արևմուտքին» ու Ռուսաստանի վրա ունեցած նրա ազդեցությանը, իհարկե, վորոշվել և վիչ թե նրանով, վոր նարոդնիկությունը նրանից ընդունելով «արագ յուրացրեց» այս կամ այն գաղափարը, այլ մանր արտադրողի

կյանքի պայմաններով. նա իր վեմ տեսնում եր խոշոր կապիտալիզմը, որ փոխ է առնում արևմտա-եվրոպական տեխնիկան* և, հարստահարվելով նրանից, միամիտ թեորիաներ եր կառուցում, որոնք բացատրում եյին մեզ թե կապիտալիստական քաղաքականությունը կապիտալիստական տնտեսությամբ, այլ կապիտալիզմը՝ քաղաքականությամբ, որոնք խոշոր կապիտալիզմը հայտարարում եյին ռուսական կյանքի համար մի ինչ-որ խորթ, բերովի բան։ Իր առանձին մանր տնտեսությանն ամրացված լինելը նրան դրկում եր պետության իսկական բնույթը հասկանալու հնարավորությունից,—և նա դիմում եր այդ պետությանը՝ մանր («ժողովրդական») արտադրությանն ոժանդակելու և դարգացնելու խնդրով։ Ռուս կապիտալիստական հասարակության հատուկ՝ դասակարգային հակադրության անզորագացածությունն առաջ բերեց այն, որ քաղքենիության այս իդեոլոգների թեորիան հանդես յեկավ վորպես առհասարակ աշխատանքի շահերի ներկայացուցիչ։

Փոխանակ ցույց տալու բուն իսկ հարցի դրման անհեթեթությունը նարոդնիկների մոտ և բացատրելու այդ հարցի նրանց «լուծումը» մանր արտադրողի կյանքի նյութական պայմաններով, հեղինակն ինքն իր հարցադրման սկզբ ցույց բերում է մի դոգմատիզմ, որ հիշեցնում է նարոդնիկական ընտրությունը տնտեսական և սոցիալական պրոգրեսի միջև։

«Նարոդնիկության տնտեսական հիմքերի քննադատության խնդիրն է... ապացուցել հետևյալը։

1) «Տնտեսական պրոգրեսը սոցիալական պրոգրեսի անհրաժեշտ պայմանն է. վերջինը պատմականորեն բղխում է առաջինից, և զարգացման վորոշ աստիճանի վրա յերկուսը պրոցեսի միջև առաջ և գալու և իրար առաջ և գալիս որոշ տնտեսական փոխադրեցություն, փոխադարձ պայմանավորվածություն» (133)։

*Տես վերը բերած հոդվածը «От. Зап.»-ից։

Ընդհանրապես ասած՝ հասկանալի յե, վոր այս դրույթը միանգամայն իրավացի յե։ Բայց նա նշում է ավելի շուտ նարոդնիկության սոցիոլոգիական, և վոչ թե տնտեսական հիմքերի քննադատության խնդիրները. եյտպես այս մի այլ ձևակերպումն է այն ուսմունքի, ըստ վորի հասարակության դարգացումը վորոշվում է արտադրողական ուժերի զարգացմամբ և վորի մասին եր խոսքը I և II գլուխներում։ «Նարոդնիկության տնտեսական հիմքերի» քննադատության համար այս բավական չե։ Պետք է ավելի կոնկրետ ձևակերպել հարցը, նրան ընդհանրապես պրոգրեսից վերածել ռուս կապիտալիստական հասարակության «պրոգրեսին», այս պրոգրեսի ըմբռնման այն սխալներին, վորոնք ծնել են նարոդնիկական ծիծաղելի հեքիաթները tabula rasa-յի մասին, «ժողովրդական արտադրության» մասին, ռուսական կապիտալիզմի հող չունենալու մասին և այլն։ Փոխանակ ասելու, թե տնտեսական ու սոցիալական պրոգրեսի միջև պետք է առանձնա փոխադրեցություն,—պետք է մատնանշել (կամ գոնե նշել) սոցիալական պրոգրեսի վորոշ յերևույթներ Ռուսաստանում, վորոնց այս-ինչ տնտեսական պրոցեսները նարոդնիկները չեն տեսնում*։

2) «Այս պատճառով արտադրության կազմակերպման ու աշխատանքի արտադրողականության աստիճանի հարցը մի հարց է, վորն առաջնություն ունի բաշխման հարցի նկատմամբ. պատմական վորոշ պայմաններում, յերբ ժողովրդական աշխատանքի արտադրողականությունը թե բացարձակապես և թե հարաբերապես շատ ցածր է, արտադրական

*Կարող են առարկել թե յես պարզապես առաջ եմ վազում. չէ՞ վոր հեղինակն ասաց, թե ընդհանուր հարցերից աստիճանաբար նա մոտիկը կանցնի այն է, վոր պ. Տուրուվցևի քննադատության մասնավորված վերլուծականությունը նրա ամբողջ գրքի ու VI գլխի և մինչև անգամ յեզրափակիչ մասի տարբերիչ հատկությունն է։ Նրա գրքում ուղղման կարիք ունի ամենից ավելի հենց հարցերի դրումը։

մոմենտի առաջնակարգ նշանակությունն առանձնապես սուբ
կերպով և յերևան գալիս»:

Հեղինակն այստեղ հենվում է Մարքսի այն ուսմունքի վրա, ըստ որի բաշխումն ստորադաս նշանակություն ունի IV գլխի եպիգրաֆի վերցված են նրա խոսքերը Գոթայի ծրագրի* մասին արած նրա դիտողություններից, որտեղ Մարքսը գանդիկ սոցիալիզմը հակադրում է դիտականին, որը եկական նշանակություն չի տալիս բաշխմանը՝ հատուցման հարաբերությունների բաշխումը բացատրելով արտադրական հարաբերությունների կազմակերպությամբ և դնելով, որ նրանց ժամանակակից կերպությունն արդեն իսկ պարունակում է բաշխման որոշ սխեման: Այս գաղափարով, ըստ հեղինակի միանգամայն իրավացի դիտողության,—առաջնորդված է Մարքսի ամբողջ ուսմունքը, և նա չափազանց կարևոր նշանակություն ունի նարոդնիկության քաղաքականական բովանդակությունը պարզաբանելու համար: Բայց պ. Տուգան-Բարանովսկին նախադասության երկրորդ մասը սաստիկ մշուշապատ և դարձնում այդ դատողությունը, մանավանդ չնորհիվ «արտադրական մոմենտ» անորոշ տերմինին: Կարող է, թերևս, տարակուսանք առաջանալ, թե ինչ իմաստով պետք է հասկանալ այս տերմինը: Նարոդնիկը կանգնած է մանր արտադրողի տեսակետի վրա, որին իր դժբախտությունները չափազանց մակերեսորեն է բացատրում,—բացատրում է նրանով, որ ինքն «աղքատ» է, իսկ հարևան մեծապնորը «հարուստ» է, նրանով, որ «իշխանավորությունը» ոտնում է մեկի վրա, մյուսը կապիտալին և այլն, մի խոսքով՝ բացատրում է բաշխման առանձնահատկություններով, քաղաքականության սխալներով և այլն: Իսկ

* Գոթայի ծրագիրը դերմանական սոցիալիստական կուսակցության ծրագիրն է՝ ընդունված 1875 թվականին Գոթայի կոնգրեսում, որը միավորում էր մինչև այն ժամանակ առանձին գոյություն ունեցած սոցիալիստական ֆրակցիաները՝ լասալյանը և այզենախյանը (մարքսիստականը): Ծրագիրն առաջ բերեց Կ. Մարքսի քննադատությունը (տես նրա «Գոթայի ծրագրի քննադատություն» բրոշյուրը): Խմբ.

[illegible] տեսակետ և հակադրում նրան հեղինակը. արդյոք խոշոր կապիտալի տեսակետը, որն արհամարհանքով և նայում գյուղացի-տնայնագործի չնչին տնտեսավարմանը և պարծենում է իր արտադրության զարգացման բարձր աստիճանով, իր «ծառայությամբ», որը կայանում է ժողովրդական աշխատանքի՝ թե բացարձակապես ու թե հարաբերապես ցածր արտադրողականության բարձրացման մեջ, թե՞ նրա հակոտնյայի տեսակետը, որն ապրում և արդեն այնքան զարգացած հարաբերությունների մեջ, որ չի կարողանում բավարարվել քաղաքականությունն ու բաշխումը վկայակոչելով, որն սկսում է հասկանալ, թե պատճառն ավելի խորն է թաղված,—դնվում է հենց (հասարակական) արտադրության կազմակերպության մեջ, հենց հասարակական տնտեսությունը շուկայի վերահսկողության ու ղեկավարության անհատական սեփականության սկզբունքով կառուցած լինելու մեջ: Այսպիսի հարց բնականաբար կարող էր ծագել ընթերցողի գլխում, մանավանդ որ հեղինակը «արտադրական մոմենտ» արտահայտությունը յերբեմն գործ է ածում «տնտեսականություն» արտահայտության հետ միասին (տես նշ 171. «արտադրական մոմենտի անտեսումը» նարոդնիկների մոտ, «որ հասնում է ամեն մի տնտեսականության ժխտման»), մանավանդ որ հեղինակը «անուացիոնալ» ու «ռացիոնալ» արտադրության հարաբերակցությամբ յերբեմն նսեմացնում է մանր արտադրողի ու արդեն վերջնականապես արտադրության միջոցները կորցրած արտադրողի հարաբերությունը: Վհճ չի կարող լինել այն մասին, որ հեղինակի շարադրանքի ճշտությունն օբյեկտիվ կողմից չի նվազում սրա հետևանքով. որ գործը վերջին հարաբերության տեսակետով պատկերացնելը հեշտ և ամեն մեկի համար, ով հասկանում է կապիտալիստական կարգի հակամարտությունը: Բայց վորովհետև հանրածանոթ է և, որ հենց Ռուսաստանի պարոնայք նարոդնիկները չեն հասկանում այս բանը, ուստի և նրանց հետ վիճելիս ցանկալի չի տեսնել ավելի վորոշություն ու

մարքերի ավելի սպառիչ արտահայտություն և, վորքան կարելի չե, ավելի սակավաթիվ չափազանց ընդհանուր վերացական դրույթներ։

Ինչպես մենք աշխատեցինք կոնկրետ որինակով ցույց տալ I գլխում, նարոդնիկության ամբողջ տարբերությունը մարքսիզմից ռուսական կապիտալիզմի ճնշադատության բնույթն է։ Կապիտալիզմը քննադատելու համար նարոդնիկը բավական և համարում հավատալ շահագործման առկայությունը, նրա ու քաղաքականության փոխադրելիությունը և այլն։ Մարքսիստն անհրաժեշտ է համարում բացատրել և իրար հետ կապել շահագործման այս յերևույթները, վորպես արտադրական վորոշ հարաբերությունների սիստեմ, վորպես հասարակական-տնտեսական առանձին ֆորմացիա, վորի գործելու և զարգացման որենքները յեն թակա յեն որյեկտիվ ուսումնասիրման։ Կապիտալիզմը քննադատելու համար նարոդնիկը բավական և համարում այն դատապարտել իր իդեալների տեսակետից, «արդի պիտության ու արդի բարոյական գաղափարների» տեսակետից։ Մարքսիստն անհրաժեշտ է համարում ամենայն մանրամասնությամբ հետազոտել այն դասակարգերը, վորոնք գոյանում են կապիտալիստական հասարակության մեջ, հիմնական և համարում միմիայն վորոշ դասակարգի տեսակետից կատարվող քննադատությունը,—քննադատություն, վոր հիմնվում և վրչ թե «անհատի» բարոյական դատողությունների վրա, այլ իրապես կատարվող հասարակական պրոցեսի ստույգ ձևակերպման վրա։

Յեթե փորձենք սրանից յելնելով ձևակերպել նարոդնիկության տնտեսական հիմքերի քննադատության խնդիրները, ապա նրանք մոտավորապես այսպես կարտահայտվեն.

Հարկավոր և ապացուցել, վոր Ռուսաստանում. թողոր կապիտալիզմը հարաբերում և «ժողովրդական արտադրությանն» այնպես, ինչպես միանդամայն զարգացած յերևույթը՝ չզարգացածին, ինչպես կապիտալիստական հասարակական ֆորմացիայի բարձր աստիճան՝ նրա ցածր աստիճանին*,—վոր արտադրողի՝ արտադրության միջոցներից պատսպրվելն ու նրա աշխատանքի արդյունքի՝ փողատիրոջ կողմից յուրացվելը պետք և բացատրվի ինչպես ֆաբրիկայում, այնպես և թեկուզ բուն իսկ համայնական գյուղում, վրչ թե քաղաքականության, վրչ թե բաշխման, այլ արտադրության այն հարաբերություններով, վորոնք անհրաժեշտորեն դոյանում են ապրանքատնտեսության մեջ, իրենց շահերով հակադիր դասակարգերի այն գոյացումով, վոր բնորոշում և կապիտալիստական հասարակությունը**,—վոր այն իրականությունը (մանր արտադրությունը), վորը նարոդնիկներն ուզում են կապիտալիզմը մեջ տալով հասցնել բարձր աստիճանի, արդեն իր մեջ և առնում կապիտալիզմը և սրան հատուկ՝ դասակարգերի հակադրությունն ու սրանց

* Պարզ և, վոր տնտեսական կողմի վերլուծությունը պետք և լրացվի սոցիալական, իրավաքաղաքական գաղափարական վերնաշենքերի վերլուծությամբ։ Կապիտալիզմի ու «ժողովրդական արտադրության» կապը բմբռնելը նարոդնիկների մոտ գաղափարներ իր առաջ բերում գյուղատյեսական ռեֆորմի, պետական իշխանության, ինտելիգենցիայի վոչ-դասակարգային բնույթի մասին և այլն։ Մատերիալիստական վերլուծությունն այս բոլոր յերևույթները հանգեցնելով դասակարգային կռվի կոնկրետ պետք և ցույց տա, վոր մեր հետեֆորմյան ռուսական «սոցիալական պրոգրեսը» կապիտալիստական «տնտեսական պրոգրեսի» հետևանքն իր մեջ։

** Ռուսական տնտեսական իրականության, մանավանդ այն իրականության «փաստերի վերնայումը», վորից նարոդնիկները նյութ են քաղում իրենց ինստիտուտային յերազանքների համար, այսինքն, գյուղացիական ու տնայնագործական տնտեսության համար,—պետք և ցույց տա, վոր արտադրողի ճնշված դրության պատճառը վրչ թե բաշխման մեջ և («մուժիկն աղքատ և, մեծագնորդը՝ հարուստ»), այլ արտադրության բուն իսկ հարաբերությունների մեջ, գյուղացիական ու տնայնագործական արդի տնտեսության հասարակական բուն իսկ կազմակերպության մեջ։ Սրանից պարզվում և, վոր «ժողովրդական» արտադրության մեջ էլ «արտադրության կազմակերպության հարցը առաջնություն ունի բաշխման հարցի նկատմամբ»։

բաղխումները,—բայց միայն այդ հակադրության վատթարագույն ձևով, որը դժվարացնում է արտադրողի ինքնուրույն գործունեությունը, և որ այս պատճառով նարոդնիկներն անտեսելով սոցիալական արդեն իսկ ստեղծված հակադրությունները և յերազելով «հայրենիքի այլ ուղիների» մասին՝ հանդիսանում են ուտոպիստ-ռեակցիոներներ, որովհետև կարող կապիտալիզմը միայն զարգացնում է, դառնում և պարզում է բուրժուազիայի այդ հակադրությունները, որոնք գոյություն ունեն Ռուսաստանում ամեն տեղ ու ամենուրեք։

Նարոդնիկության տնտեսական քննադատության խնդիրների չափազանց վերացական ձևակերպման հետ անմիջականորեն կապված է հեղինակի նաև հետագա շարադրանքը, որտեղ նա ասպարեզում է վիճ թե ռուսական, այլ արևմտա-յեվրոպական կապիտալիզմի «անհրաժեշտության» ու «առաջադիմականության»։ Անմիջապես չշրջափակով նարոդնիկական դոկտրինայի տնտեսական բովանդակությունը՝ այս շարադրանքը, սակայն, շատ հետաքրքրական և ուսանելի բան է տալիս։ Մեր նարոդնիկական գրականության մեջ արևմտա-յեվրոպական բանվորական շարժման նկատմամբ հաճախ անվստահության ձայներ են հնչել։ Այս բանն առանձնապես վառ արտահայտվեց պ. պ. Միխայլովսկու և Ընկ.՝ մարքսիստների դեմ վարած վերջին բանակռվի ժամանակ («Р. Бог.» 1893—4)։ Կապիտալիզմից մենք դեռ մի լավ բան չենք տեսել—գրում էր այն ժամանակ պ. Միխայլովսկին*։

* Չի կարելի չնկել, որ պ. Սարուվեյի պատասխանի մեջ պ. Միխայլովսկին տեսնում է ննգելսի «ինքնասպրանաթյունը», որն ասում է, թե Արևմուտքի բանվորական շարժումն արդիականության դեմքիքսող, հակայական իրողություն է, որն այս արդիականությունը դարձնում է մյուս բոլոր դարաշրջաններից ավելի լավ, որն արդարացնում է նրա ծագման պատմությունը։

Ննգելսին ուղղած այս պարզաբանը վրդովիչ կտտամքանքը չափազանց բնորոշ է արդի ռուսական նարոդնիկության համար։

Այդ պարոնները կարողանում են պատաբկարանել «ժողովրդական

Քաղքենիական այս հայացքների անհեթեթությունը հիանալի հերքվում է պ. Ստրուվեյի տվյալներով, մանավանդ որ այդ տվյալները փոխ են առնված բուրժուական նորագույն գրականությունից, որի վրա վոչ մի կերպ չի կարելի կասկածել, թե չափազանցում է։ Մնջբերումները, որ անում է հեղինակը, ցույց են տալիս, որ Արևմուտքում բոլորը, նույնիսկ բուրժուաները, տեսնում են, որ կապիտալիզմի անցումը հասարակա-տնտեսական նոր ֆորմացիայի՝ անխուսափելի չե։

Աշխատանքի հանրայնացումը կապիտալիզմի կողմից այնքան է առաջ գնացել, որ նույնիսկ բուրժուական գրականության մեջ բարձրաձայն խոսում են «ժողովրդական տնտեսության պլանաչափ կազմակերպության» անհրաժեշտության մասին։ Հեղինակը միանգամայն իրավացի չի՝ ասելով, թե այս՝ «ժամանակի նշանն է», կապիտալիստական կարգերի կատարյալ քայքայման նշանը։ Չափազանց հետաքրքրական են նրա բերած հայտարարությունները—վիճ միայն բուրժուական պրոֆեսորներինը, այլև պահպանողականներինը,—որոնք ստիպված են խոստովանելու այն, ինչ մինչև օրս էլ ուզում են ժխտել Ռուսաստանի արմատականները—այսինքն այն, որ բանվորական շարժումն ստեղծել են կապիտալիզմի ծնունդ հանդիսացող նյութական պայմանները, և վիճ թե «պարզապես» կուլտուրան կամ քաղաքականն այլ պայմանները։

Այն բոլորից հետո, ինչ մենք շարադրեցինք վերևում, հազիվ թե կարիք ունենանք կանգ առնելու հեղինակի այն պատճառաբանության վրա, թե բաշխումը կարող է առաջադիմել՝

ճշմարտության» մասին, կարողանում են խոսել մեր «հասարակության» հետ՝ նրան հանդիմանելով, որ հայրենիքի համար սխալ ճանապարհ է ընտրում, կարողանում են քաղցը յերգել այն մասին, թե «կամ այժմ, կամ յերբեք», և այդ յերգել «10 տարի, 20 տարի, 30 տարի և ավելի», քայց բացարձակապես անընդունակ են հասկանալու, թե ինչ համապատասխան նշանակություն ունի ինքնուրույն յելույթն այն մարդկանց, հանուն որոնց հենց յերգվում էին այս քաղցը յերգերը։

միմիայն հենվելով ռացիոնալ արտադրության վրա։ Պարզ է, որ այս դրույթի իմաստն այն է, թե ռացիոնալ արտադրության վրա հիմնված խոշոր կապիտալիզմն է միայն, որ արտադրողին դնում է այնպիսի պայմանների մեջ, որոնք թույլ են տալիս նրան բարձրացնել դլուխը, մտածել ու հոգալ թե իր մասին և թե նրանց մասին, ովքեր, հետաքրքրության շնորհիվ, այս պայմանների մեջ չեն գտնվում։

Մենք միայն յերկու խոսք կասենք պ. Ստրուվեյի մի այսպիսի նախադասության առթիվ. «Կապիտալիզմը չի ստեղծել չափազանց անհավասարաչափ այն բաշխումը, որ կատեգորիա է տնտեսական առաջադիմության այդ բաշխումը կապիտալիզմին անցել է ժառանգարար» այն դարաշրջանից, որի մեջ ռոմանտիկները տեսնում են կաթնաբուղեր գետեր և մեղրածոր ափեր (նշ 159)։ Այս ճիշտ է, յեթե հեղինակն ընդհանրին ուզում է միայն այն ասել, թե կապիտալիզմից առաջ էլ յեղել է անհավասարաչափ բաշխում, որի մասին պ. պ. նարոդնիկները հակված են մոռանալու։ Բայց այս ճիշտ չէ, յեթե ժխտենք անհավասարաչափության աստիճացումը կապիտալիզմի շնորհիվ։ Ճորտային իրավունքի ժամանակ չկար և չեր կարող լինել այնպիսի խիստ անհավասարություն բոլորովին աղքատացած գյուղացու կամ բոյարի ու բանկային, յերկաթուղային, արդյունաբերական տուրքի միջև, անհավասարություն, որ հետևեփորմյան կապիտալիստական Ռուսաստանն է ստեղծել։

Անցնենք V գլխին։ Հեղինակն այստեղ տալիս է «նարոդնիկության, որպես տնտեսական աշխարհայացքի», ընդհանուր բնութագիրը։ «Նարոդնիկները», պ. Ստրուվեյի կարծիքով, «բնատնտեսության ու նախնադարյան հավասարության իդեալոգներ են» (167)։

Այսպիսի բնութագրի հետ անկարելի յե համաձայնել։ Մենք այստեղ չենք սկսի կրկնել I գլխում բերված փաստարկությունները հոգուստ այն բանի, որ նարոդնիկները ժանր արտադրողի իդեալոգներ են։ Այնտեղ արդեն ցույց է տրված, թե ինչպես մանր արտադրողի կյանքի հենց նյութական պայմանները,—նրա անցողիկ, միջնական դրությունը «տերերի» ու «բանվորների» միջև,—առաջ են բերում թե նարոդնիկների կողմից դասակարգային հակասությունների անհասկացողություն և թե նրանց ծրագրի առաջադիմական ու հետադիմական կետերի տարորինակ խառնուրդ։

Այստեղ միայն կավելացնենք, որ իր առաջին, այսինքն առաջադիմական կողմով ռուսական նարոդնիկությունը մոտենում է արևմտա-յեվրոպական դեմոկրատիզմին, և այս իսկ պատճառով նրա վերաբերմամբ ամբողջովին կիրառելի յե դեմոկրատիզմի այն հանճարեղ բնութագիրը, որ ավելի քան 40 տարի սրանից առաջ տրված է ֆրանսական պատմության դեպքերի առթիվ։

«Դեմոկրատը ներկայացնելով մանր բուրժուազիան, այսինքն անցողիկ դասակարգը, որի մեջ փոխադարձորեն բթանում են յերկու դասակարգի շահերը,— այդ պատճառով յերևակայում է, թե ինքն ընդհանրապես բարձր է կանգնած դասակարգային հակամարտություններից։ Դեմոկրատները ընդունում են, որ իրենց դիմաց արտոնյալ դասակարգ է կանգնած, բայց ազգության մնացած ամբողջ բնակչության հետ միասին նրանք ժողովուրդ են կազմում։ Նրանք պաշտպանում են ժողովրդական իրավունքը։ Նրանք ներկայացնում են ժողովրդական շահերը։ Այս պատճառով նրանք կարիք չունեն հետազոտելու տարբեր դասակարգերի շահերն ու դրությունը։ Նրանք կարիք չունեն չափազանց խիստ կշռելու իրենց սեփական միջոցները *... Յեթե պարզվում է, որ

* Իսկ և իսկ Ռուսաստանի նարոդնիկները նրանք չեն ժխտում, որ Ռուսիայում կան դասակարգեր, որոնք հակամարտ են արտադրողին, բայց նրանք իրենց որոշում են այն դատողություններով, թե այս գիշատիչները չնչինություն են «ժողովրդի» հանդեպ, և նրանք չեն ուզում

նրանց շահերը չեն շահագրգռում, վոր նրանց զորությունն անզորություն է, ապա այստեղ մեղավոր են կամ միաժամանակ սոփեստները, վորոնք պատակառում են միասնական ժողովուրդը թշնամական տարբեր բանակների *, կամ թե ամեն ինչ փուլ է յեկել կատարման ինչ-վոր մանրամասնության պատճառով, կամ թե, վերջապես, չնախատեսված պատահականությունն է այս անգամ հասցրել անհաջողության: Համենայն դեպս դեմոկրատն ամենախայտառակ պարտությունից դուրս է գալիս նույնքան անբիծ, վորքան անմիզ նա մտել էր այնտեղ, դուրս է գալիս ամրապնդված այն համոզմունքով, վոր նա պետք է հաղթի, վոր վերջ թե նա ու նրա կուսակցությունը պետք է թողնի հին տեսակետը, այլ ընդհակառակը, հանգամանքները պետք է ածեն ու հասնեն նրան» (ihm entgegenzureifen haben. Der achtzehnte Brumaire u. s. w., S. 39 **):

Նարոդնիկների այն բնութագրման սխալ լինելու մասին, վորը նրանց համարում է փնատնտեսության ու նախնադարյան հավասարության իդեոլոգներ, խոսում են հենց հեղինակի բերած որինակները: «Վորպես կուրյոզ պետք է նշել,—ասում է պ. Ստրուվեն,—«վոր պ.—ոնը մինչև որս վասիլչիկովին անվանում է լիբերալ տնտեսագետ» (169): Յեթե

զբաղվել յու բաքանչյուր առանձին գյուղական դրության ու ջհների ճըշգրիտ հետազոտությամբ, չեն ուզում քննել, թե արդյոք արտադրողների վորոշ տարակարգի ջհները չեն միանշանակում «դիշաուչնների» շահերի հետ՝ թուլացնելով առաջինների դիմադրության ուժը վերջիններին հանդեպ:

* Ռուսաստանի նարոդնիկների աչքում մեղավոր են չարանենգ մարգասիանները, վորոնք արհեստականորեն պատվաստում են կապիտալիզմին ու նրա դասակարգային հակամարտությունները մի հողի մեջ, վորի վրա այնքան փարթամությամբ աճում են «սոցիալական փոխհարաբերման» ու «համերաշխ գործունեության» ծաղիկները (պ. Վ. Վ-ի առածը, վոր բերված է Ստրուվեյի գրքում, եջ 161):

** Կ. Մարքս, «Բրյումերի 18-ը»: ИМЭЛ-Партиздат-ի 1932 թ. հրատարակության մեջ այս տեղը գտնվում է 40-րդ եջում: Խմբ.:

այս անվանումը վերցնենք ըստ էության, ապա բոլորովին էլ կուրյոզային չէ այն: Վասիլչիկովն իր ծրագրի մեջ դրնում է ժամն ու լայնորեն տարածված վարկը: Պ-ն Նիկոլայ —ոնը չի կարող չտեսնել, վոր կապիտալիստական հասարակության հողի վրա, վորպիսին և ռուսականը, վարկը մի յուր կուժեղացնի բուրժուազիայի, կառաջացնի «կապիտալիստական հարաբերությունների զարգացում ու ամրապնդում» («Очерки», եջ 77): Վասիլչիկովը, ինչպես և բոլոր նարոդնիկները, իր գործնական միջոցառումներով ներկայացնում է սոսկ մանր բուրժուազիայի շահերը: Կուրյոզայինն այստեղ դուրս այն է, վոր պ.—ոնը բազմելով „Русское Богатство“-յի հրապարակախոսների կողքին՝ «մինչև որս» չի տեսնում, վոր նրանք նույնպիսի փոքրիկ «լիբերալ տնտեսագետներ» են, ինչպես իշխ. Վասիլչիկովը: Ուտոպիզմի թեորիան իրականում հեշտությամբ և հաշտվում քաղքենիական պրոգրեսների հետ: Նարոդնիկության այսպիսի վորակումն ավելի ևս հաստատում է Գոլովաչևը, վորը գիտակցում է մարդապլուխ հողաբաժնի անխմասությունը և առաջարկում է «ժամն վարկ բանվոր ժողովրդի համար»: Բընդհատելով այս «զարմանալի» թեորիան՝ պ. Ստրուվեն ուշադրություն է դարձնում նրա թեորիական անժուժության վրա միայն, բայց կարծես չի նկատում նրա մանր-բուրժուական բովանդակությունը:

V գլխի առթիվ չի կարելի կանգ չառնել նաև պ. Շչերբինայի՝ «մինչև պահանջմունքների» որենքի վրա: Այս կարևոր է՝ գնահատելու համար պ. Ստրուվեյի «մաթեուսականությունը», վորը ցայտուն հանդես է գալիս VI գլխում: «Որենքն» այն է, վոր գյուղացիներին ըստ հողաբաժնի խըմբավորելիս առացվում է գյուղացիական ընտանիքի պահանջմունքների (այսինքն, զանազան կարիքների վրա յեղող ծախսերի) շատ քիչ տատանվող (ըստ խմբերի) միջին մեծություն, ըստվորում պ. Շչերբինան ծախսերը հաշվում է բնակչության 1 շնչի վրա բաժանելով:

Պ–ն Սորուվեն գոհունակությամբ ընդգծում է, որ այդ «օրենքը» «հակայական նշանակություն ունի», որովհետև, իբր թե, հաստատում է Մալթուսի «հանրածանոթ» այն օրենքը, թե «բնակչության բարեկեցությունն ու բազմացումը որոշվում է նրան մատչելի գոյամիջոցներով»:

Անհասկանալի չի, թե ինչու պ. Սորուվեն ուրախացել է այս օրենքի համար: Անհասկանալի չի, թե ինչպես կարելի է պ. Շչերբինայի հաշվարկումների մեջ տեսնել «օրենք», այն էլ «հակայական նշանակություն» ունեցող օրենք: Շատ բնական է, որ գյուղացիական առանձին ընտանիքների ապրուստի ձևի վրա տարբերությունների պայմաններում մենք ստանում ենք քիչ տատանվող միջինները, տեթե գյուղացիներին բաժանենք ըստ խմբերի. մանավանդ տեթե խմբերի բաժանելիս հիմք վերցնենք հողաբաժնի չափը, որն անմիջականորեն չի որոշում ընտանիքի բարեկեցությունը (որովհետև հողաբաժինը կարող է վարձակալությամբ տրվել, կարող է դեռ հող վարձակալվել էլ) և որը հավասարապես բաժին է ընկնում թե հարուստ և թե աղքատ գյուղացուն, որը հավասար թվով հարկատու չունի: Պ–ն Շչերբինայի հաշվարկումները միմիայն այն են ապացուցում, որ նա խմբավորման անհաջող եղանակ է ընտրել: Եթե պ. Շչերբինան այստեղ տեսնում է իր հայտնագործած մի ինչ-որ օրենք, ապա այս բոլորովին տարօրինակ է: Պակաս տարօրինակ չէ այստեղ տեսնել Մալթուսի օրենքի հաստատումը, կարծես թե հողաբաժնի մեծությունից կարելի էր դատել «գյուղացուն մատչելի գոյամիջոցների» մասին՝ նկատի չառնելով վոչ վարձակալությունը, վոչ «դատումները», վոչ էլ գյուղացու տնտեսական կախումը կալվածատերոջից ու մեծադնորդից: Պ–ն Շչերբինայի այս «օրենքի» առթիվ (նրա շարադրանքը, որ գտնում ենք պ. Շչերբինայի մոտ, ցույց է տալիս, որ ինքն «օրենքի» հենական անհավատալի մեծ նշանակություն է տալիս բնավ վոչինչ չապացուցող իր միջին թվերին) պ. Սորուվեն ա-

սում է. «ժողովրդական արտադրությունն» ավելի դնպքում պարզապես նշանակում է տնտեսություն առանց վարձու աշխատանքի կիրառման: Վոր տնտեսության այսպիսի կազմակերպման դնպքում «հավելյալ արժեքը» մնում է արտադրողի ձեռքում, այդ անվիճելի է» (176): Ցեղ հեղինակը մատնանշում է, որ աշխատանքի ցածր արտադրողականության պարագայում այս բանը չի խանգարում այսպիսի «ժողովրդական արտադրության» ներկայացուցչին ավելի վատ ապրել, քան բանվորն է ապրում: Մալթուսականության հրապուրվելը հեղինակին հասցրել է վերև բերված դրույթի անճիշտ ձևակերպմանը: Առևտրական ու վաշխառուական կապիտալն ամեն մի ռուսական գյուղում իրեն է ենթարկում աշխատանքը և, արտադրողին վարձու բանվոր չդարձնելով, պակաս հավելյալ արժեք չի խլում նրանից, քան արդյունաբերական կապիտալը խլում է գործավորից: Պ–ն Սորուվեն իրավացիորեն մատնանշել է վերևում, թե կապիտալիստական արտադրությունն ավելացնում է այն մոմենտից, երբ արտադրողի արանքում կանգնում է կապիտալիստը, թեկուզ նա միմիայն պատրաստի ապրանք գնի (առերևույթ) ինքնուրույն արտադրողից (եջ 99 և ծան. 2), և հեշտ բան չեր լինի ռուս «ինքնուրույն» արտադրողների մեջից գըտնել այնպիսիններին, որոնք չեն աշխատում կապիտալիստի համար (վաճառականի, մեծադնորդի, կուլակի համար և այլն): Նարոդնիկների ամենամեծ սխալներից մեկն այն է, որ նրանք չեն տեսնում այն ամենասերտ ու անխզելի կապը, որ կա ռուսական հասարակական տնտեսության կապիտալիստական կազմակերպության ու առևտրական կապիտալի՝ գյուղում ունեցած լիիշխան տիրապետության միջև: Այս պատճառով զարմանալի ճիշտ և տատում հեղինակը, թե «ժողովրդական արտադրությունն» բառաղուդակցումն անգամ այն իմաստով, ինչ իմաստով այս գործ են ածում պ.պ. Նարոդնիկները, չի համապատասխանում վոչ մի ռեալ պատմական կարգի: Մեզանում Ռուսաստանում մինչև 1861 թ. «ժողովըր-

դական արտադրությունը» սերտորեն կապված էր ճորտային իրավունքի հետ, իսկ հետո, 1861 թվից հետո, արագացված տեմպով տեղի չէր ունենում ապրանքատնտեսության զարգացումը, որը չէր կարող չաղճատել ժողովրդական տնտեսության զուտ ընթացքը» (177)։ Յերբ նարոդնիկն ասում է, թե արտադրության միջոցների՝ արտադրողին պատկանելը ռուսական կենցաղի հնամենի սկզբունքն է, նա պարզիպարզո ազավաղում է պատմությունը ի հաճույս իր ուտոպիայի, ազավաղում է բուռնախաղի միջոցով. ճորտային իրավունքի ժամանակ արտադրողին արտադրության միջոցները տալիս էր կալվածատերը ճոռ համար, վոր արտադրողը կարողանար նրա համար աշխատավճարել կոռը. հողաբաժինը մի տնական բնավճար աշխատավարձ էր,—հավելյալ արդյունքը յուրացնելու մի «հնամենի» միջոց։ Ճորտային իրավունքի վոչնչացումն արտադրողի «ազատագրում» չէր առհասին. նա նշանակում էր միայն հավելյալ արդյունքի ձևի փոփոխություն։ Յերթե մի վորևե տեղ Անգլիայում ճորտային իրավունքի անկումն առիղծեց հիրավի ինքնուրույն ու ազատ գյուղացիներ, ապա մեր ռեֆորմը միանգամից անցում կատարեց ճորտատիրական «խայտառակ» հավելյալ արդյունքից դեպի բուրժուական «ազատ» վերարժեքը։

ԳԼՈՒԽ IV

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏՈՒԵՖՈՐՄԱՑԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՑԻ ՄԻ ՔԱՆԻ ԴԾԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ Պ-Ն ՍՏՐՈՒՎԵՑԻ ՄՈՏ

Պարոն Ստրուվեյի դրքի վերջին (վեցերորդ) գլուխը նվիրված է ամենակարևոր հարցին—Ռուսաստանի տնտեսական զարգացմանը։ Նրա թեորիական բովանդակությունը ուրվագծվում է հետևյալ բաժիններում—1) դերբնակչության հողագործական Ռուսաստանում, նրա բնույթն ու պատճառները. 2) գյուղացիության տարաբաժանումը, նրա նշանակությունն ու պատճառները. 3) արդյունաբերական կապիտալիզմի դերը գյուղացիության քայքայման մեջ. 4) մանուֆակտուրական տնտեսության, նրա զարգացման բնույթը և 5) շուկաների հարցը ռուսական կապիտալիզմի համար։ Նախքան պ. Ստրուվեյի՝ այդ հարցերից յուրաքանչյուրի վերաբերմամբ արած փաստարկման քննությանն անցնելը կանգ առնենք գյուղացիական ռեֆորմի մասին նրա արած դիտողությունների վրա։

Հեղինակը բողոք է հայտնում այս ռեֆորմի «ֆեոդալատական» բնորոշման դեմ և մատնանշում է պետության այն պահանջմունքները, վորոնք պահանջում էին բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, մատնանշում է փրկաճիը, «ցածից» դրդ դրվող ճնշումը։ Ափսոս, վոր հեղինակը լրիվ չի արտահայտել իր օրինական բողոքը։ Նարոդնիկները ռեֆորմը բացատրում են «հասարակության» մեջ

«մարդասիրական» և «ազատագրական» գաղափարների զարգացմամբ։ Այդ իրողությունն անկասկածելի է, սակայն ռեֆորմը դրանով բացատրել՝ նշանակում է ընկնել անբովանդակ նույնաբանության մեջ՝ «ազատագրումը» վերածելով «ազատագրական» գաղափարների։ Մասերիալիսմի համար անհրաժեշտ է առանձնապես քննել այն ձեռնարկումների բովանդակությունը, որոնք իրագործվեցին հանուն իդեաների։ Պատմության մեջ ոչ մի կարևոր, թեկուզ և զուտ կարգային բնույթ կրած «ռեֆորմ» չի եղել, որի ոգին բարձր բառեր և բարձր իդեաներ բերված չլինելիս։ Ճիշտ նույնպես նաև գյուղացիական ռեֆորմում։ Ցեթե ուշադրություն դարձնենք նրա առաջացրած փոփոխությունների բովանդակության վրա, ապա դուրս կգա, որ նրանք հետևյալ բնույթն ունեն. գյուղացիության մի մասը հողազուրկ եր դարձել, և—գլխավորն այս է—ինացած գյուղացիները, որոնց թողնվեց նրանց հողերի մի մասը, սոսկ վաճառել չեղան այդ հողը կալվածատերերից փրկանել, որպես բոլորովին ոտար բան, այն էլ փրկանել արհեստականորեն բարձրացրած գնով։ Այսպիսի ռեֆորմները ոչ միայն Մեզանում, Ռուսաստանում, այլ նաև Արևմուտքում «ազատության» և «հավասարության» թեորիաներով էին պարուրվում, և «կապիտալի» մեջ արդեն ցույց է տրված, որ ազատության ու հավասարության իդեանները մնուցանող հողը հենց ապրանքային արտադրությունն է եղել։ Համենայն դեպս, վորքան էլ բարդ լիներ այն բյուրոկրատական մեխանիզմը, որն իրագործում եր ռեֆորմը Ռուսաստանում, որքան էլ այն pas յերեվութին* հետու չեր բուն իսկ բուրժուազիայից,—անհերքելի է մնում՝ այն, որ այդպիսի ռեֆորմի հողի վրա կարող էին աճել միմիայն բուրժուական կարգեր։ Պ-ն

* Իսկապես, ինչպես մատնանշվեց վերևում, այդ մեխանիզմը հենց միմիայն բուրժուազիային կարող եր ծառայել թե իր կազմով և թե իր պատմական ծագումով։

Սորուվեն միանգամայն իրավացի մատնանշում է, որ ռուսական գյուղացիական ռեֆորմի տարածված հակադրումն արևմտա-եվրոպականներին՝ սխալ է. «միանգամայն սխալ է (այնքան ընդհանուր ձևով) այն պնդումը, թե Արևմտ. Եվրոպայում գյուղացիները ազատագրվեցին առանց հողի, կամ, այլ խոսքով, հողազուրկ արվեցին որևէ ճանապարհով» (196)։ Ցես ընդգծում եմ «այնքան ընդհանուր ձևով» բառերը, քանի որ գյուղացիների որևէ ճանապարհով հողազրկումն անկասկածելի պատմական իրողություն է ամենուրեք, որտեղ գյուղացիական ռեֆորմ է կատարվել, բայց այդ ընդհանրական իրողություն չէ, որովհետև գյուղացիների մի մասը հարստահրական կախումից ազատագրվելիս Արևմուտքում փրկանել է հողը կալվածատերերից, փրկանում է նաև ներկայումս։ Միայն բուրժուաները են ընդունակ վճռելու փրկանելու այդ փաստը և խոսելու այն մասին, իբր թե «գյուղացիների՝ հողով հանդերձ* ազատագրումը Ռուսաստանը դարձրեց tabula rasa» (վոմն պ. Յակովլեվի բառերը, որ «հոգու խորքից վողջունում է» պ. Միխայլովսկին,—տես եջ 10 պ. Սորուվեյի գրքում)։

I

Անցնենք պ. Սորուվեյի այն թեորիային, որը վերաբերում է «հողագործական Ռուսաստանի դերընակչության բնույթին»։ Այդ այն ամենակարևոր կետերից մեկն է, որոնցում պ. Սորուվեն նահանջում է մարքսիզմի դոկտրինայից» և հակվում մալթուսականության դոկտրինային, Պ-ն —ոնի դեմ մղած բանավեճում նրա զարգացրած հայացք-

* Ցեթե ճշմարտությունն ասենք, ապա պետք եր ասել հետևյալը—գյուղացիների մի մասին իրավունք վերապահվեց իրենց բաժնեհողի մի մասը փրկանելու կալվածատերերից կրկնակի գնով, Ցել նույնիսկ «վերապահեց» բառն անհարմար է ղեռ, որովհետև այդ կերպ «հողաբաժնով ապահովվելուց» հրաժարվելու համար գյուղացուն դանակոծություն եր սպառնում վոլոստային վարչության մեջ։

նների կյանքն այն է, թե գերբնակչությունը հողագործական Ռուսաստանում «կապիտալիստական չէ, այլ, այսպես ասած, պարզ, բնատնտեսությանը համապատասխանող»*։

Բանի որ պ. Սարուվին ասում է, որ իր առարկությունը պ.—ոնի դեմ «լիովին համապատասխանում է այն ընդհանուր առարկությանը, որ Ֆ.-Ա.Լանգեն է անում Մարքսի հաբարերական գերբնակչության թեորիայի դեմ» (183, ծան.), ապա մենք էլ դառնանք սկզբում Լանգեյի այդ «ընդհանուր առարկությանը»՝ այդ ստուգելու համար։

Լանգեն Մարքսի ազգաբնակության որենքի մասին դատում է իր «Բանվորական հարց» վերնագրով գրքի V գլխում (ռուս. թարգմ. էջ 142—178)։ Նա սկսում է Մարքսի այն հիմնական դրույթից, թե «ընդհանրապես արտադրության յուրաքանչյուր պատմականորեն առանձնահատուկ եղանակին համապատասխանում է ազգաբնակության աճման իր սեփական որենքը, որը միմիայն պատմական նշանակություն ունի միայն բույսերի և կենդանիների համար»։ Լանգեն այս առթիվ ասում է.

«Թող թույլ տրվի մեզ նկատել, որ, խստորեն ասած, բույսերի և կենդանիների համար ևս գոյություն չունի բազմանալու որևէ «վերացական» որենք, քանի որ առհասարակ արտարակյան միմիայն դատումն է մի ամբողջ շարք համասեռ երևույթների մեջ» (143), և Լանգեն Մարքսին ժանրամասնորեն բացատրում է, թե ինչ է արտարակյան։ Ակնհայտ է, որ նա ուղղակի չի հասկացել Մարքսի հայտնաբերության իմաստը։ Մարքսն այդ տեսակետից մարդուն հակադրում է բույսերին և կենդանիներին այն հիման վրա, որ առաջինն ապրում է տարբեր, պատմականորեն իրար հաջորդող, սոցիալա-

* Այդպես է ձևակերպում Սարուվին իր հոդվածում, որը լույս է տեսել Socialpolitisches Centralblatt-ի մեջ (1893, № 1, հոկտ. 2)։ Նա ավելացնում է, որ այդ հայացքը «մալթուսական» չի համարում

կան որգանիզմների մեջ, որոնք վերոշվում են հասարակական արտադրության, ապա, հետևապես, նաև բաշխման տիրապետությանը։ Մարդու բազմանալու պայմաններն անմիջականորեն կախված են տարբեր սոցիալական որգանիզմների կառուցվածքից, ուստի և ազգաբնակության որենքը պետք է ուսումնասիրել յուրաքանչյուր այդպիսի որգանիզմի համար առանձին և ոչ թե «վերացականորեն», հասարակական կառուցվածքի պատմականորեն տարբեր ձևերից անկախ։ Լանգեյի այն պարզաբանությունը, թե արտարակյան ընդհանուրը դատումն է միատեսակ երևույթներից, ամբողջովին հենց իր դեմ է դառնում. մենք կարող ենք միատեսակ համարել միայն կենդանիների ու բույսերի գոյության պայմանները, բայց ոչ երբեք մարդունը, քանի որ մենք դիտենք, որ մարդն ապրել է իր կազմակերպության տիպով տարբեր սոցիալական ձևություններում։

Այնուհետև շարադրելով Մարքսի թեորիան հարաբերական գերբնակչության մասին կապիտալիստական երկրում, Լանգեն ասում է. «առաջին հայացքից կարող է թվալ, թե այդ թեորիան կտրում է այն երկար թելը, որն անցնում է ամբողջ որգանական բնության միջով ընդհուպ մինչև մարդը, թե այդ թեորիան բանվորական հարցի հիմքերն այնպես է բացատրում, որպես թե մարդկային ցեղի գոյության, բազմացման ու կատարելագործման վերաբերյալ ընդհանուր հետախուզությունները բոլորովին ավելորդ են մեր նպատակի համար, այսինքն՝ բանվորական հարցը հասկանալու համար» (154)*։

* Ցավ ինչ կարող են լինել այդ «ընդհանուր հետախուզությունները», ցավ նրանք անտես առնեն մարդկային հասարակության առանձնահատուկ տնտեսական ֆորմացիաները,—նրանք սովորական ստատիստիկություններ կդառնան։ Իսկ չէ՞ նրանք պետք է ընդգրկեն մի քանի ֆորմացիաներ, այն ժամանակ պարզ է, որ նրանց պետք է նախորդեն հատուկ հետախուզություններ յուրաքանչյուր ֆորմացիայի մասին առանձին։

Մարքսի թեորիան բնավ չի կորում այն թելը, որն անցնում է ամբողջ որգանական բնության միջով՝ մարդն էլ հետն առած. նա միայն պահանջում է, որ «բանվորական հարցը», քանի որ այն գոյություն ունի միայն կապիտալիստական հասարակության մեջ, լուծվի վրչ թե մարդու բազմացման վերաբերյալ «ընդհանուր հետախուզությունների» հիման վրա, այլ կապիտալիստական հարաբերությունների որենքների առանձնահատուկ հետախուզությունների հիման վրա։ Բայց Լանգեն այլ կարծիքի չե. «իսկ իրականության մեջ,—ասում է նա, այդ այդպես չե։ Ամենից առաջ պարզ է, որ գործարանային աշխատանքն արդեն իսկ իր առաջին սկզբնավորումների մեջ յենթադրում է ադեաստություն» (154)։ Յեվ Լանգեն մեկ է կես յերես նվիրում է այս դրույթի ապացույցներին, որոն ակներև և ինքնըստինքյան և որը մազաչափ անգամ մեզ առաջ չի շարժում. նախ՝ մենք գիտենք, որ կապիտալիզմն ինքն է ստեղծում աղքատությունը դեռ ավելի վաղ, քան իր զարգացման այն աստիճանը, յերբ արտադրությունը գործարանային ձև է ընդունում, ավելի առաջ, քան յերբ մեքենաներն ավելցուկ բնակչություն են ստեղծում. յերկրորդ՝ հասարակական կառուցվածքի՝ կապիտալիզմին նախորդող ձևն էլ—ֆեոդալական, ճորտատիրական ձևը—ինքն էր ստեղծել իր հատուկ աղքատությունը, որը և ժառանգաբար հանձնել է կապիտալիզմին։

«Բայց նույնիսկ այդպիսի հզոր ոգնական ունենալով հանդերձ [այսինքն՝ կարիքը]՝ առաջին ձեռնարկուին միայն հաղվագյուտ դեպքերում է հաջողվում դգալի թվով բանվորական ուժեր գրավել դեպի գործունեության նոր տեսակը։ Սովորաբար բանը հետևյալ ձևով է կատարվում։ Այն վայրից, որտեղ գործարանային արդյունաբերությունն արդեն քաղաքացիության իրավունքներ է նվաճել իր համար, ձեռնարկուն իր հետ բերում է բանվորների կոնտինգենտը։

արան նա միացնում է մի քանի ընչազուրկների*, որոնք տվյալ մոմենտին աշխատանք չունեն, և գործարանային առաջ կոնտինգենտի հետագա համալրումն արդեն կատարվում է անող պատճենության շարքերից» (156)։ Վերջին յերկու բառը Լանգեն շեշտադրով է գրում։ Ըստ յերևույթին՝ «մարդկային ցեղի գոյության, բազմացման և կատարելագործման վերաբերյալ ընդհանուր հետախուզությունները» արտահայտվելիս հենց այն դրույթով, որ գործարանատերը նոր բանվորներ հավաքագրում է «աճող պատանեկությունից» և վրչ թե քառամող ծերության շարքերից։ Բարի Լանգեն մի ամբողջ յերեսում (157) դեռ շարունակում է «այդ ընդհանուր հետախուզությունները»՝ պատմելով ընթերցողին, թե ծնողները ձգտում են ապահովելու իրենց զավակներին, թե գործարանատերը մորալիստները զուր են դատապարտում այն վիճակից դուրս գալու այդ ձգտումը, որի մեջ մարդ ծնվել է, թե զավակների համար սեփական դատում հարմարեցնելու ձգտումը միանգամայն բնական է։ Միայն հաղթահարելով այդ բոլոր դատողությունները, որոնք թեկուզ գեղագրության ձեռնարկներում տեղին լինեն, մենք հասնում ենք բուն գործին.

«Հողագործական յերկրում, որի հողը պատկանում է մանր ու խոշոր սեփականատերերին, յեթե միայն ժողովրդական բարքերի մեջ չի ամրապնդվել ծնունդները հոժարակամ սահմանափակելու սենդենցը, անխուսափելիորեն առաջ և գալիս աշխատող ձեռքերի ու սպառողների մշտական ավելցուկ, որոնք կամենում են ապրել տվյալ տերիտորիայի արտադրանքներով» (157—8)։ Այս դուռ մալթուսական

---

* Ի մեջի այլոց, վերտեղից դուրս յեկան այդ «ընչազուրկները»։ Հավանորեն, Լանգեի կարծիքով, դրանք հորատատիրական կարգերի հետևանքն են և վրչ ել կապիտալի տիրապետության արդյունք, այլ հետևանք այն բանի, որ «ժողովրդական բարքերում չի ամրապնդվել ծնունդները հոժարակամ սահմանափակելու սենդենցը» (եջ 157)։

պրոլեթը Լանգեն առաջադրում է հենց այնպես, առանց վորևէ ապացույցների: Նա նորից ու նորից կրկնում է այդ՝ ասելով, թե «համենայն դեպս այսպիսի յերկրի աղդաբնակությունը, թեկուզ և բացարձակապես շատ նոսր էլ լինի, սովորաբար հարաբերական դերբնակչության հատկանիշներ է պարունակում», թե «շուկայում շահույթ գեռևս չկա և աշխատանքի առաջարկը, ինչպես պահանջարկը մեծ է անհայտ» (158),—սակայն այս ամենը մնում է չհիմնավորված: Այդ վերտեղից է հետևում, թե «բանվորների ավելցուկը» իսկապես ստացվում է «անհրաժեշտներին»: Վերտեղից է ակնհայտ դառնում այն կապը, վոր ունի այս ավելցուկը ժողովրդական բարքերում ծնունդները հոժարակամ սահմանափակելու անդեմների բացակայության հետ: Արդյոք «ժողովրդական բարքերի» մասին դատողություններ անելուց առաջ պետք չէր նայել այն արտադրական հարաբերությունների վրա, վորոնց մեջ ապրում և այդ ժողովուրդը: Որինակ, յերևակայենք, վոր այն ժամը ու խոշոր սեփականատերերը, վորոնց մասին խոսում է Լանգեն, ըստ նյութական արժեքների արտադրության միացած լինեին այսպես. ժամը սեփականատերերը խոշորներից ստանային հողաբաժիններ իրենց ապրուստի համար և սրա փոխարեն խոշորների համար կուլտուրություն անեին՝ մշակելով նրանց դաշտերը: Այնուհետև յերևակայենք, վոր այդ հարաբերությունները խորտակված են, վոր մարքսիստական իդեանները այնքան են խելքից հանել խոշոր սեփականատերերին, վոր նրանք «ազատել են իրենց գյուղացիներին՝ սրանց հող հատկացնելով», այսինքն՝ կտրել են նրանցից մոտավորապես հողաբաժինների 20%-ը, իսկ միացած 80%-ի համար բռնագրավել են հողի առքի դին վճարելու՝ կրկնապատիկ ավելացրած չափով: Հասկանալի է, վոր այդ գյուղացիները, վորոնք այդպիսով ազատվված են «պրոլետարիատի խոցից», առաջվա պես պետք և աշխատեն խոշոր սեփականատերերի համար, վորպեսզի իրենց գոյությունը պահպանեն. սակայն

նրանք այժմ աշխատում են արդեն վճռ թե ձորատիրական բուրմիստրի վերակարգով, ինչպես առաջ, այլ ազատ պայմանագրի հիման վրա,—հետևապես մեկ-մեկու ձեռքից խլում են աշխատանքը, վորովհետև այժմ նրանք միմյանց հետ կապված չեն, և յուրաքանչյուրն իր հաշվին և վտրում իր անտեսությունը: Աշխատանքը խլելու այդ կարգն անխուսափելիորեն դուրս կմղի մի քանի գյուղացիներին, քանի վոր նրանք հողաբաժինների փոքրանալու և վճարքների ավելանալու հետևանքով ավելի թույլ են դարձել կալվածատիրոջ հանդեպ, ապա նրանց մրցումը կավելացնի հավելյալ արդյունքի նորման, և կալվածատերը ավելի պակաս թվով գյուղացիներով յոլա կերթա: Վորքան էլ ժողովրդական բարքերում ամրապնդվի ծնունդները հոժարակամ սահմանափակելու անդեմնը, միևնույն է, «ավելցուկի» առաջ գալն անխուսափելի է: Լանգեի դատողությունը, վորն անտեսում է հասարակական-տնտեսական հարաբերությունները, նրա յեղանակների անպետքության ակնհայտ ապացույցն է միայն: Իսկ Լանգեն այլևս ուրիշ վոչինչ չի տալիս, բացի հենց այդպիսի դատողություններից: Նա ասում է, թե կրծատատերերն արտադրությունը սկզբով փոխադրում են գյուղական խուլ մի ջավայրն այն պատճառով, վոր այնտեղ «մեծ պատրաստի կա աճեցված բանվորական ուժ՝ համեմատաբար մանկական ոչխատանք ամեն մի գործի համար» (161)՝ չհետազոտելով, թե վոր պատմությունը, հասարակական արտադրության վոր յեղանակն է առեղծել ծնողների՝ իրենց զավակներին սարկացման տալու այդ «պատրաստակամությունը»: Նրա յեղանակներն ամենից ավելի ռեյնեք պարզված են նրա այսպիսի դատողություններից. նա մեջբերում է և անում Մարքսից, վորն ասում է, թե մեքենային ինդուստրիան՝ հնարավորություն տալով, վոր կալվածալը գնի կանանց ու մանուկների աշխատանքը, բանվորին դարձնում է «սարկավաճառ»:

«Ահ թե ուր է տանելիս յեղել խոսքը»,—հաղթականորեն բացականչում է Լանգեն.—«Բայց մի՞թե կարելի չէ կարծել, թե բանվորը, վորը կարիքից ստիպված վաճառում է իր սեփական աշխատանքային ուժը, այդպես հեշտությամբ կանոններ վաճառելու նաև իր կնոջն ու զավակներին, յեթե նրան այդ քայլին չհարկադրեին մի կողմից կարիքը, իսկ մյուս կողմից՝ գայթակղությունը» (163):

Բարի Լանգեն իր յեռանդն այնտեղ է հասցրել, վոր բանվորին պաշտպանում է Մարքսից՝ Մարքսին ապացուցելով, թե «կարիքն է մղում բանվորին»:

... «Ցավ եյապես ուրիշ ինչ բան է այդ հետդեսն ավելի ծավալվող կարիքը հենց, յեթե վոչ գոյության կռվի փոխակերպությունը» (163):

Ահա թե ինչ դյուտերի յեն հասցնում «մարդկային ցեղի գոյության, բազմացման և կատարելագործման վերաբերյալ ընդհանուր հետախուզությունները»: Արդյոք մենք թեկուզ վորևե բան կիմանանք «կարիքի» պատճառների մասին, նրա քաղաքական-տնտեսական բովանդակության ու զարգացման ընթացքի մասին, յեթե մեզ ասում են, թե գոյության կռվի փոխակերպությունն է այդ: Չե՞ վոր այդ կարելի յե ասել ամեն բանի մասին, ինչի մասին վոր ուզում եք, թե բանվորի վերաբերմունքի մասին դեպի կապիտալիստը, թե հողատիրոջ վերաբերմունքի մասին դեպի գործարանատերն ու դեպի ճորտ գյուղացին և այլն և այլն: Բացի այսպիսի անբովանդակ տափակություններից կամ մի-ամտություններից մեզ վոչինչ չի տալիս Լանգեյի փորձը, վորով նա ուզում եր Մարքսին ուղղել: Տեսնենք այժմ, թե ինչ է տալիս այդ ուղղումը հիմնավորելու համար Լանգեյի հետևորդ պ. Ստրուվեն իր այն դատողությամբ, վոր վերաբերում է կոնկրետ հարցին, այն է՝ հողագործական Ռուսաստանի դերբնակչությունը:

Ապրանքային արտադրությունը—ասում է պ. Ստրուվեն—ավելացնում է յերկրի տարողությունը: «Փոխանակությունն

այդպիսի ներգործություն է հանդես բերում վրչ միայն արտադրության լիակատար, տեխնիկական ու տնտեսական վերակազմության միջոցով, այլ նաև այն դեպքերում, յերբ թե արտադրության տեխնիկան և ձևում նախկին աստիճանի վրա և թե բնատնտեսությունն է պահում իր նախկին խոշոր դերը բնակչության ընդհանուր տնտեսության մեջ: Բայց այս դեպքում կարճ աշխուժացումից հետո միանգամայն անխուսափելի կերպով վրա յե հասնում «գերբնակչության». սակայն ապրանքային արտադրությունը յեթե գերբնակչության համար մեղավոր կլ է, ապա միայն—1) վորպես գրգռիչ, 2) վորպես բարդացնող «միջնորդ» (182): Գերբնակչությունը կղար նաև առանց ապրանքային արտադրության. նա վոչ-կապիտալիստական բնույթ և կրում:

Ահա այն դրույթները, վոր առաջադրում է հեղինակը: Հենց սկզբից նրանք ապշեցնում են նույն այն անհիմնությամբ, վորը մենք տեսանք Լանգեյի մոտ. նրանք պնդում են, թե բնատնտեսական գերբնակչությունն անխուսափելի յե, սակայն չեն պարզաբանում, թե հատկապես ինչ պրոցեսով է նա առեղծվում: Դիմենք այն փաստերին, վորոնց մեջ հեղինակն իր հայացքների հաստատումն է գտնում:

1762—1846 թ.թ. տվյալները ցույց են տալիս, վոր բնակչությունն ընդհանուր առմամբ արագ չի բազմացել ամենևին. տարեկան աճն է 1,07—1,5%: Ընդամենն ավելի արագ զարգացել է բնակչությունը, Արսենյեվի ասելով, «հարստացման» նահանգներում: Այս «իրողությունը»—յեզրակացնում է պ. Ստրուվեն—«չափազանց բնորոշ է ժողովրդական տնտեսության պրիմիտիվ ձևերի համար, վորտեղ բազմացումն անմիջական կախման մեջ է բնական պատահարներից, կախում, վորը կարելի յե, այսպես ասած, ձեռքերով շոշափել»: Այդ՝ բնակչության բազմացման ու գոյամիջոցների միջև յեղած համապատասխանության «բնական» ներգործությունն է (185): «Վորքան ընդարձակ և հողային տարածությունը և վորքան բարձր է հողի բնական

պողաբերութիւնը, այնքան ավելի մեծ է բնակչութեան բնական աճը» (186)։ Միևնոյնժամանակ անսասացուցիչ յեղրակացութիւն. միմիայն այն փաստի հիման վրա, որ Յեկը. Ռուսաստանի կենտրոնական մարզի նահանգներում բնակչութիւնն ամենից քիչ աճել է 1790 մինչև 1846 թ. վլադիմիրի և կալուգայի նահանգներում, կառուցվում է բնակչութեան բազմացման ու դոյամիջոցների համապատասխանութեան մի ամբողջ որենք։ Մի՞թե «հողային տարածութեան» հիման վրա կարելի չէ դատել բնակչութեան դոյամիջոցների մասին։ (Յեթե նույնիսկ ընդունենք էլ, որ այդքան սակավաթիվ տվյալները թույլ են տալիս ընդհանուր յեզրակացութիւններ անել)։ Չի՞ որ այդ «բնակչութիւնն» անմիջապես իր վրա չէր գործ ածում այն արդյունքները, որ ստանում էր «բնական պողաբերութիւնից». նա այդ արդյունքները կիսում էր կալվածատերերի հետ, պետութեան հետ. պարզ չի՞ արդյոք, որ կալվածատիրական տնտեսութեան այս կամ այն սիստեմը,—կորը կամ բահրան, պարհակների չափն ու նրանց դանձման յեղանակները և այլն,—անսասանման ավելի եյին ազդում բընակչութեանը բաժին ընկնող «դոյամիջոցների» մեծութեան վրա, քան հողային տարածութիւնը, որն արտադրողների բացառիկ ու ազատ տիրապետութեան տակ չէր գտնվում Սակայն այդ քիչ է։ Անկախ այն հասարակական հարաբերութիւններից, որոնք արտահայտվում եյին ճորտային իրավունքի մեջ, բնակչութիւնն այն ժամանակ էլ կապկապված էր փոխանակութեամբ.—«մշակող արդյունաբերութեան բաժանումը հողագործութիւնից,—իրավացիորեն ասում է հեղինակը,—այսինքն աշխատանքի հասարակական ազգային բաժանումը դոյութիւն ուներ նաև մինչռեֆորմյան ժամանակաշրջանում» (189)։ Հարց է ծագում, հապա ինչո՞ւ պետք է այդ դեպքում մենք ուսումնասիրենք, որ «դոյամիջոցները» ավելի քիչ առատ եյին Վլադիմիրի նահանգի տնայնագործի կամ անասնաուսի մոտ, որոնք ապրում եյին

ճահճի վրա, քան Տամբովի նահանգի սովորական հողագործի մոտ՝ նրա ամբողջ «հողի բնական պողաբերութեամբ» հանդերձ։

Այնուհետև պ. Ստրուվեն տվյալները և բերում ազատագրութիւնից առաջ ճորտային բնակչութեան նվազման մասին։ Այն տնտեսագետները, որոնց կարծիքը նա հաղորդում է, այդ յերևույթը վերագրում են «բարեկեցութեան անկմանը» (189)։ Հեղինակը յեզրակացնում է.

«Մենք կանգ առանք ճորտային բնակչութեան թվի՝ ազատագրութիւնից առաջ նվազելու փաստի վրա, որովհետև այդ փաստը—մեր կարծիքով—պայծառ լույս է սփռում Ռուսաստանի այդ ժամանակաշրջանի տնտեսական դրութեան վրա։ Յերկրի մի զգալի մասը... հագեցած եր բնակչութեամբ՝ տվյալ տեխնիկա-տնտեսական ու սոցիալ-իրավական պայմաններում. վերջիններն ուղղակի աննպաստ եյին ամբողջ բնակչութեան համարյա 40 %-ի քիչ-շատ բազմացման համար» (189)։ Եվ ինչ գործ ունի այստեղ Մալթուսի այն «որենքը», թե բազմացումը համապատասխանում է դոյամիջոցներին, յերբ ճորտատիրական հասարակական կարգերն այդ դոյամիջոցները տանում, լցնում եյին մի բուռը խոշոր հողատերերի ձեռքը՝ մի կողմ թողնելով բնակչութեան այն մասսան, որի բազմացումն ուսումնասիրութեան և յենթարկվում։ Կարելի՞ է արդյոք վերևն արժեք վերագրել հեղինակի, որինակ, այն դատողութեանը, թե ամենանվազ աճ նկատվել է կամ սակավ պողաբեր նահանգներում, որտեղ արդյունաբերութիւնը թույլ և զարգացած, կամ խիտ բնակված զուտ հողագործական նահանգներում։ Պ.ն Ստրուվեն ուզում է դրա մեջ տանել այն «վոչ-կապիտալիստական դերբնակչութեան» արտահայտութիւնը, որը պետք է վրա հասներ առանց ապրանքային տնտեսութեան էլ, որը «համապատասխանում է բնատնտեսութեանը»։ Սակայն նույնպիսի, յեթե վոչ ավելի մեծ, իրավունքով կարելի կլիներ ասել, թե այդ դերբնակչութիւնը համապատասխանում է ճորտային տնտեսութեանը, թե

բնակչության դանդաղ աճումն ավելից ավելի կախված էր գյուղացիական աշխատանքի շահագործման այն ուժեղացումից, որը տեղի ունեցավ ապրանքային արտադրության աճման հետևանքով կալվածատիրական տնտեսություններում, որպես հետևանք այն բանի, որ նրանք սկսեցին կոռային աշխատանք կիրառել՝ վաճառելու համար ու վոչ թե միայն իրենց պետքերի համար հաց արտադրելու նպատակով։ Հեղինակի որինակները նրա դեմ են խոսում. նրանք խոսում են այն մասին, որ անկարելի չի ազգաբնակության վերացական որենք կառուցել՝ բազմացման և գոյամիջոցների համապատասխանության ֆորմուլայով՝ անտեսելով հասարակական հարաբերությունների պատմականորեն ուրույն սիստեմներն ու նրանց զարգացման առանձնահատկությունները։

Անցնելով հետևեֆորյան ժամանակաշրջանին՝ պ. Սարուվեն ասում է. «բնակչության պատմության մեջ ճորտատիրային իրավունքի անկումից հետո մենք տեսնում ենք նույն այն հիմնական գիծը, ինչ նաև մինչև ազատագրության բազմացման էներգիան ընդհանուր առմամբ ուղղակի կախված է հողային տարածությունից ու հողաբաժնից» (198)։ Այդ ապացուցվում է մի փոքրիկ աղյուսակով, որը գյուղացիներին խմբավորում է ըստ հողաբաժնի չափի և ցույց է տալիս, որ բնակչության աճն այնքան ավելի չի, որքան մեծ է հողաբաժնի չափը։ «Սեվ այդ չի էլ կարող այլ կերպ լինել բնական, «ինքնաստատողական»... տնտեսության պայմաններում, որը ծառայում է ամենից առաջ իր իսկ արտադրողի կարիքներն անմիջականորեն բավարարելու համար» (199)։

Իրոք, եթե այդ այդպես լիներ, եթե հողաբաժինները ծառայեին ամենից առաջ արտադրողի կարիքներն անմիջականորեն բավարարելու համար, եթե նրանք այդ կարիքները բավարարելու միակ աղբյուրը լինեին,—այն ժամանակ և միայն այն ժամանակ կարելի կլիներ այդպիսի տվյալներից բազմացման ընդհանուր որենք հետևցնել։ Բայց մենք

դիտենք, որ այդ այդպես չի։ Հողաբաժինները ծառայում են «ամենից առաջ» կալվածատերերի ու պետության կարիքները բավարարելու համար. նրանք առնվում են տիրապետողի ձեռքից, եթե այդ «կարիքները» ժամանակին չեն բավարարվում. նրանք հարկվում են այնպիսի վճարքներով, որոնք գերազանցում են նրանց եկամտաբերությունից։ Այնուհետև, այդ՝ գյուղացու միակ ռեսուրսը չէ. տնտեսության դնեֆիցիտը,—ասում է հեղինակը,—պետք է պրեմիտիվ և ռեպրեսիվ կերպով ազդի բնակչության վրա. տարավայր արհեստագործությունները գրավելով մեծահասակ արական բնակչությունը՝ բացի դրանից կասեցնում են նաև բազմացումը (199)։ Բայց եթե բաժնեհողային տնտեսության դեֆիցիտը ծածկվում է վարձակալությամբ կամ արհեստագործական դատումով, ապա գյուղացու գոյամիջոցները կարող են միանգամայն բավարար լինել «յուրաքանչյուրին բազմացման» համար։ Անվիճելի չի, որ պայմաններն այդպես նպաստավոր կերպով դասավորվել կարող են միայն գյուղացիների փոքրամասնության համար, բայց—գյուղացիության ներսի արտադրական հարաբերությունների հատուկ վերլուծության բացակայության դեպքում—վոչ մի տեղից չի երևում, թե այդ աճը հավասարաչափ և տեղի ունենում, թե այդ հետևանք չէ առավելապես փոքրամասնության բարեկեցության։ Վերջապես հեղինակն ինքը իր դրույթի ապացուցության պայմանն է դնում բնատնտեսությունը, իսկ ռեֆորմից հետո, նրա սեփական խոստովանությամբ, նախկին կյանքի մեջ լայն ալիքով թափանցեց ապրանքային արտադրությունը։ Ակներև է, որ բազմացման բնդհանուր օրենք սահմանելու համար հեղինակի տվյալները բացարձակապես անբավարար են։ Բացի դրանից, վերացական «պարզությունը» այդ որենքի, որը յենթադրում է, թե քննության առնվող հասարակության մեջ արտադրության միջոցները «ծառայում են ամենից առաջ իր իսկ արտադրողի կարիքներն անմիջականորեն բավարարելուն», բոլո-

ղովին սխալ, վոչնչով չապացուցված լուսաբանություն և տալիս վերին աստիճանի բարդ իրողություններին։ Որինակ՝ ազատագրությունից հետո,—ասում է պ. Սարուվեն,—կալվածատերերի համար ձեռնտու չեր հողը վարձակալության տալ գյուղացիներին։ «Այդպիսով, գյուղացիությանը մատչելի աննդային տարածությունը, այսինքն նրա գոյամիջոցները ավելանում էին» (200)։ Ամբողջ վարձակալությունն այդպես ուղղադծորեն «աննդային տարածության» մեջ հաշվելը բոլորովին չի հիմնավորված և սխալ է։ Հեղինակն ինքն է ժամանակում, վոր կալվածատերերը նրանց հողի վրա արտադրվող արդյունքից առյուծի բաժին էին վերցնում (200), այնպես վոր, դեռ հարց է, թե արտյոք չեր վատթարացնում այդպիսի վարձակալությունը (որինակ, աշխատավճար. վարձակալությունը) վարձակալների դրությունը, արդյոք նրանց վրա չեր դնում այնպիսի պարտավորություններ, վորոնք վերջիվերջո աննդային տարածության փոքրացման պատճառ էին դառնում։ Այնուհետև, հեղինակն ինքը ժամանակում է, վոր վարձակալությունը մատչելի չեր ամեն ունևոր գյուղացիներին (216), վորոնց ձեռքում նա պետք է հանդիսանա ավելի շուտ ապրանքային տնտեսությունն ընդարձակելու, քան «ինքնասպառողական» տնտեսությունն ամրապնդելու միջոց։ Յեթե նույնիսկ ապացուցվեր, վոր վարձակալությունը ընդհանուր առմամբ բարելավեց «գյուղացիության» դրությունը, ապա ինչ նշանակություն կարող էր ունենալ այդ հանգամանքը, երբ, հենց հեղինակի խոսքերով, վարձակալությունը քայքայում էր չքավորներին (216), այսինքն՝ վաղանց հաստ չեղած այդ բարելավումը մյուսների համար վատթարացնում էր նշանակում։ Գյուղացիական վարձակալության մեջ ըստ էության միահյուսվում են հին, ճորտատիրական ու նոր, կապիտալիստական հարաբերությունները. հեղինակի վերացական դատողությունը, վորը նկատի չի առնում վոչ մեկը և վոչ մյուսը, վոչ

միայն չի ոգնում այդ հարաբերությունները հասկանալուն, այլ ընդհակառակը, խճճում և դժվարացնում։

Մնում է հեղինակի դարձյալ մի մատնանշումը այն տվյալների, վորոնք, վորպես թե, հաստատում են նրա հայացքները։ Այդ հենց այն հիշատակությունն է, թե «հին սակավահողության բառը մի առորյա տերմին է այն իրավունքի համար, վոր պիտություն գերբնակչություն է անվանում» (186)։ Հեղինակը, կարծես, այդպիսով հենվում է մեր ամբողջ նարոդնիկական գրականության վրա, վորն անվիճելի կերպով հաստատել է այն իրողությունը, թե գյուղացիական հողաբաժիններն «անբավարար» են, վորը հազար անգամ «ամրապնդել է» «գյուղացիական հողատիրության ընդարձակելու» վերաբերյալ իր ցանկություններն այսպիսի «պարզ» կշռադատության։ Բնակչությունն ավելացել է—հողաբաժիններն ժանրացել են—բնական է, վոր գյուղացիները քայքայվում են։ Սակայն «սակավահողության» վերաբերյալ այդ նարոդնիկական ծամծմված դատողությունը հազիվ թե վորևե պիտական* նշանակություն ունենա, հազիվ թե նա ուրիշ վորևե այլ բանի պետք գա, բացի նրանից, վոր «բարեմիտ ճառեր» սարքվեն հայրենիքի՝ ճիշտ ճանապարհով անհիվանդացին ընթանալու հարցի վերաբերյալ կազմված հանձնաժողովում։ Այս դատողության մեջ ծառերը նըշմարելով անտառը չեն տեսնում, երևույթի արտաքին կոնտուրի հետևում չի երևում նկարի հիմնական հասարակական-տնտեսական ֆոնը։ Հակառակ հողային ֆոնդի «հինավանդականական» կացութաձևի ներկայացուցիչներին պատկանելը մի կողմից, հողը գնման միջոցով ձեռք բերելը մյուս կողմից—ահա այն հիմնական ֆոնը, վորի դեպ-

* Այսինքն՝ այդ դատողությունը բոլորովին անպետք է գյուղացիության քայքայումն ու գերբնակչությունը բացատրելու համար, թեև հողի «անբավարարության» բուն իսկ իրողությունն անվիճելի է, ինչպես նաև նրա սրումը բնակչության աճման հետևանքով։ Պահանջվում է վոչ թե փաստն արձանագրել, այլ բացատրել նրա ծագումը։

քում սինն մի «հողատիրության ընդարձակում» խղճուկ կիսամիջոց կլիներ։ Թե սնակավահողության վերաբերյալ նորոդնիկական դատողությունները և թե Մալթուսի «օրենքները» բազմացման ու գոյամիջոցների համապատասխանության մասին սխալ են հենց իրենց վերացական «պարզությամբ», որն անտեսում է տվյալ, կոնկրետ հասարակական-տնտեսական հարաբերությունները։

Պ-ն Ստրուվեի փաստարկությունների այս տեսությունը մեզ բերում է այն յեղրակացության, որ նրա այն դրույթը, թե իբր հողագործական Ռուսաստանի գերբնակչությունը բացատրվում է բազմացման ու գոյամիջոցների անհամապատասխանությամբ, բացարձակապես վոչնչով չի ապացուցված։ Իր պատճառաբանությունները նա յեզրափակում է այսպես. «և ահա մեր առաջ է բնատնտեսական այն գերբնակչության պատկերը, որը բարդացել է ապրանքատնտեսական մոմենտներով ու ճորտային դարաշրջանի հասարակակարգից ժառանգված ուրիշ կարևոր գծերով» (200)։ Իհարկե, սինն մի տնտեսական փաստ հավար, որ տեղ չի ունենում «բնական» տնտեսությունից «ապրանքայինին» անցում կատարող յերկրում, կարելի չի ասել, որ այդ «բնատնտեսական» յերևույթ է՝ «ապրանքատնտեսական մոմենտներով բարդացած»։ Կարելի չի հակառակն էլ ասել. «ապրանքատնտեսական յերևույթ է՝ բնատնտեսական մոմենտներով բարդացած»։—սակայն այդ սինն ի վիճակի չեն տալու վոչ միայն «պատկերը», այլ նույնիսկ ամենափոքր գաղափար այն մասին, թե հատկապես ինչպես է ստեղծվում գերբնակչությունը հասարակական-տնտեսական տվյալ հարաբերությունների հողի վրա։ Հողինակի վերջնական յեզրակացությունն այս է ասում պ. Ն.—ոնի ու նրա՝ Ռուսաստանի կապիտալիստական գերբնակչության թեորիայի մասին. «մեր գյուղացիները բավարար չափով անուն չեն արտադրում» (237)։

Գյուղացիների հողագործական արտադրությունը մինչև այժմ տալիս է այնպիսի արդյունքներ, որոնք անցնում են պետության միջոցով փրկանավճարքներ ստացող կալվածատերերի ձեռքը,—նա դրծառնության հողատական ոբյեկտ և առևտրական ու վաշխառուական կապիտալի համար, որը խլում է գյուղացիության գերակշռող մասսայի արտադրանքի հսկայական բաժինը,—վերջապես իր իսկ «գյուղացիության» մեջ այդ արտադրությունն այնպես բարդ ձևով է բաշխված, որ ընդհանուր ու միջին պլյուսը (վարձակալության) մասսայի համար դառնում է մինուս, և հասարակական հարաբերությունների այդ ամբողջ ցանցը պ. Ստրուվեն կարում է, ինչպես մի զորեղ հանգույց, վերացական և ամենևին չհիմնավորված հետևյալ վճռով. «արտադրությունն անբավարար է»։ Վոչ, այդ թեորիան վոչ մի քննադատության չի դիմանում. նա միայն խճողում է այն, ինչ որ յենթակա յե հետազոտության, այն է՝ արտադրական հարաբերությունները գյուղացիների հողագործական տնտեսության մեջ։ Մալթուսյան ֆորմուլան բանն այնպես է պատկերում, կարծես թե մեր առաջ tabule rasa յե, և վոչ թե ճորտատիրական ու բուրժուական հարաբերություններ, որոնք միահյուսվում են ռուսական գյուղացիական տնտեսության ժամանակակից կազմակերպության մեջ։

Հասկանալի յե, մենք յերբեք չենք կարող բավարարվել պ. Ստրուվեի հայացքների քննադատությամբ միայն. մենք պետք է հետաքրքրվենք նաև այն հարցով, թե որոնք են նրա սխալի հիմունքները, և հակառակորդներից և (պ.Ն.—ոնը և պ. Ստրուվեն) որոն և իրավացի գերբնակչության վերաբերյալ իր բացատրություններում։

Պ-ն Ն.—ոնը գերբնակչության վերաբերյալ իր բացատրությունը հիմնում է այն փաստի վրա, որ բազմաթիվ ընտվորներ «ազատագրվելուց» արհեստագործական հաստատությունների կապիտալիզացիայի հետևանքով. միաժամանակ նա բերում է խոշոր ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության աճ-

ժան վերաբերյալ տվյալները և անուշափը և թողնում տնայնագործական արհեստագործությունների ամման զուգընթաց իրողությունը, որն արտահայտում է աշխատանքի հասարակական բաժանման խորացումը*: Նա իր բացատրությունը վերադրում է հողագործության վրա՝ մինչև անգամ փորձ էլ չանելով ճշտորեն ուրվագծելու նրա հասարակական-տնտեսական կազմակերպությունն ու նրա զարգացման ասպիճանը:

Պ-ն Ստրուվեն դրան իր պատասխանն մատնանշում է, որ «կապիտալիստական գերբնակչությունը, Մարքսի խոսքով առած, սերտորեն կապված է տեխնիկայի առաջադիմության հետ» (183) և որովհետև նա պ. —ոնի հետ միասին գտնում է, որ գյուղացիական «տնտեսության տեխնիկան գրեթե չի առաջադիմել» (200),—ապա այդ պատճառով էլ նա հրաժարվում է հողագործական Ռուսաստանի գերբնակչությունը կապիտալիստական համարելուց և այլ բացատրություններ է փնտռում:

Պ-ն Ստրուվեյի մատնանշումը, որ արել է իր պատասխան պ. Ն.—ոնի, ճիշտ է: Կապիտալիստական գերբնակչությունը նրանով է ստեղծվում, որ կապիտալը տիրապետում է արտադրությանը և նվազեցնելով (տվյալ քանակությամբ արդյունքներ արտադրելու համար) անհրաժեշտ բանվորների թիվը՝ ստեղծում է ավելորդ բնակչություն: Մարքսը հետևյալն է ասում հողագործության մեջ եղած կապիտալիստական գերբնակչության մասին.

«Հենց որ կապիտալիստական արտադրությունը տիրապետում է գյուղատնտեսությանը կամ այն չափով, որչափով սրան տիրապետում է հետզհետե, գյուղական բանվորների պահանջարկը բացարձակապես պակասում է այս ասպրեզում գործող կապիտալի կուտակման հետ միատեղ՝ ընդվորում բանվորներին դուրս մղելուն զուգընթաց տեղի չի ունենում նրանց մեծ թվով ներգրավումը, ինչպես այդ կատարվում է վոչ-հողագործական արդյունաբերության մեջ: Ուստի բնակչության մի մասը միշտ պատրաստ է քաղաքային կամ մանուֆակտուրային բնակչության վտխվելու*: (Մանուֆակտուրա բառն այստեղ գործ է ածված ամեն մի վոչ-հողագործական արդյունաբերության նկատմամբ): Հարաբերական գերբնակչության այդ աղբյուրն այդպիսով հոսում է մշտապես: Սակայն նրա մշտական հոսումը ենթադրում է արդեն գյուղում մշտական թագուն գերբնակչություն, որի չափը տեսանելի չի դառնում միայն այն ժամանակ, երբ հեռատար կանալներն արտասովոր չափով լայն են բացվում: Սրա հետևանքով գյուղական բանվորը հարկադրված է սահմանափակելու աշխատավարձն նվազագույնով և շարունակ մի վոտքով կանգնած է պաուպերիզմի ճահճում» (Das Kapital, 2 Aufl, S. 668):

Պ-ն Ն.—ոնը չի տպագրել հողագործական Ռուսաստանի գերբնակչության կապիտալիստական բնույթն այն պատճառով, որ այն չի կապել հողագործության մեջ եղած կապիտալիզմի հետ. սահմանափակվելով մասնատիրական տնտեսության կապիտալիստական եվոլուցիայի թռուցիկ ու վոչ-լրիվ մատնանշումով՝ նա բոլորովին աչքաթող է արել գյուղացիական տնտեսության կազմակերպության բուբ-

* Հայտնի է մեր տնայնագործական արհեստագործությունների ամման ու մեծ թվով նորերի բերման գալու իրողությունը ոչնչությունից հետո: Հայտնի է նաև մյուս արհեստագործությունների կապիտալիզացիայի կողքին նկատվող այդ փաստի թեորիական բացատրությունը, որ տվել է Մարքսը հարդյունաբերական կապիտալի համար ներքին շուկայի ստեղծման «պատմական բացատրելիս» [Das Kapital, 2 Aufl., S. 776 u.f.f.]:

* Ի միջի այլոց, Այս փաստը դիտելն էլ, հավանորեն, առիթ է տվել Լանգեյին ուղղում հրատարակելու Մարքսի թեորիայի նկատմամբ, որը նա բավականաչափ չի ըմբռնել: Փոխանակ այդ իրողությունը վերլուծելով՝ յուրացնելու հասարակական արտադրության տվյալ (կապիտալիստական) ձեղնակը և հետևելու նրա արտահայտության ձևերի մեջ, նրա խելքին փչել է «ժողովրդական բարքերի» գանազան առանձնահատկություններ հորինել:

ժուռական գծերը։ Պ-ն Ստրուվեն պետք է ուղղեր պ. Ն.—ոնի շարադրանքի այդ անբավարարությունը, որը շատ կարևոր նշանակություն ունի, որովհետև կապիտալիզմի անտեսումը հողագործության մեջ, նրա ներթափանցության ու միաժամանակ նրա դեռևս թույլ զարգացման անտեսումը, բնականաբար, հասցրել է նեղքին շուկայի բացակայության կամ կրճատման թեորիային։ Փոխանակ պ. Ն.—ոնի թեորիան հանգեցնելու մեր հողագործական կապիտալիզմի կոնկրետ ժխյալներին՝ պ. Ստրուվեն ընդհել է ուրիշ սխալի մեջ՝ բոլորովին ժխտելով գերբնակչության կապիտալիստական բնույթը։

Կապիտալի՝ հողագործական անտեսության մեջ ներքնաժելով բնորոշվում է ամբողջ հետևենիրմյան պատմությունը։ Կալվածատերերն անցնում էին ազատավարձու աշխատանքի (դանդաղ թե արագ, այդ այլ հարց է), որը շատ ընդարձակ չափով տարածվեց և վերջին նույնիսկ գյուղացիական դասակների գերակշռող մասի բնույթը. կալվածատերերը բարձրացնում էին տեխնիկան և գործածության մեջ մտցնում մեքենաները։ Մինչև անգամ տնտեսության մեծնող ճորտատիրական սխտեմը—հողերն աշխատավճարությամբ գյուղացիներին տալը—բուրժուական փոխակերպման էր ենթարկվում շնորհիվ գյուղացիների վրցման, որը հետևանքով վատթարացավ վարձակալողների դրությունը, ստեղծվեցին ավելի ծանր պայմաններ*և, հետևապես, պակասեց բանվորների թիվը։ Գյուղացիական տնտեսության մեջ միանգամայն պարզ կերպով յերևան յեկավ գյուղացիության

* Տես, օրինակ, Կարըշև («Итоги земской статистики»—«Զեմստվային վիճակագրության հանրագումարները», II հատոր, եջ 266)—Դոնի Ռոստովի գավառի վերաբերյալ ժողովածուի մատնանշումն այն մասին, թե գյուղացիների բաժինն ամենաանբավար պակասում էր մեխանիզմը աշխատանքի մեջ։ Նույն տեղում, գլ. V, § 9—կիսոբաժնային վարձակալության դեպքում գյուղացիների լրացուցիչ աշխատավճարումների մասին։

տրոհումը գյուղական բուրժուազիայի ու պրոլետարիատի։ «Հարեւանները» ընդարձակում էին հերկը, բարելավում էին տնտեսությունը [հմմտ. Վ.Վ., «Առաջադիմական հոսանքները գյուղացիական տնտեսության մեջ»] և ամրապնդած էին դիմելու վարձու աշխատանքի ոգնության։ Այդ ամենը վաղուց հաստատված, հանրահանաչ իրողություններ են, որը (ինչպես իսկույն կտեսնենք) մատնանշում է ինքը պ. Ստրուվեն էլ։ Նկարագարելու համար վերցնենք ամենատիպական դեպքն եվրոպական գյուղում. «հուլակը» «հաժայնքից», ավելի ճիշտ, պրոլետարական տիպի հաժայնակիցներից պոկել և բաժնեհողի լավագույն կտորը և նրա վրա տնտեսություն և վարում հենց նույն «հողաբաժնով ապահովված» գյուղացիների աշխատանքով և ինվենտարով, վորոնք կաշկանդված էին պարտքերով ու պարտավորություններով և կապված էին իրենց բարերարի հետ—սոցիալական փոխհարմարեցման ու համերաշխ գործունեության համար—նահապետական սիրած համայնական սկզբունքների դորությամբ։ Նա տնտեսությունը վարվում է, իհարկե, քայքայված, գյուղացիների տնտեսությունից ավելի լավ և պահանջում է անհամեմատ ավելի փոքր թվով բանվորներ՝ համեմատած այն ժամանակի հետ, յերբ այդ կտորը մինչև ժամանակի հետ, յերբ այդ կտորը մինչև ժամանակի տնտեսությունների ձեռքին էր։ Վոր այսպես վարատերը չեզակի չեն, այլ ընդհանրական, այդ վոչ մի նորագնիկ ժխտել չի կարող։ Նրանց թեորիայի ուրույն բնույթն այն է միայն, վոր նրանք չեն ուզում այդ փաստերն իրենց իսկական անունով կոչել չեն ուզում տեսնել, վոր այդ փաստերը նշանակում են կապիտալի տիրապետություն հողագործության մեջ։ Նրանք մոռանում են, վոր կապիտալի նախնական ձևը միշտ և ամենուրեք յեղել է առևտրական, դրամական կապիտալը, վոր կապիտալը միշտ արտադրության տեխնիկական պրոցեսը վերցնում է այնպես, ինչպես նա գտնում է այն, և միայն հետագայում է այն ենթարկում տեխնիկական փոխակերպման։ Այդ պատճառով նրանք չեն տեսնում, վոր

«պաշտպանելով» (հասկանալի չի, խոսքերով,—և դրանից վոչ ավելի) ժամանակակից հողագործական կարգերը «գալիք» (?!) կապիտալիզմից, նրանք պաշտպանում են միայն կապիտալի միջնադարյան ձևերը նրա նորագույն, զուտ բուրժուական ձևերի դեմից։

Այսպիսով չի կարելի ժխտել Ռուսաստանի գերբնակչության կապիտալիստական բնույթը, ինչպես չի կարելի ժխտել այն, վոր կապիտալն իշխում է հողագործության մեջ։ Սակայն հասկանալի չի, միանգամայն անհեթեթություն կլինի անտեսել կապիտալի զարգացման տոնիները, ինչպես այդ անում է պ. Ն.—ոնը, վորը հափշտակված՝ այդ զարգացումը պատկերացնում է համարյա ավարտված և այդ պատճառով հորինում է ներքին շուկայի կրճատման կամ բացակայության թեորիա, մինչդեռ իրոք՝ կապիտալը թեև արդեն իշխում էլ է, սակայն համեմատաբար շատ անզարգացած ձևով. մինչև լիակատար զարգացումը, մինչև արտադրողի լիովին անջատումն արտադրության միջոցներից դեռ շատ միջանկյալ աստիճաններ կան, և հողագործական կապիտալիզմի յուրաքանչյուր քայլը դեպի առաջ՝ նշանակում է ընդլայնել ներքին շուկայի, վորն, ըստ Մարքսի թեորիայի, հատկապես հողագործական կապիտալիզմի միջոցով էլ ստեղծվում է,—վորը Ռուսաստանում չի կրճատվում, այլ ընդհակառակը, կազմավորվում և զարգանում է։

Այնուհետև, մենք տեսնում ենք հողագործական կապիտալիզմի * թեկուզ և ամենաընդհանուր այդ բնութագրից, վոր նա չի պարփակում հասարակական-տնտեսական բոլոր հարաբերությունները գյուղում։ Նրա կողքին տեսնում ենք դեռևս նաև ճորտատիրական հարաբերություններ թե արտադրական ասպարեզում (որինակ, կտրովի հողի վարձակալության աշխատավճարումով և բնավճարումով — այստեղ

* Նրա մասին մանրամասն խոսք կլինի ներքևում, գյուղացիների ու կալվածատերերի վերաբերմամբ առանձին-առանձին։

տեսակ յեն հորատատիրական տնտեսության բոլոր հատկանիշները,—թե «ծառայությունների» բնատնտեսական «փոխանակություն» արտադրողի ու արտադրության միջոցների սեփականատիրոջ միջև և թե արտադրողի շահագործում նրան հողին ամրացնելով, և վոչ թե արտադրության միջոցներից անջատելով) և թե եւ ավելի շատ՝ սոցիալական և քրոնավաքաղաքական ասպարեզում (պարտադիր «ապահովում հողաբաժնով», ամրացում հողին, այսինքն՝ տեղափոխության ազատության բացակայություն, փրկանավճարքներ, այսինքն կալվածատիրոջը տրվող նույն բարեր, հպատակում արտոնյալ հողատերերի դատարանին ու կառավարմանը և այլն). այս հարաբերությունները եւ, անկասկած, տանում են դեպի գյուղացիների քայքայում ու զրկվելություն, դեպի՝ հողին ամրացված բատրակների «գերբնակչություն»։ Ժամանակակից հարաբերությունների կապիտալիստական հիմքը չպետք է աչքի առջև «հին աղնվական» վերնախավի դեռևս հզոր այդ մնացորդները, վորոնք դեռ ֆայֆայված չեն կապիտալիզմի կողմից՝ հենց նրա անզարգացած լինելու հանգամանքով։ Կապիտալիզմի անզարգացած լինելը, «Ռուսաստանի հետամնացությունը», վորը նարոդնիկները բախտավորություն * են համարում, «բախտավորություն է» միայն ազնվազարմ կոչվող շահագործողների համար։ Ժամանակակից «գերբնակչության» մեջ բացի հիմնական կապիտալիստական դծերից կան, հետևապես, նաև ճորտատիրական դծեր։

Յեթե մենք այդ վերջին դրույթը համեմատենք պ. Ստրուվեի այն դրույթի հետ, թե «գերբնակչության» մեջ կան բնատնտեսական ու ապրանքատնտեսական դծեր, ապա կտեսնենք, վոր առաջինը չի բացառում յերկրորդը, այլ ընդհակառակը, պարունակվում է նրա մեջ։ Ճորտային իրավունքը վերաբերում է «բնատնտեսական» յերևույթների,

* Գ. Ժուժակովի ասածը «Русск. Богатство»-յում։

կապիտալիզմը՝ «ապրանքատնտեսական» յերևույթներից Գ-ն Ստրուվեյի դրույթը, մի կողմից, վորոշակի չի մատնանշում, թե հատկապես վոր հարաբերություններն են բնատնտեսական, և վորոնք՝ ապրանքատնտեսական, իսկ մյուս կողմից, մեղ հետ և տանում դեպի Մալթուսի չհիմնավորված ու անբովանդակ «օրենքները»։

Այդ թերությունների բնականաբար բղխել և հետագա շարադրանքի անբավարարությունը։ «Իսկ ինչ կերպով,— հարցնում է հեղինակը,—ինչ հիմունքներով կարող ե վերակառուցվել մեր ժողովրդական տնտեսությունը» (202)։ Տարօրինակ հարց, վոր ձևակերպված և դարձյալ բոլորովին պրոֆեսորաբար, բոլորովին այնպես, ինչպես սովոր են հարցերը դնել պարոնայք նարոդնիկները, վորոնք արձանագրում են ներկայի անբավարարությունը և փնտռում են յուրայատուկ ուղիներ հայրենիքի համար։ «Մեր ժողովրդական տնտեսությունը» կապիտալիստական տնտեսություն է, վորի կազմակերպումն ու «վերակազմումը» վորոշում է այդ տնտեսությունը «վարող» բուրժուազիան։ Հնարավոր վերակազմության հարցի փոխարեն հենց պետք եր դնել այդ բուրժուական տնտեսության զարգացման հաջորդական առաձգանների հարցը, պետք եր հենց այն թեորիայի տեսակետից, հանուն վորի հեղինակն այնպես հիանալի պատասխանում է պ. վ. վ.-ին, վորը պ. Ն.—ոնին հանձնարարում է իբրև «անկասկածելի մարքսիստ»,—թե այդ «անկասկածելի մարքսիստը» գաղափար չունի դասակարգային կռվի մասին ու պետության դասակարգային ծագման մասին։ Հարցի դրումը մատնանշված իմաստով փոփոխելը կապահովեր հեղինակին «դյուրացիության» վերաբերյալ այնպիսի կցկտուր դատողություններից, վոր մենք կարդում ենք 202—4 եջերում։

Հեղինակն սկսում է նրանից, վոր դյուրացիության ունեցած բաժնեհողը բավարար չէ, վոր յուրաքանչյուր նա այդ պակասը ծածկում էլ և վարձակալությամբ, ապա «նրա մի ղեկլի մասն», այնուամենայնիվ, միշտ դեֆիցիտ է ունենում. խոսքը

դյուրացիության մասին, վորպես մի ամբողջության մասին, չէ կարելի, վորովհետև այդ նշանակում է խոսել ֆիկցիայի մասին* (եջ 203)։ Յեվ անմիջապես դրանից հետևյալ յեզրակացությունն է հանվում։

«Համենայն դեպս, անբավարար արտադրությունը մեր ժողովրդական տնտեսության հիմնական, խիստ փաստն է» (եջ 204)։ Միանգամայն հիմնավորված չի և վոչ մի կերպ չի կապվում նախընթացի հետ. ինչու՞ «հիմնական, իշխող փաստն» այն չէ, վոր դյուրացիությունը վորպես ամբողջության ֆիկցիա չէ, քանի վոր նրա ներսում առաջանում են թշնամի դասակարգեր։ Հեղինակն իր յեզրակացությունը հանում է առանց վորևե տվյալների, առանց վորևե վերլուծության յենթարկելու այն փաստերը, վորոնք վերաբերում են անբավարար արտադրությանը [վորը, սակայն, չի խանգարում փոքրամասնությանը՝ բարեկեցություն ձեռք բերել ի հաշիվ մեծամասնության] կամ դյուրացիության անդամատմանը,—իր յեզրակացությունը հանում է հենց այնպես, ընդհուպ լինչ-վոր նախապաշարմունքի հոգուտ մալթուսականության։—Ուստի,—շարունակում է նա,—հողագործական աշխատանքի արտադրողականության մեծացումն ուղղակի ազատվում և բարերար ազդեցություն ունի ռուսական դյուրացության համար» (204)։ Մենք տարակուսանքի մեջ ենք. հենց նոր հեղինակը նարոդնիկներին դեմ լուրջ (ու վերին աստիճանի իրավացի) մեղադրանք առաջադրեց «ֆիկցիա»—ընդհանրապես «դյուրացիության» մասին ունեցած դատողությունների համար, իսկ այժմ ինքն է մտցնում իր վերլուծության մեջ այդ ֆիկցիան։ Յեթե այդ «դյուրացիության» ներսում հարաբերությունները այնպես են, վոր փոքրամասնությունը դառնում է «տնտեսապես ուժեղ», իսկ

---

* «Գ. Բոլոբովի դատողությունների գլխավոր թերությունը նրա ուշադրավ հոդվածներում հատկապես այն է, վոր նա վոչ մի կերպ չի կարողանում ազատվել այդ ֆիկցիայից» (203)։

մեծամասնությունը պրոլետարացման և չնչին փոքրամասնությունը ընդարձակում և հզոտիրությունը և հարստանում է, իսկ մեծամասնությունը շարունակ դեֆիցիտ ունի և քայքայվում է, ապա ինչպես կարելի է խոսել պրոցեսի «ոգտավետության ու բարեբարության» մասին ընդհանրապես։ Հավանաբար հեղինակն ուզեցել է ասել, որ պրոցեսն ոգտավետ է դյուղացիության թե մեկ ու թե մյուս մասի համար։ Բայց այդ ժամանակ, նախ, նա պետք է վերլուծեր յուրաքանչյուր առանձին խմբի դրությունը և այն հետազոտեր առանձին կերպով, իսկ յերկրորդ, յերկու խմբերի միջև գոյություն ունեցող հակամարտության պայմաններում անհրաժեշտ եր որոշակի պարզել, թե որ խմբի տեսակետից է խոսվում «ոգտավետության ու բարեբարության» մասին։ Պ-ն Սորուվեյի օբյեկտիվիզմի անբավարարությունն ու թերասածությունը նորից ու նորից հաստատվում է այս օրինակով։

Վորովհետև պ. Ն.—ոնը ավյալ հարցում հակառակ կարծիքի յի՝ պնդելով, որ հողագործական աշխատանքի արտադրողականության մեծացումը* չի կարող ծառայել ժողովրդական բարեկեցության բարձրացմանը, յերե արդյունքները կարտադրվեն ապրանքի ձևով («Ուրվագծեր», եջ 266), —ապա պ. Սորուվեն էլ անցնում է այժմ այդ կարծիքը հերքելուն։

Նախ, ասում է նա, այն դյուղացին, որին ժամանակակից կրիզիսը հարվածել է իր ամբողջ ծանրությամբ, հացն արտադրում է սեփական սպառման համար. նա հացը չի ծախում, այլ մասամբ գնում է. այդպիսի դյուղացու համար —իսկ նրանք մինչև 50% են կազմում (միջակ և ձիազուրկ դյուղացիները) և համենայն դեպս 25%-ից ամենևին վոչ պակաս (ձիազուրկները)—աշխատանքի արտադրողականության

* «Ինչ էլ լինի», այս մեծացումը «ցանկալի յի և անհրաժեշտ»—ավելացնում է պ. Ն.—ոնը։

մեծացումը համենայն դեպս ոգտավետ է, չնայած հացի գնի իջնելուն։

Այո, իհարկե, արտադրողականության բարձրացումն ոգտավետ կլիներ այդպիսի դյուղացու համար, յերե նա կարողանար պահել իր տնտեսությունն ու հասցնել բարձր աստիճանի. Բայց չե՞ վոր հենց այդ պայմաններից էլ զուրկ են միջակ ու ձիազուրկ դյուղացիները։ Նրանց ուժերից վեր է պահել իրենց այժմյան տնտեսությունը՝ իր պրիմիտիվ գործիքներով, հողի անփույթ մշակությամբ և այլն, էլ ուր մնաց տեխնիկան բարձրացնելը։ Տեխնիկայի այդ բարձրացումն ապրանքային տնտեսության ամենան հետևանքն է։ Յեվ յերե ապրանքային արտադրության զարգացման ավյալ աստիճանի վրա արդեն հացի վաճառքն անհրաժեշտություն է նույնիսկ այն դյուղացիների համար, վորոնք հարկադրված են հացի մի մասը գնելու, ապա հետագա աստիճանն էլ ավելի պարտադիր կդարձնի այդ վաճառքը (հեղինակն ինքն ընդունում է բնաանտեսությունից ապրանքային տնտեսության անցնելու անհրաժեշտությունը), և միջակությունը բարձրացրած տնտեսատերերի մրցությունը անխուսափելորեն ու անհապաղ սեփականազուրկ կանի նրան մինչև վերջը, հողին ավրացված պրոլետարից նրան կդարձնի թուչունի նման ազատ պրոլետար։ Յես ամենևին չեմ ուզում ասել, թե այդպիսի փոխհարաբերությունը նրա համար անոգտավետ կլինի։ Ընդհակառակը, յերբ արտադրողն արդեն ընկավ կապիտալի ճանկը,—իսկ այդ անվիճելիորեն կատարված փաստ է դյուղացիության՝ քննության առնվող խմբի համար,—նրա համար չափազանց «ոգտավետ ու բարեբար է» լինակատար ազատությունը, վորը թույլ է տալիս փոխել տերերին, և վորն արձակում է նրա ձեռքերը։ Բայց պարոնայք Սորուվեյի ու Ն.—ոնի բանավեճն այդպիսի նկատառումների բնագավառում չի մըղվում ամենևին։

Յերկրորդ, շարունակում է պ. Սորուվեն, պ. Ն.—ոնը «մոռանում է, վոր հողագործական աշխատանքի արտա-

դրողականության բարձրացումը հնարավոր է միայն արտադրության կամ դաշտավարության տեխնիկայի ու սիստեմի մեջ փոփոխություններ մտցնելու միջոցով»(206)։ Իրոք, պ. Ն.—ոնը մոռանում է այդ, բայց այդ նկատառումը միայն կուժեղացնի չունևոր գյուղացիների, «պրոլետարական տիպի» գյուղացիների, վիրջնական սեփականազրկման անխուսափելիության գրության։ Տեխնիկան դեպի լավը փոխելու համար հարկավոր են դրամական ազատ միջոցներ, իսկ այդ գյուղացիները չունեն նույնիսկ պարենավորման միջոցներ։

Յերբորդ, — յեզրակացնում է հեղինակը, — իրավացի չէ պ. Ն.—ոնը, յերբ պնդում է, թե հողագործական աշխատանքի արտադրողականության բարձրացումը մրցակիցներին կհարկադրի, որ իջեցնեն գինը։ Այդպիսի իջեցման համար, —իրավացիորեն ասում է պ. Ստրուվեն,—անհրաժեշտ է, որ մեր հողագործական աշխատանքի արտադրողականությունը վեր միայն հասնի արևմտա-յեվրոպականին [այդ դեպքում մենք արդյունքը կվաճառենք հանրօրեն-անհրաժեշտ աշխատանքի մակարդակի համեմատ], այլ նաև կանցնի։—Այս առարկությունը միանգամայն հիմնավոր է, բայց դեռ վոչինչ չի ասում այն մասին, թե «գյուղացիության» հատկապես վոր մասի համար ու ինչ բանի հետևանքով շահավետ կլինի անխնելիայի այդ բարձրացումը։

«Ընդհանրապես պ. Ն.—ոնը զուր է այդպես վախենում հողագործական աշխատանքի արտադրողականության մեծացումից» (207)։ Գ-ն Ստրուվեյի կարծիքով այս տեղի է ունենում այն պատճառով, վոր նա չի կարողանում գյուղատնտեսության պրոգրեսն այլ կերպ պատկերացնել, քան վորպես կապիտալիզմի պրոգրես, վորին զուգընթաց մեքենաների կողմից հետզհետե ավելի ու ավելի թվով բանվորներ են դուրս մղվում։

Հեղինակը շատ դիպուկ բնորոշում է պ. Ն.—ոնի վերաբերմունքը դեպի հողագործական տեխնիկայի աճումը «վախ»

գառով։ Նա միանգամայն իրավացի է, վոր այդ յերևույթն անհեթեթ է։ Բայց նրա պատճառաբանությունը, մեղ թվում է, պ. Ն.—ոնի հիմնական սխալին չի դիպչում։

Գ-ն Ն.—ոնն իրը թե ամենայն խստությամբ հետևելով մարքսիզմի դոկտրինային, այնուամենայնիվ կարուկ տարբերում է կապիտալիստական հասարակության մեջ յեղած հողագործության կապիտալիստական ևվոլուցիան մշակող արդյունաբերության ևվոլուցիայից, — տարբերում է այն առանձնահատկությունից, վոր վերջինի համար ընդունում է կապիտալիզմի առաջադիմական աշխատանքը, աշխատանքի հանրայնացումը, իսկ առաջինի համար չի ընդունում։ Այդ պատճառով մշակող արդյունաբերության համար նա չի «վախենում» աշխատանքի արտադրողականության մեծացումից, իսկ հողագործության համար—«վախենում է», թեյով զործի հասարակական-տեխնիկական կողմն ու այդ պրոցեսի ուսումնասիրությունը հասարակության զանազան դասակարգերի վրա բոլորովին միատեսակ են յերկու դեպքում... Մարքսն այդ դրույթն առանձնապես ցայտուն արտահայտել է հետևյալ դիտողության մեջ. «Անգլիական ֆիլանթրոպ տնտեսագետները, ինչպես Միլլը, Ռոջերսը, Հոլդվին Սմիթը, Ֆաուսետը և այլն, ու լիբերալ դործարարները, ինչպես Ջոն Բրայտ և Ընկ.-ը, հարցնում են անգլիական հողատեր արիստոկրատներից, ինչպես ասված հարցնում եր Կայենից նրա յեղբայր Աբելի մասին,—ինչ յեղան մեր հազարավոր գյուղացիները։—Ցավ հենց դուք ինքներդ վերատեղից առաջացաք։ Այդ գյուղացիների վոչնչացումից։ Ցավ ինչու՞ դուք չեք հարցնում, թե ինչ յեղան ինքնուրույն ջուլհակները, մանածագործները, արհեստավորները» («Das Kapital», I, S. 780, Anm. 237)։ Վերջին ֆրազն ակնառու կերպով նույնացնում է մանր արտադրողների՝ հողագործության մեջ ունեցած վիճակը նրանց այն վիճակի հետ, վոր ունեն մշակող արդյունաբերության մեջ, ընդգծում է բուրժուական հասարակության

դասակարգերի առաջացումը յերկու դեպքում ել*։ Պ-ն Ն.—ոնի հիմնական սխալը հենց այն է, վոր նա անտեսում է այդ դասակարգերը, նրանց առաջացումը մեր գյուղացիության մեջ, իբրեն նպատակ չի դնում ամենայն ճշտությամբ հետևել այդ դասակարգերի հակադրության զարգացման յուրաքանչյուր հաջորդական աստիճանին։

Սակայն պ. Սորուվեն բոլորովին այդպես չի դնում հարցը։ Նա վոչ միայն չի ուղղում պ. Ն.—ոնի ժամանակավրեպ սխալը, այլ, ընդհակառակն, իմիք կրկնում է այն՝ դասակարգերից վեր կանգնած պրոֆեսորի տեսակետից դատելով պրոցեսի՝ «գյուղացիության» համար «ոգտավետության» մասին։ Դասակարգերից վեր բարձրանալու այդ հանցավոր ձգտումն առաջ է բերում հեղինակի դրույթների չափազանց աղոտություն, վորը հասնում է մինչև այնտեղ, վոր նրանից կարելի չի բուրժուական յեղրակացություններ հանել. այն անվիճելիորեն ճիշտ դրույթի դեմ, վոր կապիտալիզմը հողագործության մեջ (ինչպես և կապիտալիզմը արդյունաբերության մեջ) վատթարացնում և արտադրողի դրությունը,—նա առաջադրում և ընդհանրապես այդ փոփոխությունների «ոգտավետության» դրույթը։ Այդ մինուսն և, յերեք վորևե մեկը դատելով բուրժուական հասարակության մեջ կիրառվող մեքենաների մասին՝ սկսեր ընդհանրապես պրոգրեսի ոգտավետության ու բարեբարության ապացույցներով հերքել անտեսագետ ռոմանտիկի այն թեորիան, թե նրանք վատթարացնում են աշխատավորների դրությունը։

Նարոդնիկը պ. Սորուվեյի նկատառումներին հավանություն այսպես կպատասխանի. պ. Ն.—ոնը վախենում է վոչ թե աշխատանքի արտադրողականության բարձրացումից, այլ բուրժուականությունից։

Վոր հողագործության մեջ տեխնիկայի պրոգրեսը մեր

* Տես հատկապես XXIV գլխի 4-րդ §-ը — «Կապիտալիստական վարձակալների ծագումը», SS. 773—776։

կապիտալիստական կարգերում կապված է բուրժուականության հետ,—այդ անկասկածելի յե, սակայն նարոդնիկների ցուցահանած յերկյուղը, հասկանալի յե, բոլորովին անհիմն է։ Բուրժուականությունն արդեն իրական կյանքի փաստ է, աշխատանքը յենթարկված և կապիտալին արդեն նաև հողագործության մեջ,—և հարկավոր է «վախենալ» վոչ թե բուրժուականությունից, այլ այն բանից, վոր այդ բուրժուականության դիտակցությունը բացակայում է արտադրողի մեջ, բացակայում է իր շահերը բուրժուականության դեմ պաշտպանելու ընդունակությունը։ Ուստի պետք է ցանկանալ վոչ թե կապիտալիզմի զարգացման կասեցումը, այլ, ընդհակառակը, նրա լիակատար զարգացումը, նրա ղարգացումը մինչև վերջը։

Վորպեսզի ավելի մանրամասն ու ճիշտ ցույց տանք այն սխալի հիմունքները, վոր արել է պ. Սորուվեն՝ խոսելով կապիտալիստական հասարակության մեջ յեղած հողագործության մասին, փորձենք ուրվագծել (ամենից ընդհանուր գծերով) դասակարգերի առաջացման պրոցեսը՝ տեխնիկայի մեջ տեղի ունեցող այն փոփոխությունների կողքին, վորոնք առիթ են տվել դատողության։ Պ-ն Սորուվեն այստեղ տարբերում է խիստ եքստենսիվ հողագործությունն ինտենսիվից՝ պ. Ն.—ոնի մոլորությունների արմատը հավարելով այն, վոր նա բացի եքստենսիվ հողագործությունից ուրիշ վոչինչ չի ուղում ճանաչել։ Մենք կաշխատենք ապացուցել, վոր պ. Ն.—ոնի հիմնական սխալն այդ չե, վոր հողագործության՝ ինտենսիվ ձևին անցնելիս բուրժուական հասարակության դասակարգերի առաջացումը ըստ էության նույնատիպ և այն բանի հետ, ինչ վոր տեղի յե ունենում եքստենսիվ հողագործության զարգացման ժամանակ։

Եքստենսիվ հողագործության մասին շատ բան ասել կարիք չկա, քանի վոր պ. Սորուվեն ել ընդունում է, վոր այստեղ առացվում է «գյուղացիության» արտադրում բուրժուազիայի կողմից։ Նշենք միայն յերկու կետ։ Առաջինը։

Տեխնիկայի առաջադիմությունը հետևանք է ապրանքային տնտեսության. այդ իրագործելու համար անհրաժեշտ է, որ տնտեսատերն ազատ, ավելցուկ [նրա սպառման ու նրա արտադրության միջոցների վերարտադրության նկատմամբ] դրամական միջոցներ ունենա։ Վ.Օրտեղից կարող են վերցվել այդ միջոցները։ Ակներև է, դրանք չեն կարող վերցվել և ոչ մի տեղից, բացի նրանից, որ ապրանք—դրամ—ապրանք շրջանառությունը վերածվի հետևյալ շրջանառության. դրամ—ապրանք—դրամ հավելուրդով։ Այլ խոսքով, այդ միջոցները կարող են վերցվել բացառապես կապիտալից, առևտրական ու վաշխառուական կապիտալից, հենց նույն այդ դյուղակերներից, կուլակներից, վաճառականներից և այլն, որոնք ռուսական մի ամբողջ նարոդնիկների կողմից վերարդվում են վո՛չ թե կապիտալիզմին՝ այլ «դիշաուչությանը» (կարծես կապիտալիզմը դիշաուչություն չէ, կարծես ռուսական բարեկեցությունը մեզ ցույց չի տալիս այդ «դիշաուչության» ամեն տեսակ ձևերի փոխադարձ կապը—ամենասերտիտիվ ու նախնադարյան կուլակությունից մինչև նորագույն, ռացիոնալ ձեռնարկողությունը*)։ Յերկրորդ, նշենք պ. Ն.—ոնի

* Պարոնայք նարոդնիկները ունեն նաև մի ուրիշ, չափազանց խոր, յեղանակ՝ քողարկելու մեր արդյունաբերական կապիտալիզմի տրամաները «ժողովրդական տնտեսության» մեջ, այսինքն՝ «ժողովրդական աշխատության ու կուլակության մեջ։ Կուլակն իր «խնայությունները» ատնում է պետական բանկ։ Նրա ավանդները բանկին հնարավորություն են տալիս՝ հենվելով ժողովրդական հարստության, ժողովրդական խնայությունների, ժողովրդական ձեռնարկության, ժողովրդական վարկունակության ամման վրա՝ պարբերով դրամ վերցնելու անգլիացուց։ Վերցրած դրամները «պետությունը» դործ է դնում ռռնել...— ինչպիսի անհեռատես քաղաքականություն, ինչպիսի տխուր անտեսում «ժամանակակից դիտության» և «ժամանակակից բարոյական իդեալների»—կապիտալիստներին։ Հարց է առաջ դալիս այժմ, մի՞թե պարզ չէ, որ չէ՞թե պետությունը (հապիտալիստների) այդ դրամը դործ դնեը վո՛չ թե կապիտալիզմի, այլ «ժողովրդական արտադրության» վրա,—ապա մեզանում, Ռուսիայում կլինեը վո՛չ թե կապիտալիզմ, այլ «ժողովրդական արտադրություն»։

տարորինակ վերաբերմունքը դեպի այդ հարցը։ 233-րդ յերեսի 2-րդ ծանոթագրության մեջ նա հերքում է «Հարավային-ռուսական դյուղացիական տնտեսության» հեղինակ Վ. Յե. Պոսնիկովին, որը ցույց է տալիս, թե մեքենաները դյուղացիական ծխի բանվորական տարածությունն ավելացրին ուղիղ յերկու անդամ, 10 դեսյատինից մինչև 20 դես. մեկ բանվորին, և որ այդ պատճառով «Ռուսաստանի չքավորության» պատճառը դյուղացիական տնտեսության փոքր չափն է»։ Ուրիշ խոսքով՝ տեխնիկայի աճումը բուրժուական հասարակության մեջ տանում է դեպի մանր ու հետամնաց տնտեսությունների սեփականազրկության Գ-ն Ն.—ոնը առարկում է. վաղը տեխնիկան կարող է ելի յերեք անդամ ավելացնել բանվորական տարածությունը։ Այն ժամանակ 60-դեսյատինանոց տնտեսությունը պետք կլինի վերածել 200 կամ 300-դեսյատինանոց տնտեսությունների։— Մեր հողագործության բուրժուական լինելու դրույթի դեմ արվող այդպիսի վիճաբանությունը նույնքան ծիծաղելի է, որքան յերեք մեկն ու մեկն սկսեր ապացուցել գործարանային կապիտալիզմի թուլությունն ու անզորությունը այն հիման վրա, թե այսօրվա շոգեմեքենան հարկ կլինի «վաղը» փոխարինելու ելեկտրականով։ «Նույնպես անհայտ է մեզ, թե ուր են դնում ազատված միլիոնավոր աշխատանքային ուժերը»—ավելացնում է պ. Ն.—ոնը՝ իր առջև դատի կանչելով բուրժուազիային և մոռանալով, որ նրան ուրիշ վոչ ոք չի կարող դատել, քան ինքն արտադրողը։ Գործարանների պահեստի բանակի առաջանալը բուրժուական հողագործության մեջ մեքենանների կիրառման նույնպիսի անհրաժեշտ հետևանք է, ինչպես և բուրժուական ինդուստրիայի մեջ։

Յեվ այսպես, եքստենսիվ հողագործության զարգացման նկատմամբ կասկած չկա, որ տեխնիկայի առաջադիմությունն ապրանքային տնտեսության պայմաններում «դյուզացուն» մեկ կողմից վեր և ածում ֆերմերի (ֆերմեր բա-

ռի տակ հասկանալով հողագործության մեջ կեղած ձեռնարկուին, կապիտալիստին),—այստես կողմից՝ բատրակի ու որաժակի։ Տեսնենք այժմ այն դեպքը, երբ եքստենսիվ հողագործությունը փոխվում է ինտենսիվի։ Պ-ն Ստրուվեն հենց այս պրոցեսից էլ «ոգուտները» է սպասում «գյուղացու» համար։ Վորպեսզի վերացնենք այն վհեր, թե վորքան պետքական է այն նյութը, ըստ վորի մենք նկարագրում ենք այդ անցումը, ոգտվենք պ. Ա. Ի. Սկվորցովի * «Շոգեատրանսպորտի ազդեցությունը գյուղատնտեսության վրա» աշխատությունից, վորն այնպես անսահման գովաբանում է պ. Ստրուվեին։

Իր գրքի 4-րդ բաժնի 3-րդ գլխում պ. Ա. Սկվորցովը քննության է առնում «հողագործության տեխնիկայի փոփոխությունը շոգատրանսպորտի ազդեցությամբ» եքստենսիվ ու ինտենսիվ կերկերներում։ Վերցնենք այդ փոփոխության նկարագրությունը խիտ բնակված եվռոպեական կարելի չե կարծել, վոր կենտրոնական Ցենտրոսլական Ռուսաստանն այդ բնութագրման տակ կընկնի։ Պ-ն Սկվորցովը այդպիսի կերկերի համար նախատեսում է նույն այն փոփոխությունները, վորոնք պ. Ստրուվեյի կարծիքով անխուսափելիորեն պետք է տեղի ունենան նաև Ռուսաստանում, այն է՝ այդպիսի կերկերը վեր և ածվելու ինտենսիվ հողագործության կերկերի, վորն ունենալու չե զարգացած փոխադրական արտադրություն։

* Մեր գրականության մեջ ընդունված ե՞նրան ժողքսիաններին չարքը դասել։ Այդպես վարվելու նույնքան քիչ հիմք կա, վորքան պ. Ն—ոնին մարքսիստ համարելու։ Պ-ն Ա. Սկվորցովը նույնպես ծանոթ չե դասակարգային կռվի ու պետության դասակարդային բնույթի վերաբերյալ ուսմունքին։ Նրա գործնական առաջարկները «Экономические этюды»-ում վոչնչով չեն տարբերվում սովորական բուրժուական առաջարկություններից։ Ցերեկ նա շատ ավելի զգաստորեն և նայում ռուսական իրականության, քան պարոնայք նարոդնիկները, ապա այդ միակ հիմնական վրա պետք ևր ժողքսիստ համարել նաև պ. Բ. Ջիչերինին և ուրիշ շատերին։

Հետևենք պ. Ա. Սկվորցովին (§§ 4—7, եջ 440—451)։

Ցերկին եքստենսիվ է *։ Բնակչության խիտ զբաղված է հողագործությամբ. զբաղմունքների փոխհարաբերությունն առաջ է բերում շուկայի բացակայություն, բնակչությունը չբավոր է նախ՝ անտեսությունների փոքր չափի հետևանքով և յերկրորդ՝ փոխանակության բացակայության հետևանքով. «Մեսացած կարիքների բավարարումը, բացի սննդից, վորն արտադրում է ինքը հողագործը, կատարվում է, կարելի չե ասել, բացառապես ի հաշիվ նախնադարյան արհեստի, մնդանում այսպես կոչված՝ տնայնագործական արհեստագործության արտադրանքների»։

Յերկաթուղի անցկացնելը բարձրացնում է հողագործական արդյունքների գինը և, հետևապես, ավելացնում է բնակչության դնողունակությունը։ «Ցերկաթուղու հետ մեր աչքին յերկիրը հեղեղվում է մանուֆակտուրաների ու ֆաբրիկաների եժան արտադրանքներով», վորոնք քայքայում են տեղական տնայնագործներին։ «Շատ տնտեսությունների խորտակման» առաջին պատճառն այդ է։

Նույն յերևույթի յերկրորդ պատճառը տնտեսություններն են։ «Հողագործությունն էլ մինչև այժմ նախնադարյան յեղանակով և վարվել այսինքն՝ միշտ անուսյալհոնա կերպով և, հետևապես, անբերության կազմում են առանձին յերևույթ, իսկ յերկաթուղի անցկացնելուց հետո մթերքի թանդացումը, վոր առաջ անբերության հետևանք եր լինում, կամ բոլորովին տեղի չի ունենում, կամ, համենայն դեպս, բավական պակասում է։ Ուստի առաջին իսկ տնտեսության բնական հետևանքն այստեղ սովորաբար

* Պարոն Ա. Սկվորցովը ժամանակում է, վոր սովորաբար եքստենսիվ յերկիրը ասելով հասկանում են սակավաբնակ յերկիրը (եջ 439 և շար)։ Նա այդ վորոշումը սխալ է համարում՝ մատնանշելով եքստենսիվության հետևյալ հատկանիշները.—1) բերքերի ուժեղ տատանումներ. 2) կուլտուրաների միօրինակության և 3) ներքին դուրկանների, այսինքն՝ իրենց մեջ մշակող արդյունաբերության համակենտրոնացնող մեծ քաղաքների գոյության։

լինում և շատ տնտեսությունների կործանումը։ Այդ հանանքն այնքան ավելի շուտ և յուրևան գալիս, որքան ընդհանրապես ավելի պակաս են եղել նորմալ բերքերի ավելցուկները, և որքան բնակչությունն ավելի պետք և հույս դներ տնայնագործական արհեստագործությունների զարգացմի վրա։

Առանց տնայնագործական արհեստագործությունների յուրացնելու համար և ինտենսիվ (ռացիոնալ) հողագործության անցնելով՝ անբերությունից իրեն ապահովելու համար— անհրաժեշտ են՝ առաջին՝ դրամական միջոցների մեծ ավելցուկներ, որոնք գոյանան հողագործական արդյունքներն ավելի բարձր գներով ծախելուց, և 2-րդ՝ բնակչության ինտելիգենտ ուժ, առանց որի հնարավոր չէ ռացիոնալության ու ինտենսիվության բարձրացում։ Բնակչության մասսան, իհարկե, այդ պայմանները չունի, դրանց բավարարում և միայն փոքրամասնությունը *։

Այդ ձևով [այսինքն՝ տնայնագործական արհեստագործությունների անկումից ու հողագործության առաջադրվող ավելի բարձր պահանջներից քայքայված շատ տնտեսությունների «լուծարքի» հետևանքով] առաջ եկած ավելորդ բնակչությունը մասամբ կկլանվի այն տնտեսությունների կողմից, որոնք այդ դրությունից դուրս կգան ավելի բախտավոր կերպով և հնարավորություն կունենան մեծացնելու արտադրության ինտենսիվությունը» (այսինքն, իհարկե, «կկլանվենն» վորպես վարձու բանվորներ, բատրակներ ու որամշակներ։ Պ-ն Ա. Սկվորցովը չի ասում այդ բանը՝ գուցե այդ չափազանց պարզ համարելով)։ Կպահանջվի կենդանի ուժի մեծ ծախսում, քանի վոր հաղորդակցության բարե-

* «Այդպիսի յերկրի համար (վորը տնտեսական կուլտուրականության տվյալ աստիճանում հագեցած է բնակչությամբ) մենք պետք է ընդունենք, վոր մի կողմից փոքր ավելցուկները, մյուս կողմից բնակչության ցածր բնական աստիճանը բազմաթիվ տնտեսությունների սոխում է, փոփոխված պայմաններում, հասնել լուծարվելու վիճակի» (442)։

լավված ճանապարհների շնորհիվ իրագործվող՝ շուկայի մոտիկությունը հնարավորություն և տալիս արտադրելու դրժվար փոխադրվող այնպիսի արդյունքներ, «վորոնց արտադրությունը մեծ մասամբ պահանջում է կենդանի աշխատանքային ուժի զգալի ծախսում»։ «Սակայն, սովորաբար,—շարունակում և պ. Սկվորցովը,—քայքայման պրոցեսն անհամեմատ ավելի արագ և կատարվում, քան պահպանված տնտեսությունների բարելավման պրոցեսը, և քայքայված տնտեսությունների մի մասը պետք և յերեք վոչ յերկրից հեռանա, ապա առնվազն տեղափոխվի քաղաքները։ Հենց այս ժամն էլ կազմել և յեվրոպական քաղաքների բնակչության աճման զգեստավոր կոնտինգենտը յերկաթուղիներ անցկացնելու ժամանակից սկսած»։

Այնուհետև «Բնակչության ավելցուկը նշանակում և աշխատող ուժան ձեռքեր»։ «Պաղաբեր հողի (ու նպաստավոր կլիմայի...)շնորհիվ այստեղ արված են բոլոր պայմանները բույսերի մշակման ու ընդհանրապես այնպիսի հողագործական արդյունքների արտադրության համար, վորոնք պահանջում են մեծ չափով աշխատանքային ուժ ծախսել տարածության մեկ միավորի վրա» (443), մանավանդ վոր տնտեսությունների վոքր չափերը («թեև նրանք գուցե և կմեծանան առաջվա համեմատությամբ») դժվարացնում են մեքենաների մուծումը։ «Դրա կողքին առանց փոփոխության չի մնա հնժանական կապիտալն էլ և ամենից առաջ պետք և իր բնույթը փոխի ժեռյալ ինվենտարը»։ Ցեվ մեքենաներից զատ, «հողի լավագույն մշակության անհրաժեշտությունը կստիպե առաջվա նախնադարյան գործիքները փոխարինելու ավելի կատարելագործվածներով, փայտը փոխարինելու յերկաթով ու պողպատով։ Այդ բարեփոխությունն այստեղ անհրաժեշտաբար առաջ կբերի ֆաբրիկանտներ, վորոնք զբաղված կլինեն այդպիսի գործիքներ պատրաստելով, վորովհետև նրանք չեն կարող քիչ թե շատ տանելի ձևով պատրաստվել տնայնագործական յեղանակով»։ Արդյունաբերության այդ ճյուղի

զարգացմանը նպաստում են հետևյալ պայմանները. 1) մեքենան կամ նրա մասը կարճ ժամանակում ստանալու անհրաժեշտությունը. 2) «աշխատող ձեռքերն այստեղ առատ են և էժան». 3) վառելիքը, շենքերն ու հողը էժան են. 4) «ընտանեական միավորների մանրությունը այն հետևանքն է ունենում, որ գործիքների գործածությունը շատանում է, որովհետև հայտնի է, որ մանր տնտեսությունները հաճախատաբար շատ ինվենտար են պահանջում»։ Զարգանում են նաև այլ տեսակի արտադրություններ։ «Ընդհանրապես զարգանում է քաղաքային կյանքը»։ Անհրաժեշտաբար զարգանում են հաճախագործություններ, որովհետև մի կողմից առաջ են գալիս մեծ թվով ազատ ձեռքեր, իսկ մյուս կողմից՝ յերկաթուղիների և վերաժշկող մեքենայական ու այլ արդյունաբերությունների զարգացման շնորհիվ ուժեղանում է հանքագործության արտադրանքների պահանջը։

«Այսպիսով այն շրջանը, որը մինչև յերկաթուղի անցկացնելը յեղել է եքստենսիվ հողագործության խառնական շրջան, շատ կամ քիչ արագությամբ դառնում է շատ ինտենսիվ հողագործության շրջան՝ ավելի կամ պակաս զարգացած գործարանային արտադրությամբ։ Ինտենսիվության մեծացումն արտահայտվում է դաշտագործության սիստեմի փոփոխությամբ։ Ցեռագաշտ սիստեմն անհնարին է բերքերի տատանումների հետևանքով։ Անհրաժեշտ է անցնել «դաշտագործության պտղափոխ սիստեմի», որը վերացնում է բերքերի տատանումները։ Իհարկե, լիակատար պտղափոխ սիստեմը *, որը շատ բարձր ինտենսիվություն է պահանջում, չի կարող միանգամից գործածության մեջ մտնել։ Ուստի սկզբում կմտցվի հատիկային պտղափոխ ցանքաշրջա-

* Նրա հատկանիշներն են. 1) ամբողջ հողը վար և ածվում վարելահողի. 2) հարուրը վերացվում է ըստ հնարավորության. 3) ցանքաշրջանառության մեջ բույսերը կանոնավորապես հաջորդում են միմյանց. 4) հնարավորության չափ խնամքով մշակում. 5) տնտեսությունների ախոռային կերակրում

ճառությունը [բույսերի կանոնավոր հաջորդում], կպարզանան անասնաբուծությունը, կերախոտերի ցանքը։

«Ուրեմն, վերջվերջո, մեր խառնական եքստենսիվ շրջանն ավելի կամ պակաս արագությամբ, հաղորդակցության ճանապարհների զարգացման համեմատ, կվերածվի բարձրինտենսիվ տնտեսության շրջանի, ընդվորում նրա ինտենսիվությունը, ինչպես ասված է, կաճի ամենից առաջ ի հաշիվ փոփոխման կապիտալի մեծացման»։

Ինտենսիվ տնտեսության զարգացման պրոցեսի այս ժանրամասն նկարագրությունն ակնառու կերպով ցույց է տալիս, որ այդ դեպքում ել տեխնիկայի առաջադիմությունն ապրանքային արտադրության պարագաներում տանում է դեպի բուրժուական տնտեսություն, անմիջական արտադրողին պառակտում, բաժանում է ֆերմերի, որը վայելում է ինտենսիվության, գործիքների բարելավման ու այլ բոլոր այսպիսի ոգուտները,—ու բանվորի, որն իր «ազատությամբ» ու իր «ժամանակով» ամենանպաստավոր պայմաններն» է տալիս «ամբողջ ժողովրդական տնտեսության պրոգրեսիվ զարգացման համար»։

Պ-ն Ն.—ոնի հիմնական սխալն այն չէ, որ նա անտեսում է ինտենսիվ հողագործությունը՝ սահմանափակվելով միայն եքստենսիվով, այլ այն, որ նա ուսական հողագործական արտադրության ասպարեզում դասակարգային հակասությունների վերլուծության փոխանակ իրեն ընթերցողին հյուրասիրում է անբովանդակ վայնասունով, թե «մենք» ընթանում ենք սխալ ճանապարհով։ Պ-ն Մորուզովն կրկնում է այս սխալը՝ դասակարգային հակասությունները ծածկելով «օբյեկտիվ» դատողություններով և ուղղում է պ. Ն.—ոնի միայն յերկրորդական սխալները։ Այս տարօրինակ և մանավանդ այն պատճառով, որ հենց նա ինքը միանգամայն իրավացի կշտամբում է այդ «անկասկածելի մարքսիստին»՝ դասակարգային կռվի թեորիան չհասկանալու համար։ Այս մանավանդ այն պատճառով ցավալի է, որ այդ-

պիսի սխալով պ. Ստրուվեն թուլացնում է իր այն միանգամայն ճիշտ մտքի ապացուցողական նշանակությունը, թե հողագործության մեջ տեղի ունեցող տեխնիկական առաջադիմության «կերկյուղն» անհերքելի է։

Վորպեսզի վերջ տանք այս հարցին, վոր վերաբերում է կապիտալիզմին հողագործության մեջ, ամփոփենք վերոդրյալը։ Ի՞նչպես է դնում պ. Ստրուվեն հարցը։ Նա յերևում է գերբնակչությունը բազմացման ու դոյամիջոցների անհատապատասխանության բացատրելուց, վոր նա կատարում է ապրիորի ու առանց հիմնավորման, այնուհետև ժամանակում է, վոր սննդի արտադրությունը մեր դյուղացու մոտ «անբավարար է», և հարցը վճռում է նրանով, վոր տեխնիկայի առաջադիմությունը ձեռնտու յե «դյուղացիության» համար, վոր «հողագործական արտադրողականությունը պետք է բարձրացվի» (211)։ Ի՞նչպես պետք է նա հարցը դներ, յեթե «կապված» լիներ մարքսիզմի «ուսմունքով»։ Նա պետք է սկսեր ռուսական հողագործության ավյալ արտադրական հարաբերությունների վերլուծությունից և—ցույց տալով, վոր արտադրողի հարաստահարությունը բացատրվում է վոչ թե պատահականությամբ ու վոչ թե քաղաքականությամբ, այլ կապիտալի տիրապետության համար անհրաժեշտորեն գոյանում է ապրանքային տնտեսության հողի վրա,—հետևեր այնուհետև այն բանին, թե ինչպես այդ կապիտալը քայքայում է մանր արտադրությունը, և այդ պարագայում ինչ ձևեր են ընդունում դասակարգային հակասությունները։ Նա պետք է այնուհետև ցույց տար, թե ինչպես հետագա զարգացման հետևանքն այն է լինում, վոր կապիտալն ապրանքայինից դառնում է արդյունաբերական (ընդունելով այս-ինչ ձևերն ֆբասոնային, այս-ինչ ձևերն ինտենսիվ տնտեսության դեպքում), զարգացնելով ու սրելով այն դասակարգային հակադրությունը, վորի հիմքը լծվին դրված էր նրա հին ձևի ժամանակ, վերջնականապես հակադրելով «ազատ» աշխատանքը «ապրոնալ արտադրության։ Այն ժամանակ արդեն

բավական կլիներ բուրժուական արտադրության ու բուրժուական շահագործման այդ յերկու հակադրական ձևերի պարզ առաջադրումը, վորպեսզի փոփոխության «առաջադիմական» բնույթը, արտադրողի համար նրա «ոգտավետությունը» յերևան դար լիակատար ակներևությամբ. առաջին դեպքում աշխատանքի յենթարկումը կապիտալին ծածկված և մինչնադարյան հարաբերություններին հատարավոր բնավորություններով, վորոնք խանգարում են, վոր արտադրողը տնտնի դործի եյության, և նրա իդեալդպի գլխում անհերքելի ու ռեակցիոն իդեաներ են ծնեցնում «հասարակության» ոդնության սպասելու հնարավորության մասին յեվ այլն. յերկրորդ դեպքում այդ յենթարկումը միանգամայն ազատ և մինչնադարյան կապանքներից, և արտադրողն ստանում է իր «հակառնչային» դեմ ինքնուրույն, դիտակից դործունեության հնարավորություն և ըմբռնում է այդ դործունեության անհրաժեշտությունը։ Կապիտալիզմին «դժվար, հիվանդագին կերպով անցնելու» վերաբերյալ դատողությունների տեղը հանդես կգար այն թեորիան, վորը վոչ միայն խոսում է դասակարգային հակասությունների մասին, այլև հենց իրոք մերկացնում և հիշյալ հակասությունները «անռացիոնալ» ու «ռացիոնալ արտադրության» «եքստենսիվ» ու «ինտենսիվ» տնտեսության յուրաքանչյուր ձևի մեջ։

Այն հետևանքները, վորոնց մենք հանդեցինք՝ վերլուծելով պ. Ստրուվեյի դրքի VI գլխի առաջին մասը, վոր նվիրված է «գերբնակչության բնույթին հողագործական Ռուսաստանում», կարելի յե ձևակերպել այսպես.— 1) Պ-ն Ստրուվեյի մալթուսականությունը չի հիմնավորված վորևե փաստական տվյալներով և հիմնված է մեթոդոլոգիապես անճիշտ դոգմատիկ նախադրյալների վրա։ 2) Գերբնակչությունը հողագործական Ռուսաստանում բացատրվում է կապիտալի տիրապետության և վոչ թե բնակչության բազմացման ու դոյության միջոցների անհամապատասխանության։ 3) Պ-ն Ստրուվեյի դրույթը գերբնակչության բնա-

տնտեսական բնույթի մասին ճիշտ և միայն այն իմաստով, որ հողագործական կապիտալը շնորհիվ ճորտատիրական հարաբերությունների ինացորդների կատեգորիան և անզարգացած, ուստի և արտադրողի համար առանձնապես ծանր ձևերում։ 4) Պ-ն Ն.—ոնը չի ազացուցել Ռուսաստանի գերբնակչության կապիտալիստական բնույթն այն պատճառով, որ չի հետազոտել կապիտալի տիրապետությունը հողագործության մեջ։ 5) Պ-ն Ն.—ոնի հիմնական սխալը, որ կըրկնում է պ. Մարտովն, այն դասակարգերի վերլուծության բացակայությունն է, որոնք կազմավորվում են բուրժուական հողագործության զարգացման ընթացքում։ 6) Դասակարգային հակասությունների այս անտեսումը պ. Մարտովի մոտ բնականաբար այն հետևանքն է ունեցել, որ տեխնիկական բարելավումների առաջադիմականության ու ցանկալիության վերաբերյալ միանգամայն ճիշտ դրույթն արտահայտվել է չափազանց անհաջող ու մշուշապատ ձևով։

II

Անցնենք այժմ VI գլխի յերկրորդ մասին, որ նվիրված է գյուղացիության տրոհման հարցին։ Այս մասն ուղղակի ու անմիջական կերպով կապված է նախորդ մասի հետ՝ իրը լրացում ծառայելով հողագործության մեջ գոյություն ունեցող կապիտալիզմի հարցին։

Մատնանշելով գյուղատնտեսական արդյունքների գների բարձրացումը ռեֆորմից հետո առաջին 20 տարվա ընթացքում, ապրանքային արտադրության ընդարձակումը հողագործության մեջ, պ. Մարտովն միանգամայն իրավացի ասում է, որ դրանից «շահվեցին առավելապես հողատերերը և ունևոր գյուղացիները» (214)։ «Դիֆերենցիացիան գյուղացիական բնակչության մեջ պետք է ավելանար, և այդ ժամանակաշրջանին են վերաբերում նրա առաջին հաջողությունները»։ Հեղինակը մեջ է բերում տեղական հետազոտողների մատնանշումներն այն մասին, որ յերկաթուղինե-

րի կառուցումը բարձրացրեց գյուղացիության վիճակն ու հնարավոր դարձրեց բարեկեցությունը, որը վարձակալությունը գյուղացիների մեջ «իսկական ճակատամարտ» է առաջացնում, որի հետևանքը շարունակ լինում է տնտեսապես ուժեղ տարրերի հարձակումը (216—7)։ Նա մեջ է բերում Վ. Պոսնիկովի հետազոտությունը, որի համաձայն ունևոր գյուղացիների տնտեսությունն այնքան է արդեն յենթարկվում շուկային, որ ցանքերի տարածության 40 %-ը տալիս և ծախելու հատկացվող արտադրանք, և—ավելացնելով, որ հակադիր բևեռում գյուղացիները «կորցնում են իրենց տնտեսական ինքնուրույնությունը և, վաճառելով իրենց աշխատանքային ուժը՝ դառնում են բառրակության յեղբին»—իրավացիորեն յեղրակացնում է. «Մի խոշոր փոխանակային տնտեսության մուտք գործելով և բացատրվում այն փաստը, որ տնտեսապես ուժեղ գյուղացիական տնտեսությունները կարող են ոգուտ ստանալ թուլ ծխերի քայքայումից» (223)։ Դրամական տնտեսության զարգացումն ու բնակչության աճումը,—ասում է հեղինակը,—այն հետևանքն է ունենում, որ գյուղացիությունը բաժանվում է յերկու մասի. մեկը՝ տնտեսապես ուժեղ, որը կազմված է նոր ուժերի կապիտալի ներկայացուցիչներից նրա բոլոր ձևերում և աստիճաններում, և մյուսը, որ կազմված է կիսաինքնուրույն հողագործներից ու իսկական բառրակներից» (239)։

Վորքան էլ հակիրճ են հեղինակի դիտողությունները այն «դիֆերենցիացիայի» մասին, այնուամենայնիվ նրանք մեզ հնարավորություն են տալիս՝ նշելու քննության առնվող պրոցեսի հետևյալ կարևոր գծերը. 1) Բանը չի սահմանափակվում հենց միայն գուլքային անհավասարության ստեղծումով. ստեղծվում է «նոր ուժ»—կապիտալը։ 2) Այդ նոր ուժի ստեղծմանը հաջընթաց ստեղծվում են գյուղացիական տնտեսությունների նոր տիպեր. նախ՝ ունևոր, տնտեսապես ուժեղ տիպ, որը վարում է ապրանքային զարգացած տնտեսություն, խլում է վարձակալությունը չքավորության

ձեռքից, դիմում է ուրիշի աշխատանքի շահագործմանը*. յերկրորդ՝ «պրոլետարական» դյուղացիությունն, որ վաճառում է աշխատանքային ուժը կապիտալին։ 3) Այդ բոլոր յերևույթներն ուղղակի և անմիջականորեն բուռն են ազդանքային տնտեսության հողի վրա։ Պ-ն Սորոկինն ինքն է ստիպված նշել, որ առանց ազդանքային արտադրության նրանք հնարավոր չեյին, իսկ նրա մուտք գործելուց հետո դարձել են անհրաժեշտ։ 4) Այդ յերևույթները («նոր ուժ», դյուղացիության նոր տիպը) վերաբերում են արտադրության բնագավառին, և վոչ թե սահմանափակվում են փոխանակության, ազդանքային շրջանառության բնագավառով. կապիտալը յերևան է գալիս հողագործական արտադրության մեջ. նույնը և աշխատանքային ուժի վաճառքը։

Թվում եր, թե պրոցեսի այդ գծերն ուղղակի վորոշում են, որ մենք գործ ունենք զուտ կապիտալիստական յերևույթի հետ, որ դյուղացիության մեջ գոյանում են կապիտալիստական հասարակության հատուկ դասակարգեր—բուրժուազիա ու պրոլետարիատ։ Այս դեռ քիչ է. այդ փաստերը վկայում են վոչ միայն կապիտալի տիրապետության մասին հողագործության մեջ, այլ և այն մասին, որ կապիտալն արել է արդեն, յերեք կարելի յե այսպես ասել, յերկրորդ քայլը։ Առևտրական կապիտալից նա վերածվում է արդյունաբերական կապիտալի, շուկայում իշխողից—արտադրության մեջ իշխողի. հարուստ-մեծատնորդի և չքավոր դյուղացու դասակարգային հակադրությունը վեր և ածվում ուղիղ բուրժուական տնտեսատիրոջ և ազատ ձեռքերն ազատ վաճառողի հակադրության։

* Պ-ն Սորոկինն չի հիշատակում այդ գծի մասին։ Այդ գիծն արտահայտում է քիչ վարձու աշխատանքի գործադրությամբ, վորը փոքր դեր չի խաղում ունևոր գյուղացիների տնտեսության մեջ, և քիչ նրանց ձեռքին յեղած վաշխառուական ու առևտրական այն կապիտալի գործառնություններով, վորը նմանապես խլում է գերարժեքն արտադրողից։ Առանց այդ հանգամանքի խոսել անգամ չի կարելի «կապիտալի» մասին։

Բայց պ. Սորոկինն այստեղ ևս չի կարողացել մինչև վերջ իր մտքում հետևողական լինել. մատնանշված պրոցեսում, նրա կարծիքով, արտահայտվում է միայն գործի մի կողմը («մի այն առաջադիմական կողմը»), վորի կողքին կա և ուրիշը—«ամբողջ գյուղացիական տնտեսության տեխնիկական անռացիոնալությունը». «Ընդհանում արտահայտվում է, այսպես ասած, ամբողջ պրոցեսի հետադիմական կողմը», նա «հանգեցնում է» գյուղացիությունը, հարթում է անհավասարությունը՝ գործելով «բնակչության ամման հետ կապակցված» (223—224)։

Այդ բավական մշուշապատ դատողությունից ել հենց յերևում է, վոր հեղինակը չափազանց վերացական դրույթներից դերազատում է կոնկրետ մատնանշումներից, վոր նա ամենից բանի խառնում է բազմացման ու գոյամիջոցների անհամապատասխանության «օրենքը»։ Ասում եմ՝ խառնում է, վորովհետև յերեք նույնիսկ խիստ սահմանափակվենք այն փաստերով, վոր բերում է ինքը հեղինակը, հնարավոր չե մատնանշումներ գտնել պրոցեսի այնպիսի կոնկրետ գծերի մասին, վորոնք չհամարվեյին մալթուսիզմի «զոկտրինայինե» և պահանջեյին ընդունել մալթուսականություն։ Մենք անդամ ել նշենք այդ պրոցեսը.—սկզբում մենք ունենք բնական արտադրողներ—համեմատաբար միատեսակ գյուղացիներ*։ Ապրանքային արտադրության ներս թափանցելն առանձին ծխի հարաբերությունը կախման մեջ է դնում շուկայից, այդ ծխի շուկայական տատանումների միջոցով անհավասարությունն ստեղծելով և սրելով այն, կենտրոնացնելով վոմանց մեջ ազատ դրամը և քայքայելով մյուսներին։ Այդ դրա-

* Վորոնիչ աշխատում են կալվածատիրոջ համար։ Այդ կողմը հետ է մղվում, վորովհետև ավելի պարզ պատկերացվի անցումը բնատնտեսությունից ապրանքայինին,—վոր «հին-ազնվականական» հարաբերությունները վաճառականները վաճառացնում են արտադրողի դրությունը և անոնք միայն ձեռք են տալիս քայքայմանը—այդ մասին արժեն տալ և։

ժը, բնականաբար, ծառայում է չունևորներին շահագործելու համար, դառնում է կապիտալ։ Բանի դեռ քայքայվող գյուղացիները կառչած են իրենց տնտեսությանը, կապիտալը կարող է շահագործել նրանց՝ թույլ տալով նրանց, որ տնտեսությունը վարեն առաջվա պես, հին, տեխնիկապես անռացիոնալ հիմունքներով, կարող է շահագործումը հիմնել նրանց աշխատանքի արդյունքը գնելու վրա։ Բայց քայքայումը վերջապես հասնում է զարգացման այնպիսի աստիճանի, որ գյուղացին հարկադրված է լոկորովին թողնելու տնտեսությունը. նա չի կարող արդեն վաճառել իր աշխատանքի արդյունքը, նրան մնում է միայն վաճառել աշխատանքը։ Այդ ժամանակ կապիտալը վերցնում է տնտեսությունն իր ձեռքը, ընդամին նա տեխնված է արդեն—մրցության հետևանքով—ռացիոնալ ձևով կազմակերպելու այն. նա այդ անելու հնարավորություն է տանում շնորհիվ առաջուց «խնայած» ազատ դրամական միջոցների. նա շահագործում է արդեն վոչ թե տնտեսատերոջը, այլ բատրակին, որամշակին։ Հարց է ծագում, իսկ այդ ինչ կերկու կողմ է տարբերում հեղինակն այս պրոցեսում։ Ի՞նչպես է նա հնարավոր համարում այսպիսի հրեշավոր մալթուսական կեղտակացություն անել—«Տնտեսության տեխնիկական անռացիոնալությունը, և վոչ թե կապիտալիզմը [նկատեցեք՝ այդ «և վոչ թե»-ն] —ահա այն թշնամին, որը խլում է մեր գյուղացիությունից նրա որական հացը» (224)։ Կարծես թե այդ որական հացը յերբևիցե ամբողջովին արտադրողին էր հասնում, և վոչ թե բաժանվում էր անհրաժեշտ արտադրանքի ու հավելյալ արդյունքի, որ տանում էր կալվածատերը, կուլակը, «ուժեղ գյուղացին», կապիտալիստը։

Չի կարելի չավելացնել, սակայն, որ «համահարթման» հարցի վերաբերմամբ հեղինակը մի վորոշ հետադա պարզաբանություն ունի։ Նա ասում է, որ «վերոհիշյալ համահարթման հետևանքը» է լինում «շատ վայրերում արձանագրվող՝ գյուղացիական բնակչության միջին չափի նվազումը կամ

նույնիսկ աճիհացումը» (225)։ Մեջբերում անելով զեմստվոյական մի հրատարակությունից, որն արձանագրում է, թե «ել ավելի ևս ուժանում այն տարածությունը, որ գյուղական ունևորին բաժանում է հողազուրկ ու ձիազուրկ պրոլետարիատից». նա յեզրակացնում է. «Համահարթումը տվյալ դեպքում, իհարկե, միաժամանակ նաև դիֆերենցիացիա է, բայց այդպիսի դիֆերենցիացիայի հողի վրա զարգանում է միմիայն ստրկացումը, որը կարող է լոկ արգելակ լինել տնտեսական պրոգրեսին» (226)։—Այսպես ուրեմն, այժմ արդեն դուրս է գալիս, որ ապրանքային տնտեսության առեղծած դիֆերենցիացիան պետք է հակադրել վոչ թե «համահարթմանը», այլ դարձյալ դիֆերենցիացիային, սակայն այլ ձևակի դիֆերենցիացիայի, այն է՝ ստրկացմանը։ Ձեվ վորովհետև ստրկացումն «արգելակում է» «տնտեսական առաջադիմությունը»,—հեղինակն էլ այդ «կոզմն» անվանում է «հետադիմական»։

Դատողությունը կառուցված է չափազանց տարօրինակ, ամենևին վոչ մարքսիստական յեղանակով։ Համեմատվում են ստրկացումն ու «դիֆերենցիացիան» վորպես ինչ-վոր յերկու լինքնուրույն, առանձին սիստեմներ». մեկը զուգաբանվում է նրա համար, որ նպաստում է «առաջադիմությանը», մյուսը դատապարտվում է նրա համար, որ արգելակում է առաջադիմությունը։ Վ.Իլյուն մեզ պ. Ստրուվեյի ժամ դասակարգային հակադրությունների վերլուծության այն պահանջը, որը չկատարելու համար նա այնպես իրավացիորեն հարձակվում էր պ. Ն.—ոնի վրա, այն ուսմունքը «տարբերային պրոցեսի» մասին, որի մասին նա այնպես լավ խոսում էր։ Ջի՞ որ այդ ստրկացումը, որ նա հենց նոր վոչընչացրեց նրա հետադիմականության համար, վոչ այլ ինչ է, յեթե վոչ կապիտալիզմի սկզբնական արտահայտություն հողագործության մեջ, նույն այն կապիտալիզմի, որը հետագայում տանում է դեպի տեխնիկայի առաջադիմական վերելքը։ Իսկապես, ինչ բան է ստրկացումը։ Այդ՝ արտա-

դրության իր սեփական միջոցներն ունեցող ու չուկայի համար աշխատելու հարկադրված ինտեգրալ կախումն է դրամատիրոջից,—կախում, որը որքան էլ տարբեր ձևերով արտահայտվի (վաշխառուական կապիտալի, թե վաճառականության ընդհանուր կապիտալի ձևով), միշտ այն հետևանքն է ունենում, որ աշխատանքի արդյունքի հսկայական մասը հանում է վոչ թե արտադրողին, այլ դրամատիրոջը։ Հետևապես, նրա եությունը դուռ կապիտալիստական է *, և ամբողջ առանձնահատկությունն այն է, որ կապիտալիստական հարաբերությունների այդ սկզբնական, տալենտային ձևն ամբողջովին կաշկանդված է նախկին, ճորտատիրական հարաբերություններով. այստեղ չկա ազատ պայմանագիր, այլ կա հարկադրված գործարք (երբեմն «իշխանավորության» հրամանով, երբեմն անտեսությունը պահպանելու ցանկությամբ, երբեմն հին պարտքերով և այլն). արտադրողն այստեղ կապված է վորոշ տեղի ու վորոշ շահագործողի հետ. հակառակ ապրանքային գործարքի անդեմ բնույթին, որ հատուկ է զուտ կապիտալիստական հարաբերություններին, այստեղ գործարքը կրում է «ոգնության» «բարերարման» անպայման անձնական բնույթ,—և գործարքի այդ բնույթն արտադրողին անխուսափելիորեն դնում է անձնական, կիսաճորտային կախման մեջ։ Հեղինակի այնպիսի արտահայտություններ, ինչպես՝ «հաժառաբերում», «առաջադիմության արդելակ», «հետադիմականություն»,—ուրիշ վոչինչ չեն նշանակում, քան այն, որ կապիտալն արտադրությանը տիրում է սկզբում հին հնձոնքներով, տեխնիկապես հետամնաց արտադրողին յենթարկում է իրեն։ Հեղինակի այն մատնանշումը, թե կապիտալիզմի առկայությունը դեռ իրավունք չի տալիս «ժողովուրդ» համարելու նրան «բոլոր իշվառությունների համար», ճիշտ է այն իմաստով, որ ուրիշների համար աշխատող ժող գյուղացին տուժում է վոչ միայն կապիտալիզմից, այլ նաև կապիտալիզմի անբավարար զարգացումից։ Ուրիշ խոսքով, գյուղացիության հսկայական մասսայի մեջ համարյա այլևս չկա իր համար աշխատող ինքնուրույն արտադրություն. «ռացիոնալ» բուրժուական տերերի համար կատարվող աշխատանքի կողքին մենք տեսնում ենք դրամական կապիտալի տերերի համար կատարվող աշխատանք միայն, այսինքն՝ դարձյալ կապիտալիստական շահագործություն, բայց միայն չզարգացած, պրիմիտիվ շահագործություն, որն այդ պատճառով նախ՝ տասնապատիկ վատթարացնում է աշխատավորի դրությունը՝ կաշկանդելով նրան հատուկ, ավելորդ սեղմիչներով, իսկ յերկրորդ՝ խլում է նրանից (և նրա իդեոլոգ նարոդնիկից) նրա վերաբերմամբ կատարվող «անախորժություններից» դասակարգային բնույթը հասկանալու ու իր գործունեության նրանց այդ բնույթի հետ համաձայնեցնելու հնարավորությունը։ Հետևապես «դիֆերենցիացիայի» (պ. Ստրուվեյի խոսքերով ասած) «առաջադիմական կողմն» այն է, որ նա լուծ աշխարհ և հանում այն հակադրության, որը թաղնված է սարկացման ձևի մեջ, և խլում է նրանից նրա «հին-աշխատականական» գծերը։ Գյուղացիական հավասարումը (...կուլակի առաջ) պաշտպանող նարոդնիկության «հետադիմականությունն» այն է, որ նա կա-

---

* Այստեղ առկա չեն բոլոր հատկանիշները. ապրանքային արտադրությունը վորպես հող (почва),—հանքային աշխատանքի արդյունքի անհաշվարկացումը դրամի ձևով, վորպես հետևանք, ու այս դրամի՝ կապիտալի վերածվելը։ Ցնս բոլորովին չեմ մոռանում, որ կապիտալիստական ձևերն առանձին դեպքերում պատահում են կապիտալիստական կարգերից առաջ էլ։ Սակայն բանն էլ հենց այն է, որ նրանք տրվի առատական գյուղացիական տնտեսության մեջ հանդես են գալիս վոչ թե վորպես յեղակի դեպքեր, այլ վորպես կանոն, վորպես հարաբերությունների ամբողջություն, որոնք կապվել են արդեն (առատրական շրջանառությունների, բանկերով) խոշոր ֆաբրիկա-գործարանային մեքենային կապիտալիզմի հետ և դրանով ցույց են տվել իրենց տենդենցը.—ցույց են տվել, որ այդ «տարկացման» նեղլացուցիչները միայն բուրժուազիայի միատնական ու անբաժան բանակի վարձական զինվորներն են։

ժեռում է կապիտալը պահել նրա միջնադարյան ձևերում, որոնք շահագործությունը միայնում են մասնատված, տեխնիկապես հետամնաց արտադրության հետ, արտադրողի վրա գործ դրվող անձնական ճնշման հետ։ Ներկու դեպքում էլ (թե «ստրկացման» դեպքում և թե «դիֆերենցիացիայի» դեպքում) հաքստահարության պատճառը կապիտալիզմն է, և հեղինակի հակադիր հայտարարությունները, թե բանը «վոչ թե կապիտալիզմն է, այլ «տեխնիկական անուսյինությունը», թե «կապիտալիզմը չէ գյուղացիական չքավորության պատճառը» և այլն,—ցույց է տալիս միայն, որ պ. Ստրուվեն չափազանց հրապուրվելե՝ պաշտպանելով այն ճիշտ միտքը, թե զարգացած կապիտալիզմը գերազանցելի չէ չզարգացածից, և իր դրույթների վերացականության շնորհիվ առաջինը հակադրել է ներկրորդին վոչ վորպես տվյալ ներևույթի զարգացման ներկու հաջորդական ստադիաներ, այլ վորպես առանձին դեպքեր*։

III

Հեղինակի հրապուրվելը ներևում է նաև հետևյալ դատողությունից այն մասին, թե գյուղացիության քայքայման պատճառ չի կարելի համարել հատկապես խոշոր արդյունաբերական կապիտալիզմը։ Նա այստեղ բանավեճի է բանը վում պ. Ն.—ոնի հետ։

* Ինչ հիման վրա—կհարցնի, թերևս, ընթերցողը—այդ վերագրվում է պ. Ստրուվեյի հրապուրվելուն մեջ։—Այն հիման վրա, վոր հեղինակը լուծվին վորոշակի ընդունում է կապիտալիզմը վորպես այն հիմնական ֆոնը, վորի վրա տեղի ին ունենում նկարագրվող բոլոր ներևույթները։ Նա միանգամայն ըստ կերպով մատնանշել է ապրանքային տնտեսության արագ աճումը, գյուղացիության սրոհումը, «բարելավված գործիքների տարածումը» (215) և այլն՝ մի կողմից,—«գյուղացիության ազատագրումը հողից, գյուղական պրոլետարիատի առեղծումը» (238)՝ մյուս կողմից։ Նա ինքը, վերջապես, բնութագրել է այդ վորպես նոր ուժի կապիտալի առեղծում, և նշել է արտադրողի ու սպառողի միջև կապիտալի հանդես գալու վճռական նշանակությունը։

Գործարանային արդյունքների եժան արտադրությունը—ասում է պ. Ն.—ոնը գործարանային հոդուստեղնի ժամին—առաջ բերեց տնային արտադրության կրճատում (տես 227 եջը պ. Ստրուվեյի մոտ)։

«Բանն այստեղ թարս է պատկերացված,—բացականչում է պ. Ստրուվեն,—և այդ դժվար չէ ցույց տալ։ Մանածային նյութեղենների գյուղացիական արտադրության նվազումն այն հետևանքն ունեցավ, վոր բամբակեղենի կապիտալիստական արդյունաբերության արդյունքների արտադրությունն ու սպառումը մեծացավ, և վոչ թե ընդհակառակը» (227)։

Հեղինակը հավիվ թե հարցը հաջող ձևով է դնում՝ գործի եյությունը ներկրորդական մանրամասնությունների խճողելով։ Ցնթե յենենք գործարանային արդյունաբերության զարգացման փաստի վերաբերյալ դիտողությունից (խոկ պ. Ն.—ոնը հատկապես այդ փաստի վերաբերյալ դիտողությունից էլ յելնում է), ապա անհնարին է ժխտել, վոր գործարանային արդյունքների եժանությունն էլ արագացնում է ապրանքային տնտեսության աճումը, արագացնում է տնային արդյունքների արտամղումը։ Առարկելով պ. Ն.—ոնի այդ պիսի հայտարարության դեմ՝ պ. Ստրուվեն դրանով միայն թուլացնում է իր պատճառաբանությունն ընդդեմ այս հեղինակի, վորի հիմնական սխալն այն է, վոր նա աշխատում է «ֆաբրիկան» ներկայացնել «գյուղացիությունից» կտրված մի ինչ-վոր բան, վորը պատահաբար, դրսից է նրա գլխին ընկել, այնինչ իրոք «ֆաբրիկան» (թե ըստ այն թեորիայի, վորին պ. Ն.—ոնը ուղում է ճշտորեն հետևել, և թե ըստ ռուսական պատմության տվյալների) ամբողջ հասարակական, հետևապես, նաև գյուղացիական տնտեսության ապրանքային կազմակերպության զարգացման ամենաբնորոշ միայն։ Խոշոր-բուրժուական արտադրությունը «ֆաբրիկայում»՝ գյուղի, չարաբաստիկ «համայնքի» կամ տնայնագործական արհեստագործության վանր-բուրժուական արտադրության ուղղակի և անմիջական շարունակությունն է։ «Վոր-

պետի «ֆաբրիկային ձևն» «ավելի եժան» դառնա,—միանգամայն իրավացի ասում է պ. Մորուվեն,—գյուղացին պետք և դրամական տնտեսության պայմաններում կանգնի՝ տնտեսական ռացիոնալության տեսակետի վրա»։ «Ցեխե գյուղացիությունը պահպաներ... բնատնտեսությունը, վոչ մի չէիր... Նրան չեր գայթակղեցնի»։

Այլ խոսքով՝ «ֆաբրիկային ձևը»—այդ վոչ այլ ինչ է, բայց յեթե զարգացած ապրանքային արտադրություն, իսկ նա զարգացել է այն չզարգացած ապրանքային արտադրությունից, վոր մենք ունենք գյուղացիական և տնայնագործական տնտեսության մեջ։ Հեղինակն ուղում է ապացուցել պ. Ն.—ոնին, վոր «ֆաբրիկան» ու «գյուղացիությունը» փոխադարձաբար կապված են, վոր նրանց կարգերի տնտեսական «սկզբունքները» հակամարտ չեն*, այլ նույնական։ Դրա համար էլ նա պետք է հարցը հանգեցներ գյուղացիական տնտեսության տնտեսական կազմակերպության, պ. Ն.—ոնի դեմ այն դրույթն առաջ մղելը, թե մեր մանր արտադրողը (գյուղացի հողագործն ու տնայնագործը) մանր բուրժուա չէ։ Հարցն այդպես դնելով, նա ինչ «պետք է լինի, ինչ «կարող է» լինել և այլ դատողությունների բնագավառից հարցը կտեղափոխեր այն բանի պարզաբանման բնագավառը, թե ինչու վոր կա, և այն բանի բացատրման բնագավառը, թե ինչու այդ ճշտիպես այդպես է և վոչ թե այլ կերպ։ Այս դրույթը հերքելու համար նարոդնիկներն ստիպված կլինեին կամ ժխտելու ապրանքային տնտեսության աճման և գյուղացիության տրոհման հանրածանոթ և անվիճելի փաստերը [illegible] այդ փաստերն ապացուցում են գյուղացիության մանրբուրժուականությունը], կամ ժխտելու քաղաքատնտեսության

* Նարոդնիկներն այդ ասում էին բացահայտորեն և ուղղակի, իսկ «անհասկանալի մարքսիստ» պ. Ն.—ոնն այդ նույն անմտությունը հրամցնում է «ժողովրդական հասարակակարգի» ու «ժողովրդական արտադրության» վերաբերյալ մշուշոտ ֆրազներով, վորոնք համեմված են Մարքսից քերած ցիտատներով։

այլբնեռական ճշմարտությունները։ Այդ դրույթն ընդունել՝ նշանակում է ընդունել «կապիտալիզմը» «ժողովրդական հասարակակարգին» հակադրելու անհեթեթությունը, ընդունել «հայրենիքի համար այլ ուղիներ վորոնելու» պրոժեկտների հետադիմականությունը և «հանրայնացման» վերաբերյալ իր ցանկություններով դրժել բուրժուական «հասարակությանը» կամ կիսով չափ դեռ «հին ազնվականական» «պետությանը»։

Իսկ պ. Մորուվեն փոխանակ սկզբից* սկսելու, սկսում է վերջից. «մենք ժխտում ենք,—ասում է նա,—Ռուսաստանի տնտեսական զարգացման նարոդնիկական թեորիայի ամենահիմնական դրույթներից մեկը, այն դրույթը, թե մշակող խոշոր արդյունաբերության զարգացումը քայքայում է գյուղացի-հողագործին» (246)։ Այս արդեն նշանակում է, ինչպես ասում են գերմանացիները, ջրի հետ մկնիկն էլ թափել։ «Մշակող խոշոր արդյունաբերության զարգացումը նշանակում է և արտահայտում կապիտալիզմի զարգացում։ Իսկ վոր գյուղացուն քայքայում է հենց կապիտալիզմը, այդ կարելի նարոդնիկության հիմնական դրույթը չէ, այլ մարքսիզմինը։ Նարոդնիկներն արտադրողի՝ արտադրության միջոցներից ազատվելու պատճառ համարում էին և համարում են վոչ թե ռուսական հասարակական տնտեսության այն սպեցիֆիկ կազմակերպությունը, վորը կապիտալիզմ անունն է կրում, այլ կառավարության քաղաքականությունը, վորն, իբր թե, անհաջող եր («մենք» սխալ ճանապարհով եյինք ընթանում և այլն), հասարակության անբարժությունը, վորը բավականաչափ չէ համախմբվել դիշատիչների և սրիկաների դեմ և այլն։ Ուստի և նրանց «ձեռնարկումները» հանդում եյին «հասարակության» ու «պետության» դործունեության։ Ընդհակառակը, եք-

* Այսինքն՝ սկսելու «գյուղացի-հողագործի» ժանր-բուրժուական բնության՝ խոշոր կապիտալիզմի անխուսափելիության ու արմնական բնության ապացուցելու համար։

պրոլետարիացիայի պատճառը հասարակական տնտեսության կապիտալիստական կազմակերպության առկայությամբ բացատրելն անխուսափելիորեն բերում է դասակարգերի կռվի ուժուն քին (տմմտ. Մարուվկի գրքում 101, 288 և շատ այլ տեղեր)։ Հեղինակի արատահայտության անճշտությունն այն է, որ նա խոսում է «ռոդոպատծի» մասին ընդհանրապես, և ոչ թե բուրժուական հոդագործության հակադիր դասակարգերի մասին։ Նարոդնիկներն ասում են, որ կապիտալիզմը խորտակում է հոդագործությունը, ուստի և անընդունակ է ընդգրկելու յերկրի ամբողջ արտադրությունը և այդ արտադրությունը սխալ ճանապարհով է տանում, մարքսիստներն ասում են, որ կապիտալիզմը թե՛ մշակող արդյունաբերության և թե՛ հոդագործության մեջ ճնշում է արտադրողին, բայց, արտադրությունը բարձրագույն աստիճանի հասցնելով՝ պայմաններ և ուժեր է ստեղծում «հանրայնացման» համար*։

Պ-ն Մարուվկի յեղրակացությունն այս հարցի մասին այս է. «Պ-ն Ն.—ոնի ամենաարմատական սխալներից մեկն այն է, որը նա ժամանակակից, մինչև այժմ ավելի բնատնտեսական, քան դրամական, գյուղացիական տնտեսության վրա յի ամբողջովին փոխադրել կազմավորված կապիտալիստական կարգի պատկերացումներն ու կատեգորիաները» (237)։

Վերևում մենք տեսանք, որ ռուսական հոդագործական կապիտալիզմի կոնկրետ տվյալների լիակատար անտեսումն եր միայն, որը առաջ բերեց պ. Ն.—ոնի ծիծաղելի սխալը, որը խոսում է ներքին շուկայի «կրճատման» մասին։ Բայց այդ սխալն առաջ յեկավ ոչ թե նրանից, որ նա գյուղացիության վրա փոխադրեց կապիտալիզմի բոլոր կատեգորիաները, այլ նրանից, որ նա կապիտալիզմի ոչ մի կատեգորիա չկիրառեց հոդագործության տվյալների նկատմամբ։ Կապիտալիզմի կարևորագույն «կատեգորիան», իհարկե, բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգերն են։ Պ-ն Ն.—ոնը ոչ միայն դրանք չի «փոխադրել» գյուղացիության վրա (այսինքն՝ չի վերլուծել, թե հատկապես գյուղացիության որ խմբերի կամ տարակարգերի նկատմամբ են կիրառելի այդ կատեգորիաները և որքան են նրանք զարգացած), այլ, ընդհակառակը, դատել է գուտ նարոդնիկաբար՝ անտեսելով հակադիր տարրերը «համայնքի» ներսում, դատելով «գյուղացիության» մասին ընդհանրապես։ Այդ էլ հենց յեղել է պատճառ, որ նրա դրույթը գերբնակչության կապիտալիստական բնույթի մասին, կապիտալիզմի մասին, որպես հոդագործի եքսպրոպրիացիայի պատճառի մասին, ճնացել է չապացուցված և միմիայն ռեակցիոն ուտոպիայի համար է պիտանի յեղել։

IV

Վեցերորդ գլխի VIII §-ում պ. Մարուվկն շարադրում է իր մտքերը մանուֆակտուրական տնտեսության մասին։ Նա միանգամայն իրավացիորեն մատնանշում է այդ տնտեսության ընդունած ձևերի ներսում ու անմիջական կախումը գյուղացիության քայքայումից։ Բայքայված գյուղացին այլևս կալվածատիրոջը չի «գայթակղեցնում» «վարձակալական առասպելական գներով», և կալվածատերն անցնում է բատրակային աշխատանքին։ Որպես ապացույց քաղվածքներ են բերվում Ռոստոպչինի հողվածից, որը մշակել և կալվածատիրական տնտեսության զեմստվոյական վիճակագրության տվյալները, և ընթացիկ վիճակագրության վերաբերյալ զեմստվոյական հրատարակություններից, որը նշում է տնտեսական հերկերի ավելացման «հարկադրական» բնույթը։

* Արտադրության կապիտալիստական յեղանակի սեծագույն ծառայությունը մի կողմից՝ ռացիոնալացումն և հոդագործության, որը հնարավորություն է ստեղծում և արտադրության այս յեղանակը միայն, իսկ մյուս կողմից՝ հողային սեփականությունն աբսուրդի հասցնելը։ Ինչպես հենց իր մյուս բոլոր պատմական պրոգրեսները, այնպես և այս պրոգրեսը կապիտալիզմը ձեռք է բերել անմիջական արտադրողի լիակատար աղքատացման գնով» («Das Kapital», III B., 2 Th., էջ 157)։

ի պատասխան պարոնայք նարոդնիկներին, որոնք հողազրկության մեջ կապիտալիզմի «ապագայի» ու նրա «հնարավորության» վերաբերյալ դատողություններով այնքան սիրով խճողում են նրա գոյության փաստը ներկայումս, հեղինակը տալիս է իրականության ճիշտ ժամանակագրությունը։

Մենք պետք է այստեղ կանգ առնենք այդ յերևույթի այն գնահատականի վրա միայն, որը տալիս է հեղինակն ասելով, թե դրանք առաջադիմական հոսանքներ են մասնավորական տնտեսության մեջ» (244), թե «տնտեսական և իրական գործոնների անողոք տրամաբանությունն» է ստեղծում այդ հոսանքները» (240)։ Մենք վախենում ենք, որ այդ միանգամայն ճիշտ դրույթներն իրենց վերացականությամբ անհասկանալի կլինան մարքսիզմին անծանոթ ընթերցողի համար։ Որ ընթերցողն առանց տնտեսության այս-ինչ սիստեմների, դասակարգային հակադրության այս-ինչ ձևերի հերթափոխման որոշակի մատնանշման՝ չի հասկանա, թե ինչու այդ տվյալ հոսանքն «առաջադիմական է» (հասկանալի չի՝ այդ տեսակետից, ինչ տեսակետից միայն հարցը կարող է դնել ժարքսիստը, որոշ դասակարգի տեսակետից), և տեղի ունեցող ևոլյուցիայի «անողոքությունը» որն է հատկապես։ Ուստի փորձենք ուրվագծել այդ հերթափոխությունը (թեկուզ ամենաընդհանուր գծերով) դրծի նարոդնիկական պատկերացմանը զուգահեռ։

Նարոդնիկը բատրակային տնտեսության զարգացման պրոցեսը պատկերացնում է որպես «ինքնուրույն» դյուղացիական տնտեսությունից անցում դեպի անաղատ տնտեսություն և—բնականաբար—այդ համարում է հետադիմություն, անկում և այլն։ Պրոցեսի այդպիսի պատկերացումը փաստորեն սխալ է ուղղակի, բոլորովին չի համապատասխանում իրականությանը, ուստի և անհեթեթ են նաև դրանից հանվող յեզրակացությունները։ Գործն այդպես լավատեսորեն (անցյալի ու ներկայի նկատմամբ) պատկերելով՝ նարոդնիկը հենց նարոդնիկական գրականության համար հատատված

փաստերից ուղղակի յերես է դարձնում դեպի ուտոպիաները ու հնարավորությունների կողմը։

Վորպես յելակետ վերցնենք մինչռեֆորմյան ճորտատիրական տնտեսությունը։

Արտադրական հարաբերությունների հիմնական բովանդակությունն այդ պարագաներում այս եր. կալվածատերը դյուղացուն տալիս եր հող, շինության համար փայտեղեն ու առհասարակ արտադրության միջոցներ (յերբեմն էլ հենց ապրուստի միջոցներ) յուրաքանչյուր առանձին ծխի համար և թողնելով, որ դյուղացին անձամբ հայթայթի իր ապրուստը, ստիպում եր նրան, որ ամբողջ հավելյալ ժամանակում աշխատի կալվածատիրոջ համար, կոռ քաշի։ Ընդգծում եմ «ամբողջ հավելյալ ժամանակում», որպեսզի նշեմ, որ այդ սիստեմում դյուղացու «ինքնուրույնության» մասին խոսք անգամ լինել չի կարող*։ Այն «հողաբաժինը», որով կալվածատերն «ապահովում եր» դյուղացուն, ծառայում եր վոչ ավելի, քան վորպես բնավոր աշխատավարձ, ամբողջովին ու բացառապես ծառայում եր կալվածատիրոջ կողմից դյուղացուն շահագործելու համար, կալվածատիրոջն անհրաժեշտ աշխատող ձեռքեր «ապահովելու» համար, և վոչ յերբեք իր իսկ դյուղացու իրական ապահովության համար**։

Բայց ահա ներս և խուժուժ ապրանքային տնտեսությունը։ Կալվածատերն սկսում է հաց արտադրել՝ վաճառելու և վոչ թե իր կարիքների համար։ Այս հանգամանքն առաջ և բերում դյուղացիների աշխատանքի շահագործման ուժեղացում, հետո՝ հողաբաժինների սիստեմի դժվարացում, որովհետև կալվածատիրոջն արդեն շահավետ չե դյուղացիների ամող սերունդներին նոր հողաբաժիններ տալը, և առաջ և

---

* Ճիշ սահմանափակվում եմ գործի բացատրվես տնտեսական կողմով։

** Այս պատճառով էլ բացարձակ կեղծիք և ճորտատիրական «հողաբաժին» տալուց վրա հիմնվելը, յերբ որևէ ուզում են ապացուցել արտադրության միջոցների՝ արտադրողին պատկանելու «վաղեմություն»։

գալիս փողային հատուցման հնարավորությունը։ Ավելի հարմար է դառնում գյուղացիական հողը միանգամ ընդմիշտ սահմանազատել կալվածատիրականից (մանավանդ յեթե այդ դեպքում կալվածատերը հողաբաժիններն մի մասը կորի և «արդարացի» վրկանավճար ստանա) և ոգտվել նույն այդ գյուղացիների աշխատանքից, որոնք նյութապես ավելի վատ պայմանների մեջ են դրված և հարկադրված են ըրբցելու թե նախկին դարբասի գյուղացիների, թե «ազատա-շնորհված» գյուղացիների և թե ավելի ապահովված՝ նախկին պետական ու արքունի գյուղացիների հետ և այլն։

Ճորտային իրավունքն ընկնում է։

Տնտեսության,—արդեն շուկայի համար վարվող տնտեսության (այս հատկապես կարևոր է),—սիստեմը փոխվում է, բայց միանգամից չի փոխվում։ Հին գծերին ու «սկըզբունքներին» միանում են նորերը։ Այդ նոր գծերն այն են, որ Plusmacherei-ի հիմք և դառնում արդեն վրչ թե գյուղացու արտադրության միջոցներ ժառանգարարելը, այլ ընդհակառակը, նրա «ազատվելը» արտադրության միջոցներից, նրա փողի կարիքը. հիմք և դառնում արդեն վրչ թե բնատնտեսությունը, վրչ թե «ծառայությունների» բնատնտեսական փոխանակությունը (կալվածատերը դյուղացուն տալիս է հող, իսկ դյուղացին—հավելյալ աշխատանքի արդյունքները՝ հաց, կտավ և այլն), այլ ապրանքային, փողային «ազատ» պայմանագիրը։ Տնտեսության հենց այս ձևն էլ, որ իր մեջ միացնում է հին ու նոր գծերը, հաստատվեց Ռուսաստանում ռեֆորմից հետո։ Հողն՝ աշխատանքով հատուցելու պայմանով տրամադրելու հին յեղանակներին (որինակ տնտեսության՝ հողակտորների փոխարեն) միացավ «ձմեռային վարձումը»—աշխատանքի հատուցմամբ դրամական փոխատվություն այն բոլորին, յերբ դյուղացին առանձնապես փողի կարիք է զգում և յեռակի ժամն է վաճառում իր աշխատանքը, աշխատավճարումով հացի փոխատվություն և այլն։ Հասարակական-տնտեսական հարաբերությունները նախկին «կալվածքում» վերածվեցին, ինչպես տեսնում ենք, ամենասովորական վաճառուրային գործարքի. այդ գործառնությունները միանգամայն նման են այն գործառնություններին, որ մեծապնորդը կատարում է տնայնագործների նկատմամբ։

Անվիճելի յե, որ հենց այդպիսի տնտեսությունը տիպ դարձավ ռեֆորմից հետո, և մեր նարոդնիկական գրականությունը տվեց Plusmacherei-ի այդ առանձնապես անհրաժեշտ ճշտումները, ձև, որ միացած է ճորտատիրական արտադիսիաների ու հարաբերությունների հետ, իր «հողաբաժնով» կաշկանդված դյուղացու բացարձակ անոգնականության հետ։

Բայց նարոդնիկները չեյին կամենում և չեն կամենում տեսնել, թե վրն և այդ հարաբերությունների տնտեսական հիմքը։

Տիրապետության հիմքն այստեղ արդեն հողի տիրությունը չե, ինչպես հնումն եր, այլ նաև փողի տիրությունը, վորի կարիքն ունի դյուղացին (իսկ փողն ապրանքային տնտեսության կազմակերպած հասարակական աշխատանքի արդյունքն է),—և դյուղացու «ազատությունն» ապրուստի միջոցներից։ Ակնհայտ է, վոր կապիտալիստական, բուրժուական հարաբերություն է այս։ «Նոր» գծերը վոչ այլ ինչ են, բայց յեթե կապիտալի տիրապետության նախնական ձևը հողագործության մեջ, ձև, վորը դեռ չի ազատվել «հին, ազնվականական» կապանքներից, ձև, վոր ստեղծել և կապիտալիստական հասարակության հատուկ դասակարգային հակադրություն, բայց դեռ ֆիքսացիայի չի յենթարկել այդ հակադրությունը։

Բայց ահա ապրանքային տնտեսության զարգանալով՝ հողը (почва) դուրս և սողում կապիտալի տիրապետության նախնական ձևի տակից. գյուղացիության քայքայումը, վոր այժմ արդեն լիակատար փլուզման և հասել, նշանակում է, վոր գյուղացիները կորցնում են իրենց ինքնին

աարը,—վորի հիման վրա կանգուն եր մնում աշխատանքի թե ճորտային ու թե ստրկացուցիչ ձևը,—և այս հանգամանքը հարկադրում է կալվածատիրոջն անցնելու իր ինվենտարին, իսկ գյուղացուն—բառրակ դառնալու։

Վոր հենց այդ անցումն էլ սկսեց կատարվել հետաքրքրման Ռուսաստանում,—այս էլ անվիճելի իրողություն է։ Այս իրողությունը ցույց է տալիս այն ստրկացման ձևի տենդենցը, վորը նարոդնիկները քննության են առնում զուտ մետաֆիզիկորեն—անցյալի կապակցությունից դուրս զարգացման ձգտումից դուրս. այս իրողությունը ցույց է տալիս կապիտալիզմի հետագա զարգացումը, այն դասակարգային հակադրության հետագա զարգացումը, վորը հատուկ է մեր կապիտալիստական հասարակությանը և վորը նախընթաց ժամանակաշրջանում արտահայտվում էր «կուլակի» վերաբերմունքով դեպի գյուղացին, իսկ այժմ սկսում է արտահայտվել ռացիոնալ տնտեսատիրոջ վերաբերմունքով դեպի բատրակն ու որաժակը։

Ցավ ան՛ա այս վերջին փոփոխությունից էլ հենց հուսահատվում և սարսափում է նարոդնիկը, վոր սկսում է տաղտկալ «հողազրկման» մասին, «ինքնուրույնության կորցնելու» մասին, «կապիտալիզմի» հաստատվելու մասին, կապիտալիզմից սպառնացող թշվառությունների մասին և այլն և այլն։

Նայեցեք այդ դատողություններին անաչառ կերպով,—և դուք նրանց մեջ կտեսնեք, նախ, ուռ, թևկուռ և բարեմիտ սուտ, քանի վոր այդ բատրակային տնտեսությանը նախորդում և վրչ թե գյուղացու «ինքնուրույնությունը», այլ հավելյալ արդյունքն այն մարդուն հանձնելու ուրիշ ձևեր, ով չի մասնակցել այդ հավելյալ արդյունքն ստեղծելուն։ Ցերկրորդ, դուք կտեսնեք նարոդնիկական բողոքի մակերեսայնությունը, մանրությունը, վորն, ըստ պ. Սոր-ի վեյի դիպուկ արտահայտության, այդ բողոքը վեր և ածում վուլգար սոցիալիզմի։ Ինչու՞ չի այդ «հաստատվելը» քննության առնվում միմիայն յերկրորդ ձևով և վոչ յերկու ձևով էլ. ինչու՞ չի բողոքն ուղղվում վրչ թե այն հիմնական պատմական իրողության դեմ, վորը կենտրոնացրել է «մասնավոր հողագործների» ձեռքում արտադրության միջոցները, այլ միմիայն այդ մենաշնորհն ոգտագործելու յեղանակներից մեկի դեմ. ինչու՞ չարիքի արմատ են համարում վրչ թե այն արտադրական հարաբերությունները, վորոնք ամենուրեք աշխատանքը յենթարկում են փողի տիրոջը, այլ միայն բաշխման այն անհավասարաչափությունը, վորն այնքան ցայտուն կերպով հանդես է գալիս այդ հարաբերությունների վերջին ձևի մեջ։ Հենց այդ հիմնական հանգամանքն էլ—կապիտալիզմի դեմ հայտնվող բողոքը, վորը ծնում է նույն կապիտալիստական հարաբերությունների հողի վրա,—նարոդնիկներին դարձնում է մանր բուրժուազիայի իդեոլոգներ, մանր բուրժուազիայի, վորը վախենում է վրչ թե բուրժուականությունից, այլ միմիայն նրա սրումից, մի սրում, վորը հենց մենակ ինքն է տանում դեպի արմատական փոփոխություն։

V

Անցնում ենք պ. Սորուվեյի թեորիական դատողությունների վերջին կետին, «ռուսական կապիտալիզմի համար յերկաթ շուկաների հարցին» (245)։

Մեզանում շուկաների բացակայության մասին նարոդնիկների կատեգորիկ թեորիայի վերլուծությունը հեղինակն սկսում է այս հարցով. «ինչ է հասկանում պ. Վ.Վ.-ն կապիտալիզմ ասելով»։ Այդպիսի հարցը դրված է շատ տեղին, քանի վոր պ. Վ.Վ.-ն (և հենց բոլոր նարոդնիկներն առհասարակ) միշտ ռուսական կարգերը համեմատել են կապիտալիզմի վորևե «անգլիական ձևի հետ» (247), և վոչ թե նրա հիմնական գծերի հետ, վորոնք իրենց կերպարանքը փոխում են յուրաքանչյուր յերկրում։ Միայն ափսոս, վոր պ. Սորուվեյն չի տալիս կապիտալիզմի լիակատար վորոշումը՝ մատ-

նանշելով ընդհանրապես «վոխանակային տնտեսության տիրապետությունը» [այդ՝ մի հատկանիշն է. յերկրորդը—հավելյալ արժեքի յուրացումն է վողատիրոջ կողմից, այդ վերջինիս տիրապետությունն աշխատանքի վրա], այն տնտեսակարգը, վոր մենք տեսնում ենք Յեվրոպայի արևմուտքում» (247), «նրա բոլոր հետևանքներով», «արդյունաբերական կապիտալիզմի համակենտրոնացմամբ, կապիտալիզմով՝ բառի նեղ իմաստով» (247):

«Պ-ն Վ.Վ.-ն,—ասում է հեղինակը,—«կապիտալիզմ» գաղափարի վերլուծության մեջ չի խորացել, այլ վերցրել է այդ գաղափարը Մարքսից, վորը նկատի չի ունեցել, առավելապես, կապիտալիզմը նեղ մտքով, վորպես արդեն լիովին կազմակերպված արդյունք այն հարաբերությունների, վորոնք զարգանում են արտադրությունը փոխանակությանը յենթարկելու հողի վրա» (247): Սրա հետ անհնարին է համաձայնվել: Նախ, յեթե պ. Վ.Վ.-ն իրոք իր պատկերացումը կապիտալիզմի մասին վերցրած լիներ Մարքսից, ապա ճիշտ պատկերացում կունենար նրա մասին և չէր կարողանա շփոթել «անգլիական ձևը» կապիտալիզմի հետ: Յերկրորդ՝ բոլորովին անիրավացի չի, թե Մարքսն առավելապես նկատի ուներ «արդյունաբերական արտադրության կենտրոնացումը կամ համակենտրոնացումը» [այս և հասկանում պ. Ստրուվեն նեղ մտքով կապիտալիզմ ասելով]: Ընդհակառակը, նա հետազոտել է ապրանքային տնտեսության զարգացումը նրա առաջին քայլերից, նա կապիտալիզմը վերլուծել և նրա՝ հասարակ կոոպերացիայի ու մանուֆակտուրայի նախնական ձևերում,—ձևեր, վորոնք ամբողջ դարերով հետ են մնում մեքենաներով կատարվող արտադրության համակենտրոնացումից,—նա ցույց և ավել արդյունաբերական կապիտալիզմի կապը հողագործական կապիտալիզմի հետ: Պ-ն Ստրուվեն ինքն է նեղացնում կապիտալիզմի գաղափարը՝ ասելով. «...պ. Վ.Վ.-ի ուսումնասիրության օբյեկտը կազմել են ժողովրդական տնտեսության առաջին քայ-

լերը բնատնտեսական կազմակերպությունից դեպի ապրանքայինը տանող ճանապարհին»: Պետք էր ասել—վերջին քայլերը: Պ-ն Վ. Վ.-ն, վորքան հայտնի չի, ուսումնասիրել է Ռուսաստանի միմիայն հետռեֆորմյան տնտեսությունը: Ապրանքային արտադրության սկիզբը վերաբերում է մինչռեֆորմյան ժամանակաշրջանին, ինչպես մատնանշում է ինքը պ. Ստրուվեն (189—190), և նույն իսկ բավարակեղենի արդյունաբերության կապիտալիստական կազմակերպությունը դուրս գալ և նախքան դյուղացիների ազատագրումը: Ռեֆորմը զարկ տվեց վերջնական զարգացմանը այդ մարքով. նա առաջին տեղը դրեց վոչ թե աշխատանքի արդյունքի ապրանքային ձևը, այլ աշխատանքային ուժի ապրանքային ձևը. նա սանկցիա տվեց վոչ թե ապրանքային, այլ արդեն կապիտալիստական արտադրության տիրապետությանը: Պ-ն Ստրուվեն պարզորեն չզանազանելով կապիտալիզմը լայն ու նեղ իմաստով *, հանդում է այն բանին, վոր, ըստ յերևույթին, ռուսական կապիտալիզմի վրա նայում է վորպես մի ինչ-վոր ապագա բանի և վոչ թե ներկա բանի, վոր արդեն լիովին և վերջնականապես ձևակերպվել է: Նա ասում է, որինակ.

«Նախքան հարց դնելը, թե արդյոք անխուսափելի չի Ռուսաստանի համար կապիտալիզմի անգլիական ձևով, պ. Վ.Վ.-ն պետք է դներ և լուծեր ավելի ընդհանուր, ուստի և ավելի կարևոր մի ուրիշ հարց—արդյոք Ռուսաստանի համար անխուսափելի չի անցումը բնատնտեսությունից դեպի փողային տնտեսություն, և կապիտալիստական արտադրությունը sensu stricto ** ինչ հարաբերություն ունի դե-

---

* Չի յերևում, թե ինչ հատկանիշով է դանազանում հեղինակն այդ գաղափարները: Յեթե նեղ մտքով կապիտալիզմ ասելով՝ հասկանանք մեքենայական արդյունաբերությունը միայն, այն ժամանակ անհասկանալի չի, թե ինչու չառանձնացնել նաև մանուֆակտուրան: Յեթե լայն մտքով կապիտալիզմ ասելով՝ հասկանանք միմիայն ապրանքային տնտեսությունը, այն ժամանակ այստեղ կապիտալիզմ չկա:

**—Նեղ իմաստով: Խմբ.

ալի ապրանքային արտադրությունն ընդհանրապես» (247)։ Հազիվ թե հարմար և հարցն այդպես դնելը։ Ցեթե պարզվի արտադրական հարաբերությունների տվյալ սիստեմը, որը հիմա գոյություն ունի Ռուսաստանում, այն ժամանակ այս կամ այն զարգացման «անխուսափելիության» հարցն արդեն լուծված կլինի eo ipso *; Իսկ ցեթե այդ սիստեմը չպարզվի, ապա հիշյալ հարցն անլուծելի չե։ Փոխանակ ապացույց վերաբերյալ դատողություններ անելու (որ այնքան սիրում են պարոնայք նարոդնիկները), պետք է բացատրել ներկան։ Հետևաբար Ռուսաստանում, որպես խոշորագույն փաստ, հրապարակ չեկավ կապիտալիզմի, չեթե կարելի չե այսպես ասել, արտաքին արտահայտությունը, այսինքն՝ նրա «գագաթնակետ» արտահայտությունը (գործարանային արտադրության, երկաթուղիների, բանկերի և այլոց), և թեորիական մտքի համար իսկույն ծառացավ կապիտալիզմի հարցը Ռուսաստանում։ Նարոդնիկներն աշխատում էին ապացուցել, որ այդ գագաթնները պատահական են, չեն կապված ամբողջ տնտեսակարգի հետ, հող չունեն, ուժեր և անզոր են. այս դեպքում նրանք վերցնում էին «կապիտալիզմը» չափազանց նեղ հասկացողությամբ՝ մոռանալով, որ աշխատանքի սոցիալացումը կապիտալից մինչև «անգլիական ձևը»։ Մարքսիստներն էլ հենց պետք է ապացուցեին, որ այդ գագաթնները այլ բան չեն, քան չեթե այն ապրանքային տնտեսության զարգացման վերջին քայլը, որը վաղուց գոյացել և Ռուսաստանում և ամենուրեք, արտադրության բոլոր ճյուղերում, առաջ և բերում աշխատանքի չենթարկումը կապիտալին։

Պ-ն Սորուվեյի հայացքը ռուսական կապիտալիզմի՝ որպես մի ինչ-որ ապագա, և վոչ թե ներկա բանի՝ մասին,— առանձին ակնառությամբ չերևան չեկավ հետևյալ դատո-

*—դրանով իսկ։ Խմբ.

ղության մեջ. «քանի դեռ գոյություն կունենա արդի հասարակությունը, որը հաստատված և ամրացված է որենքով, նրա հողի վրա կզարգանան այնպիսի հարաբերություններ, որոնք վոչ մի ընդհանուր բան չունեն «ժողովրդական բարեկեցության» հետ։ [Մի թե դեռ նոր «կզարգանան», և վոչ թե արդեն զարգացել են այնքան վաղուց, որ նարոդնիկական ամբողջ դրականությունը իր ծագման հենց սկզբի որից, սրանից ավելի քան մի քառորդ դար առաջ, նկարագրել և այդ բնույթները և բողոքել են նրանց դեմ]։ Արևմուտքում մենք ունենք մի քանի որինակներ, երբ պարցելային տնտեսությունը գոյություն ունի խորը կապիտալիստականի կողքին։ Մեր Լեհաստանը և մեր հարավ-արևմտյան չերկիրը նույն կարգի չերևույթներ են։ Կարելի չե ասել, որ թե ծխային և թե համայնական Ռուսաստանը մոտենում է այդ տիպին, որչափով որ քայքայված գյուղացիությունը մնում է հողի վրա, և նրա միջավայրում համահարթող աղդեցությունն ավելի ուժեղ են, քան դիֆերենցիա առաջ բերող աղդեցությունները» (280)։ Մի թե դեռ մի այն մոտենում է, և վոչ թե այժմ արդեն հենց այդ տիպն է։ «Տիպը» վորոշելու համար պետք է վերցնել, իհարկե, կարգերի հիմնական տնտեսական գծերը և վոչ թե իրավական ձևերը։ Ցեթե մենք նայենք առասական գյուղի եկոնոմիկայի այդ հիմնական գծերին, ապա կտեսնենք գյուղացիական ծխերի մեկուսացված տնտեսություններ մանր հողամասերի վրա, կտեսնենք ամող ապրանքային տնտեսություն, որն իշխող դեր է կատարում հենց այժմ։ Դրանք հենց այն գծերն են, որոնք բնորոշ են տալիս «պարցելային տնտեսություն» դաղափարին։ Մենք տեսնում ենք այնուհետև նույն երևույթը, երբ գյուղացիները ծանրաբեռնված են վաչխառությունների տալիք պարտքերով, նույն եքսպրոպրիացիան, որի մասին վկայում են Արևմուտքի տվյալները։ Ամբողջ տարբերությունը մեր իրավական կարգերի առանձնահատկությունն է (գյուղացիների քաղաքացիական անիրավահավասա-

բուրժուազիայի, հողատիրուհիների ձևերը), որոնք ավելի ամրոզջական վիճակում են պահում «հին ռեժիմը» հետքերն ու պատճառով, որ կապիտալիզմն ավելի թույլ և զարգացած մեզանում։ Բայց այդ առանձնահատկություններն ամենևին չեն խանգարում, որ մեր գյուղացիական կարգերի ոիպը միատեսակ լինի արևմտյան տիպերի հետ։

Անցնելով շուկանների բուն թեորիային՝ պ. Ստրուվեն նկատում է, որ պարոնայք Վ. Վ.-ն ու Ն.—ոնը մոլորվում են կախարդական շրջանակի մեջ. կապիտալիզմի զարգացման համար հարկավոր է շուկայի աճում, իսկ կապիտալիզմը քայքայում է բնակչությունը։ Հեղինակն իր մելամաղձական չափազանց անհաղթ կերպով է շտկում այդ կախարդական շրջանակը՝ գյուղացիության քայքայման պատճառը վերագրելով ոչ թե կապիտալիզմին, այլ «բնակչության աճմանը»։ Մատնանշված հեղինակների սխալը բոլորովին այլ է.—կապիտալիզմը միայն քայքայում չէ, այլև ստեղծում է գյուղացիությունը բուրժուազիայի ու պրոլետարիատի։ Այդ պրոցեսը չի կրճատում ներքին շուկան, այլ ներքին շուկա է ստեղծում. ապրանքային տնտեսությունն աճում է արտնվող գյուղացիության յերկու բևեռներում էլ, թե «պրոլետարական բևեռում», որը հարկադրված է վաճառելու «ազատ աշխատանքը», և թե բուրժուական բևեռում, որը բարձրացնում է իր տնտեսության տեխնիկան (մեքենաներ, ինվենտար, պարարտացում և այլն։ Հմմտ. պ. Վ. Վ., «Առաջադիմական հոսանքները գյուղացիական տնտեսության մեջ») և զարգացնում է պահանջմունքները։ Չնայած նրան, որ պրոցեսի այդպիսի ըմբռնումն անմիջականորեն հիմնված է արդյունաբերական ու հողագործական կապիտալիզմի փոխհարաբերության վերաբերյալ Մարքսի թեորիայի վրա, պ. Ստրուվեն տնտեսում է այդ,—դուրս այն պատճառով, որ նրան մոլորության մեջ է դցել պ. Վ. Վ.-ի «շուկանների թեորիան»։ Այդ վերջինը, հենվելով, իբր թե, Մարքսի վրա, ուսական հասարակությանը հրաժարել է այն «թեորիան», որպես թե կապիտալիստական դարգացած հասարակության մեջ անխուսափելի է «ապրանքներն ավելցուկը». ներքին շուկան չի կարող բավական լինել, անհրաժեշտ է արտաքին։ «Այս թեորիան ճիշտ է (?!),—հայտարարում է պ. Ստրուվեն,—մոլորվում որ նա հավատում է այն փաստը, թե հավելյալ արժեքը չի կարող իրացվել միչ կապիտալիստների և միչ բանվորների սպառումով, այլ 3-րդ անձերի սպառում է յենթադրում» (251)։ Այս հայտարարության հետ համաձայնվելու միչ մի հնարավորություն չկա։ Պ-ն Վ. Վ.-ի «թեորիան» (յերե կարելի է այստեղ թեորիայի մասին խոսել) անձնական ու արտադրողական սպառման այն տարբերության, արտադրության միջոցների ու սպառման առարկաների այն տարբերության անտեսումն է պարզապես, առանց որի (տարբերության) անհնարին է պարզել ամբողջ հասարակական կապիտալի վերարտադրությունը կապիտալիստական հասարակության մեջ։ Մարքսն այս ցույց է տվել ամբողջ մանրամասնությամբ «Կապիտալ» II հատորում (յերրորդ բաժին — «Ամբողջ հասարակական կապիտալի վերարտադրությունն ու դոյացումը») և պետք է կերպով նշել և նաև I հատորում՝ քննադատելով կլասիկ քաղաքատնտեսության այն դրույթը, ըստ որի կապիտալի կուտակումն այն է, որ գերարժեքը վեր է ածվում միմիայն աշխատավարձի, և միչ թե հաստատուն կապիտալի (արտադրության միջոցները), պետք աշխատավարձը։ Պ-ն Վ. Վ.-ի թեորիայի այդպիսի բնորոշում հաստատելու համար սահմանափակվենք պ. Ստրուվեյի մատնանշած հոդվածներից յերկու ցիտատով։

«Ծուրաքանչյուր բանվոր,—ասում է պ. Վ. Վ.-ն «Ընդհանուր ապրանքներ մատակարարելու ավելցուկը» հոդվածում,—արտադրում է ավելի, քան նա սպառում է, և այդ բոլոր ավելցուկները կիսովում են փոքրաթիվ ձեռքերում. այդ ավելցուկների տերերն իրենք են սպառում այդ ավելցուկները, որի համար փոխանակում են յերկրի ներսում ու արտա-

*առհասնում անհրաժեշտության ու կոմֆորտի բազմազան պրդյունքների հետ. բայց վորքան եվ նրանք ուտեն, խմեն և պարեն (sic!!)—ամբողջ հավելյալ արժեքը նրանք չեն կարող հատեցնել («От. Зап.» 1883 թ., № 5, եջ 16), և «ավելի ակնառու դարձնելու հաժար» հեղինակը «քննության է առնում կապիտալիստի ամենագլխավոր ծախսերը», ինչպես ճաշերն են, ճանապարհորդությունները և այլն։ Ավելի ցայտուն և ասված «Մելիտարիզմ ու կապիտալիզմ» հոդվածում. «Արդյունաբերության կապիտալիստական կազմակերպության աքիլլեսյան կրունկն այն է, վոր ձեռնարկիչները հնարավորություն չունեն սպառելու իրենց ամբողջ յեկամուտը» («Русская Мысль») 1889 թ. № 9, եջ 81)։ «Ռոտշիլդը չի կարող սպառել իր յեկամտի ամբողջ ածը... պարզապես հենց այն պատճառով, վոր այդ ածը... հավասար է սպառման առարկաների այնպիսի մեծ քանակության, վոր Ռոտշիլդը, վորի բոլոր քմահաճույքներն առանց այդ եվ կատարվում են, վճռականապես կդժվարանար» և այլն։

Այդ բոլոր դատողություններն, ինչպես տեսնում եք, հիմնված են այն միամիտ կարծիքի վրա, վորպես թե կապիտալիստի նպատակը անձնական սպառումն է և վոչ թե գերարժեքի կուտակումը,—այն սխալի վրա, իբր թե հասարակական արդյունքը բոհվում է v+m-ի (փոփոխական կապիտալ՝ պլյուս գերարժեք), ինչպես ուսուցանում էր Ա. Սմիթը ու ամբողջ քաղաքատնտեսությունը նախքան Մարքսը, և վոչ թե c+v+m-ի (հաստատուն կապիտալ, արտադրության միջոցներ, և հետո արդեն աշխատավարձ ու գերարժեք), ինչպես ցույց և տվել Մարքսը)։ Միանգամ վոր ուղղված են այդ սխալները, և նկատի չի առնված այն հանգամանքը, վոր կապիտալիստական հասարակության մեջ հսկայական ու հարաճուն դեր են խաղում արտադրության միջոցները (հասարակական արդյունքների այն մասը, վորը գործ և ածվում վոչ թե անձնական, այլ արտադրողական սպառման վրա, վոչ թե մարդկանց, այլ կապիտալի սպառման վրա)*

բոլորովին փլչում և նաև տխրահռչակ ամբողջ «թեորիան»։ Մարքսն ապացուցել է II հատորում, վոր միանգամայն հնարավոր է կապիտալիստական արտադրությունն առանց արտաքին շուկաների, կապիտալիստական արտադրություն՝ հարստության աճող կուտակումով ու առանց վորևե «3-րդ անձերի», վորոնց ներգրավումը պ. Ստրուվեյի կողմից վերին աստիճանի անհաջող է։ Պ-ն Ստրուվեյի դատողությունն այդ առարկայի մասին տարակուսանք է առաջ բերում մանավանդ այն պատճառով, վոր հենց նա ինքն և մատնանշում ներքին շուկայի գերակշիռ նշանակությունը Ռուսաստանի համար և բոնում է պ. Վ. Վ.-ին «ռուսական կապիտալիզմի զարգացման ծրագրում», վորը հենվում է «ռուժեղ գյուղացիության վրա»։ Այդ ուժեղ (իմա՝ բուրժուական) գյուղացիության գոյացման պրոցեսը, վորն այժմ տեղի է ունենում մեր գյուղում, ուղղակի ցույց է տալիս կապիտալի ապրնդավորումը, արտադրողի պրոլետարացումն ու ներքին շուկայի ածումը. «բարելավված գործիքների տարածումն», որինակ, նշանակում է հենց կապիտալի կուտակում ի հաշիվ արտադրության միջոցների։ Այս հարցի առթիվ հատկապես անհրաժեշտ էր «հնարավորությունները» շարադրելու փոխարեն տալ այն իրական պրոցեսի շարադրանքն ու բացատրությունը, վորն արտահայտվում է ռուսական կապիտալիզմի համար ներքին շուկա ստեղծելու մեջ։

---

*Սրանով վերջացնելով պ. Ստրուվեյի գրքի թեորիական մասի վերլուծությունը՝ մենք կարող ենք այժմ դիտել նրա դատողությունների հիմնական յեղանակների ընդհանուր, այսպես ասած հավաքական բնութագիրը տալ և այդ պիսով մոտենալ սկզբում դրված հարցերի լուծմանը.—«այս

* Քանի վոր այս շատ կարևոր ու բավղ հարց է, ուստի մենք մտադիր ենք դրան առանձին հոդված նվիրել (Վլադիմիր Իլյինն այս հարցը մանրամասնորեն վերլուծել է «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում»-ի մեջ (տես Յերկերի III հատորը)։ Խ մ բ.)։

դրքում ինչը հատկապես կարելի յե վերագրել մարքսիզմի ոգուն», «դոկտրինայի (մարքսիզմի) վրա դրույթներն ե հեղինակը մերժում, լրացնում կամ ուղղում, և ինչ ե ստացվում այդ դեպքերում»։

Հեղինակի դատողությունների հիմնական դիծը, ինչ նշենք հենց սկզբից, նրա նեղ օբյեկտիվիզմն ե, որը սահմանափակվում և պրոցեսի անխուսափելիությունն ու անհրաժեշտությունն ապացուցելով և չի ձգտում այդ պրոցեսի յուրաքանչյուր կոնկրետ ստադիայում մերկացնելու նրան հատուկ դասակարգային հակամարտության ձևը,—օբյեկտիվիզմ, որը բնորոշում և պրոցեսն ընդհանրապես, և վոչ թե այն հակամարտ դասակարգերն առանձին վերցրած, որոնց կռվից գոյանում և պրոցեսը։

Մենք լիովին հասկանում ենք, որ իր «դիտողությունները» մեկ «օբյեկտիվ» ու այն ել ամենից ընդհանուր մասով սահմանափակելու համար հեղինակն ունեցել և իր հիմքերը.—առաջին, կամենալով նարոդնիկներին հակադրել քշնամական հայացքների հիմունքները՝ նա չարտգրել և միայն principia՝ թողնելով նրանց զարգացումն ու ավելի կոնկրետ պարզաբանումը բանավեճի հետագա զարգացմանը, 2-րդ, մենք առաջին գլխում ալխատեցինք ցույց տալ, որ նարոդնիկության ամբողջ զանազանությունը մարքսիզմից՝ ռուսական կապիտալիզմի ճնշողական բնույթն ե, ռուսական կապիտալիզմի այլ բացատրություններ ե,—որտեղից բնականաբար հենց բղխում և այն, որ մարքսիստները յերբեմն սահմանափակվում են միմիայն ընդհանուր «օբյեկտիվ» դրույթներով, ծանրանում են բացառապես այն բանի վրա, թե ինչն ե, որ տարբերում և (հանրածանոթ փաստերի) մեր ըմբռնողությունը նարոդնիկական ըմբռնողությունից։

Բայց պ. Սարուվեյի մոտ, մեզ թվում ե, բանն արդեն շատ հեռու յե գնացել այս տեսակետից։ Շարադրանքի վերացականությունը հաճախ ավել ե այնպիսի դրույթներ, որոնք չեն կարող թյուրիմացություններ չառաջացնել. հարցի դրբում չի դանազանվել սովորական, մեր գրականության մեջ թագավորող պրոֆեսորաբար, վերից դատելու յեղանակներից՝ հայրենիքի բախտի և ուղիների մասին, և վոչ թե այսինչ ու այսինչ ուղիներով ընթացող առանձին դասակարգերի մասին. որքան ավելի կոնկրետ են դարձել հեղինակի դատողությունները, այնքան ավելի անհնար և յեղել բացատրել մարքսիզմի principia՝ միայով ընդհանուր վերացական դրույթների բարձրության վրա, այնքան ավելի անհրաժեշտ և յեղել վորոշակի ցուցումներ տալ ռուսական հասարակության այսինչ դասակարգերի այսինչ դրության մասին, Plusmacherei-ի տարբեր ձևերի ու արտադրողների շահերի այսինչ հարաբերակցության մասին։

Այդ պատճառով ել մեզ բոլորովին անտեղի չեր թվում փորձել լրացնել ու պարզաբանել հեղինակի դրույթները, հետևել քայլ առ քայլ նրա շարադրանքին՝ նշելու համար, որ անհրաժեշտ և հարցերն այլ կերպ դնել, անհրաժեշտ և ավելի ճիշտ ողակացորեն կիրառել դասակարգային հակասությունների թեորիան։

Ինչ վերաբերում և պ. Սարուվեյի ուղղակի շեղումներին մարքսիզմից—պետության, գերբնականչության, ներքին շուկայի վերաբերյալ հարցերում—ապա դրանց մասին արդեն բավական խոսվեց։

VI

Գարոն Սարուվեյի գրքում, բացի նարոդնիկության թեորիական բովանդակության քննադատությունից, ի միջի այլոց, կան նաև ինչ-ինչ դիտողություններ, վորոնք վերաբերում են նարոդնիկական տնտեսական քաղաքականությանը։ Թեև այդ դիտողությունները նետված են թռուցիկ կերպով և հեղինակի կողմից չեն զարգացված, բայց, այնուամենայնիվ, մենք չենք կարող չշոշափել այդ դիտողությունները, վորպեսզի տեղ չթողնենք վոչ մի թյուրիմացության համար։

Այդ դիտողությունների մեջ կան մանանշումներ լիբե-

րալ, այսինքն՝ բուրժուական քաղաքականության «ռացիոնալության», առաջադիմականության, «խելացիության» մասին և այլն՝ նարոդնիկական քաղաքականության համեմատությամբ*։

Ահներև է, որ հեղինակը կամեցել է առաջերել գոյություն ունեցող հարաբերությունների հողի վրա միացող յերիտ. քաղաքականություն, և այդ իմաստով նա միանգամայն իրավացի կերպով մատնանշել է, որ «բանական է» կապիտալիզմը զարգացնող և վոչ թե կասեցնող քաղաքականությունը,—«բանական է, իհարկե, վոչ այն պատճառով, որ ծառայելով բուրժուազիային՝ արտադրողին հետզհետե ավելի ուժեղ կերպով է նրան յենթարկում [ինչպես աշխատում են մեկնաբանել զանազան «պարզամիտներ» կամ «լաբախաղացներ»], այլ այն պատճառով, որ արելով ու մաքրելով կապիտալիստական հարաբերությունները՝ նա լուսավորում է նրա բանւոգեաճություն, ուժից միայն հենց կախված է փոփոխությունը, և արձակում է նրա ձեռքերը։

Մենք չենք կարող չնկատել, սակայն, որ այդ միանգամայն ճիշտ դրույթը պ. Սարուխեն անհաջող և արտահայտել, իրեն հատուկ վերացականության շնորհիվ այնպես և

* Այդ դիտողությունների նմուշներ ցույց տանք. «Յեթե պետությունը... կամենում է ամրապնդել վոչ թե խոլոր, այլ մանր հողատիրությունը, ապա տվյալ տնտեսական պայմաններում նա կարող է հասնել այդ նպատակին վոչ թե նրանով, որ հետամուտ լինի անխրականանալի տնտեսական հավասարության մեղմելու գյուղացիության մեջ, այլ միմիայն նրա կենսունակ տարրերին ոգնելու և պահպանելու միջոցով, նրանցից անտեսապես ուժեղ գյուղացիություն ստեղծելու միջոցով» (240)։ «Յես չեմ կարող չտեսնել, որ այդպիսի գյուղացիություն (այսինքն՝ «տնտեսապես ուժեղ ապրանքային արտադրությանը հարմարված» գյուղացիություն) ստեղծելու քաղաքականությունը կլինի միակ խելացի և առաջադիմական քաղաքականությունը» (281)։ «Ռուսաստանն աղքատ կապիտալիստական յերկրից պետք է դառնա հարուստ, դարձյալ կապիտալիստական յերկիր» (281) և այլն, ընդհուպ մինչև յեզրափակիչ ֆրազը «գնանք կապիտալիզմից բան սովորելուց»։

արտահայտել, որ յերբեմն ուղում ես ասել նրան.—Թողեք, որ մեռելները թաղեն իրենց մեռելներին։ Յերբեք Ռուսաստանում պակաս չի յեղել այն մարդկանց թիվը, որոնք իրենց ամբողջ հոգին դրել են այնպիսի թեորիաներ ու ծրագրեր ստեղծելու վրա, որոնք արտահայտում են մեր բուրժուազիայի շահերը, որոնք արտահայտում են ուժեղ ու խոշոր կապիտալի այդ բոլոր «պիտոյականությունները»՝ ճըշմելու փոքր կապիտալն ու խորտակելու նրա շահագործման ոլբիմիով ու նահապետական յեղանակները։

Յեթե հեղինակն այստեղ էլ խոտիվ պահպաներ մարքսիզմի «դոկտրինայի» պահանջը, որը պարտավորեցնում է շարադրանքը հանդեցնել իրական պրոցես ձևակերպելու, պարտավորեցում է մերկացնել «բանական», «ռացիոնալ» և առաջադիմական քաղաքականության յուրաքանչյուր ձևի հետևում թագնված դասակարգային հակասությունները,—նա նույն միտքը կարտահայտեր այլ կերպ, հարցն այլ կերպ կդներ։ Նա լիներ լիովին, այսինքն՝ բուրժուազիայի այն թեորիաներն ու ծրագրերը, որոնք՝ ինչպես անձրևից հետո բուսնող սունկեր՝ հրապարակ յեկան մեծ ռեֆորմից հետո, կբերեր որպես կապիտալիզմի զարգացման վերաբերյալ փաստական տվյալների զուգահեռ։ Նա այդպիսով ուսական տվյալների ոգնությամբ միայն։ Նա ցույց կտար այդպիսով, յերկրորդ, թե ինչպես միամիտ են նարոդնիկները, որոնք իրենց գրականության մեջ մարտնչում են բուրժուական թեորիաների դեմ այնպես, կարծես թե այդ թեորիաները միմիայն սխալ դատողություններ յեին, և վոչ թե այն հզոր դասակարգի շահերն յեին ներկայացնում, որին խրատելն անմտություն է, որը կարող է «համոզվել» միմիայն մյուս դասակարգի ուժով։ Նա ցույց կտար այդպիսով, յերրորդ, թե

ժեղտնում իսկապես վոր դասակարգն է և վորոշում «պետականությունն» ու առաջադիմությունը», և թե ինչպես ծիծաղելի չեն նարոդնիկները, վ· րոնք դատում են այն մասին, թե ինչ «ուղի» պետք է «ընտրել»։

Պարոնայք նարոդնիկները մի առանձին բավականությամբ արձագանգեցին պ. Սորովևկի այդ արտահայտություններին՝ չարախնդալով այն առթիվ, վոր նրանց անհաջող ձևակերպումը թույլ տվեց զանազան բուրժուական սընտեսագետների (ինչպես պ. Յանժուլը) և ճորտատիրության կողմնակիցների (ինչպես պ. Գոլովինը) կառչել առանձին, ընդհանուր կապից պոկած ֆրազներին։ Մենք տեսանք, թե ինչն է պ. Սորովևկի անբավարար կողմը, վորն այդպիսի զենք է տվել հակառակորդների ձեռքը։

Այն վորձերը, վորով նարոդնիկությունը քննադատվում էր պարզապես իբրև մի թեորիա, վոր սխալ կերպով էր ուղիներ մատնանշում հայրենիքի համար *, հեղինակին հասցրին մի դրություն, յերբ նա վոչ-պարզ կերպով ձևակերպեց իր վերաբերմունքը դեպի նարոդնիկության «տնտեսական քաղաքականությունը»։ Այստեղ կարող են տեսնել, թերևս, այդ ամբողջ քաղաքականության ու վոչ թե նրա մխիթարն կեսի անխոհեմ ժխտումը. այդ պատճառով անհրաժեշտ է կանգ առնել այս կետի վրա։

«Հայրենիքի համար այլ ուղիներ» հնարավորության մասին փիլիսոփայելը նարոդնիկության մխիթարն արատը դեռևս զգեստավորում է։ Իսկ նրա բովանդակությունը ռեակցիոն մանր արտադրողի, մանր բուրժուայի շահերի ու տեսակետի ներկայացուցիչ լինելն է։ Ուստի և նարոդնիկը թեորիայի ասպարեզում ճիշտ նույնպես մի Յանուս է, վորը մի յերեսով նայում է անցյալին, իսկ մյուսով—ապագային, ինչպես կյանքում Յանուս և մանր արտադրողը, վորը մի յերեսով նայում է անցյալին՝ ցանկանալով ամրապնդել իր մանր տնտեսությունը՝ չհամանալով և վոչինչ իմանալ չցանկանալով ընդհանուր տնտեսակարգի մասին և նրանց կառավարող դասակարգին հաշվի առնելու անհրաժեշտության մասին,—իսկ մյուս յերեսով նայում է ապագային՝ թշնամաբար տրամադրվելով նրան քայքայող կապիտալիզմի դեմ։

Այստեղից հասկանալի յե, վոր բացարձակապես սխալ կլիներ ժխտել ամբողջ նարոդնիկական ծրագիրն՝ առանց խտրության։ Նրա մեջ պետք է տարբերել նրա ռեակցիոն ու առաջադիմական կողմերը։ Նարոդնիկությունը ռեակցիոն է, վորչափով վոր նա առաջարկում է այնպիսի ձեռնարկություններ, վորոնք գյուղացուն կապում են հողից ու արտադրության հին յեղանակներից, ինչպես հողաբաժինների անօտարելիությունը և այլն *, վորչափով վոր նրանք ուզում են կասեցնել փողային տնտեսության զարգացումը, վորչափով վոր նրանք վոչ թե մասնակի բարելավումներ, այլ ուղղու փոփոխություն են սպասում «հասարակությունից» և բյուրոկրատիայի ներկայացուցիչների ներգործությունից (որինակ, պ. Յուժակովը, վորը «Русск. Бог.» 94 թ. № 7-ում դատողություններ է արել մի զեմսկի նախկինիկի կողմից նախագծվող հասարակական հերկերի մասին և զբաղվել է այդ նախագծերի մեջ ուղղումներ մտցնելով)։ Նարոդնիկական ծրագրի այսպիսի կետերի դեմ, իհարկե, անհրաժեշտ է անպայման պատերազմել։ Սակայն նրանք ունեն նաև այլ կետեր, վորոնք վերաբերում են «ինքնավարության», գիտության ազատ և լայն չափերով «ժողովրդին» մատչելի դարձնելուն, «ժողովրդական» (իմա՝ մանր) տնտեսության «վերելքին» եժան վարկերի, տեխնիկայի բարելավման, վա-

* «Քննադատական դիտողություններին» հեղինակը մատնանշում է նարոդնիկության տնտեսական հողը (էջ 166—7), բայց նրա մատնանշումը, մեր կարծիքով, անբավարար է։

* Չափազանց ճիշտ է ասում պ. Սորովևն, թե այդ միջոցները կարող էին միմիայն «իրականացնել մի քանի արևմտա-յեվրոպական և ռուսական հողատերերի բռցավառ յերազանքները հողին ամրագրած բատրակների մասին» (279)։

ժեղանում իսկապես վոր դասակարգ, և վորոշում «պետությանկանությունն» ու առաջադիմությունը», և թե ինչպես ծիծաղելի չեն նարոդնիկները, վ· րոնք դատում են այն ժամին, թե ինչ «ուղի» պետք է «ընտրել»։

Պարոնայք նարոդնիկները մի առանձին բավականությամբ արձագանգեցին պ. Սորուվեյի այդ արտահայտությունները՝ չարախնդալով այն առթիվ, վոր նրանց անհաջող ձեռնարկումը թույլ տվեց զանազան բուրժուական տընտեսագետների (ինչպես պ. Յանժուլը) և ճորտատիրության կողմնակիցների (ինչպես պ. Գալովինը) կառչել առանձին, ընդհանուր կապից պոկած փրաղներին։ Մենք տեսանք, թե ինչն և պ. Սորուվեյի անբավարար կողմը, վորն այդպիսի զենք և տվել հակառակորդների ձեռքը։

Այն փորձերը, վորով նարոդնիկությունը քննադատվում եր պարզապես իրրև մի թեորիա, վոր սխալ կերպով եր ուղիներ մատնանշում հայրենիքի համար *, հեղինակին հասցրին մի դրության, յերբ նա վոչ-պարզ կերպով ձևակերպեց իր վերաբերմունքը դեպի նարոդնիկության «տնտեսական քաղաքականությունը»։ Այստեղ կարող են տեսնել, թերևս, այդ ամբողջ քաղաքականության ու վոչ թե նրա մխիթարն կեսի անխոհեմ ժխտումը. այդ պատճառով անհրաժեշտ և կանգ առնել այս կետի վրա։

«Հայրենիքի համար այլ ուղիներ» հնարավորության մասին վիլյամսփայլը նարոդնիկության միմիայն արտաքուստ զգեստավորումն եւ Իսկ նրա բովանդակությունը ռուսական մանր արտադրողի, մանր բուրժուայի շահերի ու տեսակետի ներկայացուցիչ լինելն եւ Ուստի և նարոդնիկը թեորիայի ասպարեզում ճիշտ նույնպես մի Յանուս և, վորը մի յերեսով նայում և անցյալին, իսկ մյուսով—ապագային, ինչպես կյանքում Յանուս և մանր արտադրողը, վորը մի

* «Քննադատական դիտողություններին» հեղինակը մատնանշում և նարոդնիկության անտեսական հողը (էջ 166—7), բայց նրա մատնանշումը, մեր կարծիքով, անբավարար եւ

յերեսով նայում և անցյալին՝ ցանկանալով ամրապնդել իր մանր տնտեսությունը՝ չիմանալով և վոչինչ իմանալ չցանկանալով ընդհանուր տնտեսակարգի մասին և նրանց կառավարող դասակարգին հաշվի առնելու անհրաժեշտության մասին,—իսկ մյուս յերեսով նայում և ապագային՝ թշնամաբար տրամադրվելով նրան քայքայող կապիտալիզմի դեմ։

Այստեղից հասկանալի յե, վոր բացարձակապես սխալ կլիներ ժխտել ամբողջ նարոդնիկական ծրագիրն՝ առանց խտրության։ Նրա մեջ պետք է տարբերել նրա ռեակցիոն ու առաջադիմական կողմերը։ Նարոդնիկությունը ռեակցիոն է, վորչափով վոր նա առաջարկում է այնպիսի ձեռնարկումներ, վորոնք գյուղացուն կապում են հողից ու արտադրության հին յեղանակներից, ինչպես հողաբաժինների անօտարելիությունը և այլն *, վորչափով վոր նրանք ուզում են կասեցնել փողային տնտեսության զարգացումը, վորչափով վոր նրանք վոչ թե մասնակի բարելավումներ, այլ ուղղակի փոփոխություն են սպասում «հասարակությունից» և բյուրոկրատական ներկայացուցիչների ներգործությունից (որինակ, պ. Յուժակովը, վորը «Русск. Бог.» 94 թ. № 7-ում դատողություններ է արել մի զեմսկի նախկինիկի կողմից նախագծվող հասարակական հերկերի մասին և զբաղվել է այդ նախագծերի մեջ ուղղումներ մտցնելով)։ Նարոդնիկական ծրագրի այսպիսի կետերի դեմ, իհարկե, անհրաժեշտ է անպայման պատերազմել։ Սակայն նրանք ունեն նաև այլ կետեր, վորոնք վերաբերում են «ինքնավարության», գիտության ազատ և լայն չափերով «ժողովրդին» մատչելի դարձնելուն, «ժողովրդական» (իմա՝ մանր) տնտեսության «վերելքին» նժան վարկերի, տեխնիկայի բարելավման, վա-

* Չափազանց ճիշտ է ասում պ. Սորուվեն, թե այդ միջոցները կարող եյին միմիայն «իրականացնել մի քանի արևմտա-յեվրոպական և ռուսական հողատերերի բոցավառ յերազանքները հողին ամրագրած բատրակների մասին» (279)։

ձեռահանութեյան կարգավորման միջոցով և այլն, և այլն, և այլն։ Վոր այդպիսի համադեմոկրատական ձեռնարկումներն առաջադիմական են,—այդ լիովին ընդունում և, իհարկե, նաև պ. Ստրուվեն։ Նրանք չեն կասեցնի, այլ կարագացնեն Ռուսաստանի տնտեսական դարգացումը կապիտալիստական ուղիով, կարագացնեն ներքին շուկայի ստեղծումը, կարագացնեն տեխնիկայի ու մեքենային արդյունաբերութեյան աճումը՝ բարելավելով աշխատավորի դրութեյունը և բարձրացնելով նրա պահանջմունքների մակարդակը, կարագացնեն և կդյուրացնեն նրա ինքնուրույն մտածողութեյունն ու գործողութեյունը։

Այստեղ կարող ե թերևս մեկին մի հարց ծագել.—ով և ավելի ճիշտ ու ավելի լավ ժամանակում այսպիսի, անպայման ցանկալի, միջոցներ,—նարոդնիկները, թե հրապարակախոսներն à la պ. Ա. Սկվորցով, վորը նույնպես կուրծք և ծնծում տեխնիկական առաջադիմութեյան համար և վորի նկատմամբ այնպես լավ և տրամաղրված պ. Ստրուվեն։ Ինձ թվում ե, վոր մարքսիստական տեսակետից չի կարելի կասկածել, վոր բացարձակապես գնդրատանելի յե այդ տեսակետից նարոդնիկութեյունը։ Պարոնայք Սկվորցովների ձեռնարկումները նույնպես վերաբերում են մանր արտադրողների, մանրը բուրժուազիայի ամբողջ դասակարգի շահերին, ինչպես «Московские Ведомости»-ի ծրագիրը՝ խոշոր բուրժուազիայի շահերին։ Այդ ձեռնարկումները նշված են վոչ թե բոլորի *, այլ միայն իշխանութեյան ուշադրութեյանն արժանացած առանձին ընտրյալների համար։ Վերջապես, նրանք այլանդակորեն կոպիտ են, վորովհետև վոստիկանական միջամտութեյուն են յենթադրում գյուղացիների տնտեսութեյան մեջ։ Մնասին վերցված՝ այդ միջոցները գյուղացիական տնտեսութեյան «արտադրական առաջադիմութեյան» վոչ մի լուրջ յերաշխիքներ ու շանսեր չեն տալիս։

* Այսինքն՝ բոլոր նրանց համար, ում մատչելի յե տեխնիկական առաջադիմութեյունը։

Նարոդնիկներն անչափ ավելի ճիշտ են ըմբռնում և ներկայացնում այդ տեսակետից մանր արտադրողների շահերը, և մարքսիստները միջոցով նրանց ծրագրի բոլոր ռեակցիոն գծերը՝ պետք և վոչ միայն ընդունեն համադեմոկրատական կետերը, այլ նաև դրանք կերառեն ավելի ճիշտ, ավելի խոր կերպով և ավելի առաջ տանեն։ Վորքան ավելի վճռական լինեն այսպիսի ոեֆորմները Ռուսաստանում, վորքան ավելի բարձրացնեն աշխատավոր մասսաների կյանքի մակարդակը, այնքան ավելի սուր ու զուտ կերպարանքով յերևան կգա ռուսական կյանքի կարևորագույն ու հիմնական (արդեն այժմ) սոցիալական հակադրութեյունը։ Մարքսիստները վոչ միայն չեն «կորցում դեմոկրատական թեկը» կամ ընդհատակը, ինչպես նրանց զրպարտում ե պ. Վ.Վ.-ն, ընդհակառակը, նրանք ուզում են զարգացնել և ուժեղացնել այդ հոսանքը, ուզում են այդ ժամեցնել կյանքին, ուզում են բարձրացնել այն «թեկը», վոր ձեռքից բաց են թողնում «հասարակութեյունն ու «ինտելիգենցիան» *։

Այդ պահանջը՝ «թեկը» բաց չթողնել, այլ ընդհակառակն—ամրացնել այն—ամենևին պատահական կերպով չի բղխում այս կամ այն «մարքսիստի» անձնական տրամաղրութեյունից, այլ անհրաժեշտորեն վորոշվում և այն դասակարգի դրութեյամբ ու շահերով, վորին նրանք կամենում են ծառայել, անհրաժեշտորեն ու անպայմանորեն թելադրվում և նրանց «դոկտրինայի» արմատական պահանջներից։ Ցես դյուրին

* «Неделя» 1894 թ., № 47, պ. Վ.Վ.—«Մեր պատմութեյան հետեփորձյան շրջանում սոցիալական հարաբերութեյունները մի քանի գծերով մոտեցան արևմտա-յեվրոպականներին՝ ակտիվ դեմոկրատիզմ հանդես բերելով քաղաքական կռվի ժամանակաշրջանում և հասարակական ինդեֆերենտիզմ՝ վերջին ժամանակ։ Մենք աշխատել ենք I գլխում ցույց տալ, վոր այդ «ինդիֆերենտիզմը» պատահականութեյուն չե, այլ այն գաղթականից կարևոր պլյուսներ և առանուձ նրանցից։

ըմբռնելի պատճառներով այստեղ չեմ կարող կանգ առնել այս դրույթի առաջին մասի քննության վրա, «դրության» ու «շահերի» բնութագրման վրա. բայց այստեղ, կարծեմ, գործն ինքն է խոսում իր մասին։ Կշռադատեմ միմիայն յուրաքանչյուր մասը, այսինքն մարքսիստական դոկտրինայի վերաբերմունքն այն հարցերի նկատմամբ, որոնք արտահայտում են «ընդհատվող թելը»։

Մարքսիստները պետք է այլ կերպ դնեն այդ հարցերը, քան այդ արել են և անում են պարոնայք նարոդնիկները։ Վերջիններս հարցը դնում են «ժամանակակից գիտության, ժամանակակից բարոյական իդեաների» տեսակետից. բանն այնպես է պատկերացվում, որ իբր թե չկա այդպիսի ռեֆորմների չիրագործվելու ուրիշ որևէ խոչ, հենց առաջադրական հասարակության մեջ գտնվող պատճառ, այլ կան արդելքներ միայն զգացմունքների կոպտության մեջ՝ «բանականության» թույլ «լույսի» մեջ և այլն, իբր թե Ռուսաստանը մի tabula rasa է, որի վրա միանգամայն ճիշտ կերպով գծագրել ճիշտ ուղիները։ Հարցն այսպես դնելով՝ պահովվում եր, հասկանալի է, նրա «մաքրությունը», որով պարծենում է պ. Վ.-ն և որին իրոք միայն նշանակում է ինտիտուտային կերպարանքների մաքրություն, որը նարոդնիկական դատողություններն այնքան պետքական և դարձնում կաբինետային գրույցների համար։

Նույն հարցերի դրումը մարքսիստների մոտ անհրաժեշտաբար պետք է բոլորովին այլ լինի *։ Պարտավոր լինելով հասարակական կերևույթների արմատներն արտադրական հարաբերությունների մեջ գտնելու, պարտավոր լինելով այդ կերևույթները հանգեցնելու որոշ դասակարգերի շահերին՝ նրանք պետք է ձևակերպեն նույն desiderata-ն, որպես այս-ինչ հասարակական տարրերի «ցանկությունները», որոնք այս-ինչ ուրիշ տարրերի ու դասակարգերի հակազդեցությանն են հանդիպում։ Այդպիսի դրումն արդեն բացարձակապես կվերացնի նրանց «թեորիաների» ոգատագործման հնարավորությունը պրոֆեսորական, դասակարգերից վեր բարձրացող դատողությունների համար, «փայլուն հաջողություն» ** խոստացող վորևե նախագծերի ու զեկուցումների համար։ Այս, իհարկե, տեսակետի նշված փոփոխության դեռ միայն անուղղակի արժանիքն է, բայց այդ արժանիքն էլ շատ մեծ է, կենտրոնացնելով ուշադրության առանձնաքն, թե ժամանակակից հասարակությունն ինչպիսի չափազանց թեք մակարդակով է գլորվում ողորմությունների ճահճի մեջ։ Բայց լուկ անուղղակի արժանիքով չի սահմանափակվում գործը։ Յեթե այդ նույն հարցերը դնենք դասակարգային հակամարտության թեորիայի նկատմամբ [որի համար, իհարկե, պետք է «վերաքննել» ռուսաց պատմության ու իրականության «փաստերը»],—այն ժամանակ այդ հարցերին տրված պատասխանները կտան այս-ինչ դասակարգերի կենսական շահերի ձևակերպությունը, այդ պատասխանները կնախանշվեն այն բանի համար, որ նրանք գործնականորեն «ոգտագործվեն» ** հենց այդ շահագրգռված դասակարգերի կողմից, և բացառապես միայն նրանց կողմից—նրանք կսկսեն դուրս նետվել—մի ժարքսիստ գեղեցիկ արտահայտությամբ ասած—«ինտելիգենցիայի նեղ կաբինետից» դեպի ամենալայնագույն ու ազ-

* Յեթե նրանք հետևողականորեն կիրառեն իրենց թեորիան։ Մենք արդեն չատ ենք խոսել այն մասին, որ պ. Սառուվեյի շարադրանքի անբավարար լինելն առաջ է եկել հենց նրանից, որ նա ամբողջ խոստությամբ չի պահպանել այդ թեորիան։

* Պ-ն Ցուժակովի արտահայտությունն է։

** Իհարկե, այդպիսի «ոգտագործման» համար պահանջվում հսկայական նախապատրաստական աշխատանք, այն էլ այնպիսի աշխատանք, որ իր բուն նյությամբ անտեսանելի չի։ Մինչև այդ ոգտագործ

մենազուտ ձևով հանդես չեկող արտադրական հարաբերությունների բուն իսկ մասնակիցները, դեպի նրանց, ում վրա ամենից ավելի ուժեղ և ազդում «թելի կտրվելը», ում համար «իդեալները» «պետք են», վորովհետև առանց այդ իդեալների նրանց բանը վատ է։ Այդպիսի դրումը նոր կենդանի հոսանք կներարկի այդ բոլոր հին հարցերի մեջ—հարկերի անցագրերի, գաղթերի, վոլոստային վարչություններ ու այլ հարցերի մեջ—հարցեր, վոր մեր «հասարակությունը» քննարկել ու մեկնաբանել է, ծամել, վորոճացել, վճռել և վերամշակել է և վորոնցից նա այժմ սկսել է զզվել։

Ցավ այսպես, ուրեմն, ինչպես էլ մոտենանք մենք հարցին,—արդյոք վերլուծելով Ռուսաստանում տիրող տնտեսական հարաբերությունների սիստեմի բովանդակությունը և այդ սիստեմի զանազան ձևերը նրանց պատմական կապակցությամբ ու նրանց դեպի աշխատավորների շահերն ունեցած հարաբերությամբ,—կամ թե՝ վերլուծելով «թելը կտրվելու» հարցն ու այդ «կտրվելու» պատճառների հարցը,—յերկու դեպքում էլ մենք գալիս ենք մի յեզրակացության «կյանքից տարբերացված աշխատանքի» այն պատմական խնդրի մեծ նշանակության մասին, վորն առաջադրվում է մեր ապրած ժամանակաշրջանի կողմից, գալիս ենք այն յեզրակացության, վոր այդ դասակարգի իդեան հանրապետական նշանակություն ունի։

Գրված է 1894 թ. վերջին։ Տպագրվում է ըստ Ժերկերի 2-րդ և 3-րդ հրատարակության I հատորի տեքստի, էջ 223—369։

Առաջին անգամ տպագրված է Կ. Տուգան-Բարանովսկու «Материалы к характеристике хозяйственного развития» ժողովածուում, ՍՊԲ. 1895 թ.։

ՀԱՅԿ-ԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I ԳԼՈՒԽ

Նարոդնիկական profession de foi-ի տարատակի մեկնաբանությունը 9

II ԳԼՈՒԽ

Նարոդնիկական սոցիոլոգիայի քննադատությունը . 90

III ԳԼՈՒԽ

Տնտեսական հարցերի դրումը նարոդնիկների ու պ. Մարտովնյի մոտ 134

IV ԳԼՈՒԽ

Ռուսաստանի հետաքրքրմյան եկոնոմիկայի միքանի գծերի բացատրությունը պ. Մարտովնյի մոտ 173

ՀՀ Ազգային գրադարան
NL0174632

367

ЦЕНА 2 Р.
ПЕРЕПЛ. 1 Р.

ЦЕНА 2 Р.
ЧАСТЬ 1 Р.

В. И. ЛЕНИН

ЭКОНОМИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ
НАРОДНИЧЕСТВА И КРИТИКА ЕГО
В КНИГЕ Г-НА СТРУВЕ

Адрес-календарь, Вятка, 1923